21-ՐԴ ԴԱՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

5 (27)

ԵՐԵՎԱՆ

2009

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից **5 (27), 2009**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Գագիկ Հարությունյան
(համակարգող)
Մուշեղ Լալայան
Սերգեյ Գրինյան
Սպարտակ Սեյրանյան
Սևակ Սարուխանյան
Տիգրան Սարգսյան

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Գագիկ Հարությունյան
(գլխավոր խմբագիր)
Սևակ Սարուխանյան
(գլխ. խմբագրի տեղակալ)
Էդուարդ Դանիելյան
Լուսինե Բաղրամյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարաուղլանյան
(պատասխանատու խմբագիր)
Ռուբեն Մելքոնյան
Տիգրան Հարությունյան

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ
Гагик Арутюнян
(координатор)
Тигран Саркисян
Мушег Лалаян
Севак Саруханян
Сергей Гриняев
Спартак Сейранян

РЕДАКЦИЯ
Гагик Арутюнян
(главный редактор)
Севак Саруханян
(заместитель гл. редактора)
Лусине Баграмян
(ответственный секретарь)
Рубен Мелконян
Тигран Арутюнян
Хонарик Караугланян
(ответственный редактор)
Эдуард Даниелян

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
Գաղափարախոսություն և տեղեկատվական անվտանգություն 3

Էդուարդ Լ. Դանիելյան
Քաղաքակրթության տեսությունը աշխարհաքաղաքական հայեցակարգերում 11

Վարդան Ասցատրյան
Մարդու իրավունքների իրացման հիմնախնդիրները 30

Դմիտրի Սանոյան
Երուսաղեմի և Պաղեստինի հայ համայնքը Առաջին աշխարհամարտի և Ցեղասպանության շրջանում 45

Վահե Սարգսյան
Միություններն ու կազմակերպությունները Սամցխե-Ջավախք-Ծալկայում (1988-2008թթ.) 58

Աշոտ Թավադյան
Տնտեսական քաղաքականության իրական հնարավորությունները 76

Կարեն Բաբաջանյան
Պետության բրենդի բաղադրիչները 87

Կարեն Վերանյան
Հրեա ժողովրդի ազգակերտման պատմությունից. «Մասադայի» հերոսապատումը 104

Նոր գիրք կրոնափոխ համշենահայերի մասին (գրախոսություն) 124

Հուշագիր հեղինակին 127

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան

Հոդվածում ցույց է տրված, որ ներկայիս համակարգային ճգնաժամի հետևանքով ազատական հայեցակարգերը կորցնում են իրենց մենատիրական դիրքերը: Իրենց հերթին՝ հանրությունների մրցունակությունը և ազգային անվտանգության մակարդակը պայմանավորվում են բազմագաղափարախոսական համակարգ ձևավորելու ունակությամբ, որում համաչափ ներկայացված են ունիվերսալ և ազգային-պահպանողական գաղափարախոսությունները: Համաձայն ներկայացված տեսակետի, ազգային-պահպանողական գաղափարախոսությունը կարելի է նույնացնել տվյալ հանրության տեղեկատվական անվտանգության հասկացության հետ: Այդ համատեքստում առանձնահատուկ պետք է կարևորել գաղափարախոսական բնույթի կրիտիկական ենթակառուցվածքների սահմանումը և պահպանումը:

Արդի ճգնաժամը երբեմն ներկայացվում է որպես զուտ ֆինանսավարկային ոլորտում կատարված սխալների հետևանք: Սակայն նման մեկնաբանումը պարզունակ է, և տնտեսական խնդիրներն ընդամենը գործընթացների պատճառահետևանքային համալիրի մասն են հանդիսանում: Մասնավորապես, բազմաբևեռ աշխարհակարգի կայացումը վկայում է ոչ միայն քաղաքական և տնտեսական ոլորտներում ամերիկյան մենատիրության ավարտի մասին: Տոտալիտար միտումներ ձեռք բերած ազատական գաղափարախոսությունը, որի վրա է հենված սպառողական հասարակության արժեքային համակարգը, այսօր նույնպես կորցնում է գերակայող դիրքերը *(տե՛ս, օրինակ, [1])*: Դա նշանակում է, որ փոփոխություններն ընթանում են առաջին հերթին հանրային գիտակցությունում և հոգեբանությունում, այսինքն՝ գաղափարախոսական ոլորտում նույնպես հաստատվում են նոր տիպի, յուրովի՝ բազմաբևեռ, մոտեցումներ: Նման հայեցակարգային զարգացումներն ընդհանրացնում են ազգային անվտանգության և գաղափարախոսական համակարգերը:

1. Բազմագաղափարախոսության ձևավորում

Ինչպես հայտնի է, այսօր արևմտյան (հատկապես՝ ամերիկյան) հանրությանը բնորոշ ազատականության հիմնադրույթները և դրանց հետ միասնություն կազմող տնտեսվարման ձևերը զիջում են իրենց մենատիրական դիրքերը: Դրա մասնավոր վկայություններն են պետության դերակատարման և միջամտության զգալի աճը շուկայի կարգավորման խնդիրներում, որի արտահայտություններն են սնանկացած խոշորագույն կորպորացիաների ազգայնացումը, մասնավոր ընկերություններին պետական խոշոր սուբսիդիաների տրամադրումը և այլն: Հատկանշական է, որ տնտեսագիտական հանրությունն այսօր սկսել է վերընթերցել Կարլ Մարքսի կարծես թե մոռացության մատնված «Կապիտալը», որը մի շարք երկրներում վերահրատարակվել է աննախադեպ մեծ տպաքանակներով: Կան բոլոր հիմքերը փաստելու, որ արդի զարգացումների թելադրանքով ավանդաբար ազատական համարվող երկրներում ընթանում է սոցիալիստական գաղափարների լեգիտիմացում:

Միևնույն ժամանակ, ստեղծված իրավիճակը տարբերվում է նախորդ դարի 90-ականներին կատարվածից, երբ գաղափարախոսական ճգնաժամը՝ որպես առաջնային գործոն, հանգեցրեց խորհրդային համակարգի փլուզմանը: Այն տարիներին փորձ կատարվեց «օրենքից դուրս» հայտարարել սոցիալիստական-կոմունիստական գաղափարները, սակայն ներկայիս գաղափարախոսական վերագնահատումները չեն ենթադրում մոռացության մատնել ազատականության դասականներին: Այսօր խնդիրները լուծելու համար կիրառվում է ցանկացած գաղափարական-տնտեսական մոդել կամ մեթոդ, միայն թե այն արդյունավետ լինի: Այլ խոսքերով՝ գործում է հետևյալ հանրահայտ սկզբունքը. «հիմնախնդիրները լուծելու համար լավ են բոլոր մեթոդները, բացի վատերից»:

Արդյունքում՝ ձևավորվում են «բազմագաղափարախոսական» հանրություններ [2], որտեղ որոշակի բաժնեմասերով գործում են ինչպես ունիվերսալ՝ սոցիալիստական և ազատական[1], այնպես էլ ազգային-քաղաքակրթական ու պահպանողական պատկերացումները: Նկատենք նաև, որ ունիվերսալ գաղափարախոսությունները նույնպես որոշակի էվոլյուցիա են ապրել և կորցրել են նախկինի իրենց միանշանակ, առարկում չընդունող դիրքորոշումները[2] (դա հատկապես բնորոշ էր, օրինակ, տոտալիտար-կոմունիստական կամ վուլգար-ազատական կոնցեպտներին): Ի լրումն, 90-ականներից, այսպես կոչված

[1] Անշուշտ, ենթադրվում է, որ ունիվերսալ համարվող այդ ուղղությունները ներառում են տվյալ հանրությանը բնորոշ ազգային-քաղաքակրթական առանձնահատկություններ:

[2] Գաղափարախոսություն եզրին, որը եվրոպական ավանդույթում շրջանառության մեջ դրեց Անտուան Դեստյուտ դը Տրասին *(«Элементы идеологии»,1801)*, առայսօր տրվել են բազմաթիվ, հաճախ միմյանց փոխլրացնող սահմանումներ: Նման իրադրությունը բարդ և էվոլյուցիա ապրող հասկացությունների պարագայում բնականոն է, և այս հոդվածում, կախված շարադրանքի ենթատեքստից, համապատասխանաբար կօգտագործենք այս կամ այն հասկացության տարբեր սահմանումները:

պոստմոդեռնիզմի համատեքստում, ընթանում են տարբեր գաղափարախոսությունների յուրահատուկ խաչաձևումներ: Օրինակ, Մեծ Բրիտանիայում «նեոլեյբորիստները» ներկայացնում են «լիբերալ–սոցիալիստական» ուղղությունը [3]: Ջորջ Բուշ-կրտսերի վարչակազմում կարևոր դերակատարում ստացան «նեոկոնսերվատորները», որոնց գաղափարական ակունքներում, համաձայն որոշ հետազոտողների, նշմարվում են «տրոցկիստական» մոտեցումներ և այլն: Որպես հետևանք՝ աճում է տարբեր աշխարհայացքների համատեղելիությունը, ձևավորվում է բազմակոմպոնենտ, բայց ընդհանրականի ձգտող գաղափարախոսական դաշտ[1]: Գաղափարական նման ձևաչափը մեծացնում և, գլխավորը, բազմակողմանի է դարձնում տվյալ հանրության հայեցակարգային ռեսուրսները, ինչը թույլ է տալիս առավել ադեկվատ արձագանքել մարտահրավերներին և ի շահ օգտագործել անբարենպաստ իրավիճակները: Ակնհայտ է, որ կազմակերպման նման տեխնոլոգիաներ կիրառող հանրությունն էապես բարձրացնում է հնարավորություններն աշխարհաքաղաքականության, աշխարհատնտեսության և այլ ոլորտներում:

2. Գաղափարախոսություն և ազգային անվտանգություն

Փորձենք համառոտակի և սխեմատիկ համեմատել ու գնահատել որոշ հանրությունների ազգային անվտանգության[2] *(ԱԱ)* համակարգի արդյունավետությունը՝ կախված այդ հանրությունների գաղափարախոսական դաշտի բնութագրից:

Անգլո-ամերիկյան տեխնոլոգիաներ. Վերոնշյալի համատեքստում ամենաարդյունավետը, թերևս, պետք է համարել Մեծ Բրիտանիայի փորձը, որը ներդրվել է նաև մնացյալ անգլիախոս երկրներում: Այդ երկրների հանրություններին բնորոշ է գաղափարախոսական լայնախոհություն. կոնսերվատիվ (ազգային-պահպանողական) և լեյբորիստական (սոցիալիստական ուղղվածություն) գաղափարների կրողները մշակել են միմյանց փոխլրացնող մեխանիզմներ և համատեղ են գործում ազատական գաղափարախոսական դաշտում (վերջինս, ինչպես հայտնի է, նույնպես հարազատ է անգլոսաքսոնյան հոգեկերտվածքին): Այս գործոնով է, որ պետք է պայմանավորել բրիտանական կայսրության[3] ռազմավարական խոշոր ձեռքբերումները և այն փաստը, որ վերջին մի քանի հարյուր տարում այդ քաղաքակրթությունը կարողանում է պահպանել համաշխարհային առաջատարի կարգավիճակը:

[1] Նման գործընթացները, ըստ մեզ, «պոստմոդեռնիստական» դարաշրջանին հատուկ ամենաթողության դրսևորում չեն, և դրանք պետք է դիտարկել որպես լավ մշակված քաղաքական տեխնոլոգիաների կիրառում:

[2] Պետք է հաշվի առնել, որ այս հասկացությունը ներառում է ոչ միայն զուտ պաշտպանական, այլև էքսպանսիա իրագործելու գործառույթները:

[3] Ընդունված է համարել, որ Միացյալ Նահանգները Բրիտանական կայսրության իրավահաջորդն ու ժառանգորդն է:

Հատկանշական է, որ ԱՄՆ-ը, փոխառելով բրիտանականից քաղաքական տրամաբանությունը, իր պատմական զարգացման յուրահատկության պատճառով, անտեսել է սոցիալիստական թեքում ունեցող քաղաքական ուժի կարևորությունը: Արդյունքում՝ Միացյալ Նահանգներում ազատականության և սպառողականության ծայրահեղ կուլտիվացիան լուրջ խնդիրներ է առաջացրել, որի հետևանքով էլ այդ տերությունը սկսել է զիջել համաշխարհային առաջատարի դիրքերը: Գաղափարախոսական թերացումների առկայությունը կարծես թե ընկալվել է ամերիկյան ընտրանու կողմից, և դրանով պետք է պայմանավորել ամերիկյան հանրությունում ընթացող սոցիալիստական հիմնադրույթների լեգիտիմացումը և ընդհանուր զսպվածության մեխանիզմների առաջացումը *(տե՛ս, օրինակ, [4])*:

Մայրցամաքային Եվրոպա. Հատկանշական է, որ անգլո-ամերիկյան գաղափարախոսական միտումները զգալիորեն տարբերվում են այդ ոլորտում եվրոպական երկրներում առկա իրողություններից: Մայրցամաքային Եվրոպայում ավանդաբար առկա են զարգացած ունիվերսալ (ազատական և ձախ) ուղղությունները *(տե՛ս, օրինակ, [5]),* սակայն դեռևս բացակայում են, հասկանալի պատճառներով, համաեվրոպական ազգային-պահպանողական մոտեցումները: Ավելին, եվրոպական երկրների ազգայնական կուսակցությունները հաճախ հանդես են գալիս ԵՄ ինտեգրացիոն նախագծերի դեմ: Այդ հանգամանքով է պայմանավորված, որ ԵՄ-ը, ունենալով գրեթե նույնքան տնտեսական ներուժ, որքան ԱՄՆ-ը, ռազմական հզորության և աշխարհաքաղաքական ազդեցության համատեքստում ադեկվատ չէ իր այդ ներուժին:

Բարեփոխումներ ըստ Դեն Սյաոպինի. Գաղափարախոսական տեսանկյունից հատուկ ուշադրության է արժանի «չինական հրաշքի» երևույթը: Ընդամենը երկու տասնամյակ առաջ Չինաստանը խրված էր բազմաթիվ և տարաբնույթ հիմնախնդիրների մեջ: Նման իրավիճակ էր նաև միագաղափարախոսական ԽՍՀՄ-ում, որը չկարողացավ ադեկվատ լինել մարտահրավերներին և փլուզվեց: Իրադրությունը Չինաստանում կտրուկ փոխվեց նախորդ դարի վերջին, երբ Դեն Սյաոպինի բարեփոխումների շնորհիվ ձևավորվեց բազմագաղափարախոսական դաշտ, ուր գործում են ոչ միայն սոցիալիստական[1], այլև ազգային-պահպանողական (կոնֆուցիոնիստական) և ազատական կոնցեպտները: Այսօր ՉԺՀ-ն հիմնավորված հավակնում է ստանձնելու գլոբալ առաջատարի դերը, իսկ նրա արագ հզորացման օրինակը վկայում է գաղափարախոսական տեխնոլոգիաների արդյունավետության մասին:

[1] Հարկ է նշել, որ սոցիալիստական բնույթի գաղափարախոսության հիմունքները Չինաստանում ձևավորվել են ոչ թե 19–20–րդ դարերում (ինչպես դա տեղի է ունեցել Արևմտյան Եվրոպայում և Ռուսաստանում), այլ մ.թ.ա. 5-րդ դարում: Այդ ուսմունքի հեղինակն է փիլիսոփա և մտածող Մո Ցզին (տե՛ս, օրինակ, [6]):

Գաղափարախոսական հեղափոխություններ Ռուսաստանում. Ազգայնական և ազատական գաղափարներ կրողների հետ միասին՝ ռուսական հանրության մի զգալի հատվածի հոգեկերտվածքին հարազատ են սոցիալիստական պատկերացումները (այս վերջինի ազգային-գաղափարական հենքն ընդունված է համարել ռուսական գյուղական համայնքների ավանդական կացութաձևը)։ Հայտնի է, որ ռուսաստանյան իրականությունում գաղափարական հակասությունները հանգեցրել են հեղափոխությունների (1917թ.՝ սոցիալիստական, 1991թ.՝ ազատական), դրանցից բխող բացասական հետևանքներով և որևէ մեկ տեսանկյունի գերակայության արհեստական հաստատումով։ Արդյունքում՝ համաշխարհային առաջատար լինելու նախապայմաններ և հավակնություններ ունեցող Ռուսաստանը վերջին հարյուրամյակում պարբերաբար հայտնվում է դժվար կացություններում։ Ելնելով այդ նկատառումներից՝ ներկայիս ռուսաստանյան իշխանությունները փորձում են ինչ-որ կերպ համատեղել տարբեր գաղափարական հոսանքները։ Բոլոր պարագաներում պետք է փաստել, որ գաղափարախոսական ոլորտի անբարենպաստ իրողություններն էական ազդեցություն են թողել ռուսական–սլավոնական աշխարհի զարգացման վրա։

Իսլամ և ազատականություն. Իսլամական աշխարհի ներկայիս ընդհանրական իրավիճակը զգալիորեն պայմանավորված է գաղափարախոսական դաշտում կրոնական պահպանողականության գերակայությամբ։ Հատկանշական է, որ այն երկրները, որոնք կարողացել են համատեղել կրոնական ավանդականությունը (որը պարունակում է, մասնավորապես, նաև սոցիալական արդարության վերաբերյալ որոշակի պատկերացումներ) և ազատական ու զուտ ազգային մոտեցումները, էապես բարելավել են իրենց կարգավիճակը միջազգային հանրությունում։ Նման պետությունների շարքում, Մյանմայի և Ինդոնեզիայի կողքին, առանձնահատուկ ուշադրության է արժանի Իրանը, որտեղ կարծես թե հաջողվել է բավարար չափով ինտեգրել արմատական իսլամը, իրանական ազգային-քաղաքակրթական ավանդույթները և ժողովրդավարական ազատականության տարրերը։ Արդյունքում՝ Իրանը վերածվել է տարածաշրջանային առաջատարի և ամենադինամիկ և համակողմանի զարգացող երկներից մեկն է միջազգային ասպարեզում։ Նկատենք, որ իսլամական երկրների անբավարար մրցունակության պատճառը երբեմն համարվում է մտավոր (ինտելեկտուալ) ռեսուրսների որոշակի պակասը։ Հատկանշական է, որ Իրանը սեփական հրթիռով տիեզերք է բաց թողել արբանյակ, իսկ նանոտեխնոլոգիաների ոլորտում այսօր իրանցի գիտնականներին արվող հղումները գրավում են աշխարհում 25-րդ տեղը, և այդ առումով Իրանը միակ իսլամական երկիրն է *(տե՛ս, օրինակ, [7])*։

3. Ազգային գաղափարախոսություն և տեղեկատվական անվտանգություն

Վերոնշյալից հետևում է, որ գաղափարախոսական դաշտի համաչափությունը կանխորոշում է հանրության ազգային ռազմավարության արդյունավետությունը: Պատահական չէ, որ համաձայն արդի հասարակագիտական պատկերացումների, գաղափարախոսությունը սահմանվում է որպես «հրահանգների համալիր, որն ապահովում է գործընթացների ամենաարդյունավետ ռեժիմը և փոխկապակցվածությունը»[1]: Դինամիզմ պարունակող Վյաչեսլավ Յանկոյի այս ձևակերպումը, ըստ ամենայնի, սահմանում է նաև ազգային անվտանգության համար: Այսինքն՝ արդի իրողություններում պետության և հանրության կողմից ձևավորված ընդհանրական գաղափարախոսության և *ԱԱ* նպատակներն ու հիմնախնդիրները, այդ նպատակներին հասնելու և այդ հիմնախնդիրները լուծելու մեթոդները, փաստորեն, միաձուլված են:

Ինչպես գաղափարախոսական, այնպես էլ *ԱԱ* ոլորտում համակարգի արդյունավետությունը ենթադրում է մարդկային կենսագործունեության գրեթե բոլոր բնագավառների փոխկապվածություն: Այդ համատեքստում հատկանշական է *ԱԱ* կարևորագույն բաղադրիչ հանդիսացող տեղեկատվական անվտանգությունը *(ՏԱ),* որը ներառում է հանրության մտավոր և հոգևոր ոլորտում ընթացող գործառույթները, անմիջականորեն առնչվում է ընդհանրական գաղափարախոսության մաս կազմող ազգային-պահպանողական գաղափարախոսության հետ:

Տեղեկատվական անվտանգության և ազգային-պահպանողական գաղափարախոսության միասնականությունը. Համաձայն դասական ձևակերպման, մտավոր-հոգևոր գործընթացների և պատկերացումների ոլորտն ընդգրկող ազգային–պահպանողական գաղափարախոսությունն այն տեսակետների և ազգային արժեքների համակարգն է, որում գիտակցվում ու գնահատվում է մարդկանց վերաբերմունքը միմյանց և իրականության նկատմամբ: Իր հերթին՝ գաղափարախոսությունն իրական գործոն կարելի է համարել միայն այն պարագայում, երբ այն վերածվում է հանրային գիտակցության բաղադրամասի, իսկ դա հնարավոր է իրագործել միայն տեղեկատվական տեխնոլոգիաների (լայն մեկնաբանելով այս եզրը և դրա տակ չհասկանալով միայն պարզունակ քարոզչությունը) միջոցներով: Այլ խոսքերով՝ ազգային գաղափարախոսությունը, վերջինիս անհրաժեշտության գիտակցման դեպքում, պետք է հանդիսանա տեղեկատվական դաշտի առաջնային և հիմնական բաղադրամասը: Այստեղից հետևում է, որ տեղեկատվական-հոգեբանական (ոչ տեխնիկական) անվտանգության հիմնական խնդիրներ են.

[1] *Янко В.А., http://yanko.lib.ru*

- Ազգային-պահպանողական գաղափարախոսության ներդրումը ներքին տեղեկատվական դաշտում:
- Այդ գաղափարախոսության հիմնադրույթների պաշտպանությունը արտաքին և ներքին խեղաթյուրումներից:
- Ազգային շահերի համատեքստում գաղափարական կոնցեպտների տարածումը արտաքին տեղեկատվական դաշտում:

Այսպիսով, եթե հանրության ընդհանրական գաղափարախոսությունը և *ԱԱ* ընդհանրական հիմնադրույթները համընկնում են, ապա գաղափարախոսության ազգային-պահպանողական բաղադրիչն իր հերթին անմիջականորեն կապակցված է *ՏԱ* (ոչ տեխնիկական) հիմնախնդիրների հետ, և այդ երկու հասկացությունների գործառույթները համընկնում են: Այսինքն՝ այդ հասկացությունները միասնաբար նույնպես կարելի է սահմանել որպես հրահանգների համալիր, որն ապահովում է տեղեկատվական գործընթացների (այս եզրի լայն մեկնաբանության պարագայում) ամենաարդյունավետ ռեժիմն ու փոխկապակցվածությունը:

ՏԱ բովանդակային հատվածում «կրիտիկական ենթակառուցվածքների» առկայությունը և դրանց պաշտպանության անհրաժեշտությունը. Որոշ առաջատար պետություններում (հատկապես՝ Միացյալ Նահանգներում) տեղեկատվական ոլորտի տեխնիկական հատվածի առաջնահերթ խնդիր է համարվում, այսպես կոչված, կրիտիկական ենթակառուցվածքների՝ կառավարման, կոմունիկացիոն-տեղեկատվական, էներգա- և ջրամատակարարման, ոստիկանական-փրկարարական, ֆինանսական և այլ համակարգերի, տեղեկատվական համակարգերի անվտանգության ապահովումը: Կարծում ենք, որ նման «կրիտիկական ենթակառուցվածքները» բնորոշ են և խիստ կարևոր նաև *ՏԱ* բովանդակային, այսինքն՝ գաղափարախոսության ազգային-պահպանողական հատվածի համար. պատահական չէ, որ ամերիկյան փորձագետները *ԱԱ* հիմնական խնդիրն են համարում ազգային արժեքների պաշտպանությունը: Գործնական հարթությունում դա նշանակում է, որ ազգային արժեքային համակարգում պետք է ընտրվեն և հատուկ պաշտպանության առարկա դարձվեն այն հիմնադրույթները, որոնց խեղաթյուրումը կարող է հանգեցնել ազգային բարոյալքման և կազմալուծման:

Միևնույն ժամանակ, այս ամենից հետևում է, որ լիարժեք *ՏԱ* համակարգի ձևավորումն անհնար է առանց համապատասխան գաղափարական հիմնադրույթների առկայության: Սակայն դա չի նշանակում, որ *ՏԱ* համակարգի ձևավորումը պետք է իրագործվի միայն այդ հիմնադրույթների հստակեցումից հետո: Ինչպես արդեն նշել ենք վերը, տեղեկատվական անվտանգությունը, փաստորեն, նույնացվում է ազգային-պահպանողական գաղափարախոսու-

թյան հետ, և *ՏԱ* հայեցակարգային մշակումները պետք է որ նպաստեն գաղափարախոսական համալիր մոտեցումների ձևավորմանը: Մասնավորապես, նույն *ՏԱ* կոնցեպտներից պետք է որոշել և առանձնացնել կրիտիկական նշանակություն ունեցող հիմնադրույթները:

Հուլիս, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Олег Вахинский,* Homo economicus должен умереть, Эксперт, #17-18, с. 56, 2009.
2. *Գագիկ Տեր–Հարությունյան,* Բազմագաղափարախոսական հանրությունների ձևավորումը, Հանրապետական, #11, էջ 1, 2008:
3. *Алексей Громыко,* Конец идеологии или контуры новой «большой идеи»? http://www.ieras.ru/gromyko_ar5.htm; *Алексей Громыко,* “Третий путь” – что дальше?, Современная Европа, выпуск 2, 2006, с. 62; *Носов М.Г.* , Глобальные аспекты трансатлантических отношений, Современная Европа, выпуск 2, 2006, с. 31.
4. *Чез Фримен*, Быть скромнее, Россия в глобальной политике, т. 7, #2, с. 60, 2009.
5. *Борис Кагарлицкий,* Политология революции, Москва, Алгоритм, 2007.
6. *Титаренко М.П.,* Древнекитайский философ Мо – Ди, его школа и учение, Изд-во “Наука”, М-ва, 1985.
7. *Елена Шварц,* Иранский парадокс. Станет ли Исламская Республика сильным игроком XXI века?, Политический класс, #52, 2009.

ИДЕОЛОГИЯ И ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ

Гагик Арутюнян

Резюме

Из сравнительного анализа следует, что наиболее конкурентоспособными оказываются те общества – представители различных цивилизаций, которые обладают ресурсами для формирования полиидеологических систем, в которых гармонично представлены как универсальные (либерального и социалистического толка), так и национально-консервативные концепты. Представляется, что подобная полиидеологическая система по своему динамическому содержанию практически совпадает с понятием национальной безопасности (НБ). Вместе с тем важнейшая составляющая НБ – контентный сегмент информационной безопасности (ИБ) – по своей сути адекватна национально-консервативным представлениям данного общества. Это обстоятельство подсказывает, что в системе ИБ следует выделять те важнейшие «критические инфраструктуры», которые определяют безопасность системы в целом.

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐՈՒՄ

Էդուարդ Լ. Դանիելյան

Քաղաքակրթության ծագման և զարգացման գաղափարը պատմական կատեգորիա է փիլիսոփայական տեսությունների և մեկնությունների ասպարեզում: Քաղաքակրթությանը բնորոշ են հոգևոր-մշակութային, տնտեսական և քաղաքական բաղադրատարրերի ամբողջականությունը և ժամանակագրական հաջորդականությունը: Ուստի, այդ մասին փիլիսոփայական յուրաքանչյուր պատկերացում կամ սահմանում, կրելով իր ժամանակի կնիքը, իմացաբանական ու տեղեկատվական ընդգրկումով, արդիական հնչեղություն ունի: Եվ այդ կերպ քաղաքակրթության տեսության ուսումնասիրությունն ընթանում է երկու ուղղություններով՝ գիտամշակութաբանական և, աշխարհաքաղաքական նպատակներով՝ քաղաքագիտական:

Քննարկելով *քաղաքակրթություն* հասկացության խնդիրը՝ Օսվալդ Շպենգլերը (1880-1936) գրել է. «Յուրաքանչյուր Մշակույթ ունի իր *սեփական* Քաղաքակրթությունը… Քաղաքակրթությունը Մշակույթի անխուսափելի ճակատագիրն է… Քաղաքակրթություններն ամենից արտաքին և արհեստական վիճակներն են, որոնց ընդունակ է զարգացած մարդկության տեսակը... Մշակույթից անցումը Քաղաքակրթության դասական աշխարհի համար ավարտվեց IV դարում, իսկ արևմտյանի՝ XIX դարում...» [1, p. 24-27]:

Առնոլդ Ջ. Թոյնբին (1889-1975) ընդունում էր «քաղաքակրթության ծագումը՝ որպես արարչության մի գործողություն, որն ընդգրկում է փոփոխության պրոցես ժամանակի մեջ», իսկ «մշակութային տարրերը քաղաքակրթության էությունն են» [2, II, p. 1; IV, p. 57]: Քաղաքակրթության զարգացման մասին իր փիլիսոփայական ընկալման հիմքում դնելով «կրոնի վերընթաց շարժումը»՝ նա գրել է. «Եթե կրոնը մարտակառք է, թվում է, թե այն անիվները, որոնց վրա նա բարձրանում է դեպի երկինք, կարող են լինել քաղաքակրթությունների պարբերական վայրէջքները երկրի վրա: Թվում է, թե քաղաքակրթության շարժումը կարող է լինել ցիկլիկ և պարբերական, մինչդեռ կրոնի շարժումը՝ մեկ շարունակական վերընթաց գծով է: Կրոնի վերընթաց շարունակական շարժմանը կարող է ծառայել և խթանել ծնունդ-մահ-ծնունդ ցիկլը» [3, p. 6, 26]: Իսկ «քաղաքակրթությունները յուրահատուկ զարկերն են ընդ-

հանուր ռիթմիկ զարկի, որն անցնում է ամբողջ Տիեզերքով» [2, I, p. 205]:

Ըստ Մարկ Բլոկի (1886-1944)՝ «Մի սերունդը ներկայացնում է հարաբերականորեն միայն մի կարճ փուլ: Ավելի երկարատև փուլերը կոչվում են քաղաքակրթություններ»: Հաշվի առնելով բարձրացող և անկում ապրող քաղաքակրթությունների պատմական ընթացքը՝ հիմնված ազգագրական, կրոնական, տեխնոլոգիական և այլ առանձնահատկությունների վրա, նա գրել է. «Քաղաքակրթությունների հակաթեզը հստակորեն առաջացավ, հենց որ նկատվեցին էկզոտիկ երկրների հակադիր գծերը: Կարո՞ղ է որևէ մեկը ժխտել, որ այսօր գոյություն ունի չինական քաղաքակրթություն, կամ որ այն մեծագույնս տարբերվում է եվրոպականից: Սակայն, նույնիսկ նույն տարածաշրջանում հասարակական համակարգի հիմնական շեշտադրումները կարող են քիչ թե շատ կտրուկ ձևափոխված լինել: Երբ տեղի է ունենում այսպիսի վերափոխություն, մենք ասում ենք, որ մի քաղաքակրթությունը հաջորդում է մյուսին: Երբեմն առկա է արտաքին ցնցում՝ սովորաբար ուղեկցվելով նոր մարդկային տարրերի մուտքով, այնպես, ինչպես տեղի ունեցավ Հռոմեական կայսրության և զարգացած միջնադարի հասարակությունների միջև: Երբեմն, մյուս կողմից, տեղի է ունենում ուղղակի ներքին փոփոխություն: Բոլորը կհամաձայնեն, որ Վերածննդի քաղաքակրթությունն այլևս մերը չէ, չնայած այն փաստին, որ մենք այդպիսի շռայլ ժառանգություն ստացանք դրանից» [4, p. 187-189]:

Քաղաքակրթության մասին առավել ամբողջական բանաձև է սահմանել Վիլ Դյուրանը. «Քաղաքակրթությունը մշակութային ստեղծագործմանը խթանող սոցիալական կարգ է: Այն բաղկացած է չորս տարրերից՝ տնտեսական ապահովություն, քաղաքական կազմակերպում, բարոյական ավանդույթներ և գիտելիքի ու արվեստների ձգտում: Այն սկսվում է այնտեղ, ուր վերջանում են քաոսը և անապահովությունը: Քանզի, երբ հաղթահարվում է վախը, ապա ազատվում են հետաքրքրասիրությունը և կառուցողականությունը, ու մարդը բնական մղումով անցնում է ճանաչողությանը և բարեկարգությանը» [5, p. 1]:

XVIII դարի լուսավորչական պատմաբանների հայեցակարգի համաձայն, պատմությունը դարձել էր առաջընթաց դեպի մարդու կացության կատարելիության նպատակը երկրի վրա [6, p. 146]: Ինչպես Էդվարդ Գիբոնն է նշել. «Աշխարհի յուրաքանչյուր դարաշրջան ավելացրել և դեռևս ավելացնում է մարդկային ցեղի իրական հարստությունը, երջանկությունը, գիտելիքը և, միգուցե, առաքինությունը» [7, Ch. xxxviii]: Առաջին համաշխարհային պատերազմից հետո ի հայտ եկավ պատմության մասին ցիկլիկ տեսության միտում, ինչը՝ Հեգելի երեք քաղաքակրթություններից հանգեցրեց Թոյնբիի քսանմեկ քաղաքակրթություններին [2, I, p. 1]:

Երկրորդ աշխարհամարտից հետո Ա.Թոյնբին գրել է. «1947թ. Արևմտյան Եվրոպայի ժողովուրդների ճակատագրերը և ապագան, ամբողջությամբ

վերցված, դեռևս անհանգստության առիթ են աշխարհի համար, քանզի ընդարձակ Եվրասիական մայրցամաքի ծայրամասում այս տարածքի փոքր կտորը Արևմտյան քաղաքակրթության բնօրրանն է, որն այժմ գերակշռում է Երկրի վրա: Արևմտյան Եվրոպայի վայրէջքը, եթե այն իրոք պետք է ընկներ շարունակական քայքայման մեջ, կարող էր, թերևս, այնպես լուրջ լինել քաղաքակրթության հեռանկարների համար, ինչպիսին Հունաստանի վայրէջքն էր մ.թ.ա. վերջին դարում» [3, p. 5-6]:

Քաղաքակրթության գաղափարին փիլիսոփայական մոտեցումը մտածողներին ուղղորդել է դեպի դրա սոցիալական մեկնությունը և մարդկային բնության ճանաչողական ընկալումը համաշխարհային քաղաքակրթության համատեքստում:

Ազատության մասին պատմական ընկալման հիման վրա, Իսայա Բերլինը (1909-1997) նշել է. «Լուսավորչության դարաշրջանի փիլիսոփաներն ընդունում էին, որ մարդկային արժեքները կարող են առաջանալ մարդկային բնության մասին փաստերից: Նրանք հավատում էին, որ բոլոր մարդիկ ցանկանում էին միևնույն բաները և, որ դրանք հակադրության մեջ չէին» [8, p. 201]: Իսկ Մ.Բլոկի դիտարկմամբ՝ «Մարդկային բնության և մարդկային հասարակության մեջ պետք է լինի մշտական հաստատություն, այլապես հենց *մարդ* և *հասարակություն* անվանումները դառնում են անիմաստ» [4, p. 42]:

Զիգմունդ Ֆրոյդը մարդ արարածին ավելի շուտ դիտում էր որպես կենսաբանական, քան հասարակական ամբողջություն և փորձում սոցիալական միջավայրին մոտենալ որպես պատմականորեն տրված, այլ ոչ թե մարդու կողմից ստեղծման և փոխակերպման մշտական պրոցեսի մեջ եղած ինչ-որ մի բան: Նա գրել է. «Քաղաքակրթությունը Էրոսին ծառայող մի պրոցես է, որի նպատակն է միավորել առանձին մարդկանց, այնուհետև ընտանիքներին, ցեղերին, ժողովուրդներին և ազգերին մի մեծ՝ մարդկության միասնության մեջ» [9, p. 69]:

Բնական, տնտեսական ու մարդկային ռեսուրսների զավթմանը և վերաբաշխմանը նպատակամղված նվաճողական քաղաքականությամբ պայմանավորված պատերազմները պարբերաբար հանգեցրել են ավերածություններով և մարդկային հսկայական կորուստներով ուղեկցվող աշխարհաքաղաքական վերաբաժանումների: Առավելության ձգտող և մեկը մյուսի դեմ պատերազմող կայսրությունների ու պետությունների բարձրացումը, ընդարձակումը և անկումն ուղեկցվել են քաղաքակրթությունների ելևէջներով:

Տարբեր ժամանակներում պետությունների և հասարակությունների միջև, ինչպես նաև նրանց ներսում պարբերաբար տեղի ունեցող ավերիչ պատերազմները և բռնությունները տեսականորեն բավական աղոտ են դարձնում բարբարոսության և քաղաքակրթության բաժանարար գիծը: Վոլտերի (1694-

1778) խոսքն է. «Ես ցանկանում եմ իմանալ այն քայլերը, որոնցով մարդն անցել է բարբարոսությունից դեպի քաղաքակրթություն» և, եզրակացնելով, գրել է. «Եթե դուք ոչինչ մեզ չունեք ասելու, բացի այն բանից, որ մի բարբարոսը հաջորդել է մյուսին Օքսոսի և Յաքսարթեսի ափերին, ապա դա ի՞նչ է մեզ համար» [տե՛ս 2, I, p. 114-115]:

Արևմտյան փիլիսոփայության մեջ Առաջին համաշխարհային պատերազմից հետո եկավ «հոռետեսության» ժամանակաշրջանը, որին հաջորդեց «լիբերալ դեմոկրատիայի» գաղափարախոսությունը: Ֆրենսիս Ֆուկույաման նշել է. «Մեր սեփական փորձը, թվում է թե, մեզ ուսուցանել է, որ ապագան, ավելի քան հավանական է, չի պարունակում նոր աներևակայելի չարիքներ՝ ֆանատիկ դիկտատորություններից և արյունալի ցեղասպանություններից մինչև կյանքի տաղտկալիությունը ժամանակակից սպառողականությամբ, և որ աննախադեպ աղետներ են մեզ սպասում՝ միջուկային ձմեռից ընդհուպ մինչև համաշխարհային ջերմացումը» [10, p. 3-4; հմմտ. 11, p. 11]:

Քաղաքակրթության ստեղծագործ և կառուցողական տարրերին հակառակ, կործանարար ուժերը մթագնել են մարդկության պատմությունը՝ շրջադարձելով համաշխարհային քաղաքակրթական առաջընթացի գաղափարը և աղետալի հետևանքներ թողնելով համաշխարհային քաղաքակրթության վրա [12]: Արևմտյան մտածողները, Առաջին համաշխարհային պատերազմը համարելով «Եվրոպայի ինքնավստահության նսեմացման մեջ բեկումնային իրադարձություն», մտորում էին «պատմական խոր հոռետեսներ» դառնալու մասին [10, p. 5]:

XIXդ. երկրորդ կեսից մինչև 1923թ. Օսմանյան կայսրության զավթած Արևմտյան Հայաստանում և Հայկական Կիլիկիայում՝ հայ ժողովրդի Հայրենիքի մեծագույն մասում ու այլ վայրերում, թուրքերը (սուլթանական և երիտթուրքական կառավարությունները, այնուհետև՝ քեմալականները), սպանելով 2 միլիոն և բռնագաղթի ենթարկելով 800.000 հայերի, պանթուրքական հանցավոր ծրագրով իրագործեցին Հայոց ցեղասպանությունը, որի աղետալի գագաթնակետն էր 1915թ. [13, էջ 130-132; 14, c. 4-5; 15, c. 11]: «Քաղաքակրթության գլխավոր ուղին 1500 թվականից» հատորում հեղինակները նշել են, որ Առաջին համաշխարհային պատերազմում «Գերմանիայի կորուստները կազմեցին մոտ 2 միլիոն սպանված, Ռուսաստանի՝ 1,7 միլիոն, Ֆրանսիայի՝ 1,3 միլիոն, Ավստրո-Հունգարիայի՝ 1,1 միլիոն, Բրիտանիայի և նրա կայսրության, համապատասխանաբար՝ 750,000 և 250,000, Իտալիայի՝ մոտ 500,000, Թուրքիայի՝ ավելի քիչ, իսկ ԱՄՆ-ի՝ 114,000... և առնվազն 1,5 միլիոն հայերի թուրքերը կոտորեցին 1915թ.» [16, p. 788]: Հայոց ցեղասպանությունը (գենոցիդ) մարդկության և քաղաքակրթության դեմ գործված հանցագործություն է, որի համար պատասխանատվությունը կրում է Թուրքիան [14, c. 24; 15, c.8-10] :

Ավելի քան հինգհազարամյա Հայոց պատմության համալիր մշակութաբանական հետազոտությունը հիմք է տալիս Հայկական լեռնաշխարհը բնութագրել որպես Հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան: Հայոց քաղաքակրթական զարգացումներում վճռական նշանակություն են ունեցել Հայաստանի հոգևոր ու մշակութային, տնտեսական և բնական ռեսուրսները, ինչպես նաև Արևելքի և Արևմուտքի միջև զբաղեցրած ռազմավարական դիրքը [17, p. 8; 18, p. 202-227]: Հայաստանի նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ բարձր են գնահատել Կալմեն (1672-1757) (Հայաստանը անվանում է «քաղաքակրթության բնօրրան») [19, p. 162; 20] և Դավիդ Մարշալ Լանգը՝ «Հայաստանը քաղաքակրթության բնօրրան» գրքում. «Հին երկիր Հայաստանը գտնվում է բարձր լեռներում… Միջագետքը իր Շումերի և Բաբելոնի հին քաղաքակրթություններով, Եգիպտոսի հետ միասին, թեպետ սովորաբար, ժամանակակից իմաստով, դիտվում է որպես քաղաքակիրթ կյանքի գլխավոր աղբյուր, Հայաստանը նույնպես իրավունք ունի համարվելու մարդկային մշակույթի բնօրրաններից մեկը: Նախ, Ծննդոց գրքում ասված է, որ Նոյյան տապանը իջավ Արարատ լեռան գագաթին, Հայաստանի կենտրոնում: Ենթադրվում է, որ տապանից, Նոյի ժառանգները, և կենդանիների, և թռչունների բոլոր տեսակները բնակեցրին երկիրը: Որևէ կարևորություն, որպես պատմական սկզբնաղբյուրի, տալիս ենք թե ոչ Ծննդոց գրքին (որը արժևորված է ամբողջ աշխարհում հավատացյալների և անհավատների կողմից), ոչ մեկը չի կարող բացառել Նոյյան տապանի մասին դրա խորհրդանշական կարևորությունը: Ավելին, Հայաստանը իրավունք ունի համարվելու հին մետաղամշակության ավելի քան հինգհազարամյա հնության օջախներից մեկը: Ավելի ուշ Հայաստանը դարձավ առաջին մեծ թագավորությունը, որը հռչակեց քրիստոնեությունը որպես պետական կրոն և առաջինը մշակեց եկեղեցական ճարտարապետության ոճը, որը նախորդեց մեր սեփական արևմտյան գոթականին» [21, p. 9]: Այս միտքը քաղաքակրթության պատմության մեջ Հայաստանի ներդրման տեղի և դերի ճանաչման վկայությունն է:

Ըստ «Էնմերկարը և Արատտայի տերը» շումերական դյուցազնավեպի (Արատտան կոչվել է «սուրբ ծեսերի (կամ օրենքների) երկիր» [22]) և Ծննդոց գրքի՝ հայ էթնո-հոգևոր արմատները սրբագործվել են Արարատի լեռներում (Արատտա=Հայկական լեռնաշխարհ [23, p. 59-81]: Արարատ լեռան ոգեղենությունն արտացոլվել է նաև համաշխարհային արվեստի (Ջոզեֆ Թըրներ, Հովհաննես Այվազովսկի, Ջեյմս Տիսսո, Սալվադոր Դալի) և գրական գործերում: Լորդ Բայրոնը բանաստեղծական ոգեշնչմամբ գրել է. «Ինչ էլ եղել է նրանց (հայերի- *Է.Դ.)* ճակատագիրը, իսկ այն դառն էր, ինչ էլ այն լինի ապագայում, նրանց երկիրը պետք է որ ամենից հետաքրքիրը լինի աշխարհում: Եթե Սուրբ

Գիրքը ուղիղ ըմբռնենք, Հայաստանի մեջ էր, որ գտնված էր դրախտը... Հայաստանում էր, որ ջրհեղեղը դադարեց և աղունիկը նստեց» [24, p. 8]:

Հայկական քաղաքակրթությունն իր արմատներով մարդկության քաղաքակրթության բնօրրանում է, և եզակի երևույթ է պատմության մեջ, երբ քաղաքակրթության համաշխարհային և էթնիկական արմատները միևնույն հիմքից են [25, p. 30-56]: Հազարամյակների ընթացքում հայկական քաղաքակրթությունը վերելք է ապրել, ինչպես նաև ծանր կորուստներ կրել:

Հայաստանն ի սկզբանե լինելով լուսապաշտության վկայության կենտրոնում՝ հետագայում դարձավ քրիստոնեական աշխարհի առաջապահը Արևելքում: Հայաստանը մեծ ներդրում ունի մշակույթի համաշխարհային գանձարանում: Ժամանակի ընթացքում Հայաստանը ծանր կորուստներ կրեց երկիրն ավերող արևելյան և արևմտյան նվաճողներից, հատկապես՝ արևելյան ցեղերի ասպատակություններից:

Սելջուկ-թուրքերը ծագումով քոչվոր ցեղեր էին Կենտրոնական Ասիայից: Առնոլդ Թոյնբին գրել է. «Նրանց անվանադիր նախնի Օսմանը... Անատոլիա (Փոքր Ասիա- *Է.Դ.)* գլխավորեց թուրք փախստականների անանուն մի ավազակախմբի, որը մարդկային թափթփուկների մի չնչին բեկոր էր ներկայացնում» [2, II, p. 151]: Այսպիսի վայրենի հիմքի վրա առաջացած Օսմանյան սուլթանությունը օտար, խայտաբղետ կազմավորում էր, որը մահացու մագիլներով մխրճվեց նվաճված՝ քաղաքակթական պատմական մեծ ուղի անցած երկրներում: Իսկ ուր քայլում էր թուրք քոչվոր-զավթիչը, երկիրը վերածվում էր անապատի: Վիկտոր Հյուգոն գրել է. «Թուրքերը այստեղով են անցել. ամեն ինչ ավերված և սգավոր է» [26, p. 476]: Մի վանական գրիչ Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսի գրավման (1453թ.) մասին գրել է. «Երբեք չի եղել և չի լինի ավելի ահավոր պատահար» [27, p. 1-2]: Վ.Գլադստոնը (1809–1898) նմանապես նշել է. «... ուր էլ հայտնվեին օսմանները, նրանք լայն արյունոտ հետք են թողել ամենուր, և ուր որ հասներ նրանց տիրապետությունը, քաղաքակրթությունը կործանվում, չքանում էր տեսադաշտից» [28, c. 6]:

XIXդ. վերջին տասնամյակում, Օսմանյան կայսրությունում իրագործված ջարդերի ժամանակաշրջանում, երբ հայերի կրած մարդկային մեծ կորուստների հետ ոչնչացվում էին հայ ազգի ստեղծած քաղաքակրթական արժեքները, Վ.Գլադստոնը, դատապարտելով թուրքերի ոճրագործությունները, 1895թ. արտասանած իր ճառում ասել է. «Ծառայել Հայաստանին՝ նշանակում է ծառայել քաղաքակրթությանը»:

Նույնիսկ դժվարագույն ժամանակներում հայ ստեղծագործական տաղանդը դրսևորվում էր ինչպես հայրենիքում, այնպես էլ արտասահմանում [29]: Լորդ Բրայսը նշել է. «Կրթություն ստացած հայերը, չնայած կրած բոլոր

տառապանքներին, ժամանակակից քաղաքակիրթ աշխարհի հետ համաքայլ են: Նրանց մեջ կան գիտության և կրթության տեր մասնագետներ, ինչպես նաև նկարիչներ և բանաստեղծներ: Նրանք ցրված են տարբեր երկրներում: Ես հաճախել եմ արևմուտքում՝ մինչև Կալիֆորնիա հասնող հայկական մեծ գաղթօջախներ, կան նաև մյուսները, որ արևելքում մինչև Ռանգուն են հասնում: Օտարության մեջ հայտնվածներից շատերը կվերադառնային իրենց հին տունը, եթե հնարավորինս նրանց երաշխավորվեր այն ապահովությունը և խաղաղությունը, որը նրանք երբեք չեն ունեցել և երբեք չեն ունենա թուրքերի գերիշխանության տակ: Արդյո՞ք մենք չենք կարող վստահորեն հույս ունենալ, որ Դաշնակից տերությունները պատերազմի վերջում կգտնեն ապահովության միջոց՝ նրանց տալու այն, ինչը նրանք երկար ժամանակ ցանկացել են և ընդունակ են լավ օգտագործելու համար» [30, *Preface*]:

Ա.Թոյնբին, բարձր գնահատելով բնիկ հայկական քաղաքակրթության նշանակությունը, 1915թ. նշել է. «Հայերը միգուցե հնագույն հիմնարար քաղաքակիրթ ազգերից են Արևմտյան Ասիայում, և նրանք ներկայումս, անկասկած, ամենից կենսունակն են: Նրանց հայրենիքը Կասպից, Միջերկրական և Սև ծովերի միջև գտնվող բարձր լեռների համակարգ է: Այստեղ հայ գյուղացին ապրել է անհիշելի ժամանակներից ծանր աշխատանքային կյանքով, որը նա վարում էր մինչև այս ծայրագույն աղետի շեմը: Այստեղ հզոր, քաղաքակիրթ Հայկական թագավորությունը աշխարհում առաջին պետությունն էր, որն ընդունեց քրիստոնեությունը որպես ազգային կրոն: Այստեղ Եկեղեցին և ժողովուրդը պահպանել են իրենց ավանդույթները չափազանց կենսունակությամբ՝ ի հակադրություն ամեն կողմից ալիք առ ալիք տեղի ունեցող օտար նվաճման… Հայը ոչ միայն աշխատասեր գյուղացի է, նա ունի արհեստավորի տաղանդ և մտավորականի ձգտումներ: Լեռներում ամենից տագնապալի վիճակում հայտնված գյուղը երբեք հույսը չէր կտրում իր գյուղական դպրոցից, և այս դպրոցները մայրուղիներ էին դեպի ավելի մեծ աշխարհ… Հայը կորցրել է իր բուն երկրի անբաժանելի սեփականությունը… բուն Հայաստանը՝ Վերին Եփրատից արևելք և Տիգրիսից հյուսիս... Հայ ազգի ժամանակ առ ժամանակ կրած տառապանքների գագաթնակետն էր թուրք կառավարողների կազմակերպված, սառնարյուն փորձը՝ մեկընդմիշտ ոչնչացնել նրան աննախադեպ բարբարոսության և ստորության մեթոդներով» [31, p. 17-19; 2, III, p. 18]:

Բրիտանիային և գալիք Խաղաղության կոնֆերանսին (որը տեղի ունեցավ 1919թ. Փարիզում) հասցեագրված ուղերձի հեղինակը՝ Ա.Հակոբյանը, գրելով երիտթուրքերի ցեղասպան և հակաքաղաքակրթական հանցագործությունների մասին, վկայակոչել է դաշնակիցների՝ ԱՄՆ նախագահ Վիլսոնին ուղղված պատասխանում (1917թ. հունվար) արված հայտարարությունը, «որ իրենց նպատակներից մեկն է Եվրոպայից դուրս մղել Օսմանյան կայսրությա-

նը՝ որպես որոշակիորեն օտար Արևմտյան քաղաքակրթությանը» [30, ch. III]:

XXI դարի շեմին ամերիկյան լրագրող Ռոբերտ Կապլանը վկայել է հայ քաղաքակրթության ոչնչացման մասին Արևմտյան Հայաստանում, որտեղ ինքը ճանապարհորդել է՝ հասնելով մինչև Տրապիզոն: Նա գրել է, որ Արևմտյան Հայաստանում, բացի պատահական ավերակներից, «հայ քաղաքակրթության ամեն մի հետք ոչնչացված է... » [32, p. 318]:

Բարձր գնահատելով Եկեղեցու դերը քաղաքակրթության համատեքստում՝ Բերտրանդ Ռասելը գրել է. «Եկեղեցին միաժամանակ ներկայացնում էր թե՛ ամբողջություն անցյալի հետ և թե՛ այն, ինչ ամենից քաղաքակիրթն էր ներկայումս» [33, p. xvii.]:

Հայ և համաշխարհային ճարտարապետության գոհարների՝ բազում մեծարժեք պատմական հուշարձանների շարքում եկեղեցիների ոչնչացումը թուրքերի կողմից՝ հանցագործություն է քաղաքակրթության դեմ, ինչը Հայոց ցեղասպանության՝ մարդկության դեմ գործած հանցագործության շարունակությունն է [14]: Իսկ Արևելյան Հայաստանում՝ բնիկ հայկական երկրամասերում՝ Նախիջևանում, Արցախում և Ուտիքում, խորհրդային ժամանակներից այդ արել են թուրք-«ադրբեջանցիները»: Հայկական մշակույթի ջարդը նրանք շարունակեցին նաև հետխորհրդային ժամանակաշրջանում՝ 21-րդ դարի սկզբներին Ջուղայի տասնյակ հազարավոր հայկական խաչքարերի վերջին խմբերի ոչնչացումով [34]: Այդ հրեշավոր հանցագործությունները ոչ թե քաղաքակրթությունների կամ մշակույթների բախում են, այլ պանթուրքիզմի մարդատյաց հակահայկական քաղաքականությունից բխող ցեղասպանության շարունակություն մշակույթի դեմ: Արցախի կապակցությամբ բարոնուհի Քերոլայն Քոքսը և պրոֆ. Ջոն Այբները 1993թ. նշել են, որ հայկական հուշարձանների ոչնչացումը «ադրբեջանցիների» կողմից ուղեկցվում էր էթնիկական «զտումով» [35]: Շնորհիվ Արցախի ազատագրական հերոսական հաղթանակի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի լեռնային մասն ազատագրված հողերով) տարածքում վերականգնվում է հայկական քաղաքակրթության բնականոն կյանքը: Այս պատմական իրադարձությունը վկայում է, որ հայրենի հողը և ազգային մշակութակերտ քաղաքակրթական արժեքները կարիք ունեն զենքով պաշտպանության:

Ազգային-ազատագրական պայքարով ձեռք բերված անկախության և ազգային պետականության վերակերտման կարևոր գաղափարական երաշխիքներից է հայագիտական պատմական ռեսուրսը, որի պաշտպանությունը կարևոր խնդիր է տեղեկատվական անվտանգության համակարգում:

Աշխարհաքաղաքական ներկայիս զարգացումների պայմաններում ավելի քան հրատապ են դարձել «տեղեկատվական և դրա բաղկացուցիչ մասը կազմող հոգևոր անվտանգության խնդիրները, և հոգևոր արժեքների պահպա-

նումը վերածվել է ազգային անվտանգության կարևորագույն խնդրի» [36, էջ 3]: Այս համատեքստում ազգային-քաղաքակրթական անվտանգության գործընթացներին վտանգող տեղեկատվածին սպառնալիքների բացահայտումը և որակումը զգալի չափով պայմանավորված է ազգային շահի խորքային պատկերացումներով և գիտակցումով: Ավելին, «արդի գլոբալացումը պարունակում է գաղափարախոսական, հոգևոր-մշակութային ծավալապաշտության տարրեր», ինչը, իր հերթին «արտացոլում է ներգործող (տեղեկատվական գրոհ իրականացնող- *Է.Դ.)* երկրի ազգային շահերը և այդպիսով կարող է խաթարել կրավորաբար ենթարկվողի ազգային քաղաքակրթական և տեղեկատվական-հոգևոր անվտանգությունը» [37, էջ 8]: Այսպիսով, հայ ազգային արժեհամակարգի հիմնասյան՝ հազարամյակների խորքից եկող պատմական ժառանգության պահպանումը տեղեկատվական միջոցներով ազգային անվտանգության ապահովման գրավականներից է [38, էջ 6-12]:

Քաղաքակրթական գործընթացներին անդրադառնալիս Ս.Հանթինգտոնը գրել է. «Քաղաքակրթությունների բախումը կգերակշռի համաշխարհային քաղաքականության մեջ... Քաղաքակրթությունների միջև կոնֆլիկտը կլինի կոնֆլիկտի էվոլյուցիայի ամենից վերջին փուլը ժամանակակից աշխարհում» [39, p. 1]:

Պատմական ենթատեքստից դուրս՝ քաղաքակրթության ապագայի պարզունակ դիտարկումը կարող է հանգեցնել դրա՝ որպես լոկ քաղաքական համակարգի մեկնաբանմանը, իսկ քաղաքական համակարգերի բախումը՝ որպես քաղաքակրթությունների բախում: Օրինակ, սառը պատերազմը «երկու հակադիր (կոմունիստական և կապիտալիստական) համակարգերի միջև գաղափարական, աշխարհաքաղաքական պատերազմ էր» [40, p. 73], այլ ոչ թե պայքար «կոմունիստական» և «կապիտալիստական» քաղաքակրթությունների միջև:

Իրենց ստեղծագործ ներուժով մշակույթները շփման հնարավորություն ունեն կամրջելու քաղաքակրթությունները՝ որպես դրանց գլխավոր բաղադրամասեր: Ի.Բերլինը նշել է. «Լուսավորչության ռացիոնալիզմը ենթադրում էր, որ արժեքների միջև տեղի ունեցող բախումները թերի կրթության կամ անարդարության ժառանգություն էին, և կարող էին վերացվել իրատես բարեփոխումներով, անհատներին ուսուցանելով՝ հավատալու, որ իրենց անհատական շահերը կարող են լրիվ իրականացվել՝ աշխատելով բացարձակապես ընդհանուր բարեկեցության համար» [8, p. 202]:

Կարելի է խոսել մշակույթների և քաղաքակրթությունների միջև մրցակցության և փոխազդեցության մասին՝ պայմանավորված մշակույթների արժեքային բազմազանությամբ: Ազգը մշակույթով է ներկայանում աշխարհին, միևնույն ժամանակ՝ մշակույթի շարունակականությունը պայմանավորված է

ազգային ավանդույթների պահպանմամբ:

Արդի քաղաքագիտական մոտեցումներում *ավանդույթների* խնդիրը հայտնվել է *լիբերալ դեմոկրատիայի* քարոզչության ոլորտում: Համաձայն Ֆ.Ֆուկույամայի՝ «Վերջին մի քանի տարիների ընթացքում ամբողջ աշխարհում ծագեց հիասքանչ փոխհամաձայնություն լիբերալ դեմոկրատիայի՝ որպես կառավարման համակարգի, օրինականության մասին, քանզի այն պարտության մատնեց այնպիսի հակադիր գաղափարախոսությունների, ինչպիսին են ժառանգական միապետությունը, ֆաշիզմը և բոլորովին վերջերս՝ կոմունիզմը… Լիբերալ դեմոկրատիան կարող է լինել «մարդկության գաղափարական զարգացման վերջնակետը» և «մարդկային կառավարման վերջնական ձևը» և, որպես այդպիսին կազմել է «պատմության վերջը»: Այսինքն՝ մինչ կառավարման նախկին ձևերը բնութագրվում էին լուրջ արատներով և իրենց հնարավոր կործանմանը տանող անիրատեսությամբ, լիբերալ դեմոկրատիան հնարավորինս ազատ էր այդպիսի հիմնարար ներքին հակասություններից… Սակայն, ժամանակին, այս խնդիրներն ավելի շուտ հետևանք էին երկվորյակ սկզբունքների՝ ազատության և հավասարության թերի ներդրման, քան հենց այդ սկզբունքներում եղած թերությունների» [10, p. xi]:

Ֆ.Ֆուկույաման իր հայեցակարգում բաղարկել է Կանտի («Աշխարհի պատմությունը ոչ այլ ինչ է, քան ազատության գիտակցման առաջընթաց») [41, p. 11-26] և Հեգելի («Արևելյան ազգերը գիտեին, որ մեկն է ազատ, իսկ, ըստ հունական և հռոմեական աշխարհի՝ ոմանք են ազատ, մինչդեռ մենք գիտենք, որ բոլոր մարդիկ բացարձակապես ազատ են») [42, p. 19] տեսակետները: Միևնույն ժամանակ, Ֆ.Ֆուկույաման նշում է, որ «Հեգելին հաճախ մեղադրում էին որպես պետության և դրա հեղինակության երկրպագողի և, դրանով իսկ՝ լիբերալիզմի և դեմոկրատիայի նկատմամբ թշնամի լինելու մեջ» [10, p. 60]:

Լիբերալ դեմոկրատիայի գաղափարը ներկայացվում է որպես սոցիալական և ինստիտուցիոնալ թերությունների դեմ ամենակարող դեղամիջոց, որին հաջորդելու է տարբեր երկրների քաղաքական և մշակութային համակարգերի «համահարթեցումը» և դրանց տնտեսությունների ենթակայությունը կենտրոնացված տրանսնացիոնալ համակարգին: Ֆ.Ֆուկույաման գրել է, որ «պատմությունը՝ որպես միակ, հաջորդաբար շարունակվող, էվոլյուցիոն պրոցես», եկել է իր ավարտին, քանզի «կա՞ իմաստ նորից խոսելու մարդկության կապակցված և ուղղորդված *Պատմության* մասին, որն ի վերջո մարդկության մեծ մասին կտանի դեպի լիբերալ դեմոկրատիա: Պատասխանը, որին ես հանգում եմ՝ *այո* է, երկու տարբեր պատճառներով: Մեկը կապված է տնտեսության հետ, իսկ մյուսը՝ այն բանի, ինչը կոչվում է «պայքար ճանաչման համար» [10, p. xii]:

Պատմականորեն *ժողովրդավարությունը՝ դեմոկրատիան,* հասարակու-

թյան բնականոն զարգացման արդյունք էր և բնորոշ էր *նահապետական* ժամանակներից առաջացած պետականությանը՝ որպես ցեղի ավագանուց սերած կառավարման համակարգին զուգահեռ ժողովրդի մասնակցություն՝ *ժողով*, որը ժողովվում էր երկրի համար կարևոր հարցերի շուրջ խորհրդակցելու և որոշումների ընդունմանը մասնակցելու համար: Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ հայ ազգի միջավայրում այդ մարմինը հնագույն ժամանակներից եղել է *Աշխարհաժողովը,* որի ավանդական հավաքատեղին դարձել էր սրբազան Նպատ լեռան լանջերից տարածվող Ձիրավի դաշտը, Արածանի գետի (Արևելյան Եփրատ) վերին հոսանքի շրջանում:

Դասական իմաստով *դեմոկրատիայի* գաղափարը Եվրոպայում հայտնի է հին Հունաստանի ժամանակներից (Ք.ծ.ա. V-IVդդ.), որպես որոշ հունական քաղաք-պետություններում գոյություն ունեցած կառավարման ձև, ինչը տեսականորեն իր արտահայտությունն է ստացել հին հունական փիլիսոփաների երկերում [33, p. 114, 189-190]:

Արդի դեմոկրատիայի միջոցները խաղաղ քաղաքական և հասարակական զարգացումների հնարավորություններ են ստեղծում: Սակայն, ինչպես նշում է Ֆ.Ֆուկույաման, նույնիսկ «այսօրվա կայուն դեմոկրատիաները, ինչպիսին են ԱՄՆ-ը, Ֆրանսիան կամ Շվեյցարիան, զուրկ չէին անարդարությունից կամ լուրջ սոցիալական խնդիրներից» [10, p. xi]: Այդպիսի այլափոխությունների առիթով կիրառելի է Շպենգլերի դրույթը, որ «Դեմոկրատիան փողի ավարտուն հավասարեցումն է քաղաքական իշխանությանը» [1, ch. XX; 43, p. 59]: Միևնույն ժամանակ, Շպենգլերը, ներկայացնելով քաղաքակրթության ձևավորման վերջին փուլի մասին գաղափարը, իր ժամանակաշրջանի առումով գրել է. «Փողը նույնպես սկսել է կորցնել իր իշխանությունը, քանզի մոտիկ է վերջին՝ փողի և արյան միջև կոնֆլիկտը, որում Քաղաքակրթությունը ստանում է իր վերջնական ձևը… Փողը տապալված և չեղյալ է համարվել արյան կողմից» [1, ch. 21]:

Ընդունելով տեխնոլոգիան որպես աշխարհի ապագա լիբերալ-դեմոկրատական կարգի անկյունաքար՝ Ֆ.Ֆուկույաման գրել է. «Տեխնոլոգիան հարստության անսահման կուտակման հնարավորություն է ընձեռում, դրանով մարդկային ցանկությունների ընդլայնվող պահանջների բավարարում: Այս գործընթացն ապահովում է բոլոր հասարակությունների հարաճուն միատարրացում, անկախ նրանց պատմական ծագման կամ մշակութային ժառանգության»: Այնուհետև շարադրանքը հնչում է ինչպես նոր «լիբերալ աշխարհի» «դոկտրին». «Բոլոր երկրները, որոնք տնտեսական մոդեռնիզացիա են ապրում, պետք է հարաճուն կերպով նմանվեն մեկը մյուսին: Նրանք պետք է միավորվեն ազգովի՝ կենտրոնացված պետության հիման վրա, ուրբանիզացվեն, փոխարինեն սոցիալական կազմակերպության, այսինքն՝ ցեղի, մարդկային

խմբի և ընտանիքի ավանդական ձևերը տնտեսապես ավելի ռացիոնալ ձևերով՝ հիմնված գործնականության և էֆեկտիվության վրա, և իրենց քաղաքացիներին ապահովեն համընդհանուր կրթությամբ» [10, p. xv]:

Քննարկելով Ֆ.Ֆուկույամայի գաղափարները դեմոկրատիայի մասին՝ Վլադիմիր Մոզը գրել է. «Հակասությունն այն է, որ մինչ դեմոկրատիան հպարտանում է անհատների միջև խաղաղության և եղբայրության իր ոգով, դեպի դեմոկրատիան տանող արահետը թե՛ ազգերի միջև և թե՛ նրանց ներսում իրականում ներառում է անհատական և ազգային կյանքի աննախադեպ ավերում... քիչ է խոսվել այն մասին, թե ինչպես ազգայնականությունը պաշտպանում է ազգերը, մշակույթները և մարդկանց ոչնչացումից (օրինակ, այն պաշտպանեց Արևելյան Եվրոպայի Ուղղափառ ժողովուրդներին ոչնչացումից թուրքական լծի տակ)» [44, ch. 10]:

Ֆ.Ֆուկույաման, համադրելով «*թյումոս*»-ի («հոգի, ոգի, որպես կյանքի սկզբունք, զգացում և միտք») [45, p. 810] մեկնությունը ըստ Պլատոնի (հոգի = բանական մաս + ցանկության մաս (էրոս) + «*թյումոս*» («ճանաչման ձգտումը») Հեգելի «պայքար հանուն ճանաչման» դրույթի (ինչն «այնքան հին է, որքան արևմտյան քաղաքական փիլիսոփայությունը») հետ, գրել է, որ *լիբերալ դեմոկրատիայի* համակցված ուսմունքը «գլխավորապես առաջանում է *թյումոս*-ից՝ հոգու այն մասից, որը ճանաչում է պահանջում... Կենսամակարդակի աճի հետ մեկտեղ, քանի որ բնակչությունը դառնում է ավելի կոսմոպոլիտ և կրթված, իսկ հասարակությունը՝ որպես ամբողջություն, ավելի հավասարակշռված, մարդիկ սկսում են պահանջել ոչ միայն ավելի շատ հարստություն, այլև իրենց կարգավիճակի ճանաչում» [10, p. xvi- xviii]:

Ուրեմն, «*թյումոտիկ* հպարտությունը» ներկայացվում է որպես անհատների շարժիչ ուժ դեպի դեմոկրատական կառավարումը: Եթե «ճանաչման ձգտումը» ներկայացվելով որպես պատմության շարժիչ ուժ, մշակութային, կրոնական, աշխատանքային, ազգայնական և պատերազմական ոլորտներին պատկանող շատ երևույթներ վերիմաստավորվում են, քանզի, ըստ Ֆ.Ֆուկույամայի, «կրոնական հավատացյալը, օրինակ՝ ձգտում է իր աստվածների կամ պաշտամունքային արարողությունների ճանաչմանը, մինչդեռ ազգայնականը պահանջում է իրեն հատուկ լեզվական, մշակութային կամ էթնիկական խմբի ճանաչում: Ճանաչման այս երկու ձևերը պակաս ռացիոնալ են, քան լիբերալ պետության համընդհանուր ճանաչումը, քանի որ դրանք հիմնված են հոգևորի և աշխարհիկի միջև եղած կամայական տարբերակումների վրա: Այս պատճառով, ազգայնականությունը և ժողովրդի համալիր կամ էթիկական սովորույթները և ավանդույթները (ավելի լայն իմաստով՝ «մշակույթը») ավանդաբար մեկնաբանվել են որպես խոչընդոտներ հաջող դեմոկրատական քաղաքական կառույցների և ազատ շուկայական տնտեսության հաստատման

ճանապարհին» [10, p. xix]:

Այսպիսի մոտեցմամբ ազգային-մշակութային առանձնահատկությունները դիտարկվում են որպես դեմոկրատական արժեքների շրջանակում հասարակությունների կառուցվածքային զարգացումների խոչընդոտներ, կամ էլ՝ բախման ենթակա տարրեր: Մտածողության այս ուղղությունը՝ քաղաքակրթությունների բախման տեսությամբ հանդերձ, բովանդակությամբ պարտադրող բնույթ ունի՝ շեղվելով իրական դեմոկրատիայի գաղափարից: Ընտրյալ բարգավաճման մասին գաղափարի հանդեպ այսպիսի մեթոդաբանական մոտեցման ակունքներում նշմարվում է Փիլոն Ալեքսանդրիացու (կամ Եբրայեցու) (Ք.ծ.ա. 20-մ.թ. 50թթ.) պնդումը. «Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր ազգ կթողնի իր ուրույն ճանապարհը, և դեն նետելով իրենց նախնիների սովորույթները, կդառնան միայն մեր օրենքները պատվելուն: Քանի որ, երբ վերջիններիս փայլի պայծառությունը ուղեկցվի ազգային բարգավաճումով, այն կխամրեցնի մյուսների լույսը, ինչպես ծագած արեգակն է խամրեցնում աստղերին» [46, II.vii. 44]:

Որոշ ժամանակակից փիլիսոփայական տեսություններ արտացոլում են տարբեր մոտեցումներ համաշխարհային քաղաքակրթական զարգացումներին: Դեմոկրատիան երբեմն «արտահանվելով» «կայուն դեմոկրատիաների» երկրներից՝ դարձել է գայթակղության վեմ միջպետական հարաբերություններում: Միտում կա վերահսկել, գաղափարապես ապազգայնացնել և նույնիսկ սպառնալ նրանով: Դեմոկրատիայի գաղափարը, ծառայեցվելով ծավալապաշտ քաղաքական համակարգերի քարոզչությանը, տեղեկատվածին վտանգների ցանցում խեղաթյուրվում է և օգտագործվում տեղեկատվական պատերազմներում:

Միևնույն ժամանակ, ի հայտ եկան հոռետեսական ուսմունքներ՝ «հակափիլիսոփայությունից» մինչև «փիլիսոփայությունը մահացած է» [47], ինչպես նաև պատմությունները և պատմիչներին «ապամիստիկացնող»՝ պատմության հիմնական բաղկացուցիչ տարրերից «զտող» *մետապատմություն* [48, p. xii]: Այնինչ, իրականում բացառվում է պատմության բաղկացուցիչ որևէ մասի անտեսումը, քանզի մշակութակերտ արժեքների հիման վրա բարձրացող աշխարհայացքի ձևավորման ուղիները դիտելով Դավիթ Անհաղթի սահմանման («Իմաստասիրութիւն դիտաւորութիւն ունի զհոգիս մարդկան զարդարել») [49, էջ 118] լույսի տակ, պատմությունը, ներառյալ անդրանցական (տրանսցեդենտալ) ընկալումները, ներկայանում է ամբողջության մեջ՝ աշխարհաճանաչողության փիլիսոփայական գիտելիքների համակարգում [50, էջ 183]:

Հետևյալ պնդումը հնչում է որպես ավանդական արժեքների մերժում. «Հակափիլիսոփայությունը բացի իրենից ոչնչի չի հավատում՝ ո՛չ Աստծուն, ո՛չ երկրին, ո՛չ էլ ծնողին» [51, p. 1]: Այս պնդմանը հակառակ, «մերժողակա-

նությունը իրատեսի պատասխանն է իդեալիզմին: Սա մի տեսակետ է, ըստ որի, ավանդական արժեքները և հավատամքները անհիմն են և, որ գոյությունը անիմաստ է… Մինչդեռ, մերժողականությունը, հասարակագիտորեն, առանց արժեքների մշակույթ է, հիմնավորապես՝ կյանք է առանց հոգու» [46]:

Ի պատասխան «հակափիլիսոփայության» հետևորդների և «փիլիսոփայության մահը» կանխագուշակողների, նշվել է. «Այո՛, բարբարոսության ալիք և վատ փիլիսոփայության պոռթկում, սակայն երբեք փիլիսոփայության լրիվ վերջ՝ մինչ մարդ արարածը չի կորցնի իր հնարամտությունը, հետաքրքրասիրությունը, անհանգստությունները, հակասությունները և հույսերը» [52]:

Քաղաքակրթությունների բախման մասին Հանթինգտոնի տեսությունը հիմնված է «քաղաքակրթության՝ որպես մշակութային ամբողջություն, գաղափարի վրա… արաբները, չինացիները և արևմտյան ժողովուրդները, այնուամենայնիվ, մաս չեն որևէ ավելի լայն մշակութային ամբողջության: Նրանք կազմում են քաղաքակրթություններ: Քաղաքակրթությունը, այսպիսով, մարդկանց բարձրագույն մշակութային խմբավորում է և մշակութային ինքնության ամենից ընդարձակ մակարդակը...» [39, p. 2.]: Հեղինակը քաղաքակրթությունը բնութագրել է մշակութային ինքնության թե՛ «ընդհանուր օբյեկտիվ տարրերի, ինչպիսիք են լեզուն, պատմությունը, կրոնը, սովորույթները, հաստատությունները, թե՛ մարդկանց սուբյեկտիվ ինքնության տեսանկյունից: Քաղաքակրթական ինքնությունը ավելի ու ավելի կարևոր կդառնա ապագայում. աշխարհը մեծ մասամբ կձևավորվի յոթ կամ ութ գլխավոր քաղաքակրթությունների միջև ընթացող փոխներգործությամբ… Ապագայի ամենից կարևոր կոնֆլիկտները կծագեն այս քաղաքակրթությունները միմյանցից բաժանող մշակութային խզումներին զուգընթաց» [39, p. 3]:

Մշակութային-քաղաքակրթական երևույթների բնականոն՝ առանց բախումների զարգացումների մասին ընկալումը մեթոդաբանորեն հիմնված է քաղաքակրթությունների երկխոսության ուղիների վերհանման հետազոտության վրա: Տարբեր քաղաքակրթությունների միջև տեղի ունեցող փոխազդեցությունների դրույթի տեսանկյունից անդրադառնալով մշակույթների և քաղաքակրթությունների տեղական առանձնահատկություններին, որպես անցումային երևույթ է դիտարկվել «քաղաքակրթության վերահսկվող զարգացումը իբրև մարդկության ինքնապահպանման նախադրյալ» [53, p. 73]: Միջքաղաքակրթական երկխոսության անկյունաքարը համարելով պատմական ճշմարտությունը՝ Վ.Յակունինը գրել է. «Մարդկային հանրությունները մշտապես զարգացող ինքնություններ են՝ գտնվելով անընդհատ շարժման մեջ: Նրանց զարգացումների փիլիսոփայությունը պայմանավորված է պատմական պայմաններով, որոնց ազդեցությամբ նրանք ձևավորվել են: Տարբեր ժամանակաշրջաններում այս գործընթացը տարբեր կողմերով է դրսևորվում, և այն ոչ

միշտ է ուղիղ, կամ ավելին՝ ոչ միշտ կանխատեսելի... Ժողովուրդներին և ազգերին միմյանց մոտեցնելու միջքաղաքակրթական երկխոսության դերի և տեղի մասին քննարկումների ընթացքում թվում է թե խելամիտ կլիներ դրված նպատակներին մոտենալ և դրանց հասնելու միջոցները ընտրել…՝ հետևելով պատմական ճշմարտությանը, առանց խախտելու ընդհանուրի և անհատականի միասնությունը» [54, p. 141]:

Ըստ երկխոսական սկզբունքի, «Մշակույթների համաշխարհային էվոլյուցիայում կրկնվող թեման այն է, որ ամբողջ պատմությունը պայքար էր... մարդու եսակենտրոն կարծիքի և հայտնվող երկխոսական մարդ արարածի միջև» [55]:

Այսպիսով, «մշակույթների երկխոսության» միջոցով անկախ ազգերի միջև մշակված համագործակցության համաշխարհային համակարգը դիտվում է «ոչ միայն կարևոր, այլ նաև հրատապ… Մշակույթների երկխոսության առարկան մշակույթն է՝ տերմինի ամենալայն ընդգրկմամբ: Այն, ինչ ճշմարիտ է որպես ամբողջություն՝ մշակույթի ցանկացած մասում, պետք է նաև բացահայտորեն ճշմարիտ լինի դրա յուրաքանչյուր ենթաբաժնում» [56]:

Բարձր քաղաքակրթական արժեհամակարգ ունեցող հասարակություններին բնորոշ են գիտամշակութային լայն շփումները: Խոր արմատներով մշակույթներն այդ զարգացումներում չեն բախվում (կամ կլանվում), այլ փոխհարստանալով՝ ներդրում են կատարում համաշխարհային մշակույթի գանձարանը: Այսպիսի երևույթի դասական օրինակ է հայկական «Ոսկեդարյան գրականության» (V դար) ինքնուրույն և թարգմանական գրական ժառանգությունը: Հայ թարգմանիչների ջանքերի շնորհիվ հայ ընթերցողը մայրենի լեզվով կարող է կարդալ Արիստոտելի փիլիսոփայական երկերը, Դիոնիսիոս Թրակացու «Քերականությունը», Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունը» և այլ երկեր: Հայերեն թարգմանությունների շնորհիվ պահպանվել են Հերմես Եռամեծի «Սահմանքը», Արիստիդեսի «Ջատագովությունը», Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրությունը» և այլ երկեր, որոնց հունարեն բնագրերը կորել են:

Քաղաքակրթությունների երկխոսության կարևորությունը դրվեց Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր վեհաժողովի օրակարգում 1998թ. նոյեմբերին: Գլխավոր վեհաժողովի միաձայն որոշմամբ 2001թ. հռչակվեց «Քաղաքակրթությունների միջև երկխոսության Միավորված ազգերի տարի» [57]:

Ազգերի քաղաքակրթական համագոյության տեսության լույսի ներքո՝ ազգ-քաղաքակրթություն հարաբերակցության մեջ կարևորվում է *պատմական առաքելություն* հասկացությունը: Դրանով իսկ, հայկական քաղաքակրթական ենթատեքստում՝ հայ ժողովրդի պատմական էության վերհան-

մամբ, անհրաժեշտ է համարվել գիտակցել այդ առաքելությունը և առաջարկել «քաղաքակրթությունների գոյակցության բանաձև» [58, էջ 26-27]:

Մշակույթները իրենց բազմազանությամբ կարող են մրցակցել և փոխհարստանալ, և ստեղծագործ ներուժով՝ կամրջել քաղաքակրթությունները, իսկ բախումները ծավալապաշտ քաղաքականության ոլորտին են պատկանում:

Այսպիսով, քաղաքակրթական երևույթների փիլիսոփայական իմաստավորումը մշակութային զարգացումների ճանաչողության և գնահատման համատեքստում՝ հիմնարար նշանակություն ունի ազգային և համամարդկային արժեքների՝ համաշխարհային քաղաքակրթության ամբողջության մեջ ընկալման և պահպանման գործում:

Հունվար, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Spengler O.,* The Decline of the West. English abridged edition prepared by Arthur Helps from the translation by Charles Francis Atkinson. New York, [1926, 1928, 1932], http://www.duke.edu/%7Eaparks/SPENG7.html; http://theunorthodoxjew.blogspot.com
2. *Toynbee A.J.,* A Study of History, vol. I-IV, London, New York, Toronto, 1955.
3. *Toynbee A.J.,* Christianity and Civilization, Wallingford, PA., 1947 p. 6, 26.
4. *Bloch M.,* The Historian's Craft, Vintage Books, New York, 1953.
5. *Durant W.,* The Study of Civilization. Part I, Our Oriental Heritage. New York, Simon and Schuster, 1954.
6. *Hallett Carr E.,* What is History? The George Macaulay Trevelyan Lectures Delivered at the University of Cambridge January-March 1961, New York, 1961.
7. *Gibbon E,.* The History of the Decline and Fall of the Roman Empire, New York, 1995.
8. *Berlin I.,* A Life. Michael Ignatieff, London, 1998.
9. *Freud S.,* Civilization and Its Discontents, New York, 1962.
10. *Fukuyama Fr.,* The End of History and the Last Man, New York, 1993.
11. Nuclear Power: Myth and Reality. The Risks and Prospects of Nuclear Power, Saxonwold, 2006.
12. *Fussell P.,* The Great War and Modern Memory, New York, Oxford University Press, 1975.
13. *Ներսիսյան Ս.Գ.*, Պատմության կեղծարարները (հոդվածներ և զեկուցումներ), Երևան, 1998:
14. *Барсегов Ю.Г.,* "Геноцид армян - преступление против человечества" (о правомерности термина и юридической квалификации), Ереван, 1990:
15. *Барсегов Ю.,* "Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества", Документы и комментарии, т.1, М., 2002.
16. *Chodorow S., Knox M., Schirokauer C., Strayer J., Gatzke H.,* The Mainstream of Civilization since 1500. Sixth edition, New York, Toronto, Montreal, London, Sydney, Tokyo, 1994.
17. *Danielyan E.L.,* The Fundumental Questions of Armenian History in the Light of Tendencies of Modern Democracy, - "Armenian Mind," vol. V No. 1-2, 2001.

18. *Danielyan E.L.,* Les conséquences politiques de la position stratégique de l'Arménie dans l'economie du monde ancien et médiéval – Armeniaca. Publications de l'Université de Provence. 2004.
19. Calmet (Rev. Pére Dom Augustin) in Dictionnaire de la Bible-Paris : Aux Ateliers Catholiques du Pont Montrouge, 1846.
20. *Léonian R.,* " Les Arméniens de France sont-ils assimilés ?" , Issy-les-Moulineaux, 1986.
21. *David M.,* Lang, Armenia Cradle of Civilization. London. George Allen and Unwin LTD, 1970.
22. *Kramer S.N.,* Enmerkar and the Lord of Aratta: a Summerian Epic Tale of Iraq and Iran, Philadelphia, 1952.
23. *Kavoukjian M.,* Armenia, Subartu and Sumer. The Indo-European Homeland and Ancient Mesopotamia, Montreal, 1987.
24. Lord Byron`s Armenian exercises and poetry. From the letters of Lord Byron. Venice: in the Island of St. Lazzaro, 1907.
25. *Danielyan E.L.,* The Historical Background of the Philosophical Perception of the World Civilizational Developments. - International Academy for Philosophy, "News and Views", N 8, 2005.
26. *Hugo V.,* Oeuvres complètes. Poésie I. Paris, 1985, L'enfant.
27. *Palmer A.,* The Decline and Fall of the Ottoman Empire, New York, 1992.
28. *Гладстон В.,* Болгарские ужасы и Восточный вопрос. СПб, 1876.
29. *Macler F.,* La France et l' Arménie à travers l'Art et l'Histoire, Paris, 1917.
30. *Hacobian A.P.,* Armenia and the War. An Armenian's Point of View with an appeal to Britain and the Coming Peace Conference with a Preface by the Rt, Hon. Viscount Bryce, O.M., London, New York, Toronto, 1917, http://www.archive.org/stream/armeniawararmeni00hacouoft/armeniawararmeni00hacouoft_djvu.txt
31. *Toynbee A.,* Armenian Atrocities. The Murder of a Nation, with a speech delivered by Lord Bryce in the House of Lords, London, New York, Toronto, 1915.
32. *Kaplan R.,* Eastward to Tartary, New York, 2000.
33. *Russell Bertrand,* A History of Western Philosophy and Its Connections with Political and Social Circumstances from the Earliest Times to the Present Day, New York, 1966.
34. Julfa. The Annihilation of the Armenian Cemetery by Nakhijevan's Azerbaijani Authorities, Beirut, 2006.
35. *Caroline Cox and Eibner J.,* Ethnic Cleansing in Progress: War in Nagorno Karabakh, London, 1993.
36. *Հարությունյան Գ.,* Քաղաքակրթական գործոնը տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների համատեքստում, «21-րդ ԴԱՐ», # 2, 2006:
37. *Հարությունյան Գ.,* Հայության կազմակերպման և տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները, «21-րդ ԴԱՐ», # 2, 2008:
38. *Դանիելյան Է., Թաիրյան Վ.*, Հայոց պատմական ժառանգության պաշտպանության գործը և անվտանգ տեղեկատվական արդի միջոցները (տե՛ս «Հայկական լեռնաշխարհը Հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան», հայագիտական գիտաժողով (13-15 նոյեմբերի, 2003), զեկուցումների ժողովածու, Երևան, 2004:
39. *Huntington S.*, The Clash of Civilizations, Foreign Affairs. Summer 1993, v72, n3, from

the Academic Index (database on UTCAT system), COPYRIGHT Council on Foreign Relations Inc. 1993.
40. *Mason J.W.,* The Cold War, 1945-1991, London and New York, 1996.
41. *Kant I.*, On History. Indianapolis: Bobbs-Merrill, 1963.
42. *Hegel G.W.*, The Philosophy of History, New York, 1956.
43. *Koukkanen P.,* Prophets of Decline, The Global Histories of Brooks Adams, Oswald Spengler and Arnold Toynbee in the United States 1896-1961, Tampere, 2003.
44. *Moss V.,* The Restoration of Romanity. Essays in Orthodox Political Theology, *Surrey, England. 2004, 10.* "The End of History: A Critique of Liberal Democracy".
45. A Greek-English Lexicon, compiled by H.G.Liddell and R.Scott, with a revised supplement Clarendon Press. Oxford, 1996.
46. Philo, with an English translation by F.H.Colson, M.A., in ten volumes, vol. VI. Cambr., Massach., London, 1959, On the Life of Moses.
47. Philosophy is Dead. www.essentialism.net/philosophy_is_dead.htm
48. White Hayden, Metahistory: The Historical Imagination in Nineteenth Century Europe, Baltimore, 1973, p. xii.
49. *Դաւիթ Անհաղթ,* Սահմանք իմաստասիրութեան, Ե., 1960:
50. *Դանիելյան Է.Լ.*, Պատմությունը և մետապատմությունը մետատեսության համատեքստում, Փիլիսոփայություն և մետափիլիսոփայություն, գիրք 1, Երևան, 2007:
51. *Antonio Palomo-Lamarca,* Anti-philosophy and its Manifest. University of Minnesota, http://serbal.pntic.mes.es/AParteRei.
52. *Peter Suber,* Is Philosophy. Earlham College, Richmond, Indiana, 47374, U.S.A. Copyright . 1993, Peter Suber. peters@earlham.edu.
53. *Markaryan E.S.,* Transition to the Controlled Development of Civilization as a Condition of Self-Preservation of Mankind, Erevan, 2004..
54. *Yakunin V.I., Kapur J.,* Papanicolau N. Dialogue of Civilizations in the Contemporary Epoch, Englewood, NJ, 2008.
55. *Gangadean Ashok,* The Dialogical Revolution in Global Culture, HTML version Copyright. Ingrid H. Shafer 1997-1998.
56. *Lyndon H.*, LaRouche, Jr. Earth's Next Fifty Years. Executive Intelligence Review. The Dialogue of Eurasian Civilizations, December 19, 2004, www.larouchepub.com/ lar/2005/3201_next_50_years.html.
57. About the United Nations Year of Dialogue among Civilizations, www.unu.edu/ dialogue/ dialogue.
58. *Սարգսյան Տ.,* Հայկական քաղաքակրթությունը որպես բեկումնային նախագիծ, «21-րդ ԴԱՐ», # 2, 2006:

ТЕОРИЯ ЦИВИЛИЗАЦИИ В ГЕОПОЛИТИЧЕСКИХ КОНЦЕПЦИЯХ

Эдуард Л. Даниелян

Резюме

Идея происхождения и развития цивилизации – историческая категория в сфере философских учений и интерпретаций. Цивилизации характерны целостность духовно-культурных, экономических и политических компонентов, а также хронологическая последовательность, посему каждое философское понятие или определение касательно цивилизации, в свете культурно-ценностной системы, имеет современное звучание, обусловленное познавательным и информационным охватом. Одним из проявлений трансформации теории цивилизации в геополитических представлениях является концепция о множестве цивилизаций как субъектов противостояния и столкновения. Однако такая интерпретация методологически не выдерживает критики ввиду того, что важнейшим элементом цивилизации является культура, которой присуще творческое начало и чужда разрушительная сила. Культуры при всех своих разновидностях могут взаимообогащаться или соревноваться, а столкновение и разрушение исходит из сферы экспансионистской политики. Таким образом, философское осмысление цивилизационных процессов на основе сохранения и диалога культурных традиций имеет фундаментальное значение в системе общечеловеческих ценностей.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վարդան Ասցատրյան

Ցանկացած արժեքի իրացումը որևէ ժողովրդի կողմից ենթադրում է այն սեփական մշակույթի մաս դարձնել, բայց դրանից առաջ կարիք կա, որ այն նախ և առաջ ճանաչվի և ընդունվի տվյալ ժողովրդի կողմից: Այսինքն՝ հարկ է, որ դրանք առանձին-առանձին մատուցվեն և որոշակիորեն առնչվեն մարդու կյանքին, նրա առօրյային: Եվ հենց այստեղ էլ այն կարող է որևէ ժողովրդի պատկանող անհատի համար ընդունելի դառնալ:

Մարդու իրավունքների յուրացումն ու իրացումը պետք է տեղի ունենան ավանդական արժեհամակարգի հետ համապատասխանեցման ուղիով: Ունիվերսալ–ընդհանրական կարող է լինել միմիայն դրանց սկզբունքը, իսկ մեկնաբանությունն ու իրացումը պետք է լինի ազգային արժեհամակարգին համապատասխան:

Այն, որ Հայությունը կարող է մարդու իրավունքներն արագորեն յուրացնել, և արդեն իսկ նշանակալի մասով դա արել է, հարցականի տակ չէ: Տեղին է մեջ բերել հայությանն այս առումով բնութագրող XX դարի հայտնի ճանապարհորդ Ս.Լինչի հետևյալ խոսքերը. «Հայերը բացառապես հարմարվել են այն բանին, որ նոր քաղաքակրթության կրողները լինեն: Նրանք մեծ ագահությամբ են յուրացնում եվրոպական մշակույթի ձեռքբերումները և դրանց տիրապետում այնպիսի կատարելությամբ, որին երբեք չի կարող հասնել և ոչ մի ազգ»:

Իսկ ֆրանսիացի մեծ հայագետ Անտուան Մեյեն[1] հայերի իր բնութագրության մեջ այս կապակցությամբ նշում է. «…հայը գիտի, թե ինքը Մերձավոր Արևելքում արևմտյան քաղաքակրթության առաջապահն է», «…հայերն ընդունակ են քաղաքակրթություն տարածելու առաջավոր Ասիայում… այդ քաղաքակրթությունը փոխադրելու Կենտրոնական Ասիա…»:

Ուրեմն նախ և առաջ հարկ է նպաստել արժեքների ճանաչման ու ընդունման աշխատանքների հարատև ու ճիշտ ընթացքին:

[1] *Անտուան Մեյե,* «Հայագիտական ուսումնասիրություններ», Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1978թ.:

Ինչ վերաբերում է դրանց յուրացմանն ու իրացմանը, ապա այստեղ առկա խնդիրների մեջ պետք է առանձնացնել մեկը, որը՝ չնայած իր տեխնիկական բնույթին, խիստ կարևոր է: Խոսքը վերաբերում է այդ իրավունքները, ինչպես նաև դրանց խախտումների համար նախատեսվող պատժիչ միջոցները ամրագրող օրենսդրության բարելավմանը և մասնավորապես դատական համակարգի արդար ու անկաշառ գործունեությանը: Սրանց կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ցանկացած բարձր արժեքի հետևող անձը կամ անձանց խումբը խիստ խոցելի է նման արժեքներից զուրկ և սանձարձակ անձանց կամ դրանց խմբի առջև: Սա այսպես է, քանի որ սովորաբար ամենակատարյալը նաև ամենանուրբն ու ամենափխրունն է, որովհետև այն արգասիքն է մարդկային բանական հոգու: Այսպես, աշխարհին հայտնի կատարելագույն ապրելակերպը Դրախտն է եղել, սակայն այն կորսվեց մարդու մեկ՝ անմեղ թվացող մեղքի հետևանքով, և մինչև օրս այն վերագտնելու մարդկության բոլոր ջանքերն ապարդյուն են: Կենսափորձը ցույց է տալիս, որ մարդու իրավունքները ոչ միայն կարող են պարզ ոտնահարման ենթարկվել, այլև շահարկվել: Այսինքն՝ սեփական իրավունքների պաշտպանության նպատակով անձը կամ անձանց խումբը կարող է հասնել մարդկանց ավելի մեծ խմբի կամ դրան պատկանող անհատի իրավունքների ոտնահարմանը՝ օգտվելով իր ունեցած դիրքից և կապերից, այդ թվում նաև՝ միջազգային: Ուստի արժեքի յուրացումն ու իրացումը կարիք ունի հարատև ու վստահելի պաշտպանության, ինչի լավագույն գրավական կարող է լինել երկրի արդար գործող դատական իշխանությունը: Մի բան, որին մենք պետք է դեռ հասնենք: Իսկ դրա բացակայությունն անզոր ու անարժեք է դարձնում անգամ պետական համակարգի կողմից ճանաչված ցանկացած չափանիշ: Ազգը, ժողովուրդը կարող է պաշտպանել արժեքը կամ արժևորել որևէ երևույթ, եթե այն բխում է իր հոգու ներաշխարհից, համապատասխանում է իր հավատալիքին:

Ուստի, խիստ կարևոր է, որ նոր արժեքների յուրացումը ոչ միայն չհակասի ավանդական արժեքներին և չխաթարի դրանք, այլև համապատասխանի դրանց: Սույնը ենթադրում է մի շարք լուրջ և հետևողական աշխատանքներ.

ա) մարդու իրավունքների արևմտյան հայեցակարգի և դրա առաջ բերած բացասական ու վտանգավոր երևույթների բացահայտում՝ հաշվի առնելով նաև Արևմուտքում այս կապակցությամբ բարձրացված խնդիրները,

բ) մարդու իրավունքների արևմտյան հայեցակարգը քրիստոնեական դիտանկյունից,

գ) սեփական ինքնության և արժեհահամակարգի վերագնահատում և վերաշարադրում,

դ) մարդու իրավունքների արևմտյան հայեցակարգի քննարկում սեփական արժեհամակարգի համատեքստում և համապատասխանեցում:

1. Մարդու իրավունքների արևմտյան հայեցակարգի և դրա առաջ բերած որոշ երևույթների բացահայտումը

Մարդու իրավունքները միայն մի մասն են արդի եվրոպական արժեհամակարգի և դրա ընթացիկ զարգացումների, որոնք քննադատության առարկա են հենց իրենց հայրենիքում՝ Եվրոպայում և Ամերիկայում և քննարկման առարկա՝ Եվրոպայի ընդլայնվող մասում:

Արևմուտքում ավանդական հասարակության արդիականացման շուրջ տարվող քննարկումները, ըստ էության, հանգեցրել են ժողովրդի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքից քրիստոնեական արժեքների, զգալի չափով դուրսմղմանը: Այսօր, ցավոք, կարելի է տեսնել որոշ լիբերալ շրջանակների կողմից ավանդապահության, այդ թվում նաև՝ կրոնական ավանդույթների և արժեքների դեմ պայքարում բացահայտ ուժի կիրառման անցնելու նշաններ: Նման օրինակներից կարելի է համարել արևմտյան մի շարք երկրներում հասարակական լայն կարծիքին հակասող աշխարհիկ (սեկուլյար) գաղափարախոսության եռանդուն հարձակումները:

Այսպես, օրինակ, Կալիֆորնիայում արգելվել էր հասարակական վայրերում ծննդյան տոնածառ դնելը, հիմնարկներում տոնական ձևավորումներ անելը: Ֆրանսիայում ընդունվեց կրոնական նկատելի խորհրդանիշերի հրապարակային կրումն արգելող հայտնի օրենքը: Շվեդիայում Ավետարանական-Լյութերական եկեղեցու պաստորն ազատազրկման ենթարկվեց միայն այն բանի համար, որ իր քարոզում արվամոլությունը մեղք էր անվանել: Մեծ Բրիտանիայում բազմիցս ձեռնարկվել են քայլեր, որոնց նպատակը միայն Սբ. Ծննդյան տոնը կրոնական իմաստից զրկելն է: 1998թ. Բիրմինգհեմում նույնիսկ վերանվանեցին տոնը՝ որպես այլընտրանք առաջարկելով *"Winterval"* բառը (կազմված *winter*-ձմեռ և *festival*-փառատոն բառերից): Իսկ փոստային ծառայությանը հրաժարվում է տոնական դրոշմանիշերի վրա Սբ. Ծննդյան խորհրդանիշեր փակցնել: Բրիտանական ընկերությունների երեք քառորդն արգելել է Սբ. Ծննդյան տոնի առիթով զարդարել իրենց գրասենյակները: Ավստրիայում և Գերմանիայում այս տարի պաշտոնապես արգելվել են Սանտա Կլաուսի նկարներն ու պատկերները Ծննդյան տոների տոնավաճառներում:

Մեկ այլ օրինակ. 2005թ. Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի ընդունած «Կանայք և կրոնները Եվրոպայում» բանաձևում ասվում է. «Դավանանքի ազատությունը սահմանափակվում է մարդու իրավունքներով»: Այսպիսով կրոնական կյանքը ստորադասվում է մարդու իրավունքներին: Ստացվում է, որ համաձայն արևմտյան լիբերալ մտածողության՝ մնացյալ բոլոր ավանդությունները պետք է լռեն և ենթարկվեն: Բռնապետական նման մոտեցումը վստահորեն իր համար ճանապարհ է հարթում ժամանակակից միջազգային օրենսդրության ոլորտում:

Ընդ որում, հարկ է ընդգծել, որ սխալ կլիներ նման նորմի հայտնվելու մեջ մեղադրել մարդու իրավունքների հայեցակարգը: Մարդու իրավունքների ներքո թաքնվում է մի ոչ մեծ խմբի որոշակի փիլիսոփայություն: Եթե այսօր չմերժվի սեկուլյար հումանիզմի նման մարտնչող մոտեցումը, որը թափանցում է միջազգային օրենսդրություն, ապա դրան կհետևի լուրջ հակամարտություն:

Արևմուտքում տիրապետող պոստմոդեռնիզմը՝ որպես ինտելեկտուալ շարժում և որպես սոցիալական ծրագիր, ընդունում է ճշմարտության հաստատման ցանկացած հավակնություններ՝ պնդելով, որ այն ունի իր տարբերակները: Յուրաքանչյուրն «իրավունք ունի» կառուցելու արժեքների իր համակարգը, գովազդել կյանքի պատկերացման ի՛ր ընկալումը: Այսպիսով, հասարակությունն ընկնում է համընդհանուր հավասարության թակարդը: Արդիականացման մասին, իհարկե, խոսում է նախ և առաջ «էլիտան», և հենց նրա համար է «արևմտյան մոդելը» հիմնարար արժեքներից մեկը: Քննադատելով ժամանակակից հասարակության վիճակը՝ Պատրիկ Ջ.Բյուքենենն այսպես է նկարագրում ամերիկյան հասարակության կարգերը. «Եթե ցանկանում եք, կարող եք հավատալ աստվածաշնչային սյուժեներին, աշխարհի արարմանը, Ադամին ու Եվային, գայթակղող օձին… այո, կարող եք հավատալ, բայց այլևս երբեք դա չեն սովորեցնի որպես անփոփոխ ճշմարտություն… Աստված չկա, տիեզերքում չես գտնի բացարձակ արժեքներ, հավատքն առ գերբնականը նախապաշարմունք է»[1]:

Այսինքն՝ պետք է հաշվի առնել, որ նման արդիականացման հետևանք դարձավ այնպիսի հասարակության ձևավորումն Արևմուտքում, որը, կարելի է ասել, թշնամաբար է տրամադրված ցանկացած կրոնի՝ նախ և առաջ քրիստոնեության հանդեպ: Ժամանակակից աշխարհիկ մշակույթը՝ աթեիզմ հռչակելով, փորձում է ակտիվորեն օգտագործել աստվածաբանության լեզուն: Գիտակցությունը փոխելու արդիական ամենաարդյունավետ տեխնոլոգիաները՝ գովազդը և փիարը, ակտիվորեն դիմում են ոչ միայն կրոնական սիմվոլիզմին, այլև կերպարի կազմման և կերպարային համակարգերի ընդհանուր կազմակերպման խորագույն սկզբունքներին: Իսկական խոր կրթությունը վերածվում է պարզ տեղեկատվության փոխանցման, և կարելի է ասել, որ տեղեկատվությունն ապստամբում է ընդդեմ իսկական իմացության:

Մեր աչքերի առջև պոստմոդեռնի դարը մուտք է գործում նոր փուլ, ի հայտ է գալիս նոր կառուցվածքային պարադիգմ, որը ձգտում է իր նպատակներին ծառայեցնել մարդկության կողմից մշակված կերպարների ողջ հարստությունը, ինչպես նաև պատմական և մշակութային համատեքստից կտրած կրոնական, բարոյական և գեղարվեստական արժեքները:

Ավելին, ներկայումս նոր Եվրոպայում ինտեգրացիոն գործընթացների

[1] *Бьюкенен П.Дж.,* Смерть Запада. –М.: Издательство АСТ, с. 78-79, 2004.

գաղափարախոսական ապահովման դերում հանդես եկող աշխահիկ լիբերալիզմի հանդեպ ցանկացած ինքնուրույն քննադատական դիրքորոշում անխուսափելիորեն սրերով է ընդունվում:

Սխալ և անգամ վտանգավոր է այն իրավիճակը, երբ աշխարհի հսկայական բազմազանությունը փորձում են ընդգրկել և ծածկել մի քանի գաղափարների օգնությամբ, որոնք ձևակերպվել են միայն արևմտաեվրոպական փիլիսոփայական և քաղաքական աշխարհիկացված համատեքստում: Այդպիսով, մոլորակի բնակչության բացարձակ մեծամասնությունը՝ հին, յուրօրինակ մշակույթների կրողները, իրապես չեն մասնակցում արժեքների այն համակարգի մշակմանը, որն այժմ, երբեմն անգամ ուժի օգնությամբ, հաստատվում է աշխարհում որպես բազմակողմանի ստանդարտ:

Վտանգ կա, որ նրանք, ովքեր չեն կարող պատշաճ պատասխանել այդ ուժային ճնշմանը, լիովին կարող են ընտրել դիմադրության ուժային ձևեր: Հավատացյալ մարդուն դժվար չէ դրդել ինքնազոհաբերության գործողության, համոզել իր կյանքի գնով պաշտպանել այն, ինչը սուրբ է նրա համար: Չի կարելի բացառել, որ չար մտադրություններ ունեցող մարդիկ կարող են օգտագործել հավատացյալ մարդկանց այդ չօգտագործվող, սակայն իրական դիմադրությունը նվաճողական լիբերալիզմի մոտեցող ալիքին՝ բռնություն հրահրելու համար, ինչը տեսանք «հիջաբների մասին օրենք»-ի դեպքում:

Բանն այն է, որ այդ հայեցակարգը ծնունդ է առել ու զարգացել իր պատմական ու մշակութային առանձնահատկությունն ունեցող արևմտյան երկրներում: Հարկ է ընդունել, որ այդ երկրներում այն ունեցել է հաջողություններ, բայց և ցույց է տվել նաև իր թերությունները: Եվ ահա հարց է ծագում, թե արդյոք մարդկային երջանկության արևմտյան ստանդարտները ընդունելի ու կիրառելի են բոլոր երկրների ու մշակույթների համար: Չէ՞ որ մյուս քաղաքակրթությունները ևս իրենց դրական փորձառությունն ունեն: Ուրեմն նրանք ևս իրավունք ունեն իրենց խոսքն ասելու:

Արդեն անցյալ է համարվում անմոռանալի և դրամատիզմով լի դարաշրջանը, որի ընթացքում այս կամ այն դասակարգերը, սոցիալական կամ հասարակական խմբերն ուժով պաշտպանում էին իրենց գաղափարները՝ այլոց զրկելով իրենց համոզմունքներն արտահայտելու իրավունքից: Նման դեպքերում վերջնական արդյունքում սեփական գաղափարախոսության հաղթանակը միշտ պահանջում էր այլախոհների եթե ոչ ֆիզիկական, ապա բարոյական ոչնչացում:

Ուստի, քննարկման առարկա պետք է դարձվի այն հարցը, թե որքանով կարող են աշխարհիկ լիբերալ արժեքներն այն տեսքով, որով այժմ գոյություն ունեն, հավակնել բազմակողմանի ու ընդհանրական լինելու կարգավիճակին, և թե կարող են արդյոք տվյալ արժեքները գլոբալացման դարաշրջանում առանց համապատասխան շտկումների դրվել մարդկանց, երկրների և ազգե-

րի միջև նոր հարաբերությունների ձևավորման հիմքում:

Գլոբալացման գործընթացը հաջողության հասնելու համար պետք է ընդհանրական հիմնարար արժեքներ դնի ողջ մարդկության առջև, քանի որ այլապես անհնարին է կյանքը կազմակերպել միասնական քաղաքակրթական տարածությունում: Եվ դա պետք է կատարվի ո՛չ թե պարտադրանքի միջոցով, այլ համաձայնության: Հակառակ դեպքում ո՞ւր են մնում մարդու և խմբի իրավունքները:

2. Մարդու իրավունքների արևմտյան հայեցակարգը քրիստոնեական դիտանկյունից

Տիրապետող է այն կարծիքը, թե մարդու իրավունքները «ունիվերսալ նորմ» են, բայց արդյո՞ք այդպիսին է մարդու իրավունքներ ասվածի դերին հավակնող ներկայիս շարադրանքը:

Այդ շարադրանքն ինքնին չի կարող և չպետք է գերիշխող դեր ունենա, թեև լիբերալ համատեքստում ընթացող գլոբալացման ներկայիս միտումները կարող են դրան մղել անգամ մի նոր տիպի կրոնական հավատքի դեր ստանձնելուն:

Մարդու իրավունքների յուրացումն ու իրացումը պետք է տեղի ունենան ավանդական արժեհամակարգի հետ համապատասխանեցման ուղիով: Ունիվերսալ–ընդհանրական կարող է լինել միմիայն դրանց սկզբունքը, իսկ մեկնաբանությունն ու իրացումը պետք է լինի ազգային արժեհամակարգին համապատասխան: Այստեղ է երևում ազգային ինքնության հարգումը, ազգային-կրոնական համայնքի ինքնավարությունը: Հարգվո՞ւմ է արդյոք այդ ինքնությունն ու նրա ինքնավարությունը հարցը կապվում է այսօր արդիական դարձած մեկ այլ կարևոր խնդրի հետ, որը անհատի և խմբի կամ կոլեկտիվի իրավունքների գերակայության կամ առաջնահերթության խնդիրն է:

Ավելին, մարդու իրավունքների գաղափարը չի կարող գերիշխող արժեք լինել, քանի որ այն արդեն իսկ գոյություն ունեցող արժեքների համար իրավական միջավայր ստեղծող նորմ է: Այսպես, օրինակ, խղճի ազատությունը պայման է ստեղծում խղճի, այսինքն՝ հավատքի, բարոյականության, սրբության, Հայրենիքի նկատմամբ զգացմունքի դրսևորման համար, որոնք ինքնին բարձր արժեքներ են:

Հավատքի, սրբության, Հայրենիքի գաղափարները հայ տեսակի համար՝ իր գոյության առաջին օրից իսկ արժեքային համակարգում զբաղեցրել են ամենաբարձր տեղը և չեն կարող ստորադասվել այլ արժեքների: Իր պատմության ընթացքում հայն իր ունեցվածքը մշտապես զոհել է հանուն իր հավատքի, իր սրբության՝ տալով անգամ իր Մեծ Հայրենիքի հողատարածքի նշանակալի հատվածները: Խորենացու արձանագրած ավանդից գիտենք, որ Հայկ

Նահապետը մերժեց Բելի գայթակղիչ առաջարկությունները՝ փոխարեն հնազանդության: Վարդանանց կռիվը նույնպես հանուն հավատքի էր… Մեր նախնիներն իրենց կարողության չափով պահպանել են Հայության արժեհամակարգը և փոխանցել հետագա սերունդներին, և այսօր մենք էլ, եթե չենք կարողանում դրանք զարգացնել, ապա գոնե պարտավորություն ունենք առնվազն պահպանել դրանք:

Անթույլատրելի են այնպիսի իրավիճակները, երբ մարդու իրավունքների իրացումը ճնշում է հավատը և բարոյական ավանդույթը, հանգեցնում է կրոնական և ազգային զգացմունքների, երկրպագելի սրբությունների վիրավորմանը, սպառնում Հայրենիքի գոյությանը: Վտանգավոր է այնպիսի «իրավունքների» «հորինումը», որոնք օրինականացնում են ավանդական բարոյականության և բոլոր պատմական կրոնների կողմից դատապարտելի վարքը: Մերժելի է մարդու իրավունքների ոլորտում երկակի ստանդարտների քաղաքականությունը, ինչպես նաև քաղաքական, գաղափարախոսական, ռազմական և տնտեսական շահերն առաջ տանելու, որոշակի պետական և հասարակական կառույց պարտադրելու նպատակով այդ իրավունքներն օգտագործելու փորձերը:

Լիբերալների ազատությունը չի մատնանշում դրա բարի նպատակը, որը պետք է լինի արժեքային համակարգի առանցքը, իսկ նման ազատությունը վերածվում է սանձարձակության… Պատմության մեջ եղել են ազատության տարբեր գնահատականներ, մեկնաբանություններ: Չինգիզ խանն ասում էր, թե գերագույն ազատությունը և երջանկությունը սեփական թշնամիներին հալածելն է, նրանց կանանց և դուստրերի արցունքներին նայելով հիանալը:

Քրիստոնեական մոտեցումն առանձնացնում է երկու ազատություն. ներքին ազատությունը չարից և գործողության ընտրության ազատությունը: Ազատությունը չարից ինքնին արժեք է: Ընտրության ազատությունն արժեք է ստանում, իսկ անձն՝ արժանապատվություն, երբ մարդն ընտրում է բարին: Եվ ընտրության ազատությունը տանում է ինքնակործանման և վիրավորում անձի արժանապատվությունը, երբ նա ընտրում է չարը: Ըստ այսմ, դրական է կյանքի իրավունքը և բացասական է «մահվան իրավունքը», դրական է ստեղծագործելու իրավունքը և բացասական՝ քանդելու, կործանելու «իրավունքը»: Մարդու իրավունքներն ու ազատություններն ընդունելի են այն չափով, որ չափով որ դրանք օգնում են անձի ձգտմանը դեպի բարին, պահպանում են նրան ներքին և արտաքին չարից, թույլ տալիս դրականորեն դրսևորվել հասարակության մեջ: Այդ լույսի ներքո հարգելի են դառնում ոչ միայն քաղաքացիական, քաղաքական իրավունքներն ու ազատությունները, այլև սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքները:

Բացի այդ, իրավունքները և ազատություններն անխզելիորեն կապված

են անձի պարտականությունների և պատասխանատվության հետ: Իրականացնելով իր շահերը և հետաքրքրությունները՝ անհատը կոչված է դրանք համադրել մերձավորի, ընտանիքի, տեղական համայնքի, ազգի, համայն մարդկության շահերի և հետաքրքրությունների հետ: Հետևաբար, մարդու ազատություններն ու իրավունքները պետք է հավասարակշռվեն հասարակական համերաշխությամբ:

Ներկայիս կարևորագույն խնդիրն անձի իրավունքների և ազատությունների գաղափարի կապն է նրա բարոյական պատասխանատվության խնդրի հետ: Քրիստոնեական մտքին բնորոշ է անձի արժանապատվության գաղափարը կապել բարոյականության հետ, իսկ դա անխուսափելիորեն հանգեցնում է մարդու հոգու վրա մեղքի կործանարար ազդեցության մասին խորհրդածությանը: Սակայն քանի որ մեղքի հասկացողությունը և խնդիրը լիբերալ փիլիսոփայության մեջ անտեսվում է, ապա, բնականաբար, դրանում բացակայում է նաև բարու և չարի կրոնական տարբերակումը: Ժամանակակից արևմտյան աշխարհի կողմից մարդու իրավունքների գաղափարի ընկալման մեջ ներքին հակասությունը, թերևս, հենց այդ հանգամանքի հետևանքն է:

Մեղքի գաղափարի դուրսմղումն առօրյա կյանքից և ինտելեկտուալ դատողության ոլորտից բերում է մարդկանց գիտակցության մեջ բարու և չարի սահմանների վերացմանը: Անձին արգելվում է միայն այնպես պահել իրեն, որը կարող է մեկ ուրիշի ազատության սահմանափակում առաջ բերել: Այլ կերպ ասած՝ իրավաբանական օրենքները պետք է հարգել, իսկ ահա բարոյական հրամայականները՝ բոլորովին էլ պարտադիր չէ: Հենց այդ պատճառով էլ բարոյական արժեքների առաջնահերթությունը պնդող կրոնական էթիկան այսօր կատաղի հարձակման է ենթարկվում: Այն հայտարարվում է հնացած, զարգացմանը խանգարող: Լավագույն դեպքում այն հանդուրժում են, քանի դեռ չի հակասել լիբերալիզմի հիմնական կանխադրույթներին: Այնինչ մարդ անհատի իրավունքները չպետք է բացարձակորեն գերակայեն հասարակության շահերին: Հակառակ դեպքում մարդն իր վարքը ձևավորում է՝ ելնելով այդ գերակայությունից, ինչը խթանում է էգոիզմն ու ինդիվիդուալիզմը (անհատապաշտությունը): Նկատենք, որ հաճախ հենց ինդիվիդուալիզմի բարձր մակարդակով է բացատրվում ժողովրդագրական անկումը, ապասոցիալական ու անբարոյական վարքագիծը, այսինքն՝ այն ամենը, ինչն այսօր հասարակական խնդիր է դարձել Արևմուտքում:

Այսպիսով, մենք չենք կարող անտեսել մարդու արժանապատվության թեմայի շուրջ կրոնական և աշխարհիկ մոտեցումների միջև հիմնարար հակասության առկայությունը: Այս հարցին, ի պատիվ իրեն, առաջին անգամ պաշտոնապես անդրադարձել և միջազգային մակարդակի է հասցրել Ռուս Ուղղափառ եկեղեցին:

Իհարկե, անվիճելի է մարդու իրավունքների ու ազատության դերն ու կարևորությունը: Հենց այս հայեցակարգի ազդեցությամբ նախկին խորհրդային տարածքի կրոնական կազմակերպությունները, այդ թվում նաև Հայոց եկեղեցին ազատվեցին անաստվածության պաթոսից ու բռնադատությունից: Բացի այդ, այս հայեցակարգը պայքարի կոչ է անում հասարակության մեջ անհատի նկատմամբ տարբեր չարաշահումների, ստորացումների և չարիքների դեմ, որը նույնպես անուրանալի է:

Սակայն, մյուս կողմից, ականատեսն ենք դառնում այն բանի, թե ինչպես են մարդու իրավունքների հայեցակարգի ներքո թաքնվում սուտը, կեղծիքը, կրոնական ու ազգային արժեքները վիրավորելը և այլն: Ավելին, մարդու ազատությունների ու իրավունքների համակարգի մեջ աստիճանաբար մուտք են գործում այնպիսի գաղափարներ, որոնք հակասում են ոչ միայն քրիստոնեությանը, այլև ընդհանրապես մարդու մասին ավանդական բարոյական պատկերացումներին: Վերջինս առանձնապես վտանգավոր է, քանի որ մարդու իրավունքների հետևում կանգնած է պետության հարկադրող ուժը, որը կարող է հարկադրել մարդուն կոնֆորմիզմի պատճառով մեղք գործել, համագործակցել դրան կամ թույլ տալ դրա կատարումը, ինչի ականատեսն ենք մեր օրերում:

Հարկ է քննարկման առարկա դարձնել այն փիլիսոփայական գաղափարները, որոնք ընկած են մարդու իրավունքների հայեցակարգի հիմքում և ազդում են դրա զարգացման ու իրացման վրա:

Մարդու իրավունքների ներկայիս հայեցակարգի կենտրոնական հասկացությունը «մարդկային արժանապատվությունն» է: Մարդու արժանապատվություն ասածն ընդգրկում է երկու իմաստ. նախ այն նշանակում է արժեքով օժտված անձ, երկրորդ՝ տվյալ անձի կյանքի համապատասխանություն այդ արժեքին: Մարդն այսպիսին է եղել իր արարման պահից ի վեր, և մարդու խնդիրն էր շարունակ աճն այդ արժանապատվության մեջ: Այսպես էր նրա վիճակը մինչև իր գործած առաջին մեղքը: Դրանից հետո մարդը դադարում է համապատասխանել իր բնության արժեքին, և նրա խնդիրն է դառնում վերադարձնել կորսված արժանապատվությունը և ավելացնել այն: Այսինքն՝ մարդու գործողություններում կան այնպիսիք, որոնք նպաստում են արժանապատվության կորստին և մերժելի կամ չար են: Այդպիսի գործողությունները չեն կարող ամրագրվել որպես մարդու իրավունք և ազատություն:

Այնինչ արևմտյան մտածողության մեջ արմատավորված է այն պատկերացումը, որ բավական է ապահովել անհատին ազատությամբ և նրան օժտել իրավունքով, և նա ինքն անխուսափելիորեն կընտրի բարին, իր համար օգտակարը: Համարվում է, որ մարդն ընդունակ է ինքնուրույն ընտրություն կատարել, որն անփոփոխ կերպով կհամապատասխանի նրա ներկա շահին:

Սակայն մեղքի վիճակի մեջ գտնվող մարդը միշտ չէ, որ ինքնուրույն

կարող է հստակորեն ճանաչել ինչն է բարին և ինչը՝ չար: Պատճառն այն է, որ նրա բանականությունը, կամքը և զգացմունքը գտնվում են մեղքի գործունեության ոլորտում, և մարդը կարող է սխալվել կենսական նպատակները որոշելու ժամանակ:

Ներկայումս պետականության բացարձակացմանը փոխարինում է առանձին անհատի և բարոյական պատասխանատվությունից ազատ նրա իրավունքների բացարձակացումը: Բայց չէ՞ որ բարոյական համատեքստից դուրս մարդկությունը չի կարող ապրել. հայտնի է, որ բարոյական օրենքների քամահրանքը հանգեցրել է բազմաթիվ ուժեղ քաղաքակրթությունների կործանմանը: Ոչ մի օրենքով չենք կարող պահպանել հասարակության կենսունակությունը, չենք կանխի կաշառակերությունը, իշխանության չարաշահումը, ընտանիքների քայքայումը, երեխաների որբացումը, ծնունդների կրճատումը, բնության քայքայումը, մարտնչող ազգայնամոլությունը և կրոնական զգացմունքների վիրավորումը: Եթե մարդը չի տեսնում, որ մեղք է գործում, ապա նրա համար ամեն բան կարելի է: *Անմարդկային է դառնում այն հասարակությունը, որում մարդկային իրավունքները վերածվում են բնազդի ազատագրման գործիքի, իսկ բարու և չարի հասկացությունները խառնվում են և դուրս են մղվում բարոյական ինքնուրույնության և բազմակարծության գաղափարների կողմից:* Նման հասարակությունը կորցնում է անհատի վրա ներգործելու բարոյական լծակները:

Բարոյական նորմերն օգնում են մարդուն չարը բարուց տարբերել, և այստեղ որպես կարևորագույն չափանիշ հանդես է գալիս մարդու խիղճը: Այսինքն՝ կրոնական բարոյականությամբ համալրված մարդու իրավունքների հայեցակարգը կարող է լինել հասարակական և անձնական գործունեությունը կարգավորող ընդհանրական-ունիվերսալ սկզբունք: Աշխարհի բոլոր հիմնական կրոնները համաձայնվում են բարոյական նորմերի շուրջ: Եվ կրոնական ավանդության տեսանկյունից որպես նորմեր չեն կարող ընդունվել սրբության ծաղրանքը, աբորտը, միասեռականությունը, էվթանազիան և մարդու իրավունքների հայեցակարգի կողմից ակտիվորեն պաշտպանվող վարքի այլ ձևեր:

Մյուս կողմից, թեև հավանաբար ճիշտ չէր լինի քրեական պատասխանատվություն սահմանել մոլեխաղերի, էվթանազիայի, միասեռականության համար, սակայն նաև չի կարելի դրանք ընդգրկել օրենսդրական նորմերում: Չէ՞ որ, երբ վարքի նման ձևերին հավանություն տվող օրենքներ են ընդունվում, դրանցից միայն իրենց ընտրությունը կատարած փոքրամասնական խմբերը չեն օգտվում: Այդ օրենքները հիմք են դառնում հասարակության մեջ վարքի նման ձևերի անխափան քարոզի համար: Այսպես, օրինակ, 2006թ. հունվարին ընդունված Եվրախորհրդարանի բանաձևում նախատեսվում է դպրոցներում երեխաներին դաստիարակել միասեռականության ընդունման

ոգով և անգամ տարվա մեջ սահմանում է հոմոֆոբիայի դեմ պայքարին նվիրված օր: Ստացվում է, որ ոչ միայն կոչ է արվում հասարակությանը հարգել որոշակի փոքրամասնությունների կյանքը, այլև օրենքի տեսքով նրա վզին է փաթաթվում միասեռականության քարոզը: Արդյունքում՝ այդ քարոզը գայթակղում է նրանց, ովքեր կարող էին պայքարել այդ չարիքի դեմ և լիարժեք ընտանիքներ ստեղծել:

Ուստի, բարոյական վակուումի հարցը լուծելու հետ մեկտեղ պետք է համապատասխանաբար բարեկարգել օրենսդրությունը և առաջին հերթին ապահովել օրենսդրության զգայունությունը հասարակության մեջ տիրող բարոյական նորմերի նկատմամբ:

Այստեղ կարևորվում է նաև ԶԼՄ դերը. մարդն ինչպե՞ս կարող է բարոյաբար կիրառել իր ազատությունը, եթե, օրինակ, հեռուստատեսությունը նրան որպես ապրելակերպի հաջող օրինակ է մատուցում սպառումը, բռնությունը, այլանդակությունը, մոլությունը և այլ մեղքեր:

Մեկ խոսքով՝ մարդու իրավունքների նորմերը պետք է նպաստեն մարդու կատարելագործմանը, այլ ոչ թե նրա մեղսական վիճակի արդարացմանը: Մարդու իրավունքների հայեցակարգի խնդիրը, մեր կարծիքով, մարդու արժեքի պաշտպանությունը և նրա արժանապատվության աճին նպաստելն է:

Մարդը և հասարակությունը ինքնին չեն կարող հասնել բարոյական իդեալի: Դրա համար անհրաժեշտ է Աստծո շնորհը, որը տրվում է ճշմարիտ եկեղեցում: Անհատը և հասարակությունը չեն կարող բարոյական լինել առանց դաստիարակության և ուսուցման, առանց բարու աջակցության և չարի սահմանափակման, այդ թվում նաև այնպիսի չարի, որը, ըստ եկեղեցու, հետևանք է մեղքի, սակայն ժամանակակից իրավունքի հայեցակարգում ընդունվում է որպես «նորմալ երևույթ»:

3. Մեփական ինքնության և արժեհամակարգի վերագնահատում և վերաշարադրում

«…Հայերը ներկայացնում են *յուրահատուկ քաղաքակրթություն»:*

Անտուան Մեյե

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ հայկական քաղաքակրթության միակ ինստիտուցիոնալ կառույցը Հայոց եկեղեցին է: Եթե նախաքրիստոնեական շրջանում հայերի ունեցած արժեքային տարրերի մասին մեզ հասել են միայն պատմական կամ հնագիտական տեղեկություններ, ապա Քրիստոսից հետո ընկած ժամանակահատվածում այդ արժեքները կրող, պահպանող և կիրառող հաստատությունը կենդանի կերպով ու անընդհատաբար պահպանվել է: Եվ

Հայության ճնշող մեծամասնությունը, թեկուզև անվանաբար, Հայոց եկեղեցու հետևորդն է: Ուստի որպես ավանդական արժեք մեզանում հանդես է գալիս Հայոց եկեղեցու ազգային-քրիստոնեական արժեհամակարգը: Եվ եվրոպական արժեքների ընդունման ու արդիականացման ճանապարհին պետք է ջանալ պահպանել ազգային դիմագիծը, ինչն ինքնության արտահայտությունն է:

Ուստի, մարդու իրավունքների իրացմանը զուգահեռ մենք պետք է լուծենք մեկ այլ խնդիր ևս՝ սեփական ինքնության, հիշյալ «յուրահատուկ քաղաքակրթության» ըստ հարկի ճանաչումը, այսինքն՝ վերագնահատումը, ինչը խորհրդային ռեժիմից ձերբազատվելուց հետո մենք դեռևս չենք հասցրել իրականացնել: Մի բան, որը, մեր կարծիքով, պետք է լինի ազգային կրթական համակարգի, առավել ևս բուհական համակարգի առանձնահատուկ խնդիրը, որը և հիմնականում պետք է լինի նրա առանձնահատկությունը աշխարհի համանման այլ համակարգերից:

Նոր արժեքների յուրացումը երբեք չի ենթադրել նախորդի մոռացում ու վերացում: Անգամ այնպիսի կարևոր ու համապարփակ արժեքային համակարգի, ինչպիսին կրոնն է, տվյալ դեպքում քրիստոնեությունը, հաստատումը կատարվել է նախորդի հիմքերի վրա՝ անխուսափելիորեն կրելով ազգային առանձնահատկությունների դրոշմը: Դրա վառ օրինակն է Հայոց եկեղեցին, որը փոխարինեց հայ հեթանոսական կրոնական համակարգին և ազգայնացավ՝ քրիստոնեական միջավայրում դառնալով միանգամայն ուրույն՝ զուտ հայեցի համակարգ: Սա ի վերուստ տրված հաստատություն է, և մարդկային բռնազբոսիկ միջամտությունն այստեղ կարող է լոկ միառժամանակ հաղթական թվալ: Դրա օրինակները բազում են հայոց պատմության մեջ, իսկ վերջինը խորհրդային պետության շրջանն էր: Այդ համեմատաբար կարճ ժամանակից հետո, երբ թուլանում կամ վերանում են արհեստական համակարգի պահպանման համար հսկայական ջանք ու եռանդ պահանջող արտաքին ազդեցությունները, վերստին սկսում է վերականգնվել ազգայինը, քանզի այն ազգի հոգեկերտվածքից է բխում: Իսկ այդ շրջանը ազգի համար դառնում է հետընթացի ու այլասերման ժամանակահատված: Այսինքն՝ հայեցի քաղաքակրթությունը, որը դեռևս սահմանված ու բնութագրված չէ ըստ հարկի, պետք է լինի Հայության և հայաստանցիների ապրելակերպի ու ապրելակարգի անսասան բազան: Հակառակ դեպքում կեղծ է ազգային ինքնորոշումը, և անդեմությունն անխուսափելի: Այս առումով հայ հասարակության, եթե կարելի է ասել, հոգևոր անհասության պայմաններում մարդու իրավունքների իրացման բազմաթիվ բացասական օրինակներ արդեն իսկ ներկրվել են մեր երկիր՝ ստեղծելով նոր անկառավարելի իրավիճակներ:

4. Մարդու իրավունքների արևմտյան հայեցակարգի քննարկում սեփական արժեհամակարգի համատեքստում

Ստեղծված իրավիճակում մի՞թե պարտավոր ենք անվերապահորեն ընդունել վարքագծի լիբերալ կարծրատիպերը և բարոյական արժեքները, որոնք ձևավորվել են առանց մեր ուղղակի մասնակցության: Մեր հազարամյա հոգևոր, մշակութային, աստվածաբանական, ինտելեկտուալ ավանդությամբ չպետք է առանց քննադատական իմաստավորման ընդունենք Լուսավորության դարաշրջանում արևմտաեվրոպական մշակույթի համատեքստում ի հայտ եկած գաղափարները, ինչպես որ չպետք է նաև շտապողաբար մերժենք դրանք ամբողջովին, միայն այն պատճառով, որ ծագել են այլ երկրում:

Ցավոք, այս ուղղությամբ տարվող հրապարակային քննարկումները բացակայում են: Ո՛չ ԶԼՄ-ն, ո՛չ էլ պետական կամ հասարակական կազմակերպություններն էական քայլեր չեն կատարում հանրային քննարկումների, հասարակական մտքի զարգացման ուղղությամբ: Այդ գաղափարների համալիրը անկանխակալ կերպով վերլուծելու և իմաստավորելու առանձին փորձերը հաճախ անտեսվում են և անգամ՝ անվերապահորեն մերժվում:

Լինելով հայ ժողովրդի (նրա մեծամասնության) ազգային ավանդական արժեհամակարգի կրողն ու պահապանը՝ Հայոց եկեղեցին ունեցել է և ունի հոգևոր-բարոյական ու ինստիտուցիոնալ անհերքելի ու ծանրակշիռ դերակատարում: Եվ չնայած վերոնշյալ իրավիճակին, այդ կարգավիճակն ամրագրվել է երկրի Սահմանադրության և պետական ռազմավարության հայեցակարգում: Բացի այն, որ նման կարգավիճակը համապատասխանում է Հայոց կյանքում Հայոց եկեղեցու ունեցած կարևորագույն դերին, այն կարևոր է նաև հասարակական կամ ազգային անվտանգության շահերի տեսանկյունից, որը պահանջում է ամուր պահել *ՀՀ հասարակական հիմքերը*, որի կարևոր (ավելին՝ հիմնական) մասն է կազմում *հոգևոր-մտածելակերպային սկզբունքային միասնականությունը, ընտանիքի ավանդական ամրությունը*: Հայոց Եկեղեցին ոչ միայն *Հայերի կողմից և նրանցով ձևավորված թե՛ հոգևոր, թե՛ մտավոր հասարակական կառույց է,* այլև մարդկային ցեղի Հայ կոչվող տեսակի անխաթար ժառանգականությամբ փոխանցվող՝ դարերի ընթացքում *փորձված ու հաստատված համակեցություն*՝ ապրելակերպ ու ապրելակարգ: Հետևաբար, նրա նկատմամբ ամեն մի ոտնձգություն ուղղվում է թե՛ մարդկային՝ ինքնին անկրկնելի այս տեսակին, թե՛ դրա հիմքերի վրա այսօր բարձրացող Հայոց պետականությանը:

Ուստի, անհրաժեշտություն կա գործունեության բոլոր ոլորտներում, և նախ և առաջ կրթության ոլորտում, վերաճանաչել ու հաշվի առնել ազգային-հոգևոր ժառանգություն հանդիսացող *Հայի էթնիկ-հոգևոր-մշակութային ինքնօրինակությունն ու առանձնահատկությունը*՝ այս ժողովրդի ինքնության

անքակտելի հատկանիշը և նրա անօտարելի ժառանգական հարստությունը: Չէ՞ որ դրա կորուստը կամ թերագնահատումը ոչ միայն հայերի, այլև ողջ մարդկության կորուստը կլինի, քանզի այն մոլորակի բնակչության արժեքային հարստության անկրկնելի բաղադրիչն է. եթե մոլորակի կենսահամակեցության մի տեսակի կամ ենթատեսակի կորուստն է արժևորվում ու պաշտպանության տակ առնվում, ապա առավել ևս պետք է ըստ արժանվույն գնահատվի ու պահպանվի բանակա՛ն տեսակինը:

Բարոյական համակարգի վերաամբողջացման և արդի ժամանակաշրջանին համահունչ դարձնելու ճանապարհին անելիքներ ունի նաև Հայոց եկեղեցին: Նա պետք է հրապարակի հասարակական ոլորտին առնչվող իր վարդապետությունը (սոցիալական դոկտրինը), որտեղ գնահատական-մեկնաբանություն կտա ստեղծված իրավիճակին, ներմուծվող արևմտյան արժեհամակարգին (մասնավորապես, միջազգային իրավունքին) ու դրա տարրերին, կառաջարկի հիմնավոր լուծումներ:

Կարծում ենք, Հայոց եկեղեցու սոցիալական դոկտրինի հիմնահարցերից պետք է լինեն.

1. աստվածաբանական և վարդապետական հիմնական դրույթները
2. եկեղեցին և ազգը
3. եկեղեցին և պետությունը
4. քրիստոնեական բարոյականությունը և աշխարհիկ իրավունքը
5. անձնական, ընտանեկան և հասարակական վարքի ու բարոյականության հարցերը
6. եկեղեցին և քաղաքականությունը
7. աշխատանքը
8. բարեգործությունը
9. սեփականությունը
10. անվտանգությունը
11. հանցավորությունը, պատիժը և ուղղումը
12. անձի և ժողովրդի առողջությունը
13. աշխարհիկ կրթությունը, գիտությունը, մշակույթը
14. միջազգային հարաբերությունները և գործընթացները՝ գլոբալացումը, սեկուլյարացումը
15. հասարակական և դավանական զանազան շարժումները:

Դա հայ մարդու համար պարզություն կմտցնի առկա կացության մեջ և կօգնի կողմնորոշվել թե՛ հայ անհատին, թե՛ ողջ ժողովրդին, ինչպես նաև՝ պետական իշխանությանը (պարզաբանում-ուղեցույցներ պետական ռազմավարության համար), կվերականգնի հոգևոր ասպարեզում հայերի ինքնավս-

տահությունը, անհրաժեշտ պայման կստեղծի հայ ժողովրդի ներկա սերնդին վերագտնելու և ապրող դարձնելու եկեղեցու՝ ոչ հեռավոր անցյալում ունեցած դերը, կխթանի հայոց փիլիսոփայական և իրավագիտական մտքի զարգացումը: Միաժամանակ նման ջատագովությունը, ինչպես ժամանակին է եղել, կմերկացնի ՀՀ-ում գործող բազմաթիվ կրոնական խմբավորումների ուսմունքների աղքատությունն ու սնանկությունը՝ օգնելով մարդկանց խուսափել վտանգավոր ազդեցություններից:

Հունվար, 2009թ.

ВОПРОСЫ РЕАЛИЗАЦИИ ПРАВ ЧЕЛОВЕКА

Вардан Асцатрян

Резюме

Усвоение любой ценности со стороны какого-либо народа предполагает принятие этой ценности в качестве части собственной культуры, но до этого необходимо, чтобы эта ценность была узнана и признана этим народом. То есть, нужно, чтобы подобные ценности преподносились по отдельности и имели определенное отношение к жизни человека, его обиходу, и только так они могут стать приемлемыми для принадлежащего к тому или иному народу индивида.

Усвоение и реализация прав человека должны проходить путем их соотнесения и приведения в соответствие с традиционной системой ценностей. Универсально-обобщенными может быть только их принцип, а восприятие и реализация должны соответствовать национальной системе ценностей. Настоящая статья преследовала несколько целей: внести ясность в существующую ситуацию и помочь определиться как армянину-индивиду, так и всему народу, а также государственной власти; восстановить у армян уверенность в себе в духовной сфере, способствовать тому, чтобы церковь вновь обрела ту роль, которую она играла в недавнем прошлом; стимулировать развитие армянской философской и правовой мысли.

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Դմիտրի Սանոյան[1]

1915թ. Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանությունը սկիզբ դրեց աշխարհում ցեղասպանական հանցագործությունների և «էթնիկ զտումների» երկար շարանին, որոնք սևով խարանեցին XX դարի ճակատը: 1910-ական թթ. սկզբին հայերն ապրում էին իրենց հայրենիքում՝ Հայաստանում (Հայկական լեռնաշխարհ և Հայկական Կիլիկիա), ինչպես նաև այլ տարածքներում՝ Միջերկրական ծովի արևմտյան փոքրասիական և մերձավորարևելյան ծովափից մինչև Թիֆլիս ու Հյուսիսային Կովկաս, Սև ծովի ափերից մինչև Բաքու: Մինչև Առաջին աշխարհամարտը հայերի մեծամասնությունը (ավելի քան 4 մլն մարդ) հոծ ապրում էր Հայաստանի տարածքում, որոնցից մոտ 1,5 միլիոնը՝ Արևելյան Հայաստանում (Ռուսական կայսրությունում), մնացածը՝ Արևմտյան Հայաստանում, Հայկական Կիլիկիայում, ինչպես նաև այլ տարածքներում (Օսմանյան կայսրությունում) [1, c. 37]:

Ցեղասպանությունը (հայերի ֆիզիկական բնաջնջումն ու բռնագաղթը 1878-1922թթ., սկսվել են Օսմանյան կայսրությունում, շարունակվել երիտթուրքերի և ավարտվել քեմալականների կողմից)[2], որն աղետի վերածվեց 1915թ. (ոչնչացվեցին 1,5 միլիոն հայեր), հանգեցրեց նրան, որ խախտվեց հայ ժողովրդի կյանքի բնական պատմական գործընթացը: Հայության (Հայրենիքում և Սփյուռքում) վրա դեռ շարունակում են անդրադառնալ Օսմանյան կայսրության անկման վերջին տասնամյակներին Արևմտյան Հայաստանում, Հայկական Կիլիկիայում և հայաբնակ այլ վայրերում (փոքրասիական և մերձավորարևելյան շրջաններում) տեղի ունեցած Ցեղասպանության ողբերգական հետևանքները:

Օսմանյան կայսրությունում իրագործվող Հայոց ցեղասպանության շրջանում Երուսաղեմում էր գտնվում թուրքական յոթերորդ բանակի (որի հրամանատարն էր Պաղեստինի նահանգապետը՝ երիտթուրքերի հանցավոր առաջնորդներից Ահմեդ Ջեմալ փաշան, որը դեռ 1914թ. նոյեմբերին նշանակվել էր Սիրիա-պաղեստինյան ճակատում գործող 4-րդ բանակի հրամանատար) ութերորդ

[1] Մ.Վ. Լոմոնոսովի անվան ՄՊՀ Ասիայի և Աֆրիկայի երկրների ինստիտուտի ասպիրանտ:

[2] Ոչնչացվեց 2 մլն հայ, մոտ 800 հազար մարդ բռնի տեղահանվեց (տե՛ս *Барсегов Ю.Г.,* «Геноцид армян - преступление против человечества» (о правомерности термина и юридической квалификации), Ереван, 1990, с. 4-5, 24; *Барсегов Ю.*, «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества», Документы и комментарии, т.1, М., 2002, с. 11.

կորպուսի շտաբ-բնակարանը: Սիրիայում նրա վարչառազմական կառավարման շրջանում, Դեյր-էլ-Զոր քաղաքի մոտ գտնվող անապատում, 1915թ. երիտթուրքական առաջնորդների հրամանով սպանում էին Արևմտյան Հայաստանից և Օսմանյան կայսրության այլ վայրերից տեղահանված հայերին:

Գերմանիայի դեսպան Հոգենդոռի՝ Երուսաղեմում գլխավոր հյուպատոսին ուղղված հեռագիրը (1915թ. օգոստոսի 27) և վերջինիս պատասխանը նույնպես վկայում են երիտթուրքերի ցեղասպան քաղաքականության մասին: Դեսպանի հեռագրից և հյուպատոսի պատասխանից հետևում էր, որ Ջեմալ փաշան, Թալաաթ բեյի իմացությամբ, հրաման էր արձակել Հալեպի վիլայեթի բողոքական հայերի տեղահանման մասին (*Lepsius J., Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstucke, S. 143, 150*): Սա երիտթուրքերի առաջնորդների իրականացրած բազմաթիվ հանցագործություններից մեկն էր: Ջեմալ փաշան սպանվել է 1922թ. Թբիլիսիում, հայ վրիժառուներ Պետրոս Տեր-Պողոսյանի և Արտաշես Գևորգյանի ձեռքով, Հայոց ցեղասպանության մեղավորներին պատժող «Նեմեսիս» գործողության շրջանակներում:

Ջեմալ փաշան թշնամանքով էր լցված Օսմանյան կայսրության լծի տակ գտնվող երկրների բնիկ ժողովուրդների ազատատենչության ցանկացած դրսևորման դեմ: Սիրիայում և Պաղեստինում նրան առանձնապես երկյուղելու առիթ էր տալիս 1910-ական թթ. արաբական ազգային շարժման բուռն վերելքը: Պաղեստինի արաբական ազգային շարժման առաջնորդներից մեկը՝ Ղազի մուֆթին, ժողովրդին դիմում էր թուրքերի դեմ կոչերով ու դիմումներով: 1916թ. վերջին թուրքերը մուֆթիին կախաղան բարձրացրին: Եվ սա երիտթուրքերի առաջնորդների, մասնավորապես, Ջեմալ փաշայի նախաձեռնած հաշվեհարդարի ամենևին էլ միակ դեպքը չէր «պոտենցիալ» քաղաքական հակառակորդների դեմ: Այս շրջանում երիտթուրքական իշխանությունների զոհ դարձան արաբական ազգային շարժման այլ ակտիվիստներ ևս:

Երիտթուրքերի քաղաքական ճնշումներն անդրադարձան երկրի ժողովրդագրական իրավիճակի վրա: Արդեն 1915թ. սկսվում է արաբ բնակչության զանգվածային արտահոսքը ծովափնյա քաղաքներից (Հայֆա, Յաֆա, Գազա և այլն) և Երուսաղեմից: Շատ արաբներ Պաղեստինից հեռացան սահմանամերձ շրջաններ: Նրանք գրեթե բոլորն անցան անգլիացիների կողմը՝ Թոմաս Էդուարդ Լոուրենսի (Լոուրենս Արաբացի, 1888-1935) դրոշի ներքո, որը 1916թ. հունվարին իր հրամանատարության տակ հավաքեց ավելի քան տասնհինգ հազար արաբ պարտիզանների և նրանց առաջնորդեց թուրքական բանակի դեմ:

Առաջին համաշխարհային պատերազմը բացասաբար անդրադարձավ նաև Երուսաղեմի և Պաղեստինի հրեական հատվածի կյանքի վրա: Այդ շրջանում երկրի հրեական համայնքի զգալի մասը կազմում էին այն պետությունների քաղաքացիներն ու հպատակները, որոնց հետ Օսմանյան կայսրությունը

ձևականորեն և (փաստացի) պատերազմի մեջ էր գտնվում: Դա չէր կարող չանդրադառնալ Պաղեստինի հրեական համայնքին օսմանյան իշխանությունների վերաբերմունքի վրա: Երուսաղեմի և Պաղեստինի հրեաների կյանքն օրեցօր սարսափելի ու անտանելի էր դառնում: Օտարերկրյա նվիրատվությունները վերջացել էին: 1915թ. խոլերայի համաճարակ և սով սկսվեց: Պաղեստինի ավելի քան տասը հազար հրեաներ հայտնվեցին փախստականների եգիպտական ճամբարներում: *Իշուվի* (եբր. բառացի՝ բնակեցված վայր, բնակչություն, ինչպես նաև բնակեցում. Պաղեստինի հրեա բնակչության հավաքական անվանումը) գլխին թափված մեկ այլ աղետ էր սովը, որին զոհ գնացին շատերը: Իշուվի որոշ քաղաքական խմբերի և կազմակերպությունների ներկայացուցիչներ ենթարկվեցին օսմանյան իշխանությունների բռնաճնշումներին:

1918թ. Նյու Յորքում իդիշով լույս տեսավ Իսրայել պետության ապագա առաջին վարչապետ Դավիթ Բեն-Գուրիոնի (1886-1973) և այդ երկրի ապագա երկրորդ նախագահ Իցհակ Բեն-Ցվիի (1884-1963) «Իսրայելի հողը անցյալում և ներկայում» գիրքը: Ըստ հեղինակների ներկայացրած տվյալների՝ 1915թ. Պաղեստինի բնակիչների ընդհանուր թիվը կազմում էր 1.079.204 մարդ, որոնցից 759.659-ը՝ արևմտյան և 319.545-ը՝ արևելյան հատվածներում: Սակայն գրքի վերամշակված հրատարակությունում, որը լույս է տեսել հեղինակների մահվանից հետո, 1980թ., խմբագիրները Պաղեստինի արևմտյան հատվածի (բրիտանական մանդատի սահմաններում) համար Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին բնակչության այլ թվաքանակ էին նշում՝ 650 հազար մարդ [2, c. 146]:

1914թ. կեսերին Պաղեստինում մոտ ութսունհինգ հազար հրեա կար, որոնց կեսից ավելին (մոտ քառասունհինգ հազար) ապրում էր Երուսաղեմում: Հրեաների բացարձակ մեծամասնությունն ապրում էր քաղաքներում, և միայն մոտավորապես տասներկու հազարն էր, որ ապրում էր գյուղական բնակավայրերում: Առաջին աշխարհամարտը կասեցրեց իշուվի վերելքն ու զարգացումը: Պատերազմի ավարտին հրեաների թիվը երկրում կրճատվեց գրեթե երեսուն հազար մարդով:

Ի՞նչն Առաջին աշխարհամարտի ժամանակ հանգեցրեց Պաղեստինի հրեաների թվաքանակի այդքան կտրուկ անկմանը: Նախ՝ շատերը հեռացան երկրից պատերազմի տարիներին: Այն երկրների հպատակները, որոնք պատերազմի մեջ էին Թուրքիայի դեմ, կամ արտաքսվեցին իշխանությունների կողմից, կամ ինքնակամ հեռացան, իսկ Օսմանյան կայսրության հպատակները երկիրը թողեցին թուրքական բանակում ծառայությունից խուսափելու համար: Երկրորդ՝ այդ տարիներին բավական բարձր էր մահացության մակարդակը: Բնական աղետները, համաճարակները, հիվանդությունները, սովը, ինչպես նաև մարտական գործողությունները բազմաթիվ կյանքեր խլեցին:

Պատերազմի տարիներին երկրի բնակչության հրեական հատվածը մեծ տառապանքներ կրեց, քանի որ պատերազմի հետևանքները քաղաքում շատ ավելի նկատելի էին, քան գյուղում: Ինչպես վերը նշվեց, հրեաների մեծ մասն (85%) ապրում էր քաղաքներում, և միայն փոքր մասն էր, որ ապրում էր գյուղական բնակավայրերում [2, c. 147]: Ընդ որում, երկրի ոչ հրեա բնակչության շրջանում այդ հարաբերակցությունը հակառակն էր. նրանց մեծամասնությունն ապրում էր գյուղերում և միայն փոքր մասը՝ քաղաքներում: Ավելին, հրեա բնակչությունը տնտեսապես կախված էր այլ երկրներից, որտեղ էլ գտնվում էին ֆինանսական աջակցության աղբյուրները և արտադրանքի արտահանման շուկաները: Պատերազմի սկսվելուն պես Պաղեստինի և եվրոպական երկրների կապերը խզվեցին, դրանով իսկ փակվեցին ֆինանսական աջակցության աղբյուրները և արտաքին առևտրի ուղիները:

Պատերազմի ընթացքում հրեական համայնքի վիճակն էլ ավելի ծանրացավ: Ամերիկյան հրեաների օգնությունն արդեն 1916թ. սկզբին կրճատվել էր, իսկ 1917թ. գարնանը, պատերազմի մեջ ԱՄՆ-ի մտնելուց հետո, ընդհանրապես դադարեցվեց: Քանի որ վտանգ կար, թե բրիտանացիները, որոնք 1917թ. զավթել էին Ռաֆիահը, կնվաճեն երկիրը, օսմանյան իշխանությունները Թել Ավիվի և Յաֆայի բնակիչներին քշեցին երկրի հյուսիս. միայն երիտասարդների մի փոքր խումբ մնաց՝ տներն ու ունեցվածքը հսկելու և գողերից ու մարոդյորներից պաշտպանելու համար: Բնակիչների մի մասը վերադարձավ գեներալ Է.Ալենբիի զորքերի՝ Պաղեստին մտնելուց անմիջապես հետո, 1917թ. վերջին, բայց մեծ մասը վերադարձավ միայն 1918թ.: 1917թ. վերջին օսմանյան իշխանությունները հրեաների հետապնդումների նոր ալիք բարձրացրին՝ փորձելով բռնել ՆԻԼԻ կազմակերպության անդամներին:

Դիտարկվող ժամանակաշրջանում Երուսաղեմի հայկական համայնքը, որը հիմնականում կենտրոնացած էր Հին Երուսաղեմի շրջանում, ինչպես նաև Պաղեստինի մյուս էթնիկ խմբերը ենթարկվում էին թուրքական իշխանությունների բռնաճնշումներին և հալածանքներին: Երուսաղեմի քաղաքային վարչությունում աշխատող հայերը հեռացվեցին պաշտոններից: Եգիպտոսից սպասվող բրիտանական սպառնալիքի հետ կապված՝ թուրքերը ազգային փոքրամասնությունների բոլոր ներկայացուցիչներին՝ հրեաներին, արաբներին, հույներին, հայերին, կասկածում էին թշնամու հետ գործակցելու մեջ: Սկսվեց թուրքական ծագում չունեցող երիտասարդ զորակոչիկների բռնի վտարումը Երուսաղեմի սահմաններից: Նրանց ուղարկում էին Օսմանյան կայսրության տարբեր շրջաններ՝ ծանր աշխատանքներ կատարելու համար: Թե իրականում ինչով դա ավարտվեց՝ հայտնի է տաժանակիր աշխատանքի տեղամասերում իրականացված զանգվածային կոտորածների մասին բազմաթիվ վկայություններից և լուսանկարներից: Ոմանց հաջողվեց փախչել թուր-

քական բանակի ծառայությունից և թաքնվել:

Առաջին աշխարհամարտի շրջանում երիտթուրքական իշխանությունները փորձեցին չեզոքացնել Ամենայն Հայոց կաթողիկոսի (նստավայրը՝ ք.Էջմիածին, Արևելյան Հայաստան, Ռուսական կայսրության կազմում) ազդեցությունն արևմտահայոց վրա և ստեղծել Հայ Առաքելական եկեղեցու մեկ կաթողիկոսություն-պատրիարքություն՝ Երուսաղեմ կենտրոնով: Նոր կաթողիկոս-պատրիարքը պետք է ներկայացներ Ցեղասպանության ընթացքում Օսմանյան կայսրության որոշ շրջաններում դեռ մնացած հայ բնակչությանը (Կիլիկիայի հայերի բնաջնջումը թուրքերը շարունակեցին 1920թ., իսկ Թուրքիայի արևմտյան շրջաններում՝ 1919-1922թթ.): Այդ նպատակով երիտթուրքերը փորձեցին վերացնել Հայ Առաքելական եկեղեցու՝ կայսրության տարածքում գտնվող պատրիարքական աթոռները (Կիլիկիայի կաթողիկոսությունը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքարանները. 1895-ին վերջինին էին անցել Աղթամարի կաթողիկոսության թեմերը)՝ դրանք միավորելով իրենց իշխանության ներքո: Արևմտահայերի բարձր հոգևոր դասը Ցեղասպանության ընթացքում ամբողջովին կիսում էր իր ժողովրդին բաժին ընկած ողբերգական ճակատագիրը: Ցեղասպանությանը զոհ գնաց հայ հոգևորականության 4 հազար ներկայացուցիչ: Թուրքական իշխանություններն աքսորեցին (Բաղդադ, իսկ հետո՝ Մոսուլ) Կոստանդնուպոլսի պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանին: Նույն կերպ վարվեցին նաև Կիլիկիայի հայոց կաթողիկոսի հետ. Սահակ II Խապայանը սկզբում աքսորվեց Բաբ (Հալեպին մոտ), այնուհետև՝ Երուսաղեմ:

1916թ. երիտթուրքերի կառավարությունը հիմնեց մեկ կաթողիկոսություն-պատրիարքություն, աթոռանիստը՝ Երուսաղեմում [3, էջ 338]: Կաթողիկոս-պատրիարքի պաշտոնը հանձնարարվեց Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Խապայանին [4]: Հարկ է նշել, որ հայ պատրիարքությունների միավորումը չընդունվեց ոչ Էջմիածնի կաթողիկոսության, ոչ Հյուսիսային ու Հարավային Ամերիկայի և Եվրոպայի թեմերի մեծամասնության կողմից: Սահակ Խապայանը զառամյալ հասակում էր և իրեն ընդունակ չէր համարում իր վրա դրված պարտականությունները կատարելու համար: Իր գործողություններում նա հենվում էր Սուրբ Հակոբ վանքի միաբանության եպիսկոպոսների խորհրդի վրա:

Հայերը Սուրբ Հակոբ վանքի ներսում թաքցնում էին օսմանյան բանակից փախածներին, ինչպես նաև ապաստան և սնունդ էին տրամադրում թուրքական կոտորածից մազապուրծ հայերին [5, p. 201]: (Հրեաներն իրենց հայրենակիցներին թաքցնում էին հրեական թաղամասի սինագոգներում, արաբները՝ Օմարի մզկիթներում): Արևմտյան Հայաստանի շրջաններից փախած ավելի քան 4 հազար մարդ ապաստան գտավ Սուրբ Հակոբ վանքի պատերի ներսում

[6, pp. 19–20]: Ամերիկյան Կարմիր խաչը ևս մի քանի հազար փախստականի տեղավորեց Հին քաղաքի հետնախորշերում՝ այսպես կոչված «Բամբակի շուկայում»: Հայոց պատրիարքության և Հին քաղաքի Հայկական թաղի Արարատյան փողոցները փաստորեն վերածվել էին փախստականների և տեղահանվածների հսկայական ճամբարի:

Հայկական համայնքի գոյատևման կարևոր գործոն էր նաև Երուսաղեմի արաբական ղեկավարության դիրքորոշումը: Թեև ձևականորեն Պաղեստինի կառավարիչը թուրք աստիճանավոր էր լինում, որի նստավայրը գտնվում էր Դամասկոսում, քաղաքը, սակայն, փաստացի կառավարվում էր արաբ արիստոկրատիայի ներկայացուցիչների կողմից, ներառյալ քաղաքապետն ու նրա տեղակալները: 1909-1917թթ. Երուսաղեմի քաղաքապետն էր արաբական երեք կարևոր ընտանիքներից (Հուսեյն, Նաշաշիբի, ալ-Հալիդի ընտանիքներ) մեկի ներկայացուցիչը՝ Սելիմ ալ-Հուսեյնը, որոնք XIX դարի ողջ ընթացքում իրենց ձեռքում էին պահում քաղաքի արտաքին կապերն ու նրա հիմնական հաստատությունները: Տեղի արաբախոս հայերը սերտ կապեր էին պահպանում արաբական արիստոկրատիայի ներկայացուցիչների հետ, որոնք հնարավորին չափ հեռու էին պահում սպառնալիքն իրենց հարևաններից:

Այն բանից հետո, երբ գեներալ Էդմունդ Ալենբիի (1861-1936) գլխավորած դաշնակիցների բանակը դիրքեր գրավեց Երուսաղեմի արվարձաններում, թուրքական վարչակազմի ներկայացուցիչները դավաճանության և անգլիացիների հետ համագործակցելու մեջ սկսեցին կասկածել քրիստոնյա, ինչպես նաև հրեական բոլոր համայնքների առաջնորդներին: 1917թ. նոյեմբերի 24-ի գիշերը թուրքերը հավաքեցին Երուսաղեմի բոլոր կրոնական համայնքների (բացի մահմեդականից) առաջնորդներին, ձերբակալեցին, նստեցրին բեռնատարները և տարան Դամասկոս՝ որպես պատանդ: Ձերբակալվածների մեջ էր նաև կաթողիկոս-պատրիարք Սահակ Խապայանը: Այսպես ավարտվեց նրա կարճ (տասնհինգ ամիս) գործունեությունն այդ պաշտոնին: 1918թ. պատերազմի ավարտից և պատանդներին ազատ արձակելուց հետո Սահակ Խապայանը հաստատվեց Ադանայում (Հայկական Կիլիկիա), այնուհետև մի կարճ ժամանակ ապրեց Հալեպում (Սիրիա):

Պաղեստինը, որը Մերձավոր Արևելքում Առաջին աշխարհամարտի մարտական գործողությունների հիմնական թատերաբեմերից մեկն էր, լուրջ վնասներ կրեց 1914-1948թթ. ընթացքում: Երուսաղեմի գրեթե բոլոր հայկական հաստատություններն անկում ապրեցին: Նշվում է, որ Երուսաղեմի հայկական բոլոր կառույցները, ներառյալ պատրիարքությունը, Սուրբ Հակոբի միաբանությունը, հայկական դպրոցները և այլն, ավերվեցին կամ խարխլվեցին Մերձավոր Արևելքի պատերազմով և Արևմտյան Հայաստանում ու Օսմանյան Թուրքիայի այլ մասերում Հայոց ցեղասպանության հետևանքով [7, p. 18]:

Միայն սակավաթիվ հայկական կազմակերպություններ կարողացան պահպանել իրենց ներկայացուցչությունները Երուսաղեմում և Պաղեստինում:

1915թ. Հայոց ցեղասպանությունից հետո Երուսաղեմի հայկական համայնքը զգալի փոփոխություններ կրեց թե՛ որակական և թե՛ քանակական առումով: Արևմտյան Հայաստանից գաղթած ավելի քան հարյուր հիսուն հազար տեղահանվածներ փախան Սիրիա [8]: Ըստ որոշ տվյալների՝ մոտ քառասուն հազար հայեր անցան Պաղեստին: Հայ փախստականների մեծ մասը հաստատվեց Երուսաղեմում, Ամանում, Քերակում և Մաանում: Որոշ տվյալներով՝ 1917թ. Երուսաղեմի հայ բնակչությունը կազմել է մոտ քսան հազար մարդ: Արևմտյան Հայաստանից և այլ շրջաններից փախածների հոգսը ստանձնեց Հայոց պատրիարքարանը: Հետագայում շատ հայ գաղթականներ տեղափոխվեցին այլ շրջաններ՝ Լիբանան, Տրանսիորդանան, Եգիպտոս և այլուր:

1918թ., չնայած Պաղեստինի հայկական համայնքի կրած ծանր վնասներին, Հայոց պատրիարքարանը պահպանեց դիրքերը Երուսաղեմում: Հայ Առաքելական եկեղեցին առաջվա պես համարվում էր կարևորությամբ երրորդը (Հունական Ուղղափառ և Հռոմի Կաթոլիկ եկեղեցիներից հետո) քրիստոնեական բոլոր եկեղեցիների մեջ, որ իրավունք ունեին սրբավայրեր ունենալ: Հայտնի է, որ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի և ընդհանրապես Երուսաղեմի ու Պաղեստինի հայկական համայնքի դրությունը կանոնակարգող օրենքների մեծ մասն ընդունվել էր 1852-1853թթ. օսմանյան հրամանագրով, որը «ստատուս քվո» էր հաստատում Սրբավայրերում [9, էջ 4510, 4515] և կանոնակարգում էր դրանց սեփականության իրավունքը (Սբ Հարության տաճարը Երուսաղեմում, Սուրբ Ծննդյան տաճարը Բեթղեհեմում, կույս Մարիամի գերեզմանը Գեթսեմանի այգում և այլն)՝ տրված քրիստոնեական երեք գլխավոր եկեղեցիներին՝ Հայկականին, Հունականին և Հռոմեականին [10, p. 3]: Միևնույն ժամանակ, Հայ Առաքելական եկեղեցին պահպանում էր հողային բոլոր տիրույթների, ինչպես նաև Սուրբ հողում ունեցած գույքի իրավունքը, քանի որ Սուրբ Հակոբ վանքի ամբողջ տարածքը, որի սահմաններում դիտարկվող ժամանակահատվածում բնակվում էր Երուսաղեմի բոլոր հայերի ավելի քան ութսուն տոկոսը, Հայոց պատրիարքարանի սեփականությունն էր համարվում 638 թվականից՝ Հայոց պատրիարք Աբրահամի (մահացել է 669թ.) ժամանակներից:

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի կրած պարտությունից հետո Կիլիկիայի կաթողիկոսությունը, Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի հայկական պատրիարքարանները շարունակեցին իրենց գոյությունը:

Հայոց ցեղասպանության հետևանքները ծանր անդրադարձ ունեցան Մերձավոր Արևելքի հայկական համայնքների եկեղեցական կյանքի վրա: Թուրքիայի տարածքում գտնվող հայկական հոգևոր ճեմարանները վերացվե-

ցին: Կոստանդնուպոլսի՝ որպես Եգիպտոսի, Սիրիայի, Պաղեստինի և այլ երկրների հայ հոգևորականության նոր կադրերի ինքնատիպ աղբյուրի, դերը գործնականում հավասարեցվեց զրոյի:

Միևնույն ժամանակ, Ռուսաստանում տեղի ունեցող իրադարձություններն (Անտանտի կողմից Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցությունը, համընդհանուր տնտեսական ճգնաժամը, 1917թ. փետրվարի հեղափոխական իրադարձությունները և դրանց հաջորդող՝ Ռուսական կայսրության անկումը) ազդեցին Արևելյան Հայաստանի իրադրության վրա:

Մինչև Հայոց ցեղասպանությունը հայերի մեծամասնությունը (ավելի քան 2,5 մլն մարդ) ապրում էր Արևմտյան Հայաստանում, Հայկական Կիլիկիայում և փոքրասիական, մերձավորարևելյան, Հյուսիսային Միջագետքի քաղաքներում, իսկ Հայության հոգևոր կենտրոնը՝ Էջմիածինը (որն այսօր էլ Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ Հայ Առաքելական եկեղեցու հովվապետի աթոռանիստն է), գտնվում էր Արևելյան Հայաստանում (Ռուսական կայսրության կազմում): Էջմիածնի Մայր տաճարը, որը կառուցվել է 301թ.՝ Հայաստանում քրիստոնեության ընդունման թվականին, աշխարհի հնագույն քրիստոնեական տաճարներից է: Այն սրբազան նշանակություն ունի Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ բոլոր հայերի համար: Հարյուրամյակներ շարունակ Էջմիածինը եղել է նաև կարևորագույն կրթական կենտրոն: Այստեղ է գտնվել աշխարհի խոշոր հայկական ճեմարաններից մեկը: 1917թ. իրադարձությունները և հատկապես 1920-ական թթ. հետո զգալիորեն նվազեցրին Էջմիածնում սովորել ցանկացողների հոսքը և վատթարացրին դասավանդման պայմանները ճեմարանում: Բնականաբար, պակասեց այն հոգևորականների թիվը, որոնք պատրաստվում էին այլ երկրներում գործելու համար, իսկ Սբ Էջմիածինն ինքը հայտնվեց ծայրահեղ վտանգավոր վիճակում Արևելյան Հայաստանում ստեղծված խորհրդային իշխանության աթեիստական մթնոլորտի պատճառով: Այսպիսով, Երուսաղեմը հայկական սփյուռքի եկեղեցական կրթության կարևոր կենտրոն էր դառնում: 1920-ական թթ. սկզբին ԱՄՆ և Արևմտյան Եվրոպայի հայկական ծխերի հոգևոր դասի ներկայացուցիչների մեծ մասը կրթություն էր ստացել Երուսաղեմում:

Երուսաղեմը նաև աշխարհի այն փոքրաթիվ քաղաքներից էր, որոնցում շարունակում էր հրատարակվել հայ եկեղեցական և պատմական գրականություն: 1915թ. Ցեղասպանությունից հետո Հայ Առաքելական եկեղեցուն պատկանող տպագրատները Օսմանյան կայսրության տարածքում փակվեցին: Այդ նույն ժամանակ, 1917թ. Ռուսական կայսրությունը ցնցող սոցիալ-տնտեսական վայրիվերումները նույնպես նույն ազդեցությունն ունեցան արևելահայ հատվածի կենսագործունեության վրա (հիշեցնենք, որ հայ հոգևոր գրականություն հրատարակող տպագրատներն առաջիններից էին Անդրկովկասում):

Գոյացած բացը լրացնելու եկավ Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը: Օգտագործվեց ինչպես հենց իր՝ պատրիարքարանի և Սուրբ Հակոբ միաբանության պոտենցիալը, այնպես էլ Երուսաղեմում ապրող աշխարհիկ շատ հայերի միջոցները: Նկարագրվող ժամանակաշրջանի ավարտին արդեն Երուսաղեմը դարձավ հայ եկեղեցական գրականության հրատարակության խոշոր (եթե ոչ՝ ամենախոշորն աշխարհում) կենտրոն: ԱՄՆ-ում և Կանադայում 1910-ական թթ. վերջին – 1920-ական թթ. սկզբին օգտագործվող աղոթագրքերի և շարակնոցների մեծ մասը տպագրվել է Երուսաղեմում կամ այնտեղ առաջինը տպագրվածներից արտատպվածներ են եղել:

1915թ. Ցեղասպանության շրջանում թուրքերը Կոստանդնուպոլսում ձերբակալել և սպանել են հայ մտավորականության մոտ 800 ներկայացուցչի: Երիտթուրքերի վայրագություններից փրկված հայերը փորձում էին վերադարձնել կորցրածը, Երուսաղեմում վերստեղծել արևմտահայ մշակութային հենքը: Փորձ արվեց Երուսաղեմում հավաքել Ցեղասպանությունը վերապրած հայ մտավորականներին:

1914-1918թթ. Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը ծանր ժամանակներ էր ապրում: Եպիսկոպոս Բաբկեն Գուլեսերյանը և հայտնի մանկավարժ, Արմաշի հոգևոր ճեմարանի (նույնանուն գյուղում, որը գտնվում է Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում, Նիկոմեդիայում) դեկան, արքեպիսկոպոս Եղիշե Դուրյանը, որը հետագայում Երուսաղեմի պատրիարքը դարձավ (1921-1930), ստանձնեցին հոգևոր կրթական նոր հաստատություն ստեղծելու առաքելությունը, որն ստացավ «Գյուլբենկյանի դասարան» (ի պատիվ հայ անվանի միլիոնատեր, նավթային մագնատ Գալուստ Գյուլբենկյանի, որն զբաղվում էր մեկենասությամբ և իր վրա էր վերցրել հաստատության ստեղծման ծախսերը) անվանումը [7]: «Գյուլբենկյանի դասարանի» հիմնական նպատակը սփյուռքի երկրների համար քահանաների պատրաստումն էր: «Դասարանի» առաջին շրջանավարտներից էին Սիոն Մանուկյանը (որը հետո դարձավ արքեպիսկոպոս և սպասավորում էր ԱՄՆ-ում, Հարավային Ամերիկայի երկրներում, Մերձավոր Արևելքում և Էջմիածնում), Սերոբ Մանուկյանը (որը հետագայում գլխավորեց Հայ Առաքելական եկեղեցու Արևմտաեվրոպական թեմը, որի կենտրոնը գտնվում էր Փարիզում), Հայկազուն Աբրահամյանը (որը նույնպես հետագայում դարձավ արքեպիսկոպոս և վերջին տարիներն անցկացրեց Էջմիածնում՝ զբաղեցնելով Ամենայն Հայոց կաթողիկոսի զգեստապետի պաշտոնը), Պարգև Վրթանեսյանը (որը եպիսկոպոս դարձավ և ողջ կյանքը նվիրեց Երուսաղեմի Հայկական եկեղեցուն), Զգոն Տեր-Հակոբյանը (որը զգալի ավանդ է ունեցել ԱՄՆ-ում հայկական նոր եկեղեցիների և դպրոցների շինարարության գործում), Արիս Շիրվանյանը (որը գլխավորեց Հայ Առաքելական եկեղեցու Կալիֆորնիայի թեմը), ինչպես նաև Շավարշ Կույում-

ջյանը (որը հետագայում սպասավորում էր Դամասկոսում) [7]: Ներկայացված անվանացանկը ակնհայտ վկայությունն է այն բանի, որ նշանակալի էր դարձել Երուսաղեմի դերը հայ սփյուռքի եկեղեցական կյանքում:

Մի քանի խոսք՝ Հայկական լեգեոնի և Պաղեստինի ճակատում նրա մասնակցության մասին: Առաջին աշխարհամարտի տարիներին հայերից կազմվել էին ֆրանսիական Օտարերկրյա լեգեոնի զումարտակներ, որոնք մարտնչում էին Պաղեստինում: Օտարերկրյա լեգեոնի և դաշնակիցների բանակի այլ զորամասերի հայ զինվորների՝ մերձավորարևելյան մարտական գործողությունների ժամանակ դրսևորած քաջությունն ու հերոսությունն իրենց ազեցությունն ունեցան ինչպես Պաղեստինի հայ համայնքի նկատմամբ բրիտանական զինվորական իշխանությունների վարած քաղաքականության, այնպես էլ հետագայում Երուսաղեմի հայ համայնքի և բրիտանական մանդատի իշխանությունների փոխհարաբերությունների վրա:

Մերձավոր Արևելքում եվրոպացիների և հայերի ակտիվ համագործակցության պատմությունը սկիզբ է առնում միջին դարերից, մասնավորապես՝ խաչակրաց արշավանքների ժամանակներից:

1916թ. հոկտեմբերի 27-ին Լոնդոնում, եռակողմ համաձայնության հիման վրա, ընդունվեց որոշում ֆրանսիական բանակի կազմում Հայկական և Արաբական (Արևելյան) լեգեոնների ստեղծման մասին: Դրանք պետք է մասնակցեին Օսմանյան կայսրության դեմ մղվող մարտական գործողություններին սիրիա-պաղեստինյան ճակատում: Թուրքերի դեմ պայքարին մասնակցելու համար Հայկական լեգեոնի ստեղծման նախաձեռնողը եգիպտոսաբնակ գյուտարար, հայ բարերար և քաղաքական գործիչ Պողոս Նուբար փաշան էր (1846-1930): «Ըստ ֆրանսիական կառավարության հետ կնքված համաձայնության, Հայկական լեգեոնը Թուրքիայի դեմ պետք է մարտնչեր միայն Կիլիկիայում և միայն պատերազմի հաղթական ավարտից հետո պետք է դառնար ապագա Կիլիկյան ինքնավար հանրապետության բանակի միջուկը»[1]:

1916թ. նոյեմբերի 15-ին ուժի մեջ է մտնում հայ կամավորներին դաշնակիցների բանակ ընդունելու մասին հրամանը, և զինվորների առաջին մեծ զորախմբերը հավաքվում են նշված հավաքատեղիներում և կայազորներում: Կամավորների մեջ կային ինչպես Արևմտահայաստանից փախստական, ցեղասպանությունից փրկված, այնպես էլ պաղեստինցի հայեր, որոնք փախել էին թուրքական բանակի ծառայությունից և երիտթուրքերի քաղաքական հալածանքներից և ճնշումներից: Հայ քաղաքական «Դաշնակցություն» և «Հնչակյան» կուսակցությունների հովանու ներքո գործող կազմակերպությունները ու ակումբները, որոնց մասնաճյուղերը գտնվում էին Երուսաղեմում, փակվեցին:

[1] Տե՛ս *Киликия* հոդվածը www.genocide.ru կայքում:

Կամավոր էին գրվում ոչ միայն Եվրոպայում, այլև ԱՄՆ-ում (Նյու Յորք, Վաշինգտոն, Վաթերթաուն) և Եգիպտոսում (Կահիրե, Ալեքսանդրիա): Եգիպտոսում և Կիպրոսում արդեն 1916թ. նոյեմբերի վերջին կազմավորվել էին առաջին երեք գումարտակները, իսկ 1917թ. հոկտեմբերին Բեյրութում՝ չորրորդ գումարտակը: Այդ ժամանակ արդեն Հայկական լեգեոնում ավելի քան հինգ հազար մարդ էր հաշվվում, այն գործում էր Մերձավորարևելյան ճակատի տարբեր տեղամասերում և ուղղություններում: Հայկական լեգեոնի հայկական գումարտակներին կցվեցին հույներից, ասորիներից և քրիստոնյա արաբներից բաղկացած կազմավորումները: Հայկական լեգեոնականների համար Պաղեստինի և հատկապես Երուսաղեմի ազատագրումը կարևոր բարոյահոգեբանական խթան էր Օսմանյան կայսրության դեմ պատերազմում: Երուսաղեմում փաստորեն «պատանդի» կարգավիճակում գտնվող հայրենակիցներին ազատագրելու տենչը մարտական ոգի էր հաղորդում լեգեոնականներին:

1917թ. թուրքական բանակը պարտություններ էր կրում Առաջին համաշխարհային պատերազմի ճակատներում: Պաղեստինում տեղակայված զորքերը՝ գերմանացի սպաների և գեներալների հրամանատարությամբ, փորձեցին մարտերով անցնել Սուեզի ջրանցքը: Սակայն կարճատև մարտերից հետո բրիտանացիներին հաջողվեց հետ շպրտել թուրքական յոթերորդ բանակի զորամասերը Սինա թերակղզուց: Թուրքական էքսպեդիցիոն կորպուսի պարտությունն Առաջին աշխարհամարտի այս ճակատում բեկումնային նշանակություն ունեցավ:

1917թ. ամռան սկզբին բրիտանացի գեներալ Է.Ալենբին Ֆրանսիայից ուղարկվեց Եգիպտոս և նշանակվեց Եգիպտական էքսպեդիցիոն ուժերի հրամանատար: Սկսվեց դաշնակիցների ուժերի վերախմբավորում Եգիպտոսում: 1917թ. հուլիսին բրիտանացիները Պաղեստինում սկսեցին հարձակումը Սինա թերակղզու տարածքից: Պաղեստինի հարավում մղվող դաժան մարտերը բրիտանական և թուրքական զորքերի միջև շարունակվեցին երկու ամիս: 1917թ. հոկտեմբերին գեներալ Է.Ալենբիի զորքերը գրավեցին Բեեր-Շևուն, իսկ նոյեմբերի սկզբին մտան Գազա, դրանից հետո վերցվեցին Յաֆան և Թել Ավիվը:

1917թ. հոկտեմբերի 28-ին Հայկական լեգեոնի՝ Սինա թերակղզում գտնվող ստորաբաժանումները մասնակցեցին թուրքական և գերմանական զորքերի դիրքերի դեմ հակահարձակմանը Գազա-Բեեր-Շևու գծում, որից հետո հակառակորդը ստիպված էր նահանջել և մեծ կորուստներ կրելով՝ թողնել մի շարք բնակավայրեր: Հակահարձակման ժամանակ հայ լեգեոնականները գերի վերցրին գերմանացի և թուրք շատ սպաների: 1917թ. հոկտեմբերի 31-ին Հայկական և Արաբական լեգեոնների գումարտակները հարձակմամբ վերցրին Բեեր-Շևուն:

1917թ. նոյեմբերի կեսերին թուրքերը կորցրին Պաղեստինի մեծ մասը:

1917թ. նոյեմբերի 17-ից լեգեոնականներն սկսեցին առաջ շարժվել Երուսաղեմի ուղղությամբ՝ քաղաքը գրավելու նպատակով: Դեկտեմբերի առաջին օրերին վերցվեց Բեթղեհեմը: Երուսաղեմի թուրքական զորախմբի համար շրջապատման մեջ ընկնելու սպառնալիք էր առաջացել: Եվ թուրքական զորքերը՝ գերմանացի գեներալ ֆոն Ֆալկենհայմի գլխավորությամբ, փախան Երուսաղեմից: 1917թ. դեկտեմբերի 9-ին Հայկական լեգեոնի ստորաբաժանումները անգլո-ֆրանսիական զորքերի կազմում մարտերով դուրս մղեցին թուրքական վերջին զորախումբը Երուսաղեմի Հին քաղաքի թաղամասերից, ինչի համար առավել աչքի ընկած լեգեոնականները պարգևատրվեցին, իսկ հայկական թաղամասի եկեղեցում մատուցվեց պատարագ զոհվածների հիշատակին:

Այսպես ավարտվեց Օսմանյան կայսրության չորս հարյուրամյակ ձգվող տիրապետությունը Երուսաղեմում և Պաղեստինում: Վերջնական հարվածը հասցվեց 1918թ. սեպտեմբերի 18-ին: Այդ օրը Արարայ (Ռաֆաթ-Արարա) բարձունքի մոտ տեղի ունեցավ ճակատամարտ, որն էլ վճռեց Պաղեստինյան ճակատի գործողությունների ելքը: Առանց հրետանային պատրաստության Հայկական լեգեոնի գումարտակը նվազագույն կորուստներով կոտրեց թուրքական բանակի համառ դիմադրությունը և գրավեց բարձունքը՝ անգլո-ֆրանսիական զորքերի հակահարձակման համար դրական արդյունք ապահովելով ռազմաճակատի ռազմավարական կարևոր այս հատվածում: Ճակատամարտի տեղում վեր է խոյանում զոհված լեգեոնականների հիշատակին կառուցված հուշարձան-կոթողը: 1918թ. դեկտեմբերի 17-19-ին Հայկական լեգեոնը մտավ Կիլիկիա... [11, c. 83-84]:

Երուսաղեմի, իսկ հետո նաև Պաղեստինի բրիտանական մանդատով համաքրիստոնեական գլխավոր սրբատեղիների (Տիրոջ Հարության տաճարը Երուսաղեմում, կույս Մարիամի գերեզմանը Գեթսեմանի այգում, Սբ Ծննդյան տաճարը Բեթղեհեմում) երեք պահապանները (Հայկական, Հունական և Հռոմեական եկեղեցիները) հաստատվեցին որպես դրանց սեփականության իրավունք ունեցողներ:

Հունվար, 2009թ.

Գրականություն և աղբյուրներ

1. *Мамулов С.С.,* «Армения и армяне – уникальный феномен цивилизованного мира» (Москва, 2005), книга 4.
2. *Авива Халамиш,* «От «национального очага» – к государству» (Раанана: Открытый университет Израиля, 2006), том 1.

3. Քրիստոնյա Հայաստան, հանրագիտարան, Երևան, 2002:
4. *Хачатрян А.,* «Идеология и деятельность зарубежных армянских церквей», дис. канд. исторических наук (МГУ им. М.В. Ломоносова, 1986).
5. *Kevork Hintlian,* «History of Armenians in the Holy Land» (Jerusalem: St. James Press, 1976).
6. *Hovannisian R.,* «Armenia on the Road to Independence» (Berkley: University of California Press, 1967).
7. *Papazian Dennis R.,* «The Contribution of Armenian Jerusalem to Armenians in America». A paper presented at the 30th Anniversary of Armenian Studies at the Hebrew University of Jerusalem in 1999.
8. *Aram Terzian, «An Armenian Miscellany»* (Paris: Samuelian, 1969).
9. *Սպարքիս արք. Օրմանեան,* Ազգապատում, հ. Գ, Մայր Աթոռ Ս.Էջմիածին, 2001:
10. *Hagopian A.,* «Armenians in Israel» (Jerusalem Center of Public Affairs, July 2, 1986).
11. *Саакян Р.Г.,* Франко-турецкие отношения и Киликия в 1918-1923гг., Ереван, 1986.

АРМЯНСКАЯ ОБЩИНА ИЕРУСАЛИМА И ПАЛЕСТИНЫ В ПЕРИОД ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ И ГЕНОЦИДА

Дмитрий Саноян

Резюме

Геноцид армян, достигший катастрофической кульминации в 1915г., привел к нарушению естественного хода целостного исторического процесса жизни армянского народа. Его последствия продолжают сказываться на всем Армянстве. В статье рассматриваются некоторые аспекты истории армянской общины Иерусалима и Палестины в период Первой мировой войны и Геноцида, а также роли Армянского легиона в освобождении общехристианских святынь.

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽՔ-ԾԱԼԿԱՅՈՒՄ (1988-2008թթ.)

Վահե Սարգսյան

Հոդվածում հաջորդաբար ներկայացվում են տարածաշրջանում գործած կազմակերպությունների գործառույթներն ու տարածաշրջանի քաղաքական կյանքում վերջիններիս ունեցած դերակատարությունը: Լայնորեն օգտագործված են արխիվային փաստաթղթեր և մինչ այժմ չօգտագործված նյութեր, որոնք նոր լույս են սփռում այդ կազմակերպությունների, հետևաբար նաև՝ Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի նորագույն պատմության վերջին քսանամյակի վրա: Անհրաժեշտ ենք համարել իրադարձությունները ներկայացնել քննական լույսի ներքո, որը մեծապես կօգնի հայկական կողմին՝ տարածաշրջանի քաղաքական կյանքում գրանցված անհաջողությունները սրբագրելու և վերջինիս նկատմամբ ճիշտ ռազմավարություն որդեգրելու գործում:

Մեր օրերում տարբեր շարժումների, միությունների և հասարակական կազմակերպությունների (ՀԿ) դերը մեծ, երբեմն որոշիչ կարող է դառնալ տվյալ տարածաշրջանի կամ երկրի, ինչպես նաև տվյալ էթնիկ հանրության ճակատագիրը կերտելու գործում: Իսկ հիմնախնդիր հարուցող օջախներում, երբ տվյալ էթնիկ հանրությունը պահանջներ ունի, որոնք տվյալ պետությունը չի բավարարում տասնամյակներ շարունակ, վերոնշյալ կազմակերպությունների գործունեության ընթացքը ինքնաբերաբար վերածվում է քաղաքական գործընթացի:

Խորությամբ հասկանալու համար ՀՀ հյուսիսային և քրիստոնյա հարևանի՝ Վրաստանի հայկական Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի ներկա ծանր վիճակի էությունը, նման իրավիճակի հասնելու պատճառները և ապագայի անելիքները, հարկավոր է վերլուծել անցյալը: Իսկ անցյալի հետխորհրդային շրջանի պատմությունը հասկանալն անհնար է՝ առանց վերոնշյալ կազմակերպությունների: Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի 20-ամյա (1988-2008թթ.) քաղաքական ընթացքն ինչ-որ իմաստով դառնում է այդ կազմակերպությունների ծննդյան, ընթացքի և շատ դեպքերում՝ վախճանի պատմությունը:

Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի քսանամյա պատմության ընթացքում թեև քիչ քանակությամբ, այնուամենայնիվ, եղել են որոշ հասարակական-քաղաքական կազմակերպություններ, որոնք այս կամ այն դերակատարությունն են ունեցել տարածաշրջանի իրադարձությունների մեջ: Այստեղ վերջին տարիներին ստեղծվել են հիմնականում կամ վրացական, կամ օտարերկրյա ծագմամբ բազմաթիվ ՀԿ-ներ, որոնք դարձյալ Վրաստանի հովանու տակ գտնվող և վերջինիս քաղաքականությունն իրականացնելուն կոչված կառույցներ են: Ելնելով այս հանգամանքից՝ ուսումնասիրության մեջ անդրադառնալու ենք այն խոշոր կազմակերպությունների գործունեությանը, որոնք իսկապես ունեցել են կենսագրություն և արձանագրված չեն եղել միայն թղթի վրա:

Մյուս կողմից՝ հարկ ենք համարել մանրամասնել Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի վերջին քսանամյա պատմության առավելաբար 1990-ական թթ. գործած կազմակերպությունների գործունեությունը, որոնք տարածաշրջանի համար ճակատագրական նշանակություն են ունեցել:

Առկա աղբյուրների պարունակած թվային և տեղաբաշխման տվյալները վերաբերում են 2004թ., սակայն հիմնվելով վերջիններիս վրա և համադրելով մեր ուսումնասիրությունները՝ փորձել ենք կազմակերպությունների գործունեության շարադրման ընթացքը հասցնել մինչև 2008թ.:

Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի կազմակերպությունների թվաքանակի, տեղաբաշխման և վերջին տարիների գործունեության մասին

ՄԱԿ Զարգացման ծրագրերի իրականացրած ուսումնասիրության համաձայն՝ 2004թ. տվյալներով Սամցխե-Ջավախքում գրանցված էին 236 ոչ կառավարական կազմակերպություններ (ՈԿԿ), որոնցից 96-ը՝ Ախալցխայի շրջանում, 34-ը՝ Ադիգենում, 21-ը՝ Ասպինձայում, 42-ը՝ Բորժոմում, 32-ը՝ Ախալքալաքում և 11-ը՝ Նինոծմինդայում [1]:

Միայն Սամցխեի տարածքում, ըստ մեր հարցազրույցների տվյալների[1], ներկայումս մոտ 200 ՀԿ-ներից չնչին տոկոսն է միայն հայկական: Ծալկայում, կարելի է ասել, նույնպես հայկական ՀԿ-ները չնչին թիվ են կազմում, որոնց գոյությունը նշմարվում է երբեմն-երբեմն այս կամ այն հարցի առթիվ արված հայտարարություններով: Ինչ-որ չափով հայանպաստ գործունեությամբ զբաղվող ՀԿ-ները հիմնականում տեղաբաշխված են Ջավախքի տարածքում:

2003թ. ստեղծվեց Սամցխե-Ջավախքի և Քվեմո-Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհուրդը, որը գործում է մինչ օրս:

[1] Հարցազրույց «Շարլ Ազնավուր» բարեգործական միության նախագահ Սերգեյ Հակոբջանյանի հետ ք.Ախալցխայում, 26.08.2008թ.:

Այս կազմակերպության մեջ, բացի Սամցխե-Ջավախքի ՀԿ-ներից, մտնում են նաև Քվեմո-Քարթլի նահանգի կազմում գտնվող Ծալկայի հայկական հասարակական կազմակերպությունները: Տվյալ խորհրդի կազմում, փաստորեն, փորձ արվեց միավորել Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանում մինչ այդ առանձնաբար գործող հայկական հասարակական կազմակերպությունները: Դրանց մի մասն, այնուամենայնիվ, շատ թույլ է գործում: Սամցխե-Ջավախքի և Քվեմո-Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհրդի նախաձեռնություններից նշանավորները «Ինտեգրում, բայց ոչ ձուլում» խորագրով երեք համաժողովներն էին[1], ինչպես նաև տարբեր խնդիրների առիթով արված հայտարարություններն ու մի շարք միջազգային կազմակերպությունների առջև Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի այս կամ այն խնդրի շուրջ բարձրացված հարցադրումները[2]:

Ստորև ներկայացնում ենք Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանում գործող հասարակական կազմակերպությունները[3].

1. «Ակունք» միություն
2. «Ա-ինֆո» լրատվական գործակալություն (միություն)
3. «Ջավախք» ժողովրդական շարժում
4. «Վիրք» կուսակցություն[4]
5. «Ջավախքի մտավորականների միություն» հասարակական կազմակերպություն
6. «Մտավոր երիտասարդական» հասարակական կազմակերպություն
7. «Լեռնաշխարհ» միություն

[1] Առաջին համաժողովը (դեկտեմբեր, 2004թ.) նվիրված էր տարածաշրջանի սոցիալ-տնտեսական խնդիրներին, երկրորդը (ապրիլի 2, 2005թ.)՝ կրթամշակութային խնդիրներին և երրորդը (սեպտեմբերի 24, 2005թ.)՝ Վրաստանի պետական կառուցվածքում Ջավախքի կարգավիճակի խնդրին:

[2] Սամցխե-Ջավախքի և Քվեմո-Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհուրդը 2004թ. հոկտեմբերի 21-ին Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների պարտավորությունների և պարտականությունների կատարման հանձնախմբին (Մոնիթորինգի հանձնախումբ) է ներկայացրել «Վրաստանում Սամցխե-Ջավախք երկրամասի կացությունը և Վրաստանի պարտավորություններն ու պարտականությունները Եվրոպայի խորհրդի առաջ» խորագրով հուշագիրը: Նույն խորհուրդը 2008թ. վրաց-օսական պատերազմից անմիջապես հետո հանդես եկավ Սամցխե-Ջավախքը իր ներկա սահմաններով և Քվեմո-Քարթլիի սահմանակից, առավելաբար հայաբնակ բնակավայրերով Վրաստանի պետական դաշնային կառույցի ինքնավար սուբյեկտներից մեկի վերածելու մասին պահանջով (տե՛ս http://www.panorama.am/am/society/2008/08/20/javaxq/?sw):

[3] Տվյալները մեզ է տրամադրել Սամցխե-Ջավախքի և Քվեմո-Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհրդի ներկայացուցիչ, Ա-ինֆո լրատվական գործակալության *(www.a-info.org)* տնօրեն Արտակ Գաբրիելյանը:

[4] «Վիրք» կուսակցությունը հիմնադրվել է 1999թ. հունվարի 31-ին Ջավախքում (տե՛ս «Հզոր Հայրենիք», թիվ 4, 4-10 փետրվար, 1999): Թեև վերջինս ծնունդ էր առել Ջավախքում, սակայն այն իր բնույթով համավրաստանյան էր, և վերջինիս անդամ կարող էր դառնալ ընտրության իրավունք ունեցող ցանկացած քաղաքացի՝ անկախ ազգային պատկանելությունից, ովքեր ընդունում էին կուսակցության կանոնադրությունը, մասնակցում նրա աշխատանքներին, վճարում անդամավճար և չէին պատկանում որևիցե այլ կուսակցության (см. Устав – всегрузинской партии «Вирк», пункт 4, 04.02.1999). «Վիրք» կուսակցությունը՝ ազգային կրոնական կամ տեղական սկզբունքներով կուսակցությունների ստեղծման անթույլատրելիության պատճառաբանությամբ, մինչ օրս գրանցված չէ Վրաստանի արդարադատության նախարարությունում (տե՛ս «Առավոտ», 30.05.2006): Իրական պատճառը, թերևս, այդ կուսակցության՝ Ջավախքի հայության շրջանում համամասնական ընտրաձևով անհամեմատ շատ ձայներ հավաքելու և Վրաստանի խորհրդարանում լրացուցիչ հայազգի պատգամավորներ ունենալու հանդեպ վրացական իշխանությունների մտավախությունն է:

8. Ջավախքի երիտասարդական մարզամշակութային միություն (ՋԵՄՄ)
9. «Շարլ Ազնավուր» բարեգործական միություն[1]
10. «Հայ ազգային հասարակական միություն» հասարակական կազմակերպություն
11. «Կարմրավանք» հասարակական կազմակերպություն
12. Ջավախքի հայ գրողների միություն
13. Ջավախքի գրողների միություն
14. Հայ օգնության միության մեկուսի վարչություն
15. Հայ մարմնակրթական ընդհանուր միություն (ՀՄԸՄ)
16. «Տաբածղուրի» միություն
17. Եկեղեցական միություն
18. Ազատամարտիկ վետերանների խորհուրդ
19. «Ջավախք» հասարակական կազմակերպություն
20. Երիտասարդական միություն
21. «Ջորի Ջորյան» երիտասարդական միություն[2]
22. «Օդա» միություն
23. «Ազավրեթ» միություն
24. «Դամալա» միություն
25. «Գանձա» միություն
26. «Հարավային դարպաս» թերթ[3] (լրատվական կազմակերպություն)
27. «Դեմոկրատ մեսխերի միություն» հասարակական կազմակերպություն
28. «Փարվանա» հեռուստատեսություն (լրատվական կազմակերպություն)
29. Վրաստանի Ներքին գործերի նախարարության Սամցխե-Ջավախքի վետերանների միություն
30. *ATV-12* հեռուստատեսություն (լրատվական կազմակերպություն)
31. «Դանտիստ» միություն
32. «Կարծախ» ֆերմերների միություն:

Վերոնշյալ ցանկում տեղ գտած ՀԿ-ների և միությունների շարքը շարունակում են նաև մի քանի միջազգային կառույցների՝ Սամցխե-Ջավախք-Ծալկայում գտնվող տարածաշրջանային ներկայացուցչություններ:

ՀՀ-ից մեծ չափով աջակցություն չունենալով և հանդիպելով վրացական կողմի խոչընդոտներին՝ հայկական հասարակական կազմակերպությունները Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանում գործում են մեծ դժվարու-

[1] Հիմնադրվել է 1990թ. Ախալցխայում, նախագահ՝ Սերգեյ Հակոբջանյան:

[2] Այս երիտասարդական միությունը, լինելով տարածաշրջանում հայապահպան գործունեություն ծավալող միակ երիտասարդական կազմակերպությունը, ցավոք, չի գործում նաև Ծալկայի տարածքում: Հիմնադրման օրվանից (2006թ.) միության ղեկավարն է Նաիրի Մնացականյանը, որը նաև 2007թ. հիմնադրված Ախալքալաքի երիտասարդական կենտրոնի տնօրենն է: Հիշեցնենք, որ այս միությունը գործում է նաև Ախալցխայի երիտասարդական կենտրոնում, որը հիմնվել է 2006թ.՝ տեղի երիտասարդության նախաձեռնությամբ և Հայ օգնության միության Ջավախքի օգնության ծրագրերի հանձնախմբի օժանդակությամբ (կենտրոնի տնօրեն՝ Գրիգոր Մինասյան): Այն Սամցխեի տարածքում գործող միակ երիտասարդական-մշակութային հայկական օջախն է, որտեղ այցելում են տեղի արվեստասեր ու շնորհալի երիտասարդները՝ փորձելով այդպիսով անսասան պահել ու համահայկական փառատոներում ներկայացնել պատմական Ախալցխայի հայկական մշակույթը:

[3] Անգլիական «Պատերազմ և խաղաղություն» ինստիտուտի *(Institute for War and Peace Reporting {IWPR})* կողմից 2004 թվականից Սամցխե-Ջավախքում հրատարակվող «Հարավային դարպաս» թերթը ֆինանսավորվում է Եվրամիության և Ֆինլանդիայի կառավարության կողմից:

թյունների պայմաններում: Չնայած առկա բազմաթիվ հիմնախնդիրներին, այնուամենայնիվ, նշված պատճառներով վերջիններից շատերն իրենց գործունեությունը սահմանափակում են հիմնականում այդ հիմնախնդիրների մասին հայտարարություններ անելով, որոնց մեծ մասը շատ դեպքերում կրում է դեկլարատիվ բնույթ: Սրան հակառակ՝ տարածաշրջանում ավելանում են վրացական կամ միջազգային (ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵԽ, ԵՄ, Ջ.Սորոսի հիմնադրամ (Բաց հասարակության ինստիտուտ *(Open Society Georgia Foundation-OSGF)* կազմակերպություններից սնվող հասարակական կազմակերպությունները, որոնց գործունեությունը հիմնականում միտված է տարածաշրջանը Վրաստանին ինտեգրելուն: Այդ կառույցները հիմնականում զբաղված են վրաց լեզուն ու մշակույթը տարածելով, վրացական օրենսդրության, ընտրական և այլ համակարգերի մասին ազգաբնակչության շրջանում սեմինարների ու տարբեր միջոցառումների անցկացմամբ և այն ամենով, ինչի կարիքը Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի հայ ազգաբնակչությունն առանձնապես չի զգում: Հետևաբար, նման կազմակերպությունների գործունեությունը շատ արագ դառնում է անարդյունավետ. դրանցից շատերն ուղղակի հեռանում են այստեղից՝ հասկանալով իրենց գործունեության անիմաստությունը[1]:

«Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքը

2005թ. հիմնադրվեց «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքը: Վերջինս Սամցխե-Ջավախք-Ծալկայի հասարակական-քաղաքական կյանքում ունեցավ բավականին մեծ դերակատարում, որի գործունեությունը միտված էր պաշտպանելու տարածաշրջանի հայության մշտապես ոտնահարվող իրավունքները: Իր կարճատև գործունեության ընթացքում «Միասնական Ջավախքի» նախաձեռնությամբ տեղի ունեցան բազմաթիվ միջոցառումներ, որոնք լայն արձագանք գտան հասարակական դաշտում[2]:

[1] Այդ մասին նշվում է նաև ՄԱԿ Զարգացման ծրագրերի կողմից իրականացված ուսումնասիրության մեջ [1]:

[2] «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքի կազմակերպած միջոցառումներից հիշատակման արժանի է 2006թ. Ախալքալաքում տեղի ունեցած բազմահազարանոց բողոքի ցույցը՝ դուրս բերվող ռուսական ռազմակայանի տեղում վրացական ռազմական ներկայության հաստատման, Ջավախքի հայ բնակչության քաղաքացիական և ազգային իրավունքների ոտնահարման և երկրամասի ծրագրված հայաթափմանը միտված վրացական իշխանությունների սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և քաղաքական գործողությունների դեմ: Նույն պահանջներով, գումարած Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, 2006թ. մարտի 31-ին Ախալքալաքում կրկին տեղի ունեցավ բազմահազարանոց ցույց: Ցուցարարների պահանջների հիման վրա վրացական իշխանությունները Ախալքալաքում բացեցին մինչ այդ Ախալցխայում գտնվող անձնագրային վարչությունը: Բնակչության աջակցությամբ կանխվեց Ախալքալաքի Սամսար գյուղի ժայռափոր վանական համալիրի յուրացումը Վրաստանից ժամանած հոգևորականների և ուսանողության կողմից (2005թ. հուլիս): Վրաստանի և ՀՀ վարչապետեր Զ.Նողայիդելու և Ա.Մարգարյանի՝ Ջավախք ժամանելու կապակցությամբ բողոքի ակցիա կազմակերպվեց՝ հյուրերի ուշադրությունը հրավիրելով Կարս-Ախալքալաք երկաթգծի կառուցման ռազմաքաղաքական անթույլատրելիության և երկրամասում առկա քաղաքական և սոցիալ-տնտեսական խնդիրների հաղթահարման վրա: Այս ժամանակ բարձրացվել է Ջավախքում հայկական համալսարան բացելու հարցը (2005թ. հուլիս): Ի պատասխան մաքսային ծառայությունից հայազգի բոլոր աշխատակիցներին վտարելու Թբիլիսիի կարգադրության, Վրաստանի սահմանային «Նինոծմինդա» մաքսակետի մոտ ջավախահայության բողոքի ցույց կազմակերպվեց (2005թ. դեկտեմբեր 12), Ծալկայում ազգային հողի վրա տեղի ունեցած Գևորգ Գևորգյանի սպանության և տեղի հայության նկատմամբ բռնությունների սաստկացման կապակցությամբ Ախալքալաքում բողոքի բազմահազարանոց ցույց կազմակերպվեց: Ցույցի ավարտին քաղաքացիների հոսքն ուղղվել է շրջանային դատարանի ուղղությամբ՝ բողոքարկելու մի քանի օր առաջ հայազգի դատավորներին վրացերենի չիմացության պատճառով աշխատանքից ազատելու պաշտոնական Թբիլիսիի որոշումը (2006թ.) և այլն (տե՛ս Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում Վ.Չախալյանի պաշտպանական ճառը (09.11.2007թ.), http://www.javakhk.net/forum/index.php?showtopic=446&st=70):

2006թ. հոկտեմբերին դաշինքը մասնակցեց Վրաստանում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և հնարավորություն ստացավ տեղական սակրեբուլոյում ծանրակշիռ ներկայություն ունենալու: Սակայն վերջիններիս ներկայացուցիչների թիվն այնքան էլ մեծ չեղավ (մոտ 30%), որի պատճառը դաշինքի անդամները համարում էին ընտրակեղծիքները: Հետևեց զանգվածային բողոքի ալիքի բարձրացումը, որի նախաձեռնողն ու իրականացնողը «Միասնական Ջավախքն» էր:

«Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքի անդամների դեմ զանգվածային հալածանքներ են սկսվում. Վրաստանից ՀՀ ապօրինի մուտք գործելու մեղադրանքով 2006թ. հոկտեմբերի 10-ին ձերբակալվում, հետագայում դատապարտվում և ՀՀ-ից արտաքսվում է կազմակերպության նախագահության անդամ Վահագն Չախալյանը[1]: 2007թ. մարտին ՌԴ Եկատերինբուրգ քաղաքում պայթեցվեց հայտնի գործարար, «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքի նախագահության անդամ Խաչիկ Սահարյանի ավտոմեքենան, որի հետևանքով Սահարյանը հաշմանդամ դարձավ:

2006թ. դեկտեմբերի 5-ին Ախալքալաքի շրջանային դատարանը էլեկտրաէներգիայի դիմաց ավելի գումար գանձելու համար բողոքի ցույց կազմակերպելու մեջ մեղավոր ճանաչեց «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքի ակտիվիստ Արթուր Պողոսյանին՝ վերջինիս դատապարտելով երկու տարի պայմանական ազատազրկման և 2000 լարի տուգանքի:

2007թ. ապրիլի 24-ին Ախալքալաքում կրկին ձերբակալում են Արթուր Պողոսյանին և այն ժամանակ Ախալքալաքի շրջանային սակրեբուլոյի պատգամավոր, այժմ՝ Ախալքալաքի մունիցիպալիտետի կառավարիչ Նաիրի Իրիցյանին: Այս անգամ ձերբակալության պատճառ էր դարձել վերոնշյալ անձանց և Ախալքալաքի շրջանային դատախազ Հովհաննես Մխիթարյանի վարորդի ընդհարումը, երբ վերջինս վրաերթի էր ենթարկել Գումբուրդո և Զրեսկ (Կիրովական) գյուղերի՝ Ախալքալաքի շրջանի սակրեբուլոյի պատգամավոր, «Միասնական Ջավախք»-ի անդամ Անդրանիկ Աբելյանին: Նաիրի Իրիցյանը հետագայում համաներման էր արժանացել: «Միասնական Ջավախքի» մյուս ակտիվիստ Արթուր Պողոսյանը 2008թ. հոկտեմբերին դատապարտվեց 2,5 տարվա ազատազրկման[2]: Այս իրադարձությունները պատճառ դարձան, որ-

[1] http://www.armtown.com/news/am/lra/20080806/13745: Վերոնշյալ որոշումը Չախալյանի կողմից բողոքարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում: 09.11.2007թ. դատարանը, նախագահությամբ դատավոր Գ.Կարախանյանի, ոստիկանության պետի որոշումը թողել է անփոփոխ:

[2] Թբիլիսիի Վերաքննիչ դատարանի 2008թ. դեկտեմբերի 30-ի որոշմամբ Արթուր Պողոսյանը ազատվեց կալանքից՝ չբացակայելու վերաբերյալ ստորագրությամբ, 100 հազար լարիի ($ 62.000) չափով տուգանքի և 3 տարի պայմանական ազատազրկման պայմանով՝ պարտավորվելով վաճառել տունը, բնակարանը, ունեցվածքը և վճարել տուգանքը: Չունենալով նման գումար վճարելու հնարավորություն՝ Ա.Պողոսյանը հեռացավ Վրաստանից:
http://www.bagin.info/default.asp?Lang=_Am&NewsID=2340&SectionID=0&Date=02/01/2009&PagePosition=1:

պեսզի «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքն այլևս դադարեցներ փաստացի գոյատևումը:

«Միասնական Ջավախքի» վերջին «վերակենդանացումը» տեղի ունեցավ 2008թ. հուլիսյան հայտնի իրադարձությունների ժամանակ, երբ Սամցխե-Ջավախքի ոստիկանության տարածաշրջանային վարչության Ախալքալաքի շրջանային վարչության պետ Ս.Պետրոսյանի տան մոտ տեղի ունեցած պայթյունից հետո տարածաշրջանում կրկին լարվածություն ստեղծվեց: Այս դեպքերի արդյունքում կրկին ուժեղացան բռնաճնշումները «Միասնական Ջավախքի»՝ ազատության մեջ գտնվող անդամների նկատմամբ: Ձերբակալվեցին «Միասնական Ջավախքի» նախագահության անդամ Վահագն Չախալյանն ու վերջինիս հարազատները, հետախուզում հայտարարվեց «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքի ներկայացուցիչ, 2001թ. հիմնադրված «Ջավախքի սկաուտական շարժման» պատասխանատու Գուրգեն Շիրինյանցի նկատմամբ, ձերբակալվեցին վերջինիս հարազատները[1]:

Նշենք, որ կազմակերպության մի քանի անդամներ, որոնք նախկինում բավական ակտիվ էին, ներկայումս զգալի պասիվություն են ցուցաբերում, ինչը տարակուսանք է առաջացնում հասարակական լայն շրջանակներում և մտորումների առիթ տալիս, այդ թվում և այն, որ չեն բացառում վերջիններիս համագործակցության հնարավորությունը որոշակի ուժերի հետ:

«Ջավախք» ժողովրդական շարժման և այլ կազմակերպությունների ծնունդը 1980-ական թթ. վերջին և 1990-ական թթ. սկզբներին

Հակիրճ անդրադառնալով տարածաշրջանի հասարակական կազմակերպությունների ներկա վիճակին՝ փորձենք լուսաբանել ԽՍՀՄ փլուզման նախօրյակին՝ 1988-89թթ. ստեղծված մի կազմակերպության գործունեությունը, որն ամենամեծ դերակատարումն է ունեցել տարածաշրջանի քաղաքական կյանքում: Կանդրադառնանք նաև մի շարք ՀԿ-ների ու միությունների պատմությանն ու գործունեությանը, որոնք 1990-ական թթ. ստեղծվել են տարածաշրջանում, գործունեություն ծավալել և այնուհետև հեռացել քաղաքական թատերաբեմից:

1988թ. փետրվարի վերջին, Ղարաբաղյան շարժման սկսվելուց մեկ շաբաթ անց[2], Ախալքալաքում, Հ.Մանուկյանի տանը հինգ անձանց կողմից (Ս.Պետրոսյան, Հ.Մանուկյան, Գ.Ափոյան, Մ.Թադևոսյան և Վ.Մահտեսյան) հիմնադրվեց «Ջավախք» կոմիտեն: Այն հետագայում վերածվելու էր «Ջավախք» ժողովրդական շարժման[3]: Ըստ մեկ այլ աղբյուրի՝ «Մարտիկ» թերթի

[1] Տե՛ս «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքի հայտարարությունը (ք.Ախալքալաք, 23.07.2008 թ., http://ararat-center.org/upload/files/I_pashtpanutyun_Vahagn_Chakhalyani.doc):
[2] http://www.abkhaziainfo.f2o.org/analytics/EpZFApylEFDFHxsDHo.shtml
[3] Նույն տեղում:

37-րդ համարում (2001թ. սեպտեմբեր) տեղ գտած հրապարակման համաձայն, արցախյան պայքարին օժանդակելուն ուղղված աշխատանքների համատեքստում, Ջավախքում որպես վերոնշյալ շարժումների հիմնադիրներ նշված են Սամվել Պետրոսյանի, Հակոբ Ավետիսյանի, Վարոս Մահտեսյանի և Հակոբ Մանուկյանի անունները:

Հարկ է նշել, որ ԽՍՀՄ ողջ տարածքում իրականացվող «վերակառուցման» քաղաքականության հետ կապված՝ շարժման սկզբնական փուլում (մինչև 1990թ. հունվարի 27-ի առաջին կոնֆերանսը) այն կոչվել է «Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական շարժում» ընկերություն» անունով և գործել որպես կամավոր ՀԿ [2]: Կազմակերպության կանոնադրությունից ելնելով՝ կարելի է նշել, որ այն թեև նպատակ ուներ օգնելու Ջավախքում իրականացվող «վերակառուցմանը», սակայն մեծ տեղ էր հատկացվում նաև ազգային ինքնագիտակցության բարձրացմանն ուղղված միջոցառումների ծրագրերին: Կանոնադրության՝ «Ընկերության նպատակներն ու խնդիրները» գլխի Ա կետում նշվում է. «Բարձրացնել շրջանի բնակչության կուլտուրական մակարդակը, մասսայականացնել մեր երկրի ժողովուրդների և համաշխարհային մշակույթների նվաճումները, առանձնապես ուշադրություն դարձնելով հայոց լեզվի և հայ մշակույթի պրոպագանդմանը՝ որպես մեծամասնություն կազմող ժողովրդի լեզվի և մշակույթի, միևնույն ժամանակ պրոպագանդել վրաց և ռուսաց լեզուները և մշակույթները» [2, էջ 4]: Իսկ Բ կետով նախատեսվում էր «…նպաստել հայ, վրաց, ռուս և մյուս ժողովուրդների բարեկամության զարգացմանն ու ամրապնդմանը՝ աջակցելով հայ, վրաց և մյուս ժողովուրդների պատմությունների ուսումնասիրմանը» [2]:

Կազմակերպությունը 1990թ. արդեն համընդհանուր բնույթ ստանալու միտում ուներ: 1990թ. հունվարի 27-ին տեղի ունեցավ շարժման առաջին կոնֆերանսը[1]: Կոնֆերանսին մասնակցելու համար ամբողջ շրջանից ընտրվել էին 532 պատգամավորներ, որոնք ընտրվեցին «Ջավախք» ժողովրդական շարժման 55 ակտիվիստներից բաղկացած խորհրդում[2]:

Կոնֆերանսում, մասնակիցների առաջարկների հիման վրա, փոխվում է նաև կազմակերպության անվանումը: Այսուհետև կազմակերպությունը «Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական շարժում» ընկերություն» անվան փոխարեն կոչվում էր «Ջավախք» ժողովրդական շարժում[3]:

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում: Հմմտ.՝ *Գ.Ստոյան,* Ջավախք: Ովքեր ենք մենք, Երևան, 2000, էջ 42: Կոնֆերանսին մասնակցել են նաև Հայաստանի ԼԿԵՄ Կենտկոմի օրգան «Գարուն» ամսագրի խմբագիր Մերուժան Տեր-Գուլանյանը, Հայոց համազգային շարժման պատվիրակներ Ս.Ավագյանը, Ս.Ղարագեբակյանը, Լ.Անանիկյանը, Ախալցխայի «Շարլ Ազնավուր» մշակութային ընկերության պատվիրակներ Ռ.Մուրադյանը և Լ.Մաթևոսյանը, Մառնեուլի շրջանի պատվիրակ Գ.Մուրադյանը, Ասպինձայի շրջանի Դամալա գյուղից Կ.Հովհաննիսյանը և Մ.Տոնայանյանը: Կոնֆերանսը նախագահում էր Ջավախքի ճանաչված պետական-հասարակական գործիչ, մտավորական Ի.Աբրահամյանը: Տե՛ս Արձանագրություն Ախալքալաքի շրջանի «Վերակառուցման Ջավախք ժողովրդական շարժում» կազմակերպության I կոնֆերանսի, էջ 1, 27 հունվարի, 1990թ.: Ի.Աբրահամյանը կոնֆերանսում ընտրվեց կազմակերպության նախագահ և մեծ դերակատարում ունեցավ կազմակերպության ինչպես ստեղծման, այնպես էլ հետագա ընթացքի մեջ:

[3] Նույն տեղում, էջ 5:

«Ջավախք» ժողովրդական շարժման ստեղծումից և առաջին կոնֆերանսից (1990թ. հունվարի 27) շուրջ կես տարի անց՝ 1990թ. հուլիսին, Ջավախքում (Ախալքալաքում) ստեղծվեց Վրաստանում գործող հայկական հասարակական ու բարեգործական միությունների ու կազմակերպությունների կոորդինացիոն խորհուրդ, որի մեջ մտան Ախալքալաքի «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպությունը, Թբիլիսիի հայկական մշակութային, բարեգործական ընկերությունը, Ախալցխայի «Շարլ Ազնավուր» բարեգործական ընկերությունը, Բոգդանովկայի «Փարվանա» կազմակերպությունը, Աբխազիայի «Համշեն» մշակութային միավորումը, Մառնեուլի շրջանի հայկական բարեգործական միությունը, Ասպինձայի շրջանի Դամալա գյուղի «Շարլ Ազնավուր» ընկերության մասնաճյուղը, Բաթումի, Ծալկայի և Բոլնիսի շրջանների հայկական կազմակերպությունները [3]: Նոր ստեղծված կառույցը որոշում ընդունեց ակտիվորեն համագործակցել Հայաստանի՝ վիրահայ հայրենակցական բարեգործական միությունների (ՀՎՀԲՄ) հետ (վերջիններիս ներկայացուցիչները նույնպես մասնակցում էին նորաստեղծ կազմակերպության հիմնադիր ժողովին) [4]:

«Ջավախք» ժողովրդական շարժումը 1990-ական թթ. մինչև նոր դարասկիզբ

«Ջավախք» ժողովրդական շարժման սկզբնավորման պատմության ու ծրագրային դրույթների հետ մեկտեղ՝ ներկայացնենք նաև որոշ այլ կազմակերպությունների ծավալած գործունեությունը.

Պայքար Ջավախքում հայ կառավարիչ ունենալու համար.- Ինչպես Վրաստանն ու Հայաստանի Հանրապետությունը բոյկոտեցին, նույնպես և «Ջավախք» և «Փարվանա»[1] ժողովրդական շարժումները Ջավախքի ազգաբնակչությանը կոչ արեցին չմասնակցել 1991թ. մարտի 17-ի ԽՍՀՄ պահպանման համաժողովրդական հանրաքվեին. «...քանզի ԽՍՀՄ-ը այն կայսրությունն է, որի գոյությունն ինքնըստինքյան հակադեմոկրատական է, վարում է ամ-

[1] «Փարվանա» ՀԿ-ն ծնունդ է առել Բոգդանովկայում՝ 1989թ., ազգային ինքնագիտակցության վերածննդի շրջանում, միտինգային թռիուբռիի մեջ: Կազմակերպությունն ակտիվորեն հակադրվեց նախ՝ կոմունիստական, ապա՝ զվիադական իշխանությունների նկրտումներին: Համագործակցելով «Ջավախք» ժողովրդական շարժման հետ և ստանալով վերջինիս օժանդակությունը՝ «Փարվանա»-ն Բոգդանովկայի շրջանում (Գորելովկայում շուրջ 7 տասնյակ, Եֆրեմովկայում՝ 3 տասնյակ, Օռլովկա, Սպասովկա, Կալինինո գյուղերում՝ մեկական տասնյակ) տներ գնեց կարիքավոր հայ ընտանիքների, Գյումրիի երկրաշարժից տուժածների և այլոց համար: Դա այն ժամանակ էր, երբ «Մ.Կոստավա» հիմնադրամը նույնպես սկսել էր վերոնշյալ գործընթացը (տներն ազատվում էին ռուս դուխոբորների՝ այս շրջանից արտագաղթելու պատճառով): Ինչպես արտաքին (իշխանական) ճնշումների, այնպես էլ ավելի շատ իր անդամների միջև առաջացած հակասությունների պատճառով կազմակերպությունը 1990-ական թթ. կեսերից փաստացի դադարեց գոյություն ունենալուց: Վերջինիս անդամներից մեկն այդ ընթացքում հիմնեց Ջավախքի քաղաքական կյանքում քիչ թե շատ դերակատարություն ունեցող մեկ այլ կազմակերպություն՝ «Օդան»: «Փարվանա» կազմակերպության կողմից 1991թ. հիմնադրվեց և հրատարակվեց համանուն թերթ՝ 4 համար: Տե՛ս «Ջավախք», ապրիլ, 1995, N 3 (9), հմմտ.՝ Բոգդանովկայի շրջան, Տեղեկագիրք, էջ 99:

բողջատիրական քաղաքականություն, խեղդում ամեն մի ազգային-դեմոկրատական շարժում»: Պրեֆեկտուրայի ինստիտուտի ձևավորումից հետո Ջավախքում ազգությամբ հույն Մացուկատովին պրեֆեկտ նշանակելը հայության շրջանում մեծ հուզումներ առաջ բերեց, որն, ի վերջո, կարող էր ունենալ անկանխատեսելի հետևանքներ: Չնայած այն հանգամանքին, որ պրեֆեկտների նշանակումը Գերագույն խորհրդի կողմից հակասում էր ընտրության սկզբունքին, Ջավախքի բնակչությունը սկզբից ևեթ հույս ուներ, որ շրջանների պրեֆեկտները կլինեն գոնե հայության շրջանում քիչ թե շատ հեղինակություն վայելող մարդիկ: Սակայն այս նշանակումներն արդեն այլ բան էին նշանակում: Մինչև մարտի 31-ի հանրաքվեն, չընդունելով պրեֆեկտուրայի իշխանությունը, մարտի 17-ին Ախալքալաքում շրջանի տնտեսության ղեկավարների և ՀԿ ներկայացուցիչների համատեղ նիստում (որտեղ որոշվել էր նաև չմասնակցել մարտի 17-ի ԽՍՀՄ պահպանման հանրաքվեին) որոշվեց հրավիրել լիազոր ներկայացուցիչների ժողով, որը շրջանը կղեկավարեր մինչև նոր ժողովրդավարական իշխանության ստեղծումը: Որոշվեց նաև ստեղծել կազմկոմիտե, որը տեղերում պետք է անցկացներ ժողովներ՝ լիազորներ ընտրելու համար: Այս նիստում կոչ արվեց ժողովրդին՝ բոյկոտել մարտի 31-ին կայանալիք տեղական մարմինների ընտրությունները, որովհետև մանդատները բաշխվել են ոչ ժողովրդավարական սկզբունքով [5]: Նաև կոչ էր արվում շրջանի քաղաքական, հասարակական, տնտեսական կազմակերպություններին և ազգաբնակչությանը ենթարկվել նոր ստեղծված լիազորների ժողովների որոշումներին: Փաստորեն, սա յուրատեսակ «ժամանակավոր կառավարություն» էր՝ Ժողովրդական լիազորների խորհուրդ անունով, որը փաստացի դարձել էր ժողովրդի կամքն արտահայտող շրջանային իշխանություն: Խորհրդի մեջ մտնում էին 26 անձ, նախագահն էր Սամվել Պետրոսյանը [6]: Ջավախքում 1991թ. փետրվարից ծայր առան հուզումները, բողոքի ցույցերը: Մեծ ցույց տեղի ունեցավ փետրվարի 12-ին՝ «Ջավախք» ժողովրդական շարժման նախաձեռնությամբ, որին միացել էին նաև «Զարթոնք», «Դեմոկրատների միություն» և այլ կազմակերպություններ: Հանրահավաքին մասնակցում էր շուրջ 5.000 մարդ: Իսկ փետրվարի 20-ին տեղի ունեցած ցույցի՝ Վրաստանի Գերագույն խորհրդին ուղղված բանաձևում նշվում էր Վրաստանի կառավարության կողմից նշանակված պրեֆեկտի անօրինական լինելու մասին և խնդրվում Ախալքալաքի շրջանի պրեֆեկտ նշանակել Սամվել Գեորգիի Պետրոսյանին:

«Ջավախք» ժողովրդական շարժման երկրորդ կոնֆերանսը. - 1991թ. վերջին նախապատրաստական աշխատանքներից հետո «Ջավախք» ժողովրդական շարժումը գումարեց երկրորդ կոնֆերանսը, ընտրվեց նոր խորհրդի

կազմ՝ նոր նախագահությունով: Այդուհանդերձ, մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, շարժումը դեռևս հեռու էր համաժողովրդական լինելուց, այն ակտիվանում էր մերթ ընդ մերթ՝ կախված տիրող իրավիճակի սրությունից:

Աջակցություն Արցախյան գոյապայքարին.- «Ջավախք» ժողովրդական շարժման խորհրդի նիստում 1990թ. հունիսի 10-ին որոշվեց դրամական օգնություն ցույց տալ Արցախին, որի համար Մ.Թադևոսյանին հանձնարարվեց Ախալքալաքի պետբանկից 55 հազար և կազմակերպության դրամական միջոցներից 5 հազար ռուբլի առձեռն փոխանցել Արցախի «Ամարաս» բարեգործական միությանը և ներկայացնել համապատասխան փաստաթղթեր [7]: «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության նախագահի տեղակալ Մ.Թադևոսյանը հավաստում է. «Անցած երկու տարվա ընթացքում (1988-1990թթ.- Վ.Ս.) մենք հազարավոր ջավախքեցի հայրենասերների բարեգործական օգնությամբ Հայաստանի տարբեր անկյուններ ենք տեղափոխել 138 ավտոմեքենա (13 մեծ ու փոքր շարասյուն), ավելի քան 1200 տոննա սննդամթերք և մեկուկես միլիոն ռուբլի Արցախի և հարևան «ամենաինտերնացիոնալ» հանրապետությունից մազապուրծ մեր հայրենակիցների համար» [7]: Սկիզբ առած Արցախյան համընդհանուր պատերազմը նոր թափ հաղորդեց Ջավախքում տեղի ունեցող այս գործընթացին: Սամցխե-Ջավախքի շրջաններում, նաև հարևան հայաբնակ Ծալկայի (Թռեղք) շրջանում այս նպատակով կազմակերպվեցին հանգանակության մարաթոններ:

Շարժման թուլացումը 1990-ական թթ. կեսերին.- 1990-ական թթ. կեսերին արդեն ՋԺՇ-ը ոչ թե գաղափարական համախմբվածությամբ, այլ այդ ընթացքում փոխադարձ անձնական շահերով պայմանավորված կառույց էր, որի երրորդ (1993թ. ապրիլի 10) և չորրորդ (1995թ.) [8] կոնֆերանսներում խիստ զգացվեց նրա թուլությունը և նրա առաջնորդների պառակտվածությունը: Շատ գործիչներ թողեցին ՋԺՇ-ը՝ հեռանկար չտեսնելով իրենց հետագա քաղաքական կարիերայի համար, և ընտրեցին այլ ճանապարհներ՝ մեկնելով Ռուսաստան և այլ վայրեր, զբաղվելով մասնավոր բիզնեսով, այլ պաշտոններ զբաղեցնելով և այլն: Նրանց մեջ քիչ չէին մտավոր բարձր կարողություններ ունեցող գործիչները, որոնք այնքան անհրաժեշտ էին Ջավախքի հետագա ճակատագրի որոշման գործում: ՋԺՇ մյուս առաջնորդներն իրենց ծրագրերում և ինքնավարության պահանջներում [9] կոնկրետ պատկերացում անգամ չունեին Ջավախքի տարածքային ընդգրկվածության մասին: Դա պարզ երևում է նրանց ծրագրերից, որոնցում Ջավախքը նույնացվում է Ախալքալաքի, Բոգդանովկայի, որոշ դեպքերում՝ նաև Ասպինձայի շրջանների հետ, հաճախ

էլ ներկայացվող պահանջներում «Ջավախք»-ին «ավելանում» են նաև Ախալցխան, Ադիգենը, նաև Ծալկան [10]: Նման պայմաններում ջավախքեցիների ցանկացած նախաձեռնություն խիստ մշուշոտ ապագա էր ունենում: Դա դրսևորվեց նաև Ջավախքում 1995թ. հուլիսին կազմակերպված ստորագրահավաքի ժամանակ, երբ դեռ չէր ընդունվել երկրի հիմնական օրենքը՝ սահմանադրությունը: Ստորագրահավաքն իրականում Ջավախքին ինքնավարություն տալու Վրաստանին ներկայացվող պահանջի հիմնավորում չէր: Այն կրում էր ավելի շուտ սոցհարցման բնույթ, որով փորձ էր արվում իմանալ ժողովրդի կարծիքը՝ ապագա դաշնային Վրաստանի կազմում Ջավախքի՝ որպես քաղաքականապես ինքնակառավարվող վարչական միավորի, վերաբերյալ (սահմանադրական իրավունքով) [11]: Սակայն, հավաքված շուրջ 13.000 ստորագրությունները Ջավախքի կարգավիճակի հարցում ոչինչ չպիտի փոխեին Վրաստանի սահմանադրության մեջ [12]: Բարձրացնելով կենսական հարցեր (արհեստականորեն տարածաշրջանի ժողովրդագրական կազմի փոփոխություն, տնտեսական զարգացման խոչընդոտներ, Ջավախքի վարչական ողջ կառույցի տեղափոխում Ախալցխա, վարչական շատ հիմնարկների լուծարում կամ դարձյալ տեղափոխում Ախալցխա, բնակչության և վարչական կառավարող օղակների կապի թուլացում)[1], որոնք առաջ էին եկել Է.Շևարդնաձեի կողմից թիվ 237 հրամանագիրը ստորագրելուց հետո, և կոպտորեն փնովելով այն ու կոչ անելով չենթարկվել նահանգապետին[2]՝ ՋԺՇ ներկայացուցիչները և Ախալքալաքի ու Բոգդանովկայի շրջանների ակտիվի հավաքի մասնակիցները ինքնավարության կամ Է.Շևարդնաձեի կազմավորած նահանգին հակադրվող այլ մոդել չունեին:

Աջարիա-Ջավախք հարաբերությունները 1990-ական թթ. վերջին.- 1990-ական թթ. վերջերին Ջավախքի, ինչպես նաև «Ջավախք» ժողովրդական շարժման առաջնորդներն ակտիվ կապերի մեջ են գտնվել Աջարիայի ղեկավարության հետ: Նախ՝ ձգտելով ուժեղացնել ազդեցությունն այս տարածաշրջանում՝ Ա.Աբաշիձեն Ջավախքում բացեց իր կուսակցության («Աղորձինեբա» - Վերածննդի միություն) տարածքային գրասենյակը[3]: Ա.Աբաշիձեն իրեն իրավունք էր վերապահում «իր հայրենակիցներին օգնելու» քողի տակ ներգրավվել Ջավախքի խնդիրների մեջ: Եթե անգամ սկսվեր Սամցխե-Ջավախքի միացումը Աջարիային, գործնականում հնարավոր չէր այն հասցնել ավարտին, քանի որ, ի վերջո, բերելու էր Ռուսաստան-ԱՄՆ հարաբերությունների սրմանը՝ ելնելով

[1] Ախալցխան Ախալքալաքից հեռու է մոտ 70 կմ խիստ դժվարանցանելի, քայքայված ճանապարհով, չհաշված Ախալքալաքի հեռավոր գյուղերը և այլն (տե՛ս «Ջավախք», պաշտոնաթերթ «Ջավախք» ժողովրդական շարժման, N1(7), փետրվար, 1995):

[2] Նույն տեղում:

[3] Ըստ որոշ տեղեկությունների՝ Աբաշիձեն այդ գրասենյակին էր հատկացրել մոտ $100 հազար:

այն հանգամանքից, որ 1997թ. նոյեմբերին ԱՄՆ ակտիվ նախաձեռնությամբ կյանքի էր կոչվել ՎՈՒԱՄ կազմակերպությունը (Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա, որին հետագայում միացավ նաև Ուզբեկստանը) [13], որն ամեն կերպ ձգտում էր հակադրվել ԱՊՀ տարածքում գործող մեկ այլ խոշոր կազմակերպության՝ Հավաքական անվտանգության պայմանագրին, ինչպես նաև թուլացնել Ռուսաստանի ազդեցությունն Անդրկովկասում:

1998թ. օգոստոսի 12-ի հայ-վրացական առճակատումը Ջավախքում.- Վրացական մամուլում հակահայ հիստերիայի հերթական հուժկու ալիքը բարձրացավ 1998թ. օգոստոսի 12-ի հայտնի դեպքերից հետո, երբ «Ջավախք» ժողովրդական շարժման շուրջ 20 անդամներ Ախալքալաքից 1կմ հեռավորության վրա կանգնեցրին վրացական մի մեծ զորամիավորման շարժակազմի երթը, որը պատրաստվում էր, իբր թե, ռուսական զորքի հետ Աբուլ լեռան ստորոտում զորավարժություններ անցկացնել [14]: ՋԺՇ պատվիրակությունն ուներ գրավոր փաստաթուղթ, ըստ որի՝ Վրաստանի, Ռուսաստանի պաշտպանության նախարարությունների և Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների համադրող խորհրդի միջև ստորագրվել է եռակողմ համաձայնագիր, որը բացառում էր որևէ զորատեսակի մուտքը, տեղաշարժը կամ կայացումը տարածաշրջանում [15]:

Կազմակերպությունների ակտիվացումը 1990-ական թթ. երկրորդ կեսին: Պայքար ինքնավարության համար.- 1990-ական թթ. վերջերին Ջավախքի քաղաքական կյանքում աննախադեպ ձևով (թերևս, վերջին անգամ) ակտիվացել էր «Ջավախք» ժողովրդական շարժումը: Նրա ներկայացրած պահանջները գրեթե նույնն էին. Ջավախքը դուրս բերել Ախալցխայի «լծի» տակից, Վրաստանի սահմանադրության՝ Վրաստանի վարչատարածքային կառուցվածքի մասին գլխի քննարկման և որոշման շրջանակներում Ջավախքին տալ քաղաքական ինքնավարություն, Ջավախքի սոցիալ-տնտեսական, էներգետիկ, կրթական և այլ ոլորտների բարելավում և այլն: Նշենք, որ այս շրջանում ՋԺՇ-ը լրջորեն հակադրվում էր նաև Ջավախքի կառավարող ուժերին՝ խիստ քննադատության արժանացնելով նրանց, որոնք կոպտորեն անտեսում էին հասարակական զանգվածների շահերը: Ջավախքի հարցի հետագա արդարացի լուծումը պահանջում էր միասնաբար, առկա բոլոր ուժերի մասնակցությամբ մշակված հայեցակարգ, որի նկատմամբ կցուցաբերվեր լուրջ հետևողականություն, ինչը, ցավոք, բացակայում էր: 1996թ. մարտի 9-ին տեղի ունեցավ ՋԺՇ հերթական՝ 5-րդ կոնֆերանսը, որտեղ որոշվեց շարժման հետագա մարտավարությունը: Շարժման նախագահ ընտրվեց Ջավախքի Խանդո գյուղի բնակիչ Ս.Հակոբյանը[1]:

[1] Վերջինս նախագահ էր ընտրվել նաև ՋԺՇ երկրորդ կոնֆերանսում, իսկ երրորդ և չորրորդ կոնֆերանսներում ընտրված շարժման նախագահներն էին համապատասխանաբար՝ Խ.Մամիկոնյանը և Ն.Տեփոյանը:

«Անձև քառսի» մեջ կամ 1997թ. ինքնավարության հանրաքվեն Ջավախքում.- 1997թ. Ջավախքում սկիզբ առավ «հանրաքվե» կոչվող գործընթացը, որը ճակատագրական նշանակություն էր ունենալու երկրամասի հետագա զարգացման համար: ՋԺՇ-ն սկսեց ստորագրահավաքի գործընթացը: Այդ առթիվ նաև նամակ ուղարկվեց Է.Շևարդնաձեին և Զ.Ժվանիային [16], որտեղ մանրամասն հիմնավորվում էր Ջավախքը Ախալցխայի վարչական տնօրինության տակ դնելու բացասական հետևանքները, նշվում էր նաև Ախալքալաքը, Նինոծմինդան և Ասպինձան Ախալցխայի ենթակայությունից դուրս բերելու և մեկ տնտեսական գոտու մեջ ներառելու նպատակահարմարությունը: Պահանջվում էր այդ երեք շրջաններում մտցնել վարչական կառավարման հատուկ ձև: «Այդ նպատակով, վերոնշյալի հաստատման համար, համաձայն Վրաստանի սահմանադրության 67-րդ հոդվածի 1-ին կետի (...ոչ քիչ, քան 30 հազար ընտրողներն իրավունք ունեն օրենսդրական նախաձեռնության)՝ Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների կոորդինացիոն խորհրդի անդամները, այդ շրջանների բնակչության նախաձեռնությամբ հավաքում են ստորագրություններ» [16]. (նշենք, որ Ախալցխայի վարչական ենթակայությունից Ջավախքը դուրս բերելու վերաբերյալ շուրջ 15.000 ստորագրություն էր հավաքվել դեռ 1995թ. հունիսին, որոնք ներկայացվել էին Է.Շևարդնաձեին՝ նրա և Լ.Տեր-Պետրոսյանի 1996թ. ջավախքյան հանդիպման ժամանակ, սակայն նա «այդ ստորագրությունների վրա անգամ չնայեց»)»[1]: Իսկ 1997թ. հուլիս-օգոստոսին հավաքվող ստորագրությունների թերթիկն ուներ հետևյալ բովանդակությունը. «Հարգելի ջավախքեցիներ: Ձեր նախաձեռնությամբ Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների կոորդինացիոն խորհուրդը, համաձայն Վրաստանի սահմանադրության 67-րդ հոդվածի առաջին կետի (...30.000 ոչ քիչ ընտրողներն իրավունք ունեն հանդես գալու օրենսդրական նախաձեռնությամբ), նախաձեռնում է ստորագրահավաք՝ երկրի պառլամենտում հետևյալ հարցերը քննարկելու համար. 1. Ոչ սահմանադրական Սամցխե-Ջավախք երկրամասի կազմավորման գործընթացի դադարեցում. 2. Երկրի պետական-տարածքային կառուցվածքի մասին սահմանադրության գլխի ընդունման ժամանակ Ջավախքին տալ համապատասխան վարչատարածքային միավորի կարգավիճակ՝ Վրաստանի սահմանադրության շրջանակներում»: Հետաքրքիր է, եթե Ջավախքի բնակչությունը մինչ այդ, ինչպես տեսանք, ստորագրություններով կողմ էր արտահայտվել հանրաքվեին, իսկ Վրաստանի սահմանադրության 67-րդ հոդվածի առաջին կետով նրան իրավունք էր վերապահվում օրենսդրական նախաձեռնություններ կայացնել՝ 30.000-ից ոչ քիչ բնակչություն ունենալու դեպքում, իսկ Ջավախքի (Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանների) բնակչությունն այդ թվականին, ըստ պաշտոնական տվյալների, շուրջ 97.511 էր[2], ապա ո՞րն էր

[1] «Ջավախք», թիվ 1 (18), փետրվար, 1997, հմմտ.՝ նույն տեղում, թիվ 1, օգոստոս, 1998:
[2] http://www.abkhaziainfo.f2o.org/analytics/EpZFApylEFDFHxsDHo.shtml, հմմտ.՝ «Конфликты и переговоры», N 3-4, Тбилиси, 1997.

Թբիլիսիին դիմելու պատճառը: Կամ մի՞թե պարզ չէր, որ Թբիլիսին թույլ չի տալու այդ հանրաքվեն. դա առնվազն պարզ պետք է լիներ Թբիլիսիի նշանակած շրջանային վարչության նախագահների՝ այս խնդրին ցուցաբերվող կարծր, անզիջում վերաբերմունքից: Եթե Կոորդինացիոն խորհուրդը պետք է հանրաքվեն անցկացներ Թբիլիսիի թույլտվությամբ և չունենալով այն, ինչո՞ւ էր այդքան աղմուկ բարձրացրել, գրգռել իր դեմ վրացական մամուլին: Սրանք գործընթացի կասեցման պատճառների մի փոքր մասն են միայն: Իրականում ամենամեծ պատճառներից մեկը Կոորդինացիոն խորհրդի, ինչպես նաև ՋԺՇ անդամների՝ այս հարցի շուրջ ունեցած տարաձայնություններն էին, որոնց պատճառով շուտով Կոորդինացիոն խորհուրդն ու նրա կորիզը կազմող ՋԺՇ-ն անհամեմատ թուլացան և գրեթե դադարեցին գոյություն ունենալուց:

Ինքնավարության աստիճանաբար մարող պահանջները 1990-ական թթ. վերջերին.- Վրաստանում անցկացվելիք տեղական ինքնակառավարման մարմինների (անցկացվեցին 1998թ. նոյեմբերի 16-ին), խորհրդարանական (1999թ. հոկտեմբերի 31-ին) և նախագահական (2000թ. ապրիլի 9-ին. նշենք, որ այս ընտրությունների ժամանակ Սամցխե-Ջավախքի ընտրազանգվածը ձայների 84%-ը տվեց «Վրաստանի քաղաքացիների միություն» կուսակցության թեկնածու Է.Շևարդնաձեի օգտին, միայն Նինոծմինդայի շրջանում, օրինակ, Է.Շևարդնաձեն հավաքեց ձայների 95%-ը) [17] ընտրությունների ժամանակ արդեն պառակտված ՋԺՇ-ը չէր դադարում հանդես գալ ինքնավարության կոչերով:

«Ջավախք» ժողովրդական շարժման պառակտումը.- 1999թ. հունվարի 17-ին Ախալքալաքի շրջանի Բարալեթ գյուղում տեղի ունեցավ «Ջավախք» ժողովրդական շարժման հերթական՝ 6-րդ կոնֆերանսը[1]: Ելույթ ունեցողները մեկ անգամ ևս բնութագրեցին երկրամասում առկա իրավիճակը՝ այն ճգնաժամային գնահատելով, «որտեղ իրենց մեղքն ունեին նաև տեղական իշխանության մարմինները, շրջանում գործող հասարակական-քաղաքական կազմակերպությունները, չի բացառվում՝ նաև ժողովրդական շարժման (խոսքը վերաբերում է «Ջավախք» ժողովրդական շարժմանը- Վ.Ս.) ոչ ճիշտ դիրքորոշումը որոշ հարցերում»[2]: Կոնֆերանսն ընտրեց 17 հոգուց բաղկացած խորհուրդ՝ Ս.Հակոբյանի նախագահությամբ [18]: Այնուամենայնիվ, կարելի է ասել, որ սա հասարակությանն իր շուրջը համախմբելու և ակտիվ գործունեություն ծավալելու ՋԺՇ վերջին փորձն էր: Մեծ ու փոքր պաշտոններ ձեռք բերելով՝ երբեմնի «խանդավառ» ընկերները թողել են շարժման շարքերը» [19]:

2002թ. մարտին տեղի ունեցած «Ջավախք» ժողովրդական շարժման հերթական՝ 7-րդ համագումարից և Ն.Կարապետյանի՝ շարժման նախագահ

[1] «Հզոր Հայրենիք», 20-27 հունվար, 1999, հմմտ.՝ «Հայաստանի Հանրապետություն», 04.02.1999:

[2] «Ջավախք» ժողովրդական շարժման նախագահ Ս.Հակոբյանի ելույթից՝ ընթերցված կոնֆերանսի ժամանակ:

ընտրվելուց հետո կազմակերպությունը պառակտվեց երկու մասի[1]:

Շուրջ մեկ տարի անց՝ 2003թ. հունիսի 18-ին, պառակտված «Ջավախքի» անդամների մի մասը ստեղծեց նոր կառույց՝ «Ջավախք» հասարակական կազմակերպություն [20]:

«Ջավախք» ժողովրդական շարժումն այսօր գրեթե չի գործում:

2004թ. ապրիլի 2-ին Ախալքալաքի շրջանային մշակույթի տանը տեղի ունեցավ «Ջավախք» հասարակական կազմակերպության 2-րդ համագումարը[2]: Համագումարը վերահաստատեց կազմակերպության կանոնադրությունը, ընդունեց առաջիկա գործունեության ծրագիր [21]: Չնայած այս ամենին, հասարակական կազմակերպության գործունեությունը երկրամասում գրեթե չի զգացվում: Տարբեր դիմում-բողոքները, նամակ-շնորհավորագրերը [22] խոսում են «Ջավախք» հասարակական կազմակերպության սոսկ գոյության, այլ ոչ թե գործունեության մասին:

Եզրակացություն

Սամցխե-Ջավախք-Ծալկայի հայկական շարժումները հետխորհրդային շրջանում էական ու շոշափելի հաջողություններ չունեցան տարածաշրջանի առջև ծառացած խնդիրների լուծման ոլորտում: Ժամանակ առ ժամանակ համախմբվելով և պառակտվելով՝ վերջիններիս գործելակերպը շատ պարագաներում եղել է անարդյունավետ կամ ձևական. այդպես էլ վերոնշյալ կազմակերպությունները չեն կարողացել մշակված, կոնկրետ և հայեցակարգային հողի վրա դրված պահանջներ ներկայացնել պաշտոնական Թբիլիսիին: Վերջին հանգամանքը նպաստել է, որ Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանն անընդհատ գտնվի վրացական թելադրանքի դաշտում և չունենա աննպաստ քաղաքականությանը հակադարձող գործոններ:

Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանում այսօր շատ են վրացական և միջազգային (հիմնականում Թբիլիսիի կողմից ուղղորդվող) տարբեր կազմակերպությունները, որոնց նպատակն է տարածաշրջանն ինտեգրել Վրաստանին՝ տարածելով այնտեղ վրացական քաղաքական և հոգևոր մշակույթը, վարքերն ու բարքերը: Իսկ ջավախահայության նկատմամբ խտրական քաղաքականություն վարող Վրաստանի իշխանություններին ձեռնտու է այս ամենը, քանի որ.

1. այդպիսով մասնատվում և թուլանում են Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանում գործող հայկական ուժերը,
2. տարածաշրջանը զրկվում է հոգևոր–մշակութային անհրաժեշտ կենսապայմաններից, որը սպառնում է հայության ֆիզիկական գոյությանը:

[1] http://www.a-info.org/arm/full.php?id=744
[2] http://www.a-info.org/arm/full.php?id=504

Այսպիսով՝ ստեղծված իրավիճակը շտկելու համար անհրաժեշտ է սեփական հողի վրա կազմակերպել Սամցխե-Ջավախք-Ծալկայի հայությանը, որպեսզի վերջինս կարողանա միասնական ճակատով դիմակայել Վրաստանի մարտահրավերներին: Իսկ այդ գործում, որպես մայր պետություն, մեծ և անփոխարինելի է ՀՀ դերակատարությունը:

Մարտ, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Samtskhe-Javakheti: Realities and Perspectives. UNDP: Tbilisi, 2004, p. 53.
2. Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական շարժում» ընկերության Կանոնադրություն, գրանցված 1989թ. հունիսի 1-ի 08.09.1989թ. N 118 որոշմամբ: Հմմտ.՝ Устав, Ахалкалакского общества «Народное движение перестройки» (НДП).
3. Արձանագրություն Վրաստանի հայկական հասարակական և բարեգործական միությունների կազմակերպությունների ներկայացուցիչների ժողովի, 28 հուլիսի, 1990թ., ք. Ախալքալաք:
4. Որոշում՝ Վրաստանի հայկական հասարակական և բարեգործական միությունների կազմակերպությունների և Հայաստանի վիրահայ հայրենակցական բարեգործական միությունների ներկայացուցիչների ժողովի, 28 հուլիսի, 1990թ., ք. Ախալքալաք:
5. «Հայաստանի Հանրապետություն», 16.03.1991:
6. «Ազգ», 30.03.1991:
7. Արձանագրություն N5, «Ջավախք» ժողովրդական շարժման խորհրդի նիստ, 10.06.1990թ., ք.Ախալքալաք:
8. «Ջավախք», թիվ 1 (38), փետրվար, 1997:
9. «Ազգ», 02.08.1995:
10. «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության խորհրդի «Գաղափարական-քաղաքական արտաքին հարաբերությունների» հանձնախմբի ծրագրային դրույթներ՝ հաստատված ՋԺՇ նախագահության նիստի կողմից, 13-14 հուլիսի, 1994թ., ք.Ախալքալաք:
11. Листок опроса, общественного мнения о статусе Джавахетского региона для внесения в проектной Конституции Республики Грузия. Հմմտ.՝ «Ջավախք», հուլիս, 1995, N 7 (13):
12. «Ազգ», 02.09.1995:
13. «Ազգ», 27.11.1997:
14. «Հզոր Հայրենիք», թիվ 8, 20.08.1998:
15. «Երկիր», 15.09.1998:
16. Обращение Координационного совета общественно-политических организаций Джавахка президенту Грузии г-ну Э.А.Шеварднадзе, председателю парламента г-ну З.Жвания, г. Ахалкалаки.

17. *Новикова Г., Дащко В.,* Самцхе-Джавахети: в эпицентре интересов /Грузия: проблемы и перспективы развития/, РИСИ, под редакцией Е.М.Кожокина, т. 2, Москва, 2002.
18. «Հզոր Հայրենիք», 20-27 հունվար, 1999:
19. «Հայաստանի Հանրապետություն», 04.02.1999:
20. Протокол N5, общего собрания заседания союза «Народное Движение – Джавахк» 18 июня, 2003г., г.Ахалкалаки.
21. Կանոնադրություն, «Ջավախք» հասարակական կազմակերպության, Ախալքալաք, 2004:
22. Общественная организация «Джавахк», Письмо N39, командиру 62-ой Российской военной базы, полковнику Ачалову Е.А., 23.02.2004 г., г. Ахалкалаки.

СОЮЗЫ И ОРГАНИЗАЦИИ В САМЦХЕ-ДЖАВАХК-ЦАЛКЕ (1988-2008гг.)

Ваге Саркисян

Резюме

Постсоветские развития в армянском регионе Самцхе-Джавахк-Цалка в основном обусловлены действиями ряда общественных организаций, союзов. Следовательно, путь, который прошли эти организации в какой-то степени можно считать историей Самцхе-Джавахка-Цалки за последние двадцать лет. И хотя этих организаций было не так уж много, однако некоторые из них иногда объединялись в одну организацию, иногда разъединялись и действовали отдельно друг от друга. Не имея единого программного стиля работы и обусловливая свою деятельность сложившейся в данный момент ситуацией, организации Самцхе-Джавахка-Цалки так и не достигли значительных успехов. Проблемы в регионе остались те же, какие были в постсоветский период. Более того, эти проблемы усугубились и умножились, при этом большая их часть связана с безопасностью молодой независимой Республики Армения.

Параллельно с армянскими организациями в Самцхе-Джавахке-Цалке увеличивается число грузинских организаций, которые становятся более многофункциональными, а также число международных организаций, которые действуют под диктовку грузинских властей. Под прикрытием «интегрирования региона к Грузии» они призывают население выполнять принудительные требования государства – во всех сферах общественной деятельности обязательно использовать только грузинский язык. Направленные против этого шаги армянской стороны должны быть нацелены на усиление армянского элемента в регионе. Наилучший путь достижения желаемого результата – организовать и объединить действующие здесь общественно-политические организации.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշոտ Թավադյան

Հոդվածում ներկայացված են այն «նեղ տեղերը», որոնց վերացումը կամ մեղմացումը համեմատաբար հեշտ է իրականացնել, իսկ սպասվող էֆեկտը կարող է ունենալ ազդեցիկ և վճռորոշ նշանակություն: Փոխկապակցված առաջարկությունները ներկայացվել են տնտեսական քաղաքականության երեք հիմնական ուղղություններով:
Բարեփոխումների արդյունավետությունը բարձրանում է, եթե դրանք սկսվում են պետական ապարատից: Պետական խնդիրները կարելի է լուծել եկամուտների ու ծախսերի ավելի արդյունավետ կառուցվածքով՝ ռացիոնալ վերաբաշխելով խնայված միջոցները: Այստեղ առկա է եկամուտների և ծախսերի օպտիմալացման խնդիրը:
Վերլուծվում են դրամավարկային քաղաքականության երեք հստակ փոխկապակցված գործոնները՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը, փողայնացման մակարդակը և փոխարժեքը, որոնք առանցքային են ֆինանսական ճգնաժամի ժամանակ: Ընդգծվում է, որ նշված միջոցառումները պետք է իրականացվեն համակարգված՝ հաշվի առնելով ժամանակի գործոնը:

Գնահատելով մեր ձեռքբերումները և բացթողումները, որոնք վճռորոշ չէին կայուն վիճակում, փաստենք՝ դրանք կարող են չափազանց ազդեցիկ դառնալ ընդհանուր ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ: Ընդ որում, ինչպես տնտեսության զարգացման տեմպերի, այնպես էլ տնտեսական անվտանգության տեսանկյունից:

Հայաստանում տնտեսության կառավարման հարցերում առաջընթաց կա: Հատկապես բավական կայուն վիճակում է գտնվում բանկային համակարգը: Սակայն մենք պետք է հատուկ ուշադրություն դարձնենք տնտեսական-սոցիալական անվտանգության վրա, ինչն ակնհայտորեն կախված է ֆինանսական, տնտեսական, համաշխարհային և տարածքային խնդիրներից, որոնք, իրոք, կարող են բացասաբար անդրադառնալ Հայաստանի վրա:

Այժմ բոլոր ուժերը հիմնականում կենտրոնացվել են տնտեսության անկման տոկոսը նվազեցնելու, բանկային համակարգի հուսալիությունն էլ ավելի ամրացնելու, առանձին ոլորտների անկումը թույլ չտալու վրա, որպեսզի դա չվերածվի «շղթայական ռեակցիայի»:

Նշված խնդիրները հիմնականում այս կամ այն չափով լուծվում են: Սակայն այս իրավիճակում, որը կարող է և երկարաժամկետ բնույթ ընդունել, մենք պետք է ապահովենք շոշափելի տնտեսական աճ, ինչն անհրաժեշտ է ներտնտեսական անվտանգությունն ապահովելու համար:

Հոդվածի նպատակն է վերհանել մեր պետության հիմնական իրական ռեզերվները, որոնք, կարծում ենք, պարտավոր ենք օգտագործել, քանզի եկել է ավելի վճռական քայլերի, «ճգնելու» ժամանակը, երբ ինքը՝ ժամանակն էլ է դառնում որոշիչ գործոն:

Նախ փորձենք գնահատել մեր տնտեսության վերջին տարիների իրավիճակը:

Որպես ակնհայտ դրական արդյունք պետք է նշել ՀՆԱ աճը և, համապատասխանաբար, պետբյուջեի աճը[1].

	2004	2005	2006	2007	2008
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	1907.9	2242.9	2656.2	3149.3	3646.1
Անվանական ՀՆԱ ($ մլն)	3576.6	4900.4	6384.5	9206.3	11916.6
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ ($)	1113	1523	1982	2853	3689
ՀՆԱ իրական աճ, %	10.5	13.9	13.2	13.7	6.8

ՀՀ պետբյուջեն (մլն դրամ)	2004	2005	2006	2007	2008
Եկամուտներ	302249.1	374746.9	412356.2	490206.8	746005.5
Ծախսեր	333969.8	417505.9	482193.9	558677.7	822054.4
Դեֆիցիտ (պակասուրդ)	31720.7	42759.0	69837.7	68470.2	76048.9

Եվրոյի, դոլարի, ռուսական ռուբլու և զարգացած այլ երկրների արժույթների նկատմամբ դրամի ամրացման աննպաստության մասին, հատկապես ռազմավարական առումով, զգուշացրել ենք հենց սկզբից: Այստեղ ունենք հետևյալ պատկերը.

Ժամկետը (տարեկան միջին)	1 USD / դրամ	1 EUR / դրամ	1 RUR / դրամ
2003	578,8	653.76	18.83
2004	533.5	662.28	18.52
2005	457.7	570.39	16.19
2006	416.0	521.2	15.29
2007	342.1	467.81	13.36
2008	306.0	450.24	12.35

[1] Տվյալները՝ www.gov.am, www.minfin.am, www.cba.am, www.armstat.am, www.imf.org, en.wikipedia.org/wiki/Value_added_tax կայքերից:

«Ազգային արժույթի թուլացումը լավ հնարավորություն է ստեղծում արտահանողների համար, որոնք դրամի շարունակական արժևորման պատճառով վերջին տարիներին ոչ բարենպաստ պայմաններում էին»[1]: Իհարկե, դրամի ամրացումը նպաստել է առևտրային հաշվեկշռի դեֆիցիտի աճին.

	2004	2005	2006	2007	2008
Ապրանքային հաշվեկշիռ ($մլն)	-458.0	-587.9	-895.9	-1600.3	-2663.5
Ապրանքների արտահանում ($մլն)	738.3	1004.9	1025.4	1196.6	1112.0
Ապրանքների արտահանման աճ, %	6.1	36.1	2.0	16.7	-7.1
Ապրանքների ներմուծում ($մլն)	-1196.3	-1592.8	-1921.3	-2796.9	-3775.5
Ապրանքների ներմուծման աճ, %	5.8	33.1	20.6	45.6	35.0
Ապրանքների և ծառայությունների արտահանման աճ, %	18.5	32.2	6.7	17.6	-1.1
Ապրանքների և ծառայությունների ներմուծման աճ, %	15.8	30.5	19.4	41.5	32.3
Արտահանում (ապրանքներ և ծառայություններ)/ՀՆԱ, %	29.9	28.9	23.7	19.3	14.7
Ներմուծում (ապրանքներ և ծառայություններ)/ՀՆԱ, %	-45.5	-43.3	-39.7	-39.0	-39.8

Ձևավորված ՀՆԱ կառուցվածքում ակնհայտորեն մեծացել է մեր կախվածությունը արտաքին շուկայից, մասնավորապես՝ ներմուծումից:

2009թ. ունենք ՀՆԱ անկում և, համապատասխանաբար, պետական բյուջեի եկամուտների նվազում: Դա նույնպես վկայում է արտաքին հարվածներից մեծացող կախվածության մասին, հատկապես, ինչը, կարծում եմ, ավելի վտանգավոր է, նաև իրական հատվածի կախվածության:

Տնտեսական աճի դանդաղումը, իսկ մեր իրավիճակում՝ անկումը, կարող է ունենալ ճակատագրական բնույթ: Այստեղ նաև շատ կարևոր է իրապես գնահատել իրականությունը: Նույնիսկ իրականության մոտավոր գնահատումը չափազանց արժեքավոր է, մինչդեռ ինչպես հոռետեսությունը, այնպես էլ ծայրահեղ լավատեսությունը վտանգավոր են: Առաջին դեպքում կոչ են անում ուշադրությունը կենտրոնացնել դժվարությունների վրա, որոնք ներկայացվում են որպես աղետալի, դրանով իսկ խանգարում են իրական խնդիրների լուծմանն ուժերը կենտրոնացնելուն: Նույնը վերաբերում է ծայրահեղ լավատեսությանը: Խոսքը վերաբերում է, օրինակ, խիստ ծայրահեղ գնահատականներին Հայաստանը ֆինանսական, տուրիստական, մասամբ նաև առողջարանային կենտրոնի վերածելու հետ կապված: Ի դեպ, «գնահատական» եզրն այստեղ նույնպես կարելի է խիստ վերապահումով օգտագործել, քանզի իրական սցենարների որևէ հստակ հաշվարկ չի ներկայացվում: Չնայած այդ ուղղու-

[1] Ամփոփ հաշվետվություն ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների իրականացման մասին, էջ 3:

թյուններով աշխատելը նույնպես նպատակահարմար է: Սակայն չկա նաև համեմատական վերլուծություն նմանատիպ կենտրոնների հետ, որտեղ նշված լինեին աշխարհագրական, առողջական կամ ֆինանսական առավելությունները: Արդյունքում՝ առաջանում է խաբկանք, որ իրական խնդիրների լուծումն այնքան էլ արդիական չէ, որովհետև այսքան փայլուն երկնագույն ապագա է սպասվում: Իսկապես, ծայրահեղությունները հաճախ նույն արդյունքն են ունենում:

Ներկայացնենք այն լուծումները, որոնք առաջնահերթ ենք համարում: Առաջարկվող լուծումները պետք է պարտադիր փոխկապակցված ու համակարգված լինեն և ուղղորդված մեկ նպատակի՝ տնտեսության երկարաժամկետ կայուն աճի ապահովմանը: Արդյունավետ լուծումները կարող են շաբլոն չլինել և չտեղավորվել միջազգային կառույցների ստանդարտ առաջարկություններում, որոնք երբեմն «պրոկրուստյան մահճի» են նման: Մի շարք դեպքերում փաստացի պարտադրված այդ խորհուրդները դառնում են ազդեցիկ, նույնիսկ վճռորոշ, ինչպես, օրինակ, դրամի կտրուկ ամրացման պարագայում: Նման դեպքերում, եթե տվյալ առաջարկությունները հակասում են ազգային տնտեսական շահերին, այդ շահերը պետք է հիմնավորված ու համոզիչ պաշտպանել: Քանզի հրավիրված մասնագետները միշտ չէ, որ քաջատեղյակ են մեր իրավիճակին (տվյալ դեպքում՝ առևտրային դեֆիցիտի կտրուկ աճի մեծ հավանականությանը) և պատրաստ են ճշգրտել ստանդարտ առաջարկությունները… Սակայն, իմ փորձից ելնելով, կարող եմ ասել, որ եթե առաջարկությունները կամ ճշգրտումները հստակ հիմնավորված են մեր կողմից, ապա դրանք ընդունվում են: Չմոռանանք, որ նրանք, որպես կանոն, որակյալ մասնագետներ են և գիտեն, թե որոնք են արդյունավետ լուծումները:

«Տնտեսության առանցքային հիմնախնդիրները» հոդվածում ձևակերպել ենք տնտեսական պոտենցիալը մեծացնելու համար անհրաժեշտ առաջնային խնդիրը[1]: Դա արտահանման ծավալների էական մեծացումն է + ներքին շուկայի գրավումը, հատկապես առաջին անհրաժեշտության ապրանքների գծով + զբաղվածության աճը: Այժմ փորձենք ձևակերպել այն միջոցները, որոնք, կարծում եմ, մեր իրավիճակում ամենանպաստավորն են, և դրանց իրականացումը, հաշվի առնելով ժամանակի գործոնը, կարող է մեծացնել մեր տնտեսության և նրա կառավարման արդյունավետությունը: Ներկայացնենք այն «նեղ տեղերը», որոնց վերացումը կամ մեղմացումը համեմատաբար հեշտ է իրականացնել, իսկ սպասվող էֆեկտը կարող է ունենալ ազդեցիկ և վճռորոշ նշանակություն: Փորձենք մեր կարծիքով առաջնահերթ առաջարկությունները ներկայացնել փոխկապակցված ու համակարգված տեսքով, տնտեսական քաղաքականության երեք հիմնական ուղղություններով:

[1] *Թավադյան Ա.,* «Տնտեսության առանցքային հիմնախնդիրները», 21-րդ ԴԱՐ, #1, 2009, էջ 31-32:

1. Բյուջետային քաղաքականության առաջնային խնդիրները

Բյուջետային քաղաքականության առաջնային միջոցառումը պետական բյուջեի կառուցվածքի արդյունավետության բարձրացումն է: Բարեփոխումների հաջողության արդյունավետությունը բարձրանում է, եթե դրանք սկսվում են պետական ապարատից, դա վերաբերում է նաև ապարատի ծախսերին և դրանց արդյունավետության գնահատմանը: Տվյալ պարագայում «Սկսիր քեզնից» սկզբունքը վճռորոշ է:

Վերջին տարիներին աճում են սուբյեկտիվության ավելի բարձր աստիճան ունեցող ծախսերը: Այդ պատճառով ծախսերի արդյունավետությունը համեմատաբար ավելի դժվար է գնահատվում: Մասնավորապես, ՀՀ կառավարման ապարատի պահպանման ծախսերի կառուցվածքում աշխատավարձի տոկոսի նույնիսկ նվազման միտում կա, իսկ համեմատաբար ավելի արագ տեմպերով աճում են հետևյալ հոդվածները՝ գրասենյակային ապրանքներ և նյութեր, սարքերի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր, կապի ծառայությունների վճարներ, տրանսպորտային ծառայությունների վճարներ, երբեմն գործուղումներ և ծառայողական ուղևորություններ: Հատկապես պետական բյուջեի ապրանքների գնման և ծառայությունների վճարման արդյունավետության գնահատումը և վերահսկելիության հստակեցումն արժանի են հատուկ ուշադրության: Այստեղ անհրաժեշտ է ոչ միայն հաշվարկել ծախսերի արդյունավետությունը, նաև հարաբերականորեն կրճատել այդ ծախսերը, այլև կրճատել այն ապրանքների վրա կատարվող ծախսերը, որոնք ներմուծվում են, և համեմատաբար մեծացնել ներքին արտադրության ապրանքների գնումը:

Առաջարկելով կրճատել ծախսերը, սկսելով մասնավորապես նաև պետական ապարատից՝ նպատակահարմար է իրականացնել աշխատավարձերի և թոշակների բարձրացում[1]: Այստեղ, կարծում եմ, «ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» օրենքի վերանայման կարիք կա, և պետք է անդրադառնալ բազմաթիվ խորհուրդների, կառույցների աշխատանքի արդյունավետ գնահատման, այնուհետև՝ կրճատման կամ նույնիսկ դրանց գործելու անհրաժեշտության հարցին:

Թոշակների բարձրացումը ճգնաժամի ժամանակ ոչ միայն աջակցություն է ավագ սերնդին և նրանց ընտանիքներին՝ հաշվի առնելով մեր ավանդույթները, այլ նաև խթանում է տեղական ապրանքների ներքին պահանջարկը, քանի որ, որպես կանոն, ցածր եկամուտներ ունեցողներն առաջին հերթին սպառում են առաջին անհրաժեշտության ապրանքները, որտեղ տեղական արտադրանքի տոկոսն ավելացնել ավելի հեշտ է: Այսինքն՝ այս քայլը համապատասխանում է նաև մեր առաջնային խնդրին՝ արտահանման հետ միասին

[1] Նույն տեղում, էջ 33, 36:

խթանել նաև ներմուծմանը փոխարինող տեղական արտադրությունը: Այդ միջոցառումը նույնպես պետք է իրականացնել համակարգված՝ մասնավորապես խթանելով սննդամթերքի արտադրությունը: Վերը նշված միջոցառումը կարևոր է նաև հնարավոր սոցիալական բևեռայնության մեղմացման տեսանկյունից, ինչը էական է ճգնաժամի ժամանակ:

Նշենք, որ չպետք է տարվել բյուջետային վարկերով: Պետական երաշխիքներ տրամադրելն ավելի արդյունավետ է, քանի որ չեն ծախսվում բյուջետային սուղ միջոցները: Ընդ որում, երաշխիքներ պետք է տրամադրել ոչ թե առաջին հերթին հանքարդյունաբերության ընդլայնմանը, այլ վերազինմանը և հումքի մշակմանը՝ նպատակ ունենալով էապես բարձրացնել ավելացված արժեքի տոկոսը: Տվյալ պարագայում համաշխարհային շուկայում ապրանքն անհամեմատ ավելի թանկ է, և սա պետք է սկզբունք լինի: Երաշխիքները հատկապես կարևոր գործոն են ճգնաժամի ժամանակ և դրանից դուրս գալու համար:

Հարկ է հիշել նաև, որ բյուջետային վարկերը հիմնականում ոչ շուկայական բնույթ ունեն, եթե համեմատենք երաշխիքներ տրամադրելու հետ: Ընդ որում, բյուջետային վարկերի դեպքում կոռուպցիոն ռիսկերն ավելի բարձր են:

Խիստ նպատակահարմար է նաև երաշխիքներ և բյուջետային վարկեր տրամադրելիս (եթե, իհարկե, երկրորդը բացառիկ դեպքերում տրամադրվում է) խրախուսել և նույնիսկ երաշխիքներն օգտագործել որպես գործիք, որպեսզի կազմակերպությունները վերակազմավորվեն որպես բաց բաժնետիրական ընկերություններ՝ արժեթղթերի շուկան աշխուժացնելու համար: Շեշտենք, որ եթե կազմակերպության գինը որոշված չէ շուկայում, նրա արժեթղթերը չեն վաճառվում, ապա լուրջ ներդրումներին դա ակնհայտորեն չի նպաստում: Իսկ մենք ունենք նաև ներդրումների չափը բարձրացնելու խնդիր, որտեղ դեր ունի երկրի ներդրումային վարկանիշը:

Պետական բյուջեում հարկային եկամուտների նույնիսկ որոշակի չկատարման դեպքում պետական պարտքի էական աճի նպատակահարմարությունն անպայման անհրաժեշտ է գնահատել: Ամեն դեպքում պետության կողմից վարկեր վերցնելիս նպատակահարմար է կատարել վարկային ծրագրերի ընտրության սկզբունքները[1]:

Առաջին հերթին նպատակահարմար է արտահանողներին, ներքին շուկայում ներմուծմանը փոխարինող արտադրությանը ոչ թե վարկեր (որոնք մեծացնում են մեր պետական պարտքը), այլ պետական երաշխիքներ տրամադրել՝ ելնելով մեր առաջնահերթ խնդրից: Կարծում եմ, նպատակահարմար է նաև, որ պետությունը սեփականության բարձր տոկոս ունենա այն բանկերում, որոնք աջակցում են գյուղատնտեսությանը և հատկապես ֆինանսական աջակցություն են ցուցաբերում տեղական ապրանքներն արտասահմանում վաճառելուն (օրինակ, այս դերը ԱՄՆ-ում կատարում է Էքսիմբանկը):

[1] Նույն տեղում, էջ 35:

2. Հարկային քաղաքականություն

Պետությունների մեծ մասում, հատկապես մեր հարևանների մոտ *(տե՛ս աղյուսակը)*, ճգնաժամի պայմաններում ԱԱՀ-ն ավելի ցածր է, քան Հայաստանում: Մենք պետք է նույնպես իջեցնենք ԱԱՀ-ն 20%-ից առնվազն մինչև 18%, իսկ որոշ ապրանքների համար՝ նույնիսկ ավելի ցածր: Հաշվի առնելով, որ դա, զսպելով անկումը, կխթանի տնտեսությունը, բյուջետային կորուստներ, հատկապես երկարաժամկետ առումով, չենք ունենա: Չմոռանանք, որ այս անուղղակի հարկի իջեցումը, հատկապես ճգնաժամի պայմաններում, որը միտված է տնտեսության աշխուժացմանը, նաև վերաֆինանսավորման տոկոսի նվազեցման պարագայում հակագնաճային բնույթ ունի:

Պետություն	ԱԱՀ	Որոշ ապրանքների համար ԱԱՀ
Ռուսաստան	18%	10% կամ 0%
Բելառուս	18%	-
Իրան	3%	-
Վրաստան	18%	0%
Թուրքիա	18%	8% կամ 1%
Իսրայել	16.5%	-
Կիպրոս	15%	5%
Լիբանան	10%	-
Ֆրանսիա	19.6%	5.5% կամ 2.1%
Գերմանիա	19%	7%
Շվեյցարիա	7.6%	3.6% կամ 2.4%
Հունաստան	19%	9% կամ 4.5% (որոշ տարածքներում իջեցված է համապատասխանաբար 13%, 6% և 3%)
Իսպանիա	16%	7% կամ 4%
Չինաստան	17%	6% կամ 3%
Ճապոնիա	5%	-
Հարավային Կորեա	10%	-

Անհրաժեշտ է նաև մաքսատուրքերի էական փոփոխություն կատարել՝ ուղղված առևտրային հաշվեկշռի լավացմանը:

Այլ երկրների հետ համեմատելով մեր գույքահարկը և հողի հարկը՝ նկատում ենք, որ ունենք դիֆերենցված աճի ռեզերվներ: Դա արդարացված է և՛ պետբյուջեի, և՛ սոցիալական տեսանկյունից:

Պետական խնդիրները կարելի է լուծել եկամուտների ու ծախսերի ավելի արդյունավետ կառուցվածքով՝ ռացիոնալ վերաբաշխելով խնայված միջոցները: Այստեղ առկա է եկամուտների և ծախսերի օպտիմալացման խնդիրը:

3. Դրամավարկային քաղաքականություն

Ընդգծենք, որ նպատակ չունենք քննադատել մեր դրամավարկային քաղաքականությունը ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում: Պարզապես ուզում ենք շեշտել այն կետերը, որոնք դրամավարկային քաղաքականությունում առանցքային են ճգնաժամի պայմաններում և ունեն ընդգծված համակարգային բնույթ: Խոսքը վերաբերում է երեք փոխկապակցված գործոններին՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքին, փողայնացման մակարդակին և փոխարժեքին:

Նախ անդրադառնանք այն մոլորությանը, որ բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույքը միշտ զսպում է գնաճը, իսկ ցածրը՝ հակառակը: Դա այդպես չէ, քանզի բարձր տոկոսադրույքի ժամանակ հաճախ աշխատում է հետևյալ շղթան՝ բարձր վերաֆինանսավորման տոկոս - ավելի բարձր բանկային տոկոսադրույքներ – սուղ սեփական միջոցների պարագայում ինքնարժեքի աճ - ծախքերի գնաճ:

Իզուր չէ, որ ճգնաժամային իրավիճակում զարգացած երկրները գրեթե անընդհատ իջեցրել են վերաֆինանսավորման տոկոսադրույքները: Այն Եվրոպայում կազմել է մոտ 2%, իսկ Միացյալ Թագավորությունում՝ 1%, Ճապոնիայում՝ 0.3%, ԱՄՆ-ում՝ մինչև 0.25%:

Իրականում դժվար է մեթոդներ գտնել արտադրությունն արդիականացնելու համար, երբ եկամուտներն էապես իջնում են, գնաճը և փոխարժեքը շոշափելիորեն տատանվում են, իսկ իրական բանկային տոկոսադրույքները բարձր են: Այնպես որ՝ բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույքը կարող է լինել միայն ժամանակավոր միջոցառում, հատկապես մեր փողայնացման պայմաններում, այլ ոչ թե երկարաժամկետ քաղաքականություն: Հաշվի առնենք նաև այն, որ տրանսֆերտների հարաբերական կրճատման պատճառով այդ կողմից ճնշումը փողային զանգվածի վրա որոշակիորեն նվազել է: Չնայած այստեղ առաջին հակազդեցությունը դոլարայնացման մակարդակի էլ ավելի իջեցումն է:

Վերաֆինանսավորման տոկոսադրույքը, որը մեզ մոտ 6-7%-ի շրջանակներում է և նույնիսկ 2009թ. ապրիլին հասել է 7.75%-ի, պետք է լինի ճկուն, բայց նրա կարգավորման ժամանակ, մտածելով առաջին հերթին գնաճի մասին, չպետք է մոռանալ գնահատել, թե վերաֆինանսավորման տոկոսադրույքն ինչպես է անդրադառնում ՀՆԱ և նրա կառուցվածքի, արտահանման վրա: Նշենք նաև, որ մեր բանկային համակարգը կայուն է, բայց ունի փոքր

պոտենցիալ, որը լիարժեք չի համապատասխանում ձեռք բերված տնտեսական մակարդակին ու երկրի առաջ դրված իրական խնդիրներին: Այստեղ որոշակի աշխատանք տարվում է երկրի ներսում բարձր վարկանիշ ունեցող բանկեր ներգրավելու ուղղությամբ: Չնայած պետք է գնահատել նաև այն, թե արդյոք տարածքային ֆինանսական կենտրոնին ներկայացվող պահանջները համապատասխանում են ներգրավման տեմպերին:

Ընդգծենք նաև հանրային ծառայությունները կարգավորող և տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովների դերը, որոնք ոչ միայն պետք է կարգավորեն մենաշնորհների գնագոյացման խնդիրները, այլ նաև, անպայման կոորդինացնելով իրենց գործունեությունը ԿԲ-ի հետ, հակազդեն գնաճին: Կարծում ենք՝ այս դրույթը նպատակահարմար է նաև ամրագրել օրենսդրորեն:

Հայաստանում դրամային զանգվածի հարաբերությունը ՀՆԱ-ին մոտ 20% է: Բոլոր զարգացած երկրներում այդ ցուցանիշը գերազանցում է 40%-ը: Փողայնացման մակարդակով շատ ավելի լավ է վիճակը, ասենք, Չեխիայում (69.6%), Էստոնիայում (41.2%), Ռուսաստանում (31.6%), Ուկրաինայում (36.4%), Մոլդովայում (38.3%)[1]: Հայաստանում փողայնացման մակարդակի դինամիկան հետևյալն է.

2003	2004	2005	2006	2007	2008
11.9	12.6	16.4	18.3	22	19.3

Նման փողայնացման պարագայում երկիրը, որպես կանոն, ունենում է լուրջ դժվարություններ՝ կապված կայուն զարգացման հետ, և ակնհայտ է, որ շուկայում տվյալ պարագայում գործում է դրամի փոխարինիչը, և դոլարայնացմանը հակազդելու արդյունավետությունը տվյալ դեպքում իջնում է:

Մեր գնահատականներով, եթե կարողանանք միայն ներմուծվող ապրանքների շրջանառությունից դուրս մղել արտարժույթը, ապա դրամի փողայնացումը 20%-ից կդառնա մոտ 28%: Այսինքն՝ դրամային զանգվածի շոշափելի մեծացումը չի բերի գնաճի, եթե հնարավոր լինի զուգահեռաբար էլ ավելի իջեցնել տնտեսության դոլարայնացումը և կարգավորել կանխիկ փողի շրջանառությունը՝ հնարավորինս կրճատելով և վերահսկելի դարձնելով այն: Այս պարագայում մենք կունենանք նաև դրամի փողայնացման այնպիսի ցուցանիշ, որը կնպաստի տնտեսության կայուն զարգացմանը:

Նույնիսկ ներկա իրավիճակում մենք ունենք ազգային արժույթի էական գերագնահատում, որի մշտական ուղեկիցն է արտաքին դեֆիցիտը և (կամ) տնտեսական անկումը:

Եթե մեր երկրում համեմատենք փոխարժեքը գնողունակության պարի-

[1] 2004թ. տվյալներ:

տետի հետ, ապա կտեսնենք, որ մեզ մոտ այդ հարաբերությունը կազմում է մոտ 2 (380/184): Օրինակ՝ Չինաստանում այն մոտ 3.5 (7/2) է: ԱՊՀ մի շարք երկրներում, օրինակ, Ղազախստանում, այն կազմում է 2.3, Ղրղզըստանում՝ 3.2, Բելառուսում՝ 3.1:

Մեկ շնչին ընկնող ՀՆԱ փոխարժեքի և գնողունակության պարիտետի համեմատական վերլուծություն կատարելը կարևոր է: Դա, անշուշտ, կաջակցի դրամի իրական շուկայական փոխարժեքի միջակայքը գնահատելուն: Հատկապես վտանգավոր է գերագնահատել ազգային արժույթի փոխարժեքը ճգնաժամի ժամանակ, քանզի դա կարող է փաստացի արհեստականորեն իջեցնել երկրի մրցունակությունը՝ նպաստելով կրկնակի դեֆիցիտի՝ առևտրային և պետական բյուջեի դեֆիցիտի աճին:

Վերը նշված բոլոր միջոցառումները պետք է իրականացվեն փոխկապակցված ու համակարգված՝ հաշվի առնելով ժամանակի գործոնը, միայն այդ դեպքում դրանք կունենան իրական, վճռորոշ նշանակություն:

Սեպտեմբեր, 2009թ.

РЕАЛЬНЫЕ ВОЗМОЖНОСТИ ЭКОНОМИЧЕСКОЙ ПОЛИТИКИ

Ашот Тавадян

Резюме

В статье обозначены те «узкие места», устранение которых относительно легко осуществить, а ожидаемый эффект может иметь решающее значение. Взаимосвязанные предложения представлены по трем основным направлениям экономической политики.

Эффективность реформ повышается, если их начать с государственного аппарата. В этом случае принцип «начни с себя» решающий. Государственные задачи можно решать за счет более эффективной структуры доходов и затрат, рационально перераспределяя сэкономленные средства. Задача оптимизации доходов и затрат имеет решающее значение особенно в условиях финансово-экономического кризиса.

Повышение пенсий соответствует также и первоочередной задаче – вместе с экспортом стимулировать и импортозамещение. Целесообразно при пре-

доставлении гарантий поощрять реорганизацию компаний в общества открытого типа. Крайне необходимо, исходя из сформулированной первоочередной задачи, предоставлять государственные гарантии экспортерам и, конечно, производству, заменяющему на внутреннем рынке импорт. Ибо очень трудно при финансово-экономическом кризисе модернизировать производство, если доходы существенно снижаются, вероятность колебания инфляции и курса валют значительна, а банковские проценты неподъемно высоки. Целесообразно снизить НДС с 20% до 18%. Эта мера, сдерживая спад, стимулирует экономику, а также имеет антиинфляционное значение.

Анализируются три четко взаимосвязанных фактора денежно-кредитной политики – ставка рефинансирования, уровень монетизации и курс национальной валюты, – которые играют ключевую роль при финансовом кризисе и имеют системообразующий характер.

Заблуждение, что высокая ставка рефинансирования всегда сдерживает инфляцию, а низкая – наоборот. Поскольку при высокой процентной ставке часто срабатывает следующая причинно-следственная цепь: высокая процентная ставка рефинансирования – более высокие банковские ставки – при остром дефиците собственных средств, рост себестоимости – инфляция издержек. Следует оценить, как ставка рефинансирования отражается на ВВП и на его структуре, на экспорте. Сравнительный анализ ВВП на душу населения, курса валюты, паритета покупательной способности необходим для оценки интервала реального курса национальной валюты. Чтобы предлагаемые меры имели действительно решающее значение, учитывая фактор времени, они обязательно должны быть взаимосвязаны и упорядочены.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՐԵՆԴԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Կարեն Բաբաջանյան

Աշխարհագրական շրջանների հեղինակության բարձրացումը, շատ հաճախ՝ նաև արհեստական իմիջի ստեղծումը մշտապես տվյալ տարածքի գործադիր մարմինների մտահոգության առարկան են եղել, որոնք կարողացել են հաջողության հասնել միայն այն պարագայում, երբ բազմակողմանի պատկերացում են ունեցել խնդրի էության վերաբերյալ:

«Բրենդ-պետությունները» իրենց կերպարը ձևավորելիս առաջնորդվել են արդեն իսկ ընդունված մոդելներով, որոնք, սակայն, կարող են իրարից տարբերվել՝ կախված երկրի քաղաքական և սոցիալ-տնտեսական առանձնահատկություններից: Հոդվածում առավել մանրամասն ներկայացված են այն գլխավոր բաղադրիչները, որոնց հիման վրա կառուցվում են «բրենդ-պետությունները»:

Այն ժամանակներից ի վեր, երբ Ադամ Սմիթը բացահայտեց կախվածությունը ազատ տնտեսական առևտրի և ազգային հարստության միջև, պետությունների համար բրենդի մշակման անհրաժեշտությունն առավել ակնհայտ դարձավ: Հետագայում Մ.Պորտերը, ինչպես ներկայացնում է «Ազգի մրցակցային առավելությունները» *(«The Competitive Advantage of Nations»)* գրքում, նշանակեց մի ժամանակային սահման, որով ակնհայտ դարձավ, որ երկրի զարգացման համար գոյություն չունի այլ ճանապարհ՝ միասնական շուկայական տարածության մեջ մրցակցային առավելություններով դիրքավորվելուց բացի:

Պետությունը բրենդի վերածելու գաղափարը ենթադրում է ռազմավարական ծրագրի մշակում, որը, սակայն, բավարար պայման չէ այն իրագործելու համար, քանզի առանց համակարգված քայլերի հստակ ուղղվածության, խնդրի էության համակողմանի պատկերացման և գաղափարի արժևորման՝ այն չի կարող կյանքի կոչվել: Ոլորտի մասնագետները նշում են, որ նախ և առաջ անհրաժեշտ է սահմանել պետության դիրքավորման առանցքային գաղափարները, որոնք իրենց կենսունակությամբ և գրավչությամբ կմրցեն միջազգային ասպարեզում: Բացի այդ, ստեղծված գաղափարները հարկավոր է հմտորեն, նախապես մշակված տեխնոլոգիաների միջոցով դիրքավորել զբոսաշրջիկների, օտարերկրյա ներդրողների, քաղաքացիների և հետաքրքրվող խմբերի գիտակցության մեջ:

Ըստ պետությունների բրենդինգով զբաղվող հայտնի մասնագետ Սայմոն Անհոլտի՝ գոյություն ունի պետության բրենդի «վեցանկյուն կառուցվածք», որը ներառում է այն հիմնական ուղղությունները, որոնցով ձևավորվում են բրենդ-պետությունները *(տե՛ս նկ. 1):*

Նկար 1



Այսպիսով, Սայմոն Անհոլտը պետության բրենդինգը սահմանում է որպես համաձայնեցված գործողությունների, վարքագծի, ներդրումների, ինովացիոն և հաղորդակցության միջոցների համակարգված գործընթաց՝ երկրի մրցակցային նույնականացման ռազմավարությունն իրագործելու նպատակով: Դա կարող է լինել ինչպես ակտիվ համագործակցություն կառավարության և զբոսաշրջային գործակալությունների միջև ներդրումների ներգրավման նպատակով, այնպես էլ երկար տարիների կոորդինացված և հստակ պլանավորված ռազմավարության իրականացում՝ քաղաքականության, գիտության և կրթության, մշակույթի, միջազգային առևտրի, սպորտի, զբոսաշրջության ոլորտներում, ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային ասպարեզում:

Այժմ փորձենք առավել հանգամանորեն ներկայացնել բրենդ-պետության վեցանկյուն կառուցվածքը և մատնանշել այն հիմնական ուղղություններ-ը, որոնք էական դեր են կատարում նմանատիպ ծրագրեր իրականացնելիս:

1. Արտահանում

Պետությունների տնտեսական զարգացումն առանց արտահանման գրեթե անհնար է պատկերացնել: Օրինակ՝ վերցնենք մի տարածք, որտեղ աճեցնում են միայն խնձոր և միաժամանակ ամբողջությամբ սպառում են այդ աճեցված բերքը: Բնականաբար, նման տարածքներին, գոյատևելու համար, հարկավոր է ներկրել նաև այլ ապրանքներ, որոնք տվյալ ժամանակահատվածում իրենք չեն արտադրում. համակարգիչներ, ավտոմեքենաներ և այլն: Բայց այս պարագայում հարց է առաջանում, թե ինչպես պետք է այդ նեղ մասնագիտացված տարածքը, որտեղ միայն խնձոր են աճեցնում, վճարի ներկրված ապրանքների դիմաց:

Անկասկած, որպեսզի ներմուծման համար վճարվի, նախ և առաջ հարկավոր է ինչ-որ բան արտահանել: Մի շարք եվրոպական քաղաքների, շրջանների և պետությունների համար արտահանումը կյանքի աղբյուր է [1]: Եվրամիությունն աշխարհի ամենամեծ առևտրային տերությունն է: Արտահանման ծավալների մեծությամբ աչքի են ընկել Նիդեռլանդները, Բելգիան, Դանիան և Շվեյցարիան: Սակայն քաղաքները դիտարկելիս՝ արտահանման ցուցանիշներով առաջ են ընկնում Լոնդոնը, Բրեմենը, Շտուտգարտը, Գրոնինգենը և Լյուքսեմբուրգը: Նմանատիպ երկրներում կյանքի որակը գնահատվում է չափազանց բարձր, ինչը մեծապես կախված է արտահանման գործունեության հաջողությունից: Այս տարածքների գերխնդիրն է ստեղծել այնպիսի գործարար միջավայր, որը կնպաստի արտահանող ընկերությունների զարգացմանը:

Իսկ ընկերություններն էլ իրենց արտադրած որակյալ արտադրանքով բարձրացնում են երկրի, քաղաքի, շատ հաճախ՝ նաև գյուղերի վարկանիշը՝ դարձնելով դրանք բրենդ-քաղաքներ: Գնորդների գերակշռող հատվածը բարյացակամ է վերաբերվում «արտադրված է Իտալիայում» պիտակին, իսկ «արտադրված է Անգլիայում» գրվածքը շքեղ ավտոմեքենաների վրա բացասական տպավորություն էր թողնում ԱՄՆ-ում, քանի դեռ չէր վերականգնվել *«Jaguar»* ապրանքանիշի որակը: Տարիներ առաջ «արտադրված է Լեհաստանում» կամ այլ արևելաեվրոպական երկրների պիտակներով ապրանքները ցածրորակ արտադրանքի համբավ ունեին: Այսօր այդ ընկալումն էապես փոխվել է, ինչի մասին վկայում է սպառողների օրեցօր աճող վստահությունը *«Volvo»* ավտոբուսների նկատմամբ, որոնք արտադրվել են Վարշավայում: Միջազգային շուկայում արտահանվող ապրանքների վրա հիմնականում նշվում է ապրանքի ծագման վայրը: Սպառողների գերակշռող մասը քաջատեղյակ է, որ լավագույն ժամացույցներն արտադրվում են Շվեյցարիայում, բարձրորակ ավտոմեքենաները՝ Գերմանիայում, իսկ յուրահատուկ կաշվե իրերը՝ Իտալիայում: Ապրանքային բրենդերը շատ հաճախ զուգորդվում են այն քաղաքների կամ գյուղերի հետ, որտեղ նրանք արտադրվել են: *«Rolex»* ժամացույցներն անբաժանելիորեն կապված են Ժնև քաղաքի հետ, *«Guinness»*

գարեջուրը զուգորդվում է Դուբլինի հետ: *«Chanel»* օծանելիքը կապված է Փարիզի, իսկ *«Absolut»* օղին առաջ է մղում շվեդական իմիջը: Անվերապահորեն, «քաղաքի» անվանումն ի վիճակի է ապրանքներին և ծառայություններին հաղորդել լրացուցիչ արժեք: Դ.Յոհանսոնը պնդում է, որ սպառողները պիտակի միջոցով են կողմնորոշվում ապրանքի արժանիքների մասին: Այդ միջոցով գնորդները ենթադրում են, որ Գերմանիայում արտադրված նույնանման ապրանքն ավելի որակյալ է, քան Բուլղարիայում [2, pp. 47-58]: Իսկ ի՞նչ պետք է անեն այն երկրները, որոնք արտադրելով բարձրորակ ապրանքներ՝ չեն կարողանում գտնել իրենց տեղը, քանի որ երկրի անվանումը մի շարք բացասական զուգորդումներ է առաջացնում սպառողների շրջանում: Այս պարագայում բազմաթիվ կազմակերպություններ, համատեղ գործունեություն իրականացնելով մեկ այլ հեղինակավոր ընկերության կամ դուստր ձեռնարկությունների հետ, իրենց արտադրանքի վերջնական մշակումն իրականացնում են, այսպես կոչված, «բրենդ-պետություններում», և վերջնական ապրանքի վրա փակցվում է «արտադրված է Իտալիայում» պիտակը:

Արտահանվող ապրանքների որակից, ֆունկցիոնալ և էմոցիոնալ հատկություններից է կախված արտահանող երկրի դրական կամ բացասական կերպարի ընկալումը: Անորակ արտադրանքի համբավ ձեռք բերած պետություններին տասնյակ տարիներ են պահանջվում, որպեսզի ջնջեն նմանօրինակ ընկալումը սպառողների գիտակցությունից: Շատ հաճախ այդ գիտակցությունն այնքան է արմատավորվում, որ երկրների կառավարություններին այդպես էլ չի հաջողվում պայքարել այդ կործանարար ընկալման դեմ: 2008թ. Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով Հայաստանից արտահանվել է $832.5 մլն-ի, ներկրվել $3126.6 մլն-ի ապրանք [3]: Այսինքն՝ առևտրային հաշվեկշռի բացասական սալդոն ավելացել է 3 անգամ: Այս թվերը վկայում են այլ երկրներից մեր պետության կախվածության մասին: Նման մակրոտնտեսական ցուցանիշներով հնարավոր չէ մրցել միջազգային ասպարեզում և, առավել ևս, պետության բրենդ ձևավորել:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար հարկավոր է անհապաղ վերանայել դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները: Պետությունը և մասնավոր հատվածը սերտ համագործակցության ճանապարհով պետք է մեկտեղեն իրենց շահերը՝ դառնալով գործընկերներ: Այսօրվա մեր ընկալումները թույլ չեն տալիս շրջանցել այն մեծ անջրպետը, որն առաջացել է տնտեսվարող սուբյեկտների և պետական մարմինների միջև: Պետության և տնտեսվարող սուբյեկտների մերօրյա հարաբերությունների պարագայում տեղական արտադրության խթանման և բացասական սալդոյի վերացմանն ուղղված քայլերը կձևախեղվեն, եթե չվերանա այն կարծրատիպը, որով պետական մարմինները, այն է՝ Պետական եկամուտների նախարարությունը,

գործարարների թշնամիներն են համարվում և հակառակը: Նմանատիպ պատկերացումները կարող են հանգեցնել ստվերային տնտեսության ծավալների ավելացման, ինչպես նաև տնտեսական ակտիվության նվազման, որն էլ ուղղակի ազդեցություն է ունենում երկրի դրական կերպարը միջազգային ասպարեզում դիրքավորելու հույժ կարևոր խնդրում: Երկկողմանի անվստահության միջավայրում հնարավոր չէ կառուցել առողջ տնտեսություն: Իսկ առևտրային հաշվեկշռի դրական տարբերության հնարավոր է հասնել միայն այն դեպքում, երբ ներքին շուկան հագեցած է տեղական արտադրանքով: Այսպիսով՝ գալիս ենք այն անվիճելի և հիմնավորված եզրահանգմանը, որ մեր երկրի դրական կերպարը միջազգային տնտեսական ասպարեզում կարող ենք ձևավորել միայն մեր ազգային արտադրանքով, որի վրա փակցված կլինի «արտադրված է Հայաստանում» պիտակը:

2. Ներդրումներ և ներգաղթ

Պետության բրենդի կարևոր բաղադրիչ է համարվում նաև տարածքի ներդրումային գրավչությունը, որով չափում են երկրի մրցունակության մակարդակը: Ներդրումային ռազմավարության իրագործմամբ են պայմանավորված կոմերցիոն գործունեության զարգացումը և բնակչության զբաղվածության բարձր ցուցանիշը: Տարածքը կարող է զարգանալ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրների հաշվին: Եթե խոսքը վերաբերում է ներքին աղբյուրներին, ապա երկրների գերնպատակն է ստեղծել այնպիսի նախադրյալներ, որ տնտեսվարողները շարունակեն գործել և զարգացնել իրենց գործունեությունը տվյալ երկրում: Իսկ արտաքին աղբյուրների պարագայում ուշադրության ներգրավման խնդիր է առաջանում: Բացի այդ, հարկավոր է բարենպաստ նախապայմաններ ստեղծել, որպեսզի տարածքը պոտենցիալ ներդրողների համար դիտվի իբրև գրավիչ տնտեսական գործունեության վայր, որտեղ սեփականատերերը կստանան ամենամեծ օգուտները, որտեղ մարդկանց կտրվեն անձի ինքնադրսևորման իրատեսական հնարավորություններ: *Աղյուսակ 1-ում* ներկայացված են պետության ներդրումային գրավչության գործոնները, որոնք մանրակրկիտ ուսումնասիրվում են ոչ ռեզիդենտ տնտեսվարող սուբյեկտների կողմից:

Ներդրումները մենք դիտարկում ենք լայն իմաստով, որտեղ առանձնանում են նյութական, ոչ նյութական և ֆինանսական ներդրումները: Այսօր արդեն մեծ տեղ է հատկացվում ոչ նյութական ներդրումներին՝ «նոու-հաու, անձնակազմի պատրաստում, մտավոր արժեքներ, գիտական փորձարկումներ», որովհետև հետարդյունաբերական տիպի տնտեսությունները որդեգրել են ծառայությունների արտադրման ուղին, որտեղ ապրանքը դադարել է միայն որպես նյութական առարկա դիտվել: Ժամանակակից ապրանքի ընկալման սահմաններն էապես փոխվել են: Զարգացած երկրներում արդեն վաղուց

կայացել է վենչուրային բիզնեսի շուկան, որն, ի դեպ, դասվում է ռիսկային ներդրումների շարքին: Մտավոր սեփականությունը դարձել է տնտեսվարող սուբյեկտների հաջողության բանալին, որը ձեռք են բերում երկար տարիների ընթացքում, սակայն կորցնում են շատ կարճ ժամանակահատվածում:

Աղյուսակ 1

Տնտեսական աճի մակարդակը	Համախառն ներքին արդյունքի աճ
Քաղաքական կայունությունը	Վերջին 10 տարիների ընթացքում հեղափոխությունների վտանգները
Շուկայի տարողունակությունը	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն և բնակչության թվաքանակը
Երկրի կախվածությունն արտասահմանյան երկրներից	Անազատ տնտեսական պայմաններ, բարեփոխումների հապավում և զարգացման անընդունակություն
Արտաքին պարտքի չափը	Ներգրավված փոխառությունների կառուցվածքային ուղղվածությունը և արտահանումից ստացված այն եկամուտների մակարդակը, որոնք սպասարկելու են պետ. պարտքը
Փոխարկելի արժույթներ	Արժույթի ներքին փոխարկելիության ազատության մակարդակը
Արժույթի ուժը	Արժույթի ինֆլյացիոն կայունությունը
Ներքին խնայողությունների մակարդակը	ՀՆԱ-ի և սպառման միջև տարբերությունը
Ենթակառուցվածքների զարգացածության մակարդակը	Որակյալ ճանապարհների, կապի, տրանսպորտի և էներգիայի ապահովվածությունը

Միացյալ Նահանգներում արտադրանքի աճի մեկ երկրորդից մի փոքր ավելին կարելի է վերագրել աշխատուժի և հիմնական միջոցների աճին: Մնացած աճը մնացորդային մեծություն է, որը կարելի է վերագրել կրթությանը, նորարարությանը, գիտական առաջընթացին և մյուս գործոններին:

Աճի հաշվարկը տնտեսական աճի ըմբռնման համար շատ օգտակար է: Օրինակ, շատերն են մտորել այս դարի ընթացքում այնպիսի երկրների աճի աղբյուրների մասին, ինչպիսիք են Ճապոնիան և Խորհրդային Միությունը:

Օգտագործելով աճի հաշվարկը, որը ենթադրում է տնտեսական բաղադրիչների վերլուծություն, և որը ցույց է տալիս տնտեսական աճի կախվածությունն այս կամ այն գործոնից, հետազոտողները գտել են այս առեղծվածի որոշ զարմանալի պատասխաններ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակահատվածի մեծ մասում Ճապոնիայի ՀԱԵ-ն զարմանալիորեն աճել է տարեկան 10%-ով: Փորձնական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դա մասամբ ներդրումների շատ արագ աճի արդյունք է: Բացի դրանից, այդ ընթացքում Ճապոնիան մյուս արդյունաբերական երկրների համեմատությամբ ունեցել է չափազանց արագ տեխնոլոգիական փոփոխություններ, իսկ ԱՄՆ մասնավոր գործարար հատվածում աճի հաշ-

վարկի տեխնիկական ուսումնասիրությունները ՀԱԵ աճը տրոհում են ըստ ներդրում ունեցող գործոնների: Այս ուսումնասիրությունները բացահայտել են, որ արտադրանքի աճի 37%-ը պայմանավորված է հիմնական միջոցներով: Կրթությունը, տեխնոլոգիական փոփոխությունը և այլ աղբյուրներ պայմանավորում են ՀԱԱ ամբողջ աճի 42%-ը և մեկ աշխատողին ընկնող արտադրանքի աճի կեսից ավելին [4]:

Կարևորելով ներդրումային առողջ միջավայրի ապահովումը՝ հարկավոր է դիտարկել մարդկային կապիտալի ազդեցությունն այդ միջավայրի ձևավորման խնդրում: Խնդրահարույց կարելի է համարել այն իրավիճակը, երբ աշխատանքի բացակայությունը և գործազրկության բարձր մակարդակը դրդում են մարդկանց լքել իրենց բնակավայրերը և աշխատանք փնտրել տնտեսապես ապահով այլ տարածքներում: Այս պարագայում տարածքը չի կարելի համարել գրավիչ, եթե աշխատունակ բնակչությունը լքում է այն, ընկնում է ծննդաբերությունը, և միգրացիոն հոսքը դառնում է բացասական: Ներդրումային ռեսուրսներ հայթայթողը և օգտագործողը եղել և մնում է մարդը, որն այդ նպատակի համար օգտագործում է բոլոր միջոցները՝ դրամական, մտավոր և ֆիզիկական: Երկրի քաղաքացիները տարածքի հիմնական ներդրողներն են, ովքեր իրենց խնայողությունները սպառելով՝ ստեղծում են նոր արժեքներ: Առողջ ներքին ներդրումային միջավայրի ձևավորման արդյունքում է, որ օտարերկրյա ներդրողները հետաքրքրվում են այս կամ այն տարածքում գործունեություն իրականացնելու մասին:

Այն դեպքում, երբ ներդրումային պոտենցիալը գերազանցում է ներդրումային ռիսկերը, տարածքը համարվում է ներդրումների համար գրավիչ, իսկ հակառակ պարագայում գործում է «անտեսանելի ոտքի» էֆեկտը, որի դեպքում մարդիկ անբարենպաստ ներդրումային միջավայրից տեղափոխվում են առավել բարենպաստ միջավայր: Այսպիսով, հասարակության որոշ անդամներ «քվեարկում են ոտքերով»:

3. Մարդկային կապիտալ

Խոսելով երկրների հզորության, տնտեսական զարգացածության, սոցիալական ապահովության մասին՝ հարկ է նշել, որ վերը նշվածի ապահովման առաքելությունը դրված է մարդու վրա: Մարդկային կապիտալ ասելով նախ և առաջ հասկանում ենք հասարակության այն հատվածը, որն ունակ է իր ֆիզիկական ու մտավոր ներուժով որոշակի արժեք ստեղծել: Առանց մարդկային գործոնի հնարավոր չէ իրականացնել և ոչ մի ծրագիր, գաղափար: Մասնավորապես՝ զարգացող երկրներն առավելապես մտահոգված են իրենց մարդկային ռեսուրսների որակով: Կրթված մարդիկ ավելի արտադրողունակ աշխատողներ են և ի վիճակի են միջոցներն օգտագործել ավելի արդյունավետ

կերպով, տիրապետել նոր տեխնոլոգիաներին և դաս առնել սեփական սխալներից: Երկրները կշահեն, եթե ճարտարագիտության, բժշկության և կառավարման առաջավոր ասպարեզներում կատարելագործվելու նպատակով իրենց լավագույն ուղեղներն արտասահման ուղարկեն, որպեսզի նրանք վերադառնան նորագույն նվաճումները յուրացրած, «բայց երկրները պետք է զգուշանան ուղեղների արտահոսքից, երբ ամենաընդունակ մարդիկ ձգտում են բարձր աշխատավարձով երկրներ» մեկնել: Քաղաքակիրթ աշխարհի երկրները մտահոգված են իրենց տարածքում ապրող մարդկանց կենսաձևով, մտավոր ունակություններով և ապրելակերպով: Մարդկային կապիտալի կառավարումը դարձել է նաև օրակարգային խնդիր մի շարք եվրոպական, առաջադեմ երկրների համար: Այսօրվա հասարակական հարաբերությունների պայմաններում մարդկային կապիտալը տնտեսական, քաղաքական և հասարակական կյանքի հիմքն է:

Ռոբերտ Լուկասի տնտեսական աճի նոր տեսությունում արտադրողականության աճը սերտորեն կապվում է մարդկային, այլ ոչ թե անշարժ կապիտալի մեջ ներդրումների հետ: Ըստ այդ հետազոտությունների՝ կոնկրետ մարդու վրա կատարված ներդրումները բարձրացնում են ոչ միայն տվյալ անձի արտադրողականությունը, այլև նպաստում են մյուս աշխատողների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Լուկասի հաշվարկներով՝ մարդկային կապիտալի արդյունավետության նկատմամբ թողարկման առաձգականությունը կազմում է 0,4: Այսինքն՝ արդյունավետության 10% աճն ապահովում է 4% արտադրանքի աճ [5, էջ 198]: Եզրակացությունն այն է, որ կրթությունը և մասնագիտական պատրաստվածությունը, որոնք ավելացնում են մարդկային կապիտալը, պետք է ֆինանսավորվեն ինչպես պետության, այնպես էլ մասնավոր ընկերությունների կողմից ավելի մեծ չափով, քան կատարվում է այժմ:

Բուհում որակավորում ստացող մասնագետներն են մեր երկրի դիմանկարը կերտողները: Լինեն նրանք տնտեսագետներ, թե իրավաբաններ, քաղաքագետներ, թե բժիշկներ, ճարտարապետներ, թե երաժիշտներ, մարզիկներ, թե դերասաններ, միևնույն է, բոլորն իրենց մասնագիտական ունակությունների շրջանակներում մասնակիցն են լինում պետության բրենդի ձևավորման հույժ կարևոր հիմնախնդրին: Այս մասնագետներով է նաև պայմանավորված երկրի հեռանկարը և պետության դրական կերպարի ձևավորումը, իրենք են ծրագրերի և գաղափարների իրականացնողն ու առաջմղողը: Օրինակ՝ Եվրոպայում «տարածք վաճառողները» մեծ ուշադրություն են դարձնում բարձրորակ մասնագետների պատրաստմանը, քանի որ վերազգային կորպորացիաներն այս կամ այն վայրում ներդրում կատարելուց առաջ հետաքրքրվում են, թե արդյոք կկարողանան անհրաժեշտ մասնագետներով համա-

լրել աշխատատեղերը: Սրանք հաճախակի առաջացող խնդիրներ են, որոնք անհանգստացնում են օտարերկրյա ներդրողներին և նույնիսկ վճռական գործոն են վերջնական որոշումներ կայացնելիս: Որակավորում ունեցող մասնագետների պատրաստումը մի շարք տարածքների համար դարձել է գերնպատակ: Այսօր արդեն կրթությունը դիտվում է որպես տարածքի գրավչության գրավական: Օրինակ, Ժնևը միջազգային ասպարեզում իրեն դիրքավորում է որպես կրթական կենտրոն, Մեծ Բրիտանիայում՝ Քեմբրիջից մինչև Աբերդին տեղաբաշխված են 50-ից ավելի գիտական կենտրոններ, իսկ Փարիզի մի շարք գիտական կենտրոններ վերակազմավորվել և դարձել են ակումբային տեխնոպոլիսներ [1, c. 179]: Շատ տնտեսագետներ հավատացած են, որ աշխատուժի ներդրման, մարդկային ռեսուրսների որակը տնտեսական զարգացման ամենակարևոր, եզակի կատալիզատորն է: Գործնականում արտադրության յուրաքանչյուր բաղադրիչ՝ հիմնական միջոցներ, հումք, տեխնոլոգիա, կարելի է գնել կամ պարտք վերցնել առաջատար երկրներից: Բայց տեղական պայմաններում բարձրարտադրողական եղանակների կիրառությունը համարյա միշտ պահանջում է կառավարում, արտադրության աշխատողներ և ճարտարագիտական հմտություններ, որոնցով օժտված է միայն գրագետ և բարձր որակավորում ունեցող աշխատուժը: Ժամանակակից տեխնոլոգիաները հաճախ մարմնավորվում են այնպիսի հիմնական միջոցներում, ինչպիսիք են, օրինակ, հեռուստահաղորդակայանները, համակարգիչները, բարդ էլեկտրածին սարքավորումները և կործանիչ ինքնաթիռները: Սակայն այս հիմնական միջոցների արդյունավետ օգտագործման և պահպանման համար պահանջվում է լրացուցիչ որակավորում ունեցող աշխատուժ: Որակյալ աշխատուժի վճռական դերն ի հայտ է գալիս ամեն անգամ, երբ հանքահանույթի, պաշտպանության կամ արդյունաբերական մեքենաների բարդ սարքավորումները մատնվել են պարապուրդի, թողնվել անսարք, քանի որ զարգացող երկրների աշխատուժը չի ունեցել դրանց շահագործման անհրաժեշտ հմտությունները: Բացի վերը շարադրվածից, երկրի քաղաքացիները կատարում են նաև մեկ այլ էական գործառույթ: Խոսքը վերաբերում է հյուրընկալության մակարդակին, ինչը մեծապես կախված է տեղաբնակ ժողովրդի ավանդույթների, հյուրասիրության, ջերմության և բարեհամբույր մոտեցման հետ: Այս պատկերացումները շատ հաճախ փոխում են օտարերկրացիների վերաբերմունքն այս կամ այն երկրի նկատմամբ: Ահա մի քանի տարածված պատկերացում համապատասխան բնակավայրերի քաղաքացիների վերաբերյալ.

- Սիցիլիա - վտանգավոր, քրեական ավանդույթներ
- Ֆրանսիա - սնոբիզմ, կոպտություն, լեզվական խնդիրներ
- Ֆինլանդիա - լռակյաց և զուսպ, մելանխոլիկ, գինեմոլություն

1960-ականների զբոսաշրջիկները հիանում էին Փարիզի տպավորիչ միջավայրով, սակայն բոլորը միաձայն դժգոհում էին այդ քաղաքի վաճառականների վերաբերմունքից: Նրանք չափից ավելի ինքնավստահ և կոպիտ էին հատկապես ամերիկացիների հետ շփվելիս: 70-ականների կեսերին Ֆրանսիայի կառավարությունը սկսեց իրականացնել «արշավ», որի նպատակն էր փոխել ֆրանսիացիների վերաբերմունքն օտարերկրացիների նկատմամբ: Իսկ Մեծ Բրիտանիան, թերևս, ամենամեծ ուշադրությունն է դարձնում նման խնդիրները կարգավորելու վրա: Այստեղ մանրակրկիտ ուսումնասիրվում և ուսուցանվում են բոլոր սպասարկող խմբերը, սկսած վարձու ավտոմեքենաների վարորդներից մինչև հյուրանոցի սպասարկող անձնակազմը: Այստեղ համակարգված մոտեցում է մշակված օդանավակայանում սպասարկող վարորդներից մինչև հասարակական սննդի օբյեկտները: Այսպիսով՝ պետության բրենդը ձևավորվում է տվյալ երկրի սահմանից մինչև հանգստավայրեր, խանութներ, ժամանցի վայրեր, երթուղային ավտոմեքենաներ և այլն: Այս ամենը գիտակցելով և կարևորելով՝ եվրոպական երկրների կառավարությունները ջանք չեն խնայում զանգվածային և լայնածավալ միջոցառումների իրականացման համար, որը ենթադրում է ամենօրյա քրտնաջան աշխատանք հասարակական տարբեր խմբերի հետ: Իսկ նմանատիպ ծրագրերն իրականանալի են դառնում, երբ վերածվում են ազգային ծրագրերի և այդ գաղափարով տարված է լինում ժողովրդի մեծամասնությունը:

4. Զբոսաշրջություն

Զբոսաշրջության արդյունաբերությունը համաշխարհային տնտեսության խոշոր և դինամիկ զարգացող ճյուղերից մեկն է: Զբոսաշրջիկությանը բաժին է ընկնում համաշխարհային համախառն արդյունքի, համաշխարհային ներդրումների, համընդհանուր աշխատատեղերի և համաշխարհային սպառողական ծախսումների մոտ 10%-ը: Համաշխարհային զբոսաշրջիկային կազմակերպության (ՀԶԿ) կանխատեսումներով՝ զբոսաշրջության ոլորտում բարձր և կայուն զարգացման տեմպերը կպահպանվեն, և արդեն 2010թ. միջազգային զբոսաշրջային ուղևորությունների քանակը կկրկնապատկվի՝ կազմելով 937 մլն ուղևորություն, իսկ զբոսաշրջությունից ստացված ներհոսքը կհասնի $1.1 տրիլիոնի:

Միջազգային ասպարեզում ծառայությունների վաճառքի գծով զբոսաշրջիկությունը դուրս է եկել առաջին տեղը, իսկ Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի, Փոքր Ասիայի, Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի մի շարք երկրներում այն դարձել է ազգային եկամտի և շահույթի ծանրակշիռ հոդված (13-40%) [3]: Զբոսաշրջությունը շատ երկրների համար մնում է տնտեսության ամենագլխավոր ճյուղերից մեկը: Այն ոչ միայն աշխատատեղեր է ստեղծում և եկամուտներ բերում, այլ նաև աննկատ կերպով նպաստում է

բնակավայրի և բիզնեսի վայրի ընտրության հարցում: Օրինակ՝ Գերմանիայի Մյունխեն քաղաքի գարեջրի ամենամյա փառատոնի ընթացքում աշխարհի տարբեր ծայրերից ժամանած զբոսաշրջիկները խմում են 5 մլն լիտր գարեջուր: Այս միջոցառման ընթացքում տեղի են ունենում հազարավոր գործնական հանդիպումներ, որոնք շատ հաճախ ավարտվում են պայմանագրերի կնքմամբ: Փառատոնի ամենախանդավառ հաճախորդներն են համարվում իտալացիները, ավստրալացիները, ճապոնացիները և ամերիկացիները: Մյունխենը կարողանում է զբոսաշրջիկների մեջ ստեղծել այնպիսի զգացողություն, որ քաղաքը աշխարհի գլխավոր գործարար հանդիպումների և զբոսաշրջության կենտրոններից մեկն է: Այս քաղաքը նպատակային սպառողների (զբոսաշրջիկների) գիտակցության մեջ իր հաստատուն դիրքը գրավելով՝ կարողացել է ստեղծել տասնյակ նոր ընկերություններ և հազարավոր աշխատատեղեր: Նմանօրինակ զարգացումները պայմանավորված են այն հանգամանքով, որ Մյունխենը դարձել է բրենդ-քաղաք, որից օգտվում են ինչպես տեղաբնակները, այնպես էլ ողջ Գերմանիան:

Իսկ ի՞նչ են դարձել Ծաղկաձորը, Դիլիջանը կամ Ջերմուկը, ովքե՞ր են այս տարածքի սպառողները, ի՞նչ պահանջմունքներ ունեն նրանք, արդյոք այս վայրերում հանգստացող զբոսաշրջիկները բավարարված և տպավորվա՞ծ են վերադառնում իրենց հանգստից, ո՞ր քաղաքների հետ են մրցակցում այս հանգստյան գոտիները և, վերջապես, որո՞նք են այս տարածքների մրցակցային առավելությունները: Սրանք այն հարցերն են, որոնցով պետք է զբաղվի զբոսաշրջության զարգացմամբ զբաղվող յուրաքանչյուր պետական մարմին:

Այսպիսով՝ համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2008թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին հանրապետություն են ժամանել 558443 զբոսաշրջիկներ, 2007թ. նույն ժամանակաշրջանի 510622 զբոսաշրջիկների համեմատ, կամ հավելաճի տեմպը կազմել է 9.4%: Նույն ժամանակաշրջանում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել են 515547 մարդ, կամ 2007թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ հավելաճի տեմպը կազմել է 10.3%: Հաշվի առնելով, որ զբոսաշրջիկը Հայաստանում միջին հաշվարկով ծախսում է $800-ին համարժեք դրամ և այն, որ 2008թ. Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունները կազմել է 558443 մարդ, ապա ներգնա զբոսաշրջության ցուցանիշը կազմել է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 3.67%-ը: 2008թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հատկացումները զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային միջոցառումներին կազմել են 250 մլն դրամ [3]:

ՀՀ կառավարության 2008թ. սեպտեմբերի 18-ի N 1064–Ն որոշմամբ Ջերմուկ քաղաքը հայտարարվել է զբոսաշրջային կենտրոն, սակայն այս որոշում-

ները իրականություն դարձնելու համար միայն հյուրանոցներ կառուցելը, ենթակառուցվածքային բարեփոխումներ և գովազդային պաստառներ փակցնելը բավարար չէ: Քանի որ Հայաստանի զբոսաշրջային շուկայի գին-որակ հարաբերակցությունը միմյանց չի համապատասխանում: Չհիմնավորված բարձր գնային քաղաքականությունը կարող է լուրջ հարված հասցնել ոլորտի զարգացմանը՝ դարձնելով այն ոչ մրցունակ: Բացի այդ, չունենալով ոլորտին տիրապետող լուրջ մասնագետներ՝ մենք չենք կարողանում միջազգային չափանիշներին համապատասխան ծառայություն մատուցել: Հյուրանոցային բիզնեսով զբաղվողները պետք է հիշեն, որ հյուրանոցային սենյակ չեն վաճառում, այլ՝ հանգիստ, իսկ տարածքը առաջմղողները պետք է իմանան, որ բարձրորակ սնունդ կամ տեսարժան վայրեր չեն վաճառում, այլ՝ վառ զգացողությունների փաթեթ:

5. Մշակույթ և պատմական ժառանգություն

Մշակույթի պահպանումն ու տարածումը մշտապես ժողովուրդների ինքնապաշտպանության, ինքնամաքրման, ինքնադրսևորման և սեփական ազգային դիմանկարի ձևավորման ռազմավարություն են եղել: Պետք է նշել, որ այն ազգերն ու պետությունները, որոնք միախառնվում են այլ ժողովուրդների սովորություններին ու ավանդույթներին, կորցնում են իրենց ազգային դեմքն ու մշակութաստեղծ կարողությունը: Բայց չէ՞ որ կորցնելով պատմական ժառանգություն արժևորելու ընդունակությունը՝ ազգերը հաճախ դադարում են իրենց որևիցե ընտանիքի, գաղափարի, մշակույթի կրողը կոչել: Մշակութային քաղաքականության իրականացման գործառույթը նույնպես ընդգրկված է կառավարության, մասնավորապես՝ ՀՀ Մշակույթի նախարարության ընթացիկ և երկարաժամկետ ծրագրերում: Երկիրը միջազգային շուկայում որպես մշակութային կենտրոն հնարավոր է դիրքավորել այն դեպքում, երբ տվյալ տարածքն աչքի է ընկնում պատմամշակութային հարուստ ժառանգությամբ, և որ ամենագլխավորն է, այն ունի ինքնուրույն, յուրահատուկ, ինքնաստեղծ մշակութային արժեհամակարգ, որն ազգերին տարանջատում է իբրև առանձին միավոր: Այս մոտեցումը բխում է մշակութային բրենդինգից և պետության բրենդի գլխավոր բաղադրիչներից է: Օրինակ, Եվրախորհրդի իրականացրած հարցումների արդյունքում (որի նպատակն էր ի հայտ բերել հինգ հիմնական կերպարները, որոնք առաջանում են մարդկանց մոտ համապատասխան երկիրը ներկայացնելիս) պարզվեց, որ գրեթե բոլոր երկրների անվանումներն արտաբերելիս հարցվողների գերակշռող հատվածն անմիջապես մտաբերում է հայտնի մշակութային գործիչների կերպարները: Օրինակ՝ Ավստրիայի դեպքում՝ Մոցարտ, Գերմանիայի դեպքում՝ Գյոթե, Իտալիայի՝ Պավարոտի, Նիդեռլանդների՝ Վան Գոգ, Մեծ Բրիտանիայի՝ Շեքսպիր, Ֆրանսիայի՝ Ժե-

բար Դեպարդիե, Շարլ Ազնավուր և այլն [1, c. 329]: Այս բրենդ-կերպարները դարձել են պետությունների խորհրդանիշեր, որոնք ինքնաբերաբար բարձրացնում են իրենց երկրների գրավչությունը:

Բացի վերը նշվածից, հարկավոր է կարևորել նաև մշակութային կենտրոնների, կոթողների, տեսարժան վայրերի դերն ու նշանակությունը պետության կերպարը կերտելիս: Այսօր ամբողջ աշխարհում մեծանում է կրոնական տուրիզմով հետաքրքրվողների թվաքանակը: Շուկայի այս հատվածում մեր պետությունն ունակ է իր առավելություններով մրցել աշխարհի այնպիսի խոշոր խաղացողի հետ, ինչպիսին է Իսրայելը: Բավական է թերթենք պատմության էջերը, և ակնհայտ կդառնա Հայաստանի կրոնական ժառանգության հարստությունը: Հայկական եկեղեցիներն առանձնանում են ուրույն ճարտարապետական լուծումներով, որոնցից մի քանիսը ներառված են ՅՈՒՆԵՍԿՕ ցանկի մեջ, ինչը մեծ հնարավորություն է ընձեռում Հայաստանին գտնել իր հստակ տեղը զբոսաշրջության շուկայի այդ հատվածում:

6. Պետական կառավարում

Պետական կառավարման կամ տնտեսությանը միջամտելու կառավարությունների հետևողական, հաճախ նաև անհետևողական քայլերը մեզ հնարավորություն են տալիս առավել մանրակրկիտ և օբյեկտիվ գնահատել պետության դերը մասնավոր սեփականություն ունեցող տնտեսությունների պայմաններում: Պետության միջամտության տրամաբանական հիմնավորումն այն է, որ կառավարությունն, ի տարբերություն առանձին կազմակերպությունների, տնտեսական խնդիրները տեսնում է ավելի լայն հեռանկարում: Այս խնդրի առջև կանգնած են ինչպես զարգացող, այնպես էլ գերզարգացած արևմտաեվրոպական պետությունները: Այսպես, օրինակ, Ճապոնիայի տնտեսության այն ճյուղերում, որտեղ պետության միջամտություն է նկատվել ներքին արտադրողին պաշտպանելու և արտաքին տնտեսվարողին սահմանափակելու ճանապարհով, գրեթե տնտեսական աճ չի նկատվում, ավելին, այդ ճյուղերը եղել են թերզարգացած և անմրցունակ ու այդպես էլ մնացել են: Այսպիսով՝ այդ երկիրը բաժանված է «երկու Ճապոնիաների» միջև: Ճապոնիա, որին ճանաչում են Արևմուտքում որպես «անպարտելի Ճապոնիա», և անարդյունավետ Ճապոնիա: Պետությունների մրցակցային առավելություններն ուսումնասիրող մասնագետ Մ.Պորտերը նշում է, որ բոլոր առևտրային արգելքները, որոնցով երկրների կառավարությունները փորձում են պաշտպանել հայրենական արտադրողներին, իրականում վնասում են դրանց՝ դարձնելով անմրցունակ և ոչ ճկուն: Ճապոնիայի պետական կարգավորման մոդելը հիմնված է այն համոզմունքի վրա, որ միայն արտահանումն է տնտեսական աճի իրական հիմքը, և տնտեսության առանձին ճյուղեր պետք է առանձնացնել և պահպանել

արտաքին վտանգներից այնքան ժամանակ, քանի դեռ տվյալ ճյուղը ոտքի չի կանգնել և չի կարող հաջող մրցակցել միջազգային շուկայում: Սակայն Պորտերի հետազոտությունների արդյունքները վկայում են այն մասին, որ վերը շարադրված մոդելն իրականում արդյունավետ չէ, որի վառ ապացույցն է այն, որ պետության հովանավորության տակ գտնվող ճյուղերն այդպես էլ ոտքի չեն կանգնում, իսկ շուկայական կանոններով առաջնորդվողները մեծ հաջողություններ են գրանցում միջազգային շուկայում:

Հակահովանավորչական գաղափարախոսության կողմնակիցները պնդում են, որ առողջ մակրոտնտեսական քաղաքականությունը և կայուն քաղաքական ու իրավական ինստիտուտները երկրի զարգացման նախադրյալներ են ստեղծում, սակայն իրականում հարստությունն առաջանում է միկրոտնտեսական մակարդակում և կախված է կազմակերպությունների արդյունավետ աշխատանքից, ինչը հնարավորություն է տալիս ապահովել բարձր աշխատավարձ և բարձրացնել շահութաբերության մակարդակը: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ենթակառուցվածքում պետական ներդրումներն էական ազդեցություն են թողնում աճի ընդհանուր տեմպերի վրա: Երկրի տնտեսության ենթակառուցվածքի զարգացումը կապված է էլեկտրակայանների, ավտոճանապարհների, ջրանցքների, օդանավակայանների, նավահանգիստների, ջրամատակարարման, կոյուղու և նման համակարգերի կառուցման հետ: Ենթակառուցվածքում պետական և մասնավոր ներդրումների միջև գոյություն ունի ֆունկցիոնալ կապ: Ուղղակի կապ գոյություն ունի նաև ենթակառուցվածքում կատարվող ներդրումների և աշխատանքի արտադրողականության միջև: Այնպիսի երկրներ, ինչպիսին, օրինակ, Ճապոնիան է, որտեղ ենթակառուցվածքում պետական ներդրումները կազմում են ՀՆԱ ավելի քան 5%-ը, ունեն արտադրողականության աճի բարձր տեմպեր, ի տարբերություն ԱՄՆ-ի, որտեղ այս ցուցանիշը ցածր է 1-ից, և արտադրողականությունն էլ աճում է համեմատաբար դանդաղ [5, էջ 199]: Սակայն կառավարության նմանօրինակ միջամտությունների անհրաժեշտությունը մենք դիտարկում ենք պետության բրենդի կառուցման և կառավարման տիրույթում: Պետության միջամտության կամ ավելի ստույգ՝ համագործակցության գերխնդիրներից պետք է հանդիսանան երկրի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին իմիջի ստեղծումն ու պահպանումը: Դա մեկանգամյա աշխատանք չէ, այլ իրականում հետևողական արդյունավետ գործունեության հետևանք է, որը համապատասխան մարմիններից պահանջում է երկարատև և բազմաֆունկցիոնալ աշխատանք:

Ամփոփում

Շատ աղքատ երկրների մի մասը, ինչպիսիք են Չադը, Բանգլադեշը կամ Եթովպիան, գտնվում է սովի նախաշեմին: Մյուս երկրները, որոնք այդ խմբի մեջ էին երկու կամ երեք տասնամյակ առաջ, աճել են՝ դառնալով միջին եկամտով երկրներ: Ավելի հաջողակները՝ Հոնկոնգը, Հարավային Կորեան և Թայվանը, կոչվում են «Նորովի արդյունաբերականացվող երկրներ»՝ «ՆԱԵ»: Երեկվա հաջող զարգացող երկրները, որոնք այսօր «ՆԱԵ» են, հավանաբար կդառնան վաղվա առաջավոր երկրներ: Աղքատ երկրները, որոնք հիմնականում պետության բրենդի ձևավորման խնդիր ունեն, պարտավոր չեն անցնելու արդյունաբերական հեղաշրջման դանդաղ, ոլորապտույտ վերելքը: Իրենց պատմական զարգացման ընթացքում այս ամենը պարզորոշ ցուցադրել են Ճապոնիան և Միացյալ Նահանգները: Արդյունաբերական մրցավազքին Ճապոնիան ուշ միացավ և միայն XIX դարի վերջին սկսեց ուսանողներ ուղարկել արտասահման՝ արևմտյան տեխնոլոգիաներ ուսումնասիրելու համար: Ճապոնիայի կառավարությունն ակտիվ դեր ստանձնեց զարգացման ընթացքը խթանելու և երկաթուղիներ ու հանրային սպասարկման շինություններ կառուցելու գործում: Ապավինելով արտաքին տեխնոլոգիաների ընդօրինակմանը՝ Ճապոնիան դարձավ աշխարհի երկրորդ ամենամեծ արդյունաբերական տնտեսությունը:

Միացյալ Նահանգների բարգավաճման փաստը աշխարհի մնացած մասի համար հուսադրող օրինակ է: Ամերիկան միայն 1930-ական թթ. հիմնարար գիտությունների ասպարեզում հասավ առաջատար դիրքերի: Այդուհանդերձ, նրա կիրառական տեխնոլոգիան արդեն մեկ դար է, ինչ բարձրակարգ է: Ավտոմեքենաների ասպարեզի հիմնական հայտնագործությունները համարյա բացառապես կատարված են ԱՄՆ-ից դուրս: Չնայած դրան, Հենրի Ֆորդն ու Ջեներալ Մոթորսը, կիրառելով արտասահմանյան հայտնագործությունները, արտադրությամբ գերազանցեցին աշխարհի մնացած մասին: Միացյալ Նահանգների, Ճապոնիայի և այլ զարգացած երկրների օրինակները ցույց են տալիս, թե երկրներն ինչպես կարող են բարգավաճել՝ արտասահմանյան գիտությունն ու տեխնիկան հարմարեցնելով տեղական շուկայի պայմաններին:

Տնտեսական զարգացման և բրենդ-պետության ստեղծման կարևոր խնդիրներից մեկը ձեռներեցության ոգու զարգացումն է: Երկիրը չի կարող բարգավաճել առանց սեփականատերերի և կառավարիչների մի խմբի, որը պատրաստ է ռիսկի դիմելու, նոր գործարաններ բացելու, նոր տեխնոլոգիաներ կիրառելու, մրցակցությանը դիմակայելու և գործարարության նոր կարևոր ուղղություններ ներմուծելու: Կառավարությունը կարող է օգնել ձեռներեցությանը՝ գյուղատնտեսությամբ զբաղվողների համար լրացուցիչ ծառայություններ սահմանելով, կրթելով աշխատուժը, հիմնելով կառավարման բիզնես դպրոցներ և ապահովելով, որ կառավարությունն ինքը մասնավար նախաձեռնության դերի նկատմամբ ունենա գործնական, հստակ վերաբերմունք: Այսօր զարգացող երկրներին «մեծ ցատկի» հնարավորություն է ընձեռված:

Վ.Վ. Ռոստովը զարգացրեց մի տեսություն, որը կարևորում էր տնտեսական աճի փուլերը, որոնցից մեկը կոչվում է «պոկում»: Տարբեր երկրների համար այդ պոկումը տեղի է ունեցել տարբեր ժամանակաշրջաններում: Անգլիայի համար՝ XVIII դարի սկզբին, Միացյալ Նահանգների համար՝ 1850-ական թթ., Ճապոնիայի համար՝ 1910թ., Մեքսիկայի համար՝ 1940թ. հետո: Պոկումը գործողության մեջ է դրվում առաջատար բնագավառների շնորհիվ, ինչպիսիք են, օրինակ, արագ մեծացող արտահանման շուկաները կամ խոշորամասշտաբ խնայողություններ իրականացնող արդյունաբերությունը: Հենց որ այս առաջատար բնագավառներն սկսում են բարգավաճել, տեղի է ունենում ինքնապահպանման աճը՝ «պոկումը»: Աճը շահույթ է բերում, շահույթները կրկին ներդրվում են, և հիմնական միջոցները, արտադրողականությունն ու մեկ շնչին ընկնող եկամուտներն առաջ են պոկվում, և սկսվում է տնտեսական զարգացման շրջանը: Այդ ինքնապահպանման աճով են պայմանավորված բրենդ-պետությունների գերզարգացածությունը, ներդրումային գրավչությունը, միջազգային շուկայում հաստատուն դիրքերը և կյանքի բարձր որակը:

Հունիս, 2009

Աղբյուրներ և գրականություն

1. *Филип Котлер,* Маркетинг Мест: Привлечение инвестиций, предприятий, жителей и туристов в города, комуны, регионы и страны Европы, Стокгольмская школа экономики в Санкт-Петербурге, 2005.
2. *Johnny K. Johansson,* «Determinats and effects of the use of “made in” labels», International Marking Review (UK).
3. http/ www. mineconomy.am, ՀՀ զբոսաշրջիկության զարգացման հայեցակարգ:
4. *Փոլ Ա.Սամյուելսն,* Տնտեսագիտություն, 1, Մակրոտնտեսագիտություն, Երևան, 1995թ.:
5. *Ղուշչյան Հ.Բ.,* Մակրոտնտեսական կարգավորում, Երևան, 2005թ.:
6. *Портер Майкл, Хиротака Такеути,* Японская экономическая модель: Может ли Япония конкурировать?, Москва, 2005.
7. *Портер Майкл,* Конкурентная стратегия, Методика анализа отраслей и конкурентов, Москва, 2006.
8. *Պոպեր Կ.Ռ.,* Բաց հասարակությունը և դրա թշնամիները, հատոր 1, Երևան, 2001:
9. *Жан-Ноэль Капферер,* Бренд навсегда: Создание, Развитие, Поддержка ценности бренда, под общей ред. *В.Н.* Домина, Москва, 2007.
10. *Овчинникова О.Г.,* Ребрендинг, Москва, 2007.
11. *Клифтон Р. - Симонз Д.,* Бренды и брендинг, редактор *В.* Стабников, Москва, 2008.
12. *Масааки Имаи, Гемба Каи Дзен,* Путь к снижению затрат и повышению качества, под ред. Ю.Адлер, Москва, 2005.
13. *Чернатони Л.,* Как создать мощный бренд, 3-е издание, под редакцией *Б.Л.* Еремина, Москва, 2006.

КОМПОНЕНТЫ БРЕНДА ГОСУДАРСТВА

Карен Бабаджанян

Резюме

В условиях рыночной экономики следует признать наличие конкурентных отношений между территориями. Цель конкурентной борьбы – оказаться более предпочтительной территорией для проживания и осуществления деятельности коммерческого и некоммерческого характера.

«Государства-бренды» при формировании своего образа руководствовались уже принятыми моделями, которые, однако, могли отличаться друг от друга в зависимости от политических и социально-экономических особенностей данной страны. Конкурентоспособность территории будет обеспечена при наличии конкурентных преимуществ территории, которыми она объективно может располагать. Конкурентные преимущества территорий во многом будут определять ключевые факторы успеха территорий, особенно если они являются исключительными на фоне других конкурентов, имеют хорошие перспективы во времени и могут быть защищены от подражания со стороны других конкурентов.

Национальный бренд определяется восприятием страны по 6 факторам: туристическая привлекательность, человеческий капитал, качество экспортируемых товаров, справедливость правительства, привлекательность культуры и спорта, а также инвестиционная привлекательность и привлекательность страны как места проживания. Данные факторы образуют «Шестиугольник» национальных брендов, который иллюстрирует основные области влияния на национальный бренд, а также объясняет, как строится бренд страны. Итак, «портфельная» стратегия территории позволяет оценить, какое развитие территориального продукта через создаваемые виды деятельности может обеспечить устойчивое развитие Армении в будущем, какие виды деятельности должны быть признаны приоритетными сегодня, чтобы через какой-то период времени стать основными на территории и обеспечить достаточный уровень доходности для следующего витка развития.

ՀՐԵԱ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱԿԵՐՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ. «ՄԱՍԱԴԱՅԻ» ՀԵՐՈՍԱՊԱՏՈՒՄԸ

Կարեն Վերանյան

Հոդվածում 66-73թթ. Հռոմեական կայսրության դեմ «Հրեական մեծ ապստամբության» տարիներին Մասադա ամրոցի ինքնապաշտպանության օրինակով ցույց է տրվում, թե ինչպես է հրեա ժողովրդի պատմության յուրաքանչյուր հերոսապատում վերածվում ազգային խորհրդանիշի, առանցքային կարևորություն ստանում հրեա ժողովրդի պատմական հիշողությունում ու զինվորականության ռազմահայրենասիրական դաստիարակությունում: Հոդվածում ներկայացվում է Մասադա ամրոցի ինքնապաշտպանության հերոսապատման՝ որպես ազգային ինքնության անքակտելի բաղկացուցչի, անգնահատելի դերն ու նշանակությունը հրեական ազգային ազատագրական պայքարի ու պետականության կայացման գործընթացում: Հրեա ժողովրդի հաղթանակները, նաև պարտություններն ու ողբերգական էջերը, տվյալ դեպքում՝ Մասադայի հերոսապատումը, լրջագույն ազդեցություն են ունեցել և շարունակում են ունենալ հրեա ժողովրդի ազգակերտման գործընթացում:

1. Հրեա զինվորականությունը՝ Իսրայել պետության անվտանգության երաշխիք

Իսրայել պետությունը և, առհասարակ, հրեությունը դասվում են աշխարհի այն հազվագյուտ երկրների ու հնագույն ժողովուրդների շարքին, որոնք պատմության ողջ ընթացքում իրենց գոյությունը մշտապես պաշտպանել են հարատև ռազմական սպառնալիքներից ու պատերազմներից: Երկու հազարամյակների պատմության ընթացքում հրեա ժողովուրդը, կտրված լինելով հայրենիքից և չունենալով պետականություն, հրեա զինվորականությունը դիտել է որպես գոյության պահպանման ու անվտանգության ապահովման միակ երաշխիք[1]: Պետականության բացակայության պայմաններում հրեա զինվորականությունը հոգացել է թե՛ հրեա ժողովրդի անվտանգությունը և թե՛ ստանձնել նրա քաղաքական ու գաղափարական առաջնորդությունը: 1948թ. Իսրայել պետության հիմնադրումից հետո տեղի ունեցած արաբա-իսրայելյան պատերազմները, պաղեստինյան հիմնախնդրի չկարգավորվածությունը և մերձավորարևելյան տարածաշրջանի ռազմական անվտանգության անկայունու-

[1] Հայրենիքից կտրված գոյատևման երկհազարամյա պատմության ընթացքում հրեա ժողովրդի գոյության պահպանման գործում անգնահատելի է եղել հուդայականության, Թալմուդի և լեզվի դերը, որոնք հանդիսացել են հրեա ժողովրդի ազգային բարոյահոգևոր ժառանգությունը:

թյունը ևս մեկ անգամ շեշտում են հրեա զինվորականության՝ ի դեմս Իսրայելի պաշտպանության բանակի (*Israel Defense Forces*) առանցքային դերակատարումը Իսրայել պետության, նրա բնակիչների և համաշխարհային հրեության անվտանգության ապահովման գործում[1]: Երկրի ղեկավարությունն ամենօրյա հետևողական քաղաքականություն է վարում Իսրայելի պաշտպանության բանակի (ՑԱԽԱԼ) զինվորական պատրաստվածության ու մարտունակության բարձրացման ուղղությամբ: Ընդ որում, ՑԱԽԱԼ-ի բարձր մարտունակության ապահովում ասելով ենթադրվում է ոչ միայն Զինված ուժերի ժամանակակից սպառազինությամբ ու ռազմատեխնիկայով հագեցվածությունը կամ զինվորականության ֆիզիկական պատրաստվածությունը, որոնք, անշուշտ, խիստ կարևոր նշանակություն ունեն յուրաքանչյուր պետության պաշտպանական անվտանգության ապահովման տեսանկյունից: Իսրայել պետության անվտանգության ապահովման համատեքստում առանձնահատուկ տեղ է հատկացվում հրեա զինվորականության բարոյահոգեբանական, ռազմահայրենասիրական դաստիարակության ու պատրաստվածության հիմնահարցերին (զինվորական վարքականոն):

Իսրայել պետության ղեկավարությունը մեծ կարևորություն է տալիս զինվորական բարոյահոգևոր, ռազմահայրենասիրական դաստիարակության սերմանմանը ինչպես Իսրայել պետության բնակչության մեջ, այնպես էլ համաշխարհային հրեության տարբեր հատվածներում: Ելնելով Իսրայել պետության, նրա բնակիչների անվտանգության ապահովման գործում Իսրայելի պաշտպանության բանակի բացառիկ դերակատարումից՝ վերջինս զգալի ազդեցություն ունի երկրի սոցիալ-հասարակական կյանքում: Մասնավորաբար, ՑԱԽԱԼ-ում զինծառայությունը համարվում է անցաթուղթ կամ պլացդարմ Իսրայելի յուրաքանչյուր քաղաքացու և առհասարակ հրեայի՝ Իսրայել պետությունում քաղաքացիական ինքնադրսևորման ու սոցիալ-հասարակական կյանքում հետագա առաջխաղացման համար [1]:

Իսրայել պետությունում հրեա զինվորականության բարոյահոգևոր դաստիարակության հիմնահարցերը հայեցակարգային բնույթ ստացան միայն 1992թ., երբ Իսրայելի պաշտպանության բանակի կողմից ներկայացվեց «Իսրայելի պաշտպանության բանակի վարքականոնը» (*The IDF Code of Conduct*)[2], որը բավական կարճ ժամանակահատվածում լայն միջազգային հնչեղություն

[1] Իսրայել պետության կողմից յուրաքանչյուր հրեա զինվորականին ցուցաբերվող հոգատարության բարձրագույն մակարդակի մասին է վկայում այն, որ Իսրայել պետությունը հետևողական է գերեվարության մեջ գտնվող վերջին հրեա զինվորականին ամեն գնով Հայրենիք վերադարձնելու հարցում, անկախ նրանից՝ ողջ է, թե ոչ: Դա են հաստատում նաև վերջին մի քանի տարիներին պաղեստինա-իսրայելյան պատերազմներն ու ռազմական բախումները:

[2] Հայեցակարգային վարքականոնը եբրայերեն կոչվում էր *Ru'ah Tzahal-The IDF Spirit.*

ստացավ[1]: Իսրայելի պետության և պաշտպանության բանակի կողմից հրեա զինվորականի վարքականոնին տրված բարձրագույն կարևորության մասին է խոսում այն, որ վերջինս Իսրայելի պաշտպանության ուժերի դոկտրինի երկու հիմնական բաղադրիչներից մեկն է՝ ներկայացված «Էթիկա» խորագրի ներքո (մյուս բաղկացուցիչ մասը կրում է «Հիմնական հայեցակարգ» խորագիրը) [2]: Վարքականոնի ենթաբաժիններից մեկում, որը կրում է «Իսրայելի պաշտպանության ուժերի ոգին» (*The Spirit of Israel Defense Forces*) անվանումը, զգալիորեն կարևորվում է ՑԱԽԱԼ-ի ոչ միայն յուրաքանչյուր հրեա զինվորականի դաստիարակությունը, լինի շարքային, թե բարձրաստիճան սպա, այլև առաջնակարգ տեղ է հատկացվում Իսրայելի պաշտպանության ուժերի՝ որպես համակարգի, բարոյա-արժեքաբանական նորմերին:

Հրեա զինվորականության բարոյահոգևոր դաստիարակության խնդիրները, Իսրայել պետության պաշտպանական անվտանգության համատեքստում կարևորվելուց զատ, կենտրոնական նշանակություն ունեն նաև հրեա ժողովրդի ազգապահպանության, ազգակերտման շրջանակներում: Իսրայել պետության համար անգնահատելի է, մասնավորաբար, հրեա ժողովրդի ռազմական պատմության լուսավոր էջերի ու հերոսապատումների նկատմամբ ազգային կոլեկտիվ հիշողությանն ուղղված հետևողական քաղաքականության իրագործումը՝ որպես հրեական պետականության շարունակականության նախապայման: Կոլեկտիվ հիշողության կարևոր առանձնահատկություններից է տվյալ ժողովրդի պատմական այն երևույթների, իրադարձությունների կամ ազգային հատկանիշների վերհանումն ու իմաստավորումը, որոնք կարող են ծառայել որպես տվյալ պետության ներսում այս կամ այն խնդիրների շուրջ էթնոմոբիլիզացման խթանիչ ուժ [3]: Թերևս, սխալված չենք լինի հաստատել, որ պետականության բացակայության երկհազարամյա ժամանակաշրջանում հրեա ժողովրդի ռազմական հաղթանակներն ու հերոսապատումները, նաև ռազմական պարտությունները դարձան հրեա ժողովրդի կոլեկտիվ հիշողության էթնոմոբիլիզացնող կարևոր գործոն[2]:

[1] Վերջին տասնամյակում Միացյալ Նահանգների պաշտպանական հրամանատարությունը միջազգային ահաբեկչության դեմ պայքարում (մասնավորապես, ահաբեկիչների դեմ մարտական գործողությունների վարումը քաղաքացիական բնակչության շրջանում) դիմել է զինվորականի վարքականոնի՝ հրեական փորձի օգնությանը, կիրառել Իսրայելի պաշտպանության ուժերի գիտահետազոտական, ուսումնակրթական կենտրոններում (*Israel's Judge Advocate General's Office; The IDF School of Military Law)* մշակված վարքականոնի համակարգչային, կոդավորված ծրագրի սկզբունքներն ու արժեքները: Վարքականոնի համակարգչային ծրագրի մաս են կազմում մինչև 4 բոպե տևողությամբ տեսաֆիլմերը, որոնք ունեն բարոյահոգեբանական, տեսական ու կիրառական ուսումնական նշանակություն:

[2] Նշենք նաև, որ դրա հետ մեկտեղ հրեության կոլեկտիվ հիշողության անքակտելի մաս է հանդիսանում նաև Հոլոքոստը, որը ոչ միայն էթնոմոբիլիզացնող դերակատարում ունեցավ և ունի համաշխարհային հրեության շրջանում, այլև էական ազդեցություն թողեց Իսրայել պետության հիմնադրման, նրա ռազմական անվտանգության ապահովման հետագա գործընթացում:

Ռազմական հաղթանակների թեմատիկայի հասարակայնացումն ու սոցիալականացումն էլ ավելի հրատապ դարձան Իսրայել պետության հիմնադրումից հետո, որի արդյունքում կարծեք թե նորովի վերիմաստավորվեցին պատմական ձեռքբերումներն ու հաղթանակները, ինչպես նաև պարտությունները: Մյուս կողմից՝ հրեա ժողովրդի հերոսապատումների թեմատիկան կարևորվում էր նաև նորաստեղծ պետության անվտանգության համար մշտապես գործող ռազմական սպառնալիքների առկայության ու պետականության պահպանման համատեքստում:

2. Մասադայի հերոսապատումը. պատմական ակնարկ

Հրեա ժողովրդի գոյության ու ազգային ինքնության պահպանման, ինչպես նաև հրեական պետության հիմնադրման գործընթացում հրեա ժողովրդի պատմական հերոսապատումների շարքում ուրույն տեղ է զբաղեցնում Մասադայի ինքնապաշտպանությունը, որը, չնայած ողբերգական ավարտին, այդուհանդերձ, հրեության շրջանում ընկալվում է որպես փառահեղ հաղթանակ: Փորձենք պատմական ակնարկի տեսքով ներկայացնել Մասադայի ամրոցի ինքնապաշտպանությունը և անդրադառնալ հարցի կարևորությանը:

Մասադայի ամրոցը (անվանումը գալիս է եբրայերեն «մեցուդա»՝ ամրոց բառից) գտնվում է Իսրայելի հարավային շրջանում՝ Հուդայական անապատի արևելյան հատվածում գտնվող լեռան գագաթին [4]: Ամրոցը կառուցվել է Ք.ա. 37-31թթ.: Մասադայի հերոսապատումը վերագրվում է առաջին դարի երկրորդ կեսերին, երբ Պաղեստինը գտնվում էր Հռոմեական կայսրության տիրապետության տակ: Խոսքը վերաբերում է 66-73թթ. Հռոմեական կայսրության դեմ Հրեաստանում ծագած ապստամբության, հռոմեացիների ու հրեաների միջև առաջին պատերազմի ժամանակաշրջանին, որը հրահրվեց հռոմեական պրոկուրատոր Գեստիոս Ֆլորոսի կատարած չարաշահումների հետևանքով: Ապստամբությունը, որը պատմության մեջ հայտնի է «Հրեական մեծ ապստամբություն» *(The Great Revolt)* անվանումով, ղեկավարում էին գյուղացիների ու արհեստավորների շահերն արտահայտող զելոտների (նախանձախնդիրներ) և սիկարիների (դաշույնավորներ) խմբավորումները: Սկզբնական շրջանում ապստամբներին հաջողվեց տիրել Երուսաղեմը, ապա պարտության մատնել Ասորիքի հռոմեական կառավարիչ Կեստիոս Գալլոսի զորքին: Սակայն կայսր Ներոնը նրանց դեմ ուղարկեց մեծ զորք՝ Փլավիոս Վեսպասիանոսի գլխավորությամբ, որի արդյունքում 67թ. հռոմեացիները կարողացան գրավել Գալիլեան, գերեցին Յոտապատա բերդը պաշտպանող զորավար Հովսեփ բեն Մաթաֆիային (նույն ինքը՝ պատմիչ Հովսեպոս Փլավիոս) [5]:

69թ. հրեա ապստամբների դեմ գործող հռոմեական բանակը գլխավորեց կայսր հռչակված Վեսպասիանոսի որդի Տիտոսը, որը պաշարեց Երուսաղեմը:

Երուսաղեմ քաղաքի պաշարվածների մեջ երկպառակություն սկսվեց, որի հետևանքով հնգամսյա պաշարումից հետո՝ 70թ., հռոմեացիները գրավեցին Երուսաղեմը, ավերեցին քաղաքը և Սողոմոնի տաճարը: Կարելի է ասել, որ Երուսաղեմ քաղաքի գրավմամբ Հռոմեական կայսրության իշխանության տակ անցավ ողջ Հրեաստանը. բացառություն էր կազմում միայն Մասադայի ամրոցը, որը մինչ հռոմեացիների կողմից Երուսաղեմի գրավումը կարողացել էին ազատագրել Հռոմեական կայսրության առավել արմատական հակառակորդներ համարվող սիկարիները[1] [6]: Վերջիններիս հետագայում միացան նաև 70թ. հռոմեացիների կողմից Երուսաղեմի գրավումից հետո քաղաքը լքած տեղացի հրեաներն իրենց ընտանիքներով, ինչի արդյունքում Մասադայում հաստատվեց 967 մարդ: Ամրոցում տեղակայված հրեա ապստամբների դիմադրությունը շարունակվեց մինչև 73թ.:

72թ. աշնանը Հռոմեական կայսրությունը շուրջ 10.000 զորք (հիմնականում՝ 10-րդ լեգեոնը) ուղարկեց Մասադայի ամրոցում հաստատված հրեա ապստամբների դիմադրությունը կոտրելու նպատակով: Մի քանի ամիս շարունակ տևած պաշարումից հետո Մասադա ամրոցի պաշտպանությունն ի վերջո տեղի տվեց հռոմեական զորքերի հարձակումներին և հանձնվեց միայն 73թ. գարնանը: Սակայն տեղի հրեա զորահրամանատարները՝ Էլեազոր բեն Յաիրի գլխավորությամբ ու առաջարկով, գերադասելով մահը գերեվարումից, որոշում կայացրին չհանձնվել թշնամուն: Արդյունքում՝ նրանցից յուրաքանչյուրը սպանեց իր ընտանիքի անդամներին, իսկ հետո՝ նաև միմյանց: Երբ հաջորդ առավոտյան հռոմեացիների բանակը ներխուժեց ամրոց, բոլորին գտավ սպանված, բացառությամբ երկու կանանց ու հինգ երեխաների, որոնք կարողացել էին թաքնվել ստորգետնյա ջրախողովակում: Պատմագրության մեջ հրեա ապստամբների այդ քայլը հայտնի է որպես զանգվածային ինքնասպանություն *(mass suicide)* [7]:

Մասադայի ամրոցի ապստամբության մասին առաջին վկայությունը մեզ է հասել առաջին դարի հայտնի հրեա պատմիչ ու զորահրամանատար Հովսեպոս Փլավիոսի (37-100թթ.) հունարեն գրված «Հուդայական պատերազմի մասին» սկզբնաղբյուրից[2]: Այդ աշխատությունում գրված է, որ «Հրեաստանի

[1] *Սիկարիներ* - սիկի անվանումից, որը նշանակում է սուր, դաշույն: Սիկարիները հրեա զելոտների խմբերից մեկն են: Զելոտականությունը առաջին դարի քաղաքական-կրոնական շարժում էր, որի առաքելությունն էր ազատագրական պայքարը Հռոմեական կայսրության դեմ: Եբրայերեն զելոտ բառը ներկայանում է Քանայիմ անվանումով, նշանակում է «Աստծո կողմից ներկայացող մարդ»:

[2] Հովսեպոս Փլավիոսը, որի իսկական անունն է Հովսեփ բեն Մաթաֆիա, հրեա հայտնի պատմագիր է, մասնակցել է 66թ. հրեական ապստամբությանը, Գալիլեայում ղեկավարել է Յոտապատա բերդի պաշտպանությունը: Հռոմեացիները գրավել են Յոտապատա բերդը և գերել նրան: Կայսրը նրան ազատում է, տալիս հռոմեական քաղաքացու իրավունք և բնակեցնում կայսերական արքունիքում: Պատմագիրը կայսրից ստացել է նաև դրամական թոշակ: Հռոմում գրել է «Հրեական պատերազմի մասին» աշխատությունը, որն ընդգրկում է Սելևկյան Անտիոքոս IV-րդ Եպիփանեսի ժամանակից (Ք.ա. 175-164թթ.) մինչև հրեական պատերազմի ավարտը (73թ.) ընկած ժամանակահատվածը: Նրա երկերում արժեքավոր տեղեկություններ կան նաև Տիգրան Բ-ի, Արտավազդ Բ-ի և Տրդատ Ա-ի ժամանակաշրջանների վերաբերյալ: Ինչպես նշում են հետազոտողներից շատերը, Հայաստանի և հայերի մասին նրա տեղեկություններն առավել արժանահավատ են և հաճախ հակասում են հունա-հռոմեական պատմագիրների հաղորդած միտումնավոր տեղեկություններին: Նրա երկերը իբրև սկզբնաղբյուր օգտագործել է նաև Մովսես Խորենացին:

ողջ կառավարումը գտնվում էր Փլավիուս Սիլվայի իշխանության ներքո, բացառությամբ Մասադայի ամրոցի, որտեղ տեղակայված հրեա ապստամբները թեժ ազատագրական պայքար էին մղում հռոմեացիների դեմ: Սիկարիները ըմբոստանում ու մարտնչում էին նաև նրանց դեմ, ովքեր ցանկանում էին հնազանդվել հռոմեացիներին, չէին ընդունում իրենց պայքարի ձևն ու չէին կիսում այդ արժեքները» [8]: Հաշվի առնելով սկզբնաղբյուրի կարևորությունը թեմայի ուսումնասիրման հարցում՝ նպատակահարմար ենք համարում մեջբերել մի հատված Հովսեպոս Փլավիոսի «Հուդայական պատերազմի մասին» աշխատությունից.

> «Պրոկուրատորը մեծ զորք հավաքեց Մասադայի ամրոցը պաշարելու նպատակով: Երկարատև ապստամբությունից հետո, երբ հռոմեական զորքերի կողմից այրվեց ամրոցի փայտե պաշտպանական պատը, նրանք մոտ էին հաղթանակին: Այդ ժամանակ հրեա ապստամբների ղեկավար Էլեազորը՝ հասկանալով, որ պարտվում են և չցանկանալով հռոմեացիներին հանձնել իր և իր զինակիցների ընտանիքները, հավաքեց իր յուրային առաջատարներին ու ելույթ ունեցավ. «Քա՛ջ զինվորներ, մենք վաղուց ենք որոշում ընդունել չենթարկվել ո՛չ հռոմեացիներին և ո՛չ էլ որևէ մեկին, բացի Աստծուց, քանզի նա է մարդկության միակ արդար և իսկական թագավորը: Այժմ եկել է ժամանակը, որպեսզի մենք գործով իրագործենք մեր որոշումը: Մենք չենք գնա ստրկության և դաժան տանջանքների, որոնք մեզ սպասում են, եթե հանձնվենք հռոմեացիներին: Մենք առաջինն ենք, որ ապստամբել ենք նրանց դեմ և վերջինը, որ պայքարում ենք: Ես դիտում եմ մեր պայքարը՝ որպես Աստծո ողորմածություն, որ նա մեզ հնարավորություն տվեց մահանալ գեղեցիկ մահով և մահանալ՝ որպես ազատ մարդիկ, ինչը վիճակված չէ հանկարծակի գերի ընկած մարդկանց: Վաղը մենք կարող ենք լինել թշնամու ձեռքերում, սակայն մենք ազատ ենք մեր ընտրության մեջ՝ ընտրելով փառավոր մահը՝ մեզ համար թանկ մարդկանց հետ միասին: Եթե Աստված բարեգութ չեղավ ժամանակին իր սիրեցյալ հուդայական ժողովրդի նկատմամբ և տարավ նրանց մահվան և հանձնեց սուրբ քաղաքը, ապա արդյոք կարող ենք մենք հուսալ, որ մենք միակն ենք ողջ հրեա ժողովրդից, որ կարող ենք փրկվել և փրկել մեր ազատությունը... Մենք կոչնչացնենք նաև մեր ողջ պաշարները: Մենք հռոմեացիներին կթողնենք միայն սպառված պաշարների մնացորդները, որպեսզի տեսնեն, որ մեզ քաղցը չէ՛ պարտության մատնել, այլ մենք նախընտրել ենք մահը ստրկությանը» [8]:

Էլեազոր Բեն Յաիրի ելույթից հետո բոլոր մարտիկները սպանում են իրենց հարազատներին՝ կանանց ու երեխաներին, իսկ հետո միմյանց խողխողում սրերով: Վերջին կենդանի մնացած զինվորը վերջին անգամ նայեց բոլոր ննջեցյալներին՝ կարծես ստուգելով, որ ոչ ոք կենդանի չի մնացել և ինքն իրեն նույնպես խողխողեց: Սակայն երկու կին և հինգ երեխա թաքնվել էին ստորգետնյա ջրախողովակում և այդպիսով մնացել աննկատ: Ընդհանուր սպանվածների թիվը հասել էր 960-ի: Հռոմեացիները առավոտյան մտնելով ամրոց, և տեսնելով այդ տեսարանը, չէին հավատացել թշնամու կատարած խիզախությանը» [9]:

Առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում Մասադայի ինքնապաշտպանների զանգվածային ինքնասպանության հարցը: Հրեական իրականությունում ինքնազոհաբերման երևույթին հանդիպում ենք վաղ անցյալում, որի ակունքները գալիս են հուդայականության կրոնադավանաբանական, արժեքային հիմնադրույթներից կամ պատվիրաններից: Հուդայականությունում (Թորայում - Մովսեսի գրքերը) խոսվում է հանուն Աստծո նվիրաբերության գաղափարի մասին, որը եբրայերենում կոչվում է *Կիդուշ Հաշեմ*: Գաղափարը վերաբերում է յուրաքաչյուր հրեայի կողմից իր Աստծո անվան պատիվը պահելու ու չպատվազրկելու բարձրագույն արժեքին: Կիդուշ Հաշեմի բարձրագույն առաքելությունն այն է, որ հրեան պետք է զոհաբերի իր կյանքը՝ չխախտելու Աստծո՝ կրոնափոխության պատվիրանը (առաջնորդվում է «*ավելի լավ է սպանվել, քան խախտել այն*» սկզբունքով):

Հարկ է նշել նաև, որ Մասադայի ինքնապաշտպանության պատմական հիշողության վերականգնման սկզբնական շրջանում (նախորդ դարի սկզբներին) զանգվածային ինքնազոհաբերման ակտը ոչ միանշանակ էր ընկալվում հրեա ժողովրդի կողմից՝ պայմանավորված վերջինիս ողբերգական ելքով: Սակայն հետագայում (այդ թվում և սիոնիստական գաղափարախոսների ջանքերով) հրեա ժողովրդի պատմության ողբերգական էջից այն վերածվեց հերոսապատման և բավական կարճ ժամանակահատվածում դարձավ Պաղեստինում սկիզբ առած հրեական ազգային ազատագրական պայքարի խորհրդանիշ: Հրեական իրականությունում առհասարակ ինքնազոհաբերման և տվյալ պարագայում՝ զանգվածային ինքնազոհաբերման հարցն ընդգրկում է ուսումնասիրման բավական լայն շրջանակ և ըստ էության առանձին հիմնարար հետազոտության նյութ է ներկայացնում:

3. Մասադայի խորհուրդը Իսրայել պետության հիմնադրման գործընթացում

Մասադայի հերոսապատման՝ որպես հրեա ժողովրդի ազգային պատմական հիշողության խորհրդանիշի, ձևավորման ակունքները գալիս են դեռևս 19-րդ դարի վերջերից, երբ Եվրոպայում սկսեց կազմավորվել սիոնիստական շարժումը: Շարժման առաքելությունն էր երկու հազարամյակ շարունակ հայրենիքից կտրված հրեա ժողովրդին Պաղեստին վերադարձնելն ու ազգային ազատագրական պայքարի միջոցով Հրեական պետություն ստեղծելը: Ազատագրական պայքարի ոգեկոչման հարցում սիոնիստ գաղափարախոսները մեծ նշանակություն էին տալիս հրեա ժողովրդի պատմական հիշողության վերականգնմանը՝ հատկապես հիմնվելով խորհրդանիշերի ձևավորման անհրաժեշտության վրա: Այս տեսանկյունից, առանձնահատուկ կարևորություն ստացավ հնագույն դարաշրջաններում հրեա ժողովրդի ազգային ազատագրական պատերազմների թեմատիկան, որի փայլուն օրինակն էր Մասադան:

20-րդ դարասկզբին դեպի Պաղեստին առաջին հրեա հայրենադարձների ազգային ազատագրական պայքարի սկզբնական փուլում Մասադան բավական կարճ ժամանակահատվածում կարողացավ վերածվել ազգային ոգեկոչման կարևորագույն աղբյուրի, որը խորհրդանշում էր հնագույն ժամանակներից ի վեր հրեա ժողովրդի ազգային ազատագրական պայքարի շարունակականությունը [10]: Նրանց արժեհամակարգում Մասադայի ինքնապաշտպանությունը մարմնավորում էր հայրենասիրության բարձր գիտակցության, ազատության նկատմամբ ունեցած սիրո, ազգային արժանապատվության, և ամենակարևորը՝ մինչև վերջ կռվելու պատրաստակամությունը *(fighting to the end):*

Մասադայի հերոսապատման զարթոնքը կամ վերածնունդը լուրջ թափ ստացավ միայն նախորդ դարի 20-ական թվականներից, երբ Պաղեստինում համաշխարհային սիոնիստական շարժման առաջնորդների աջակցությամբ արդեն պաշտպանական գործողություններ էին ծավալվում՝ ի շահ Հրեական ազգային օջախի ստեղծման[1]: 1920-1930-ականներից Մասադայի ոդիսականը դարձավ Պաղեստինում բրիտանական կառավարության դեմ գործող հրեական ընդհատակյա պարտիզանական խմբավորումների թե՛ գաղափարախոսությունների և թե՛ բուն պաշտպանական գործողությունների ռազմավարության կարևոր խորհրդանիշերից մեկը: Դրա մասին է վկայում այն, որ հրեա

[1] Մասադայի պաշտպանության հրեա մարտիկների սխրագործությանը բազմիցս են անդրադարձել նաև մինչև նշված ժամանակաշրջանը՝ հրեա ժողովրդի պատմության տարբեր դարաշրջանների ընթացքում: Որ Մասադայի հերոսապատումը Ք.հ. II դարից սկսած եղել է հրեա ժողովրդի ազգային ինքնության ու կոլեկտիվ հիշողության անքակտելի մասը, դժվար է չհամաձայնել: Որ հրեական պատմության տարբեր դարաշրջաններում Մասադան կամ այլ հերոսապատումները ժամանակ առ ժամանակ դարձել են հրեա ժողովրդի գոյության ու ազգային ինքնության պահպանման պատմական-շարունակական գործոններ, նույնպես կասկած չի հարուցում: Այլապես ինչպե՞ս բացատրել այն իրողությունը, որ 1920-1930թթ. անկախության համար մղված պայքարում Մասադայի հերոսապատումը կարճ ժամանակահատվածում ու առանց որևէ լուրջ խոչընդոտի լայն հնչեղություն ստացավ հրեության շրջանում և ընկալվեց որպես վերջինիս ազգային ինքնության բաղկացուցիչ մաս:

ընդհատակյա պարտիզանական խմբավորումները, որոնք այդ ժամանակաշրջանում գործում էին խիստ գաղտնի, կանոնավոր արշավներ էին կազմակերպում դեպի Մասադա լեռը՝ ի նշան Մասադայի սխրագործությանը մարտիկների նվիրվածության ու հավատարմության: Այդ հարցում ակտիվությամբ առավել աչքի էին ընկնում հատկապես հրեական այնպիսի զինյալ խմբավորումներ, ինչպիսիք են «Հագանան»[1] ու «Պալմահը»[2], որոնք հետագայում կազմեցին Իսրայելի պաշտպանության բանակի միջուկը [11, 12]: Բացի վերջիններից, դեպի Մասադայի լեռ արշավներ էին իրականացնում նաև այլ հայտնի հրեական զինյալ խմբավորումներ, ինչպես, օրինակ, «Ուժեղ մարդկանց դաշինք»-ը, «Էցել»-ը և «Լեհի»-ն, սակայն դրանք համարվում էին առավել արմատական և խիստ ընդհատակյա ու գաղտնի կազմակերպություններ, ուստի այդ արշավները կանոնավոր բնույթ կրել չէին կարող: Ստորև առավել հանգամանորեն կանդրադառնանք այդ ռազմականացված խմբավորումներից մի քանիսին, որոնց գործունեությունն այս կամ այն չափով զուգորդվել է Մասադայի խորհրդանիշի հետ:

«Ուժեղ մարդկանց դաշինք» ռազմական խմբավորումը.- Այս զինյալ խմբավորումը (եբրայերեն՝ *Brit Habirionim,* անգլ.՝ *"The Strongmen Alliance"*) բրիտանացիների դեմ ակտիվ ռազմական գործունեություն է ծավալել հիմնականում 1930-1933թթ. [13]: Այն հիմնադրվել է Աբբա Աքիմեիրի, Ուրի Զվի Գրինբերգի և դոկտոր Ջոշուա Յավինի կողմից: «Ուժեղ մարդկանց դաշինք» խմբավորման ստեղծման համար հիմք հանդիսացան 1929թ. ծագած արաբական ըմբոստությունները, ինչպես նաև Հեբրոնի ու Սաֆեդի հրեաների նկատմամբ իրականացվող ջարդերը կանխելու՝ «Հագանա»-ի փորձերի անհաջողությունները: Զինյալ խմբավորման գաղափարախոսությունը մեծ ազդեցություն էր կրել իտալական ֆաշիզմից:

[1] «Հագանա»-ն (եբրայերեն՝ պաշտպանություն) կառույց է, որը միավորում էր 1920թ. ենթամանդատային Պաղեստինում պաղեստինաբնակ հրեաների ստեղծած հրեական ռազմականացված ընդհատակյա մի քանի խմբերին: «Հագանա»-ի ընդհատակյա ռազմականացված խմբավորումները հետագայում կազմեցին Իսրայելի պաշտպանության բանակի (ՑԱԽԱԼ) հիմքը: Նշենք, որ Էրեց-Իսրայելում (Պաղեստինի ողջ հրեական բնակավայրը) անվտանգության ապահովման համար անհրաժեշտ ռազմական ուժերի ստեղծման գաղափարը վերագրվում է 1912թ., երբ 1909թ. ստեղծված Հա-Շոմեր ռազմականացված կազմակերպության (Էրեց-Իսրայելի հրեական ինքնապաշտպանության առաջին խմբավորումը 1909-1920թթ.) ղեկավար Ի.Շոհաթը հուշագիր ուղարկեց Համաշխարհային սիոնիստական կազմակերպության գործադիր հանձնաժողովին, որտեղ առաջարկում էր Էրեց-Իսրայելում հիմնել հրեական բնակավայրի ինքնապաշտպանության համար ընդհատակյա կազմակերպություն, որի հիմքը պետք է լիներ Հա-Շոմերը:

[2] «Պալմահ»-ը, որը եբրայերենից թարգմանաբար նշանակում է «հարվածային ջոկատներ», «Հագանա»-ի հատուկ նշանակության կամ դիվերսիոն-հետախուզական ստորաբաժանումն է: «Պալմահ»-ի ստեղծումը վերագրվում է 1941թ. մայիսի կեսերին, երբ ինչպես արաբների, այնպես էլ գերմանացիների ու իտալացիների դեմ պայքարում շարժունակ, արագ արձագանքման ու կանոնավոր պաշտպանական զորքեր ունենալու նպատակով «Հագանա»-ի ղեկավարությունը որոշում ընդունեց հիմնել 9 ջոկատ, և կազմավորվեց «Պալմահ»-ը: Դրա ստորաբաժանումները մասամբ համագործակցում էին բրիտանացիների հետ՝ գերմանացիների դեմ պայքարում: Սակայն 1943թ., երբ Էրեց-Իսրայել գերմանացիների ներխուժման վտանգը վերացավ, վերջ դրվեց նաև «Պալմահ»-ի ու բրիտանացիների համագործակցությանը:

Խմբավորման գործունեության համար որպես պատմական մոդել ծառայում էր հենց Մասադայի սիկարիների շարժումը: Դաշինքն իր առաքելությունն էր համարում բրիտանացիների ու այլոց դեմ պայքարը, որոնք ներկայանում են որպես սիոնիզմի թշնամիներ: Խմբավորման առաջնորդներն իրենց համարում էին «ազգային զեալ»-ի (զելոտ բառից) ժառանգության հետևորդներ: Հատկանշական է, որ դաշինքի անդամներից շատերը նախկինում եղել են «Էցել»-ի, իսկ հետագայում՝ նաև «Լեհի»-ի հրեական ընդհատակյա խմբավորումների մարտիկներ, որոնց գաղափարական հայացքներում դրվում էր սիկարիների հետ ինքնության կամ նույնացման խորհրդանիշը: Ընդհատակյա խմբավորման անդամներն իրենց թշնամի էին համարում նաև այն հրեաներին, որոնք համագործակցում էին բրիտանական կառավարության հետ: Այս մարգինալ մոտեցումը, ի դեպ, կրկին կապվում է Մասադայի ինքնապաշտպանների անվան հետ, որոնք նույնպես ունեին բավական արմատական հայացքներ և իրենց թշնամի էին համարում նաև այն հրեաներին, որոնք ժամանակին հպատակվել են Հռոմեական կայսրությանը կամ համագործակցել են վերջինիս հետ: Դաշինքի գրքերից մեկը կոչվում էր «Մենք սիկարիներ ենք» և սկսվում էր Ուրի Զվի Գրինբերգի բանաստեղծությամբ, որտեղ նա փառաբանում էր սիկարիներին [14]:

«Իսրայելի ազատության զինվորներ» խմբավորումը.- Այս խմբավորումը (եբրայերեն՝ *"Lehi"- "Fighters for freedom of Israel"*) [15] այլ կերպ հայտնի է «Սթերն Գենգ» անվանումով (խմբավորման հիմնադիր Աբրահամ Սթերնի անվամբ): Սկզբնական շրջանում Աբրահամ Սթերնը Զեև Ժաբոտինսկու հիմնադրած սիոնիստական շարժման կողմնակիցներից էր ու մեկ այլ հրեական ռազմականացված խմբավորման՝ 1931թ. հիմնադրված «Իրգուն» («Էցել») շարժման անդամը[1]:

1940թ. հունիսին, երբ «Իրգուն» ընդհատակյա զինյալ խմբավորման առաջնորդները որոշեցին դադարեցնել պարտիզանական պայքարը բրիտանացիների դեմ, Աբրահամ Սթերնը լքեց վերջինիս շարքերը և հիմնադրեց սեփական սիոնիստական զինյալ խմբավորումը, որը հայտնի դարձավ որպես «Իսրայելի ազգային ռազմական կազմակերպություն» (հայտնի է նաև «Լեհի» անվանումով): Աբրահամ Սթերնի գլխավորած կազմակերպության հիմնական

[1] «Իսրայելի ազգային ռազմական խմբավորումը» (հիմնականում հայտնի է «Իրգուն» կամ «Էցել» անունով) ռազմականացված սիոնիստական խմբավորում էր, որն իր հիմնական գործունեությունը ծավալում էր Պաղեստինում 1931-1948թթ.: Այն հիմնադրվել էր «Հագանա»-ի հրեական ռազմականացված հայտնի կազմակերպության շրջանակներում և գաղտնիության ապահովման նպատակով կրում էր «Հագանա Բեթ» («պաշտպանություն Բ» կամ «Երկրորդ պաշտպանություն») անվանումը: Կազմակերպության գաղափարախոսության հիմքում իշխում էր այն սկզբունքը, որի համաձայն՝ միայն հրեական ռազմական խմբավորումները կարող են պայքարել արաբների ու բրիտանացիների դեմ՝ ի շահ Հրեական պետության ստեղծման: 1948թ. Իսրայել պետության հիմնադրմամբ «Իրգունի» մի մասն ընդգրկվեց Իսրայելի նոր կազմավորված Զինված ուժերի կազմում:

նպատակն էր Պաղեստինից բրիտանացիների դուրսբերումը, հրեաների ներգաղթի ապահովումն ու հրեական պետության հիմնումը [16]: Հրեական պետության ստեղծման իրականացումը Սթերնը տեսնում էր միայն ռազմական պայքարի ճանապարհով: Սթերնը հավատացած էր, որ պատերազմում Պաղեստինի հրեաները պետք է պայքարեն բրիտանացիների դեմ, այլ ոչ թե դաշնակցեն վերջիններիս հետ ու պատերազմեն գերմանացիների դեմ: Նա նաև փորձեց գերմանացիների հետ կապեր հաստատել, որոնք հետագայում կարող էին աջակցել Պաղեստինում Հրեական պետության ստեղծմանը:

Ինչպես նախորդ, այնպես էլ Սթերնի զինյալ խմբավորման գաղափարախոսությունում մեծ տեղ էր հատկացվում Մասադայի հերոսապատմանը: Ա.Սթերնը և նրա զինակիցները Մասադայի հերոսապատման փորձառությունը որպես ռազմավարություն կիրառում էին ինչպես իրենց խմբավորման բուն ռազմական գործողություններում, այնպես էլ մարտական պայքարի գաղափարական հիմքում: Նրանք այն համոզմունքին էին, որ «Մասադայի հերոսամարտիկների պայքարի շնորհիվ է հրեա ազգը շարունակում գոյատևել»:

Ա.Սթերնի գաղափարախոսության վրա զգալի ազդեցություն է ունեցել Մասադայի ինքնապաշտպանության զորահրամանատար Էլիեզեր բեն Յաիրի հերոսական կերպարը: Հատկանշական է, որ «Լեհի» կազմակերպության հիմնադրման շրջանում Սթերնը փոխեց իր անունը և ներկայացավ որպես ԱՎԻ («Աբրահամ Բեն Յաիր»), ինչի արդյունքում բավական կարճ ժամանակահատվածում հասարակությանը հայտնի դարձավ որպես ուղղակի «Յաիր»:

«Լեհի» պարտիզանական խմբավորման շրջանակներում հրատարակվել են սիկարիների ու զելոտների սխրագործություններին, ինչպես և բուն Մասադային վերաբերող մի շարք հոդվածներ: Հոդվածներից մեկում, որը կրում էր «Մասադայի փիլիսոփայությունը» խորագիրը, փաստերի հիման վրա համեմատականներ էին անցկացվում Մասադայի ինքնապաշտպանության առաջնորդների ու «Լեհի» խմբավորման մարտական գործունեության միջև՝ նպատակ ունենալով հաստատել վերջիններիս միջև հրեա ժողովրդի անկախության համար մղված պայքարի անքակտելիության ու շարունակականության գաղափարը: Հոդվածում ասվում էր. «Մասադան այն կետն է, որտեղից փաստացի «Լեհի»-ն սկսում է իր գործունեությունը» [14]:

Եվս մեկ խորհրդանշական օրինակ, որն առնչվում է «Հագանա»-ի առաջնորդների ու Աբրահամ Սթերնի համագործակցությանը: 1942թ., երբ Սթերնի դիրքերը բավական թուլացել էին, «Հագանան» վերջինիս առաջարկեց իր աջակցությունը, որը, սակայն, կտրականապես մերժվեց: Արդյունքում՝ կարճ ժամանակ անց նրան ոչ մեծ դժվարությամբ կարողացավ հայտնաբերել բրիտանական հետախուզությունը, որից հետո և սպանվեց բրիտանացի սպայի կողմից: Ինչպես հաստատում է հետազոտողների մեծ մասը, «Հագա-

նա»-ի աջակցության առաջարկի մերժումն ուներ մեկ նպատակ. Սթերնը, հասկանալով իրադրության ողջ բարդությունը, խորհրդանշաբար չընդունեց այդ օգնությունը և կարծեք թե Մասադայի ինքնապաշտպանների օրինակով գնաց ինքնազոհաբերման՝ արտահայտելով իր նվիրվածությունն ու հավատարմությունը Մասադայի հերոսապատմանը:

«Գադնա» զինյալ կամավորական շարժումը.- Մեծ է Մասադայի դերը Իսրայել պետության հիմնադրման տարիներին գործող մեկ այլ հրեական զինյալ շարժման՝ «Գադնա» կամավորական կազմակերպության գործունեությունում [17]: «Գադնա»-ն (եբրայերենից թարգմանաբար նշանակում է «երիտասարդության գումարտակներ») հիմնադրվել է 1948թ., «Հագանա»-ի կազմում ներառված մի շարք երիտասարդական խմբավորումների հիման վրա, որոնց ճամբարներում հրեա երիտասարդները զինվորական պատրաստվածություն էին անցնում՝ «Հագանա»-ի գործողություններին մասնակցելու նպատակով: «Գադնա» կամավորական շարժման՝ այդ շրջանի առաջնորդ Մոշե Գիլբոան «Այն օրերին, այս ժամանակ» հոդվածի հեղինակն է (որի հիման վրա հետագայում լույս տեսավ նաև Յ.Յադինի «Մասադա. այն օրերին, այս ժամանակ» գիրքը)[1]: Հոդվածում հեղինակը զուգահեռներ էր անցկացնում մաքքավեականների Իսրայելի պաշտպանության բանակի հերոսության միջև, մաքքավեականներին ներկայացնում որպես «Հնագույն Իսրայելի բանակ»: Հեղինակը շեշտում էր, որ «Մասադան էլ երբեք չի ընկնի, և որ Իսրայել պետությունը կիրագործի իր մարգարեների ու պետություն կերտողների տեսությունները»: Հարկ է նշել նաև, որ հրեական այլ զինյալ խմբավորումների օրինակով «Գադնա» կամավորական կազմակերպության կողմից նույնպես կանոնավոր երիտասարդական արշավներ էին նախաձեռնվում դեպի Մասադա լեռ:

Մասադայի սխրագործությունն արտացոլվել է նաև գերմանացիների դեմ «Հագանա»-ի, «Պալմահ»-ի և այլ հրեական պարտիզանական ընդհատակյա կազմակերպությունների պայքարում: Մասադայի հերոսապատման անվան հետ է կապվում Երկրորդ աշխարհամարտում հրեաների՝ գերմանացիների դեմ պայքարում (1942թ.) «Հագանա»-ի երկու զորահրամանատարների՝ Յոխանան Ռաթների *(Yochanan Ratner)* և Ցիցիակ Սադեհի *(Yitzhak Sa-*

[1] Համաշխարհային հրեության շրջանում մեծ հեղինակություն է վայելում Ցիգաել Յադինի հեղինակած «Մասադա. այն օրերին, այս ժամանակ» (“*Masada: In Those Days – At This Time*”) գիրքը: Ի դեպ, գրքի վերնագրի վերջին 4 բառերը, որոնք վերցված են հրեական «Հաննուկա» տոնի փոքր պատմություններից, ունեն խորհրդանշական իմաստ և կապվում են Մասադայի դիցաբանության հետ: Դրանով հեղինակը փորձում է Մասադայի օրինակի հիման վրա ցույց տալ, որ այն, ինչ եղել է անցյալում, կարող է պատահել նաև այսօր: «Հաննուկան» ութօրյա հրեական տոն է, հայտնի է նաև որպես Լույսերի տոն: Այն կապվում է մ.թ.ա. 167թ. Սիրիայի Անտիոք IV-րդ թագավորի դեմ հրեաների (մաքավեականներ) ապստամբության հետ, որն արգելել էր հուդայականության դավանումը: Հրեական ավանդությունում «Հաննուկան» արտահայտում է հրեաների նվիրվածությունն ու հավատարմությունը Երուսաղեմի Սուրբ տաճարին ու հուդայականությանը:

deh) կազմակերպած հայտնի «Հյուսիսի համար նախագիծը» *(«Plan for North»),* որը հայտնի է նաև «Մասադայի նախագիծ»[1] անվանումով: «Հյուսիսի համար նախագիծը» նպատակ էր հետապնդում համախմբել Ցիշուվի[2] հրեա բնակչությանը Հայֆայի ու Քարմելի լեռներում՝ գերմանացիների դեմ պարտիզանական պայքար կազմակերպելու համար: Նախագծի՝ լեռներում առանձնանալու և կռվելու ռազմավարության ընտրությունը պատահական չէ և զուգորդվում է Մասադայի ինքնապաշտպանության ռազմավարության հետ:

«Մասադայի նախագծի» հետ է կապված նաև «Հագանա»-ի Հայֆա քաղաքի զորահրամանատարներից մեկի՝ Դավիթ Շալթիելի (*David Shaltiel*)[3] գործունեությունը: Հետազոտողներից շատերն են հիշատակում «Հագանա»-ի՝ գերմանացիների դեմ մղված մարտերից մեկում Դ.Շալթիելի կողմից հնչեցված հայտնի ելույթը՝ զուգահեռներ անցկացնելով վերջինիս ու Մասադայի ինքնապաշտպանության առաջնորդ Էլիազար բեն Յաիրի ելույթների միջև: Մեջբերում ենք նրա խոսքերը (1942թ. գարուն). «Ավելի հեշտ էր մեռնել Մասադայում, քան ապրել Գեստապոյի վարչակազմի ներքո... Ավելի լավ է մենք հավաքենք 3000 մարդկանց, որոնք պատրաստ են ամեն ինչի և գնալ լեռներ պարտիզանական պայքար մղելու համար» [14]:

Տեղին է հիշատակել նաև այդ ժամանակաշրջանում Հրեական գործակալության *(Jewish agency)* առաջնորդներից մեկի՝ Յիցհակ Գրինբաումի դերակատարումը գերմանացիների դեմ մղված պայքարում, որը նույնպես հրեա ժողովրդի ազատագրական պայքարում մեծ տեղ էր հատկացնում Մասադայի հերոսապատմանը: 1942թ. հունիսի 30-ին Հրեական գործակալության առաջնորդների հանդիպման ընթացքում Յիցհակ Գրինբաումն ազդեցիկ ելույթ ունեցավ, որտեղ ասվում էր. «Եթե մեզ վրա հարձակվեն ու նվաճեն մեր դիրքերը (գերմանացիները- *հեղ.*), պետք է վստահ լինենք, որ մեզանից հետո առնվազն կթողնենք «Մասադայի» լեգենդը»:

Մասադայի հերոսապատման օրինակով էր կազմված նաև հայտնի «Իրգուն» զինյալ խմբավորման մշակած «Երուսաղեմի հին քաղաքի» նախագիծը, որի հիմնական նպատակն էր հավաքել «Էցել»-ի բոլոր ստորաբաժանումների հազարավոր մարտիկներին Երուսաղեմի հին քաղաքում և կռվել հանուն Հրեական պետության հիմնադրման (հավանաբար 1947թ. աշնանը):

[1] «Հյուսիսի համար նախագիծը» այլ աղբյուրներում հանդիպում է որպես «Մասադան Քարմելի վրա» նախագիծ:
[2] «Ցիշուվ»՝ Պաղեստինում հաստատված հրեաների շրջանը կամ բնակավայրը:
[3] Անկախության համար մղված հրեական զինված պայքարի ընթացքում Դավիթ Շալթիելը առանցքային դերակատարություն է ունեցել «Հագանա»-ի «Իրգուն» ու «Լեհի» հրեական ընդհատակյա կազմակերպությունների հետ համագործակցության ու աշխատանքների կոորդինացման գործում:

4. Մասադայի խորհրդանիշը և Իսրայելի պաշտպանության բանակը

XX դարի 30-40-ականներին Հրեական պետության ստեղծման համար պայքարող հրեական զինված ընդհատակյա խմբավորումների մարտական ու գաղափարական գործունեությունում Մասադայի հերոսապատման մեծարման ավանդույթն էլ ավելի նոր եռանդով շարունակվեց Իսրայել պետության հիմնադրումից հետո՝ դառնալով Իսրայելի պաշտպանության բանակի ազգային խորհրդանիշերից մեկը: Իսրայելի պաշտպանության բանակի կազմավորման առաջին տարիներից շարունակվեցին հրեա զինվորականության կանոնավոր արշավները դեպի Մասադայի լեռ, որոնք հետագայում դարձան ՑԱԽԱԼ-ի զինծառայողների կարևոր զինվորական ուսումնավարժություններից մեկը: Մասադայի զինվորական արշավներն իրականացվում են մեծ շուքով. լեռան գագաթին բարձրաձայն արտասանվում է Էլիազար բեն Յաիրի ելույթը (նաև հատվածներ Հովսեպոս Փլավիոսից), որից հետո զինվորները միահամուռ հնչեցնում են հայտնի «Մասադան էլ երբե՛ք չի ընկնի» *(«Masada Shall Never Fall Again»)* բառերը[1], տրվում է հավատարմության ու նվիրվածության զինվորական երդում [18]:

Մասադայի ռազմական ուխտագնացությունը, ելնելով լեռնահովտի աշխարհագրական բարդ դիրքից, պայմանավորված է մեծ դժվարություններով և զինվորներից պահանջում է ֆիզիկական ու հոգեբանական կամային հատկանիշներ ու պատրաստվածություն: Դրանց հաղթահարումը խորհրդանշական էր և նույնպես կապվում էր Մասադայի ինքնապաշտպանության մարտիկների կրած դժվարությունների հետ:

Մասադայի լեռան վրա զինվորականները «Հրեական մեծ ասպտամբության» ռազմական փորձի օրինակով ուսումնական զորավարժություններ են կազմակերպում: Թե՛ նախքան հրեական պետականության ստեղծումը և թե՛ Իսրայել պետության հիմնադրումից հետո հրեա զինվորականությունը պատերազմական գործողությունների նախօրեին պարտադիր այցելում է Մասադայի ամրոց, տալիս հավատարմության ու նվիրվածության երդում: Մինչև 1967թ. վեցօրյա պատերազմը, երբ Արևմտյան պատը դեռևս չէր պատկանում հրեաներին, Մասադան, կարելի է ասել, ստանձնել էր Արևմտյան պատի («Լացի պատ»)՝ Իսրայելի բնակչության և, առհասարակ, համաշխարհային հրեության կարևոր պատմական սրբավայրի փոխարինողի դերը[2]:

[1] «Մասադան է՛լ երբեք չի ընկնի» արտահայտությունը պատկանում է հրեա բանաստեղծ Իցհակ Լամդանի (1899-1945թթ.) գրչին՝ հայտնի «Մասադա» բանաստեղծությունից (1927թ.), որը նվիրված էր Մասադայի հերոսապատմանը: «Մասադան է՛լ երբեք չի ընկնի» արտահայտությունը նաև հրեական ընդհատակյա զինյալ խմբավորումների զինվորական կարգախոսներից մեկն էր:

[2] Արևմտյան պատը սրբատեղի է համարվում նաև հրեա զինվորականության համար. ՑԱԽԱԼ-ի նորակոչիկները զինվորական երդում են տալիս Արևմտյան պատի մոտ:

Նշանակալի է Մասադայի խորհուրդը Իսրայել պետության սահմաններից դուրս բնակվող հրեության ռազմահայրենասիրական դաստիարակության գործում՝ որպես ազգային ինքնության պահպանման, Իսրայելի ու հրեության միջև կապերի ամրապնդման կարևոր գործոն: Իսրայելի պաշտպանության բանակի ղեկավարության ակտիվ միջամտությամբ առանձնակի կարևորություն է տրվում հրեա հայրենադարձների շրջանում Մասադայի հերոսապատման՝ որպես հրեա ժողովրդի ազգային ինքնության պահպանման ու ազգակերտման անքակտելի բաղկացուցչի, ընկալմանը, որտեղ Մասադան խորհրդանշում է հրեա ժողովրդի պատմության հիմնական փուլերի՝ հնագույն ժամանակաշրջանի ազգային ազատագրական պայքարի, հայրենիքից կտրված և պետականության բացակայության երկհազարամյա գոյապահպանության ու Իսրայել պետության ստեղծման միջև անքակտելիության ու շարունակականության գաղափարը:

Հավելենք, որ հրեա ժողովրդի հաղթանակների ու հերոսապատումների պատմական հիշողության վերականգնման և դրանք ազգային խորհրդանիշերի վերածելու գործընթացը առանցքային կարևորություն ունի Իսրայելի բնակչության և առաջին հերթին հրեա զինվորականության բարոյահոգևոր դաստիարակության տեսանկյունից: Հրեա զինվորականության ազգային խորհրդանիշերի թեմատիկայի ուսումնասիրության շրջանակները, որոնք բավական ընդգրկուն են, շարունակում են մեծ նշանակություն ունենալ հայ ժողովրդի հերոսապատումների համարժեք հետազոտման ու արժևորման օրինակով հայ զինվորականության ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

5. Մասադայի հերոսապատումը և Հոլոքոստը. անցում ողբերգությունից հաղթանակի

Իսրայելի ազգային կոլեկտիվ հիշողությունում Մասադան և Հոլոքոստը թեև դասվում են հրեա ժողովրդի պատմության ամենաողբերգական իրադարձությունների շարքին, սակայն հրեության շրջանում ունեն հաղթական պայքարի ու հերոսապատման ընկալումներ: Կարելի է ասել, որ Իսրայելի ազգային կոլեկտիվ հիշողությունում Մասադան և Հոլոքոստը շրջադարձային նշանակություն ունեն. համաշխարհային հրեության շրջանում անգնահատելի է նրանց պատմական դերակատարությունն ու ուսուցողական նշանակությունը՝ Իսրայել պետության, նրա բնակիչների ու, առհասարակ, հրեության անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում:

Մասադայի ու Հոլոքոստի միջև զուգահեռներ անցկացվեցին Երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստական Գերմանիայի կողմից Եվրոպայի հրեաների նկատմամբ իրականացված բռնությունների ու հետապնդումների տարիներին, որոնք հանգեցրին 6 միլիոն հրեաների ցեղասպա-

նության: Այդ տարիներին, սակայն, հրեության գաղափարական առաջնորդների ու հատկապես Պաղեստինում հաստատված սիոնիստական գաղափարախոսների հայացքներում Մասադան ու Հոլոքոստը ներկայանում էին որպես միմյանց հակադիր դրսևորումներ: Ի տարբերություն Մասադայի, որը մարմնավորում էր հնագույն ժամանակաշրջանում հրեա ժողովրդի ազգային ազատագրական պայքարում ցուցաբերած հերոսությունը, հայրենասիրությունը և ինքնազոհաբերումը՝ հանուն Հայրենիքի և ազգային արժանապատվության, Հոլոքոստը, ըստ սիոնիստ գաղափարախոսների, զուգորդվում էր պասիվ զոհողության, առանց դիմադրության պայքարի ու հարմարվողականության հետ: Արդյունքում՝ Պաղեստինում հաստատված հրեաների համար, ի հակադրություն Եվրոպայի հրեաների «պասիվության», էլ ավելի ընդգծվեց Մասադայի՝ որպես անհնազանդության, հանուն անկախության պայքարի ու ինքնազոհաբերման պատրաստակամության ազգային խորհրդանիշի, կարևորումը: Մյուս կողմից՝ Եվրոպայի հրեաների նկատմամբ բռնությունների ալիքը նոր լիցք հաղորդեց Պաղեստինում հաստատված հրեաների ազգային ազատագրական պայքարին ու Մասադայի փառաբանմանը՝ որպես այդ ֆոնի վրա անկախության համար մղված պայքարի *վերջին հենակետ*, ի հակադրումն Հոլոքոստի հարմարվողականության ու հնազանդության, *մինչև վերջ պայքարելու* (*fighting to the end*) պատրաստակամության մարմնավորում: Տեղին է հիշատակել 1943թ. այդ առիթով սիոնիստ առաջնորդներից մեկի՝ Դավիթ Բեն-Գուրիոնի (Իսրայել պետության առաջին վարչապետը) հրապարակային ելույթը. նա Հոլոքոստը հակադրում էր հրեա ժողովրդի հաղթական էջերին, մասնավորապես փառաբանում էր 1920թ. Թել Հայի հրեական բնակավայրի ինքնապաշտպանությունը՝ անվանելով այն «երկրորդ Մասադա»[1] [19, 20]: Բեն-Գուրիոնի խոսքերով, ինչպես Մասադան, Թել Հայը ցուցադրեց արժանապատվությամբ, զենքը ձեռքին մեռնելու նոր ճանապարհ. «Մենք ապրել ենք արտաքսման կյանք, կախվածություն, ստորացում, ստրկություն ու դեգրադացիա: Ոչ միայն ուրիշները մեզ բերեցին դրանց, այլև մենք ինքներս եկանք և ընդունեցինք մեր թուլությունը, մեր արտաքսումը... Մենք չգիտեինք ինչպես ապրել ու մեռնել՝ որպես ազատ մարդիկ: Մասադայի ու Թել Հայի նման, հրեաները պետք է ընտրեին այլ մահ, ոչ թե անուժ, անօգնական անարժեք զոհաբերումը, այլ մենք պետք է զենքը ձեռքներիս մահանայինք» [19]:

Եվրոպայի հրեաների դիրքորոշումը, որն ակտիվորեն քննադատվում էր

[1] 1920թ. Թել Հայ բնակավայրի ռազմագյուղացիական պաշտպանությունը կապվում է հրեա ժողովրդի ազգային հերոսներից մեկի՝ այն գլխավորած Իոսիֆ Տրումպելդորի կերպարի հետ: Ի.Տրումպելդորն իր «գերագույն նպատակի» իրագործումը կապում էր «ժողովրդի բանակի» գաղափարի հետ, որի զինվորներն իրենց հետևից կտանեին հրեա ժողովրդին, կպաշտպանեին վերջինիս ու հրեական պետականությունը՝ հանուն դրա չխնայելով սեփական կյանքը: Թել Հայի ինքնապաշտպանությունում Տրումպելդորը, մահվանից առաջ, արտասանում է հետևյալ խոսքերը. «Երջանիկ է նա, ով զոհվում է հայրենիքի համար»: Այդ բառերը փորագրված են Տրումպելդորի գերեզմանին, որտեղ Իսրայելի պաշտպանության բանակի երիտասարդ զինվորականները երդում են տալիս:

Իսրայել պետության հիմնադրումից հետո՝ 1940-1950-ականներին, այդ թվում և Իսրայել պետության ղեկավարության ջանքերով սկսեց նոր ընկալումներ ստանալ միայն 1960-ականներից սկսած՝ դառնալով Իսրայելի անցյալի հերոսական էջերից մեկը [10]: Արդյունքում՝ Իսրայելի ազգային կոլեկտիվ հիշողությունում յուրօրինակ խորհրդանշական կամուրջ ստեղծվեց Մասադայի, Հոլոքոստի ու Իսրայել պետության հիմնադրման միջև (հաստատվում է երեքի միջև շարունակականությունը), որտեղ Հոլոքոստը մարմնավորում է Հրեաների արտաքսման *(Jewish Exile)* էջի ավարտը և հրեական պետության հիմնադրման սկիզբը: Հենց 1960-70-ականներից սկսած՝ Իսրայել պետությունը լուրջ քաղաքականություն է վարում հրեա համայնքների պատմության, ավանդույթների ուսումնասիրման ուղղությամբ՝ Արտաքսման մեջ հրեաների պատմությունը դիտելով որպես Հրեության կոլեկտիվ անցյալի անքակտելի մաս: Մասադայի ու Հոլոքոստի զուգահեռականներում վերիմաստավորվեցին նաև նախկինում կարծրացած «հերոսների» ու «զոհերի» կատեգորիաները, արդյունքում՝ վերջիններս ողբերգության ընկալումից անցում կատարեցին հրեա ժողովրդի հաղթական անցյալին:

Հետևություններ

Սիոնիստական շարժման ձևավորման ժամանակաշրջանը հիմք դրեց հրեա ժողովրդի ողջ պատմության ընթացքում տեղ գտած հերոսական իրադարձությունների՝ որպես ազգային խորհրդանիշերի, հրեության կոլեկտիվ ու պատմական հիշողության վերականգնմանը կամ զարթոնքին: Հրեական տարբեր հերոսապատումների օրինակով, Մասադան նույնպես առանցքային դերակատարում ունեցավ 1920-ականներին Պաղեստինում հաստատված հրեաների ազգային ազատագրական պայքարում և հրեական պետականության հիմնադրման գործընթացում: Մասադայի՝ որպես զինվորական խորհրդանիշի, կերպարը շարունակում է անփոփոխ մնալ Իսրայել պետության հիմնադրումից հետո: Մասադայի ոդիսականը, սակայն, ավելին է, քան զինվորական խորհրդանիշը. զգալի է Մասադայի ինքնապաշտպանության կոլեկտիվ հիշողության դերը Իսրայել պետության գործունեության գրեթե բոլոր ոլորտներում (գրականագիտություն, դիցաբանություն, ռազմարվեստ, գիտություն, կրոնագիտություն և այլն): Կարելի է ասել, որ Իսրայել պետության հիմադրումից հետո այն ենթարկվեց ներքին սոցիալացման ու հասարակայնացման գործընթացի:

Բացի այդ, հերոսապատումների ու ռազմական հաղթանակների, այդ թվում և Մասադայի վերաբերյալ հրեա ժողովրդի կոլեկտիվ հիշողության վերականգնումը ենթադրում է ավելի լայն՝ *քաղաքակրթական* նշանակություն, որը խորհրդանշում է՝

- Հնագույն ժամանակներից ի վեր հրեական հնագույն ցեղախմբերով ներկայիս Իսրայել պետության ու մերձակա տարածքների (Հրեաստան) բնակեցված լինելու հաստատում [14]:

- «Էրեց-Իսրայելում» (Հրեաստան) հրեական ներկայության շարունակականության փաստագրում ու հաստատում:
- Այդ տարածքում հրեական ներկայիս բնակեցմանը պատմական կառուցվածքային շարունակական նշանակություն տալու շեշտադրում:
- Հրեաստանում հրեական ներկայիս բնակեցմանը անցյալի խորհրդանիշերով պիտակավորման կարևորում:
- Անցյալի խորհրդանիշերի վերափոխմամբ՝ այդ տարածքում պատմական «լեգիտիմության» ու ներկայության խորհրդանշում:
- Մարդկության պատմության մեջ հրեա ժողովրդի դերակատարման արժևորում:
- Երկրագնդի վրա կյանքի ձևավորման հետ հրեության պատմության նույնականացում:
- Հրեական պետականության պատմության համարժեքացում համաշխարհային առավել հնագույն քաղաքակրթությունների հետ:

Մասադային տրված խորհրդանշական դերը զգալի է նաև մեր օրերում: Մասադան «ներգրավվել» է ինչպես պաղեստինա-իսրայելյան դիվանագիտական հարաբերություններում, այնպես էլ ժամանակ առ ժամանակ առհասարակ կիրառություն է ստանում Իսրայելի մերձավորարևելյան քաղաքականությունում: Պետական հետևողական քաղաքականության արդյունքում չի կորել Մասադայի հերոսապատման թեմատիկայի արդիականությունը Իսրայելի սահմաններից դուրս և հատկապես Միացյալ Նահանգներում ու Արևմտյան Եվրոպայում (ինչում զգալի է եղել տեղի հրեական ազդեցիկ լոբբիստական գործունեությունը): Դա են հաստատում արևմտյան մամուլում ու վերլուծականներում Մասադային վերաբերող բազմաթիվ հրապարակումները (քաղաքական, ռազմական, պատմական, կրոնադավանաբանական), որոնք դառնում են գիտական բանավեճերի ու քաղաքական շահարկումների նյութ:

Մասադայի թեմատիկան արդիական է նաև մերօրյա միջազգային հարաբերություններում: Բավական է հիշատակել 2008թ. մայիսի 15-ին Իսրայելի Քնեսեթում (խորհրդարան) Իսրայել պետության հիմնադրման 60-ամյակի (1948թ. մայիսի 14-15) կապակցությամբ Միացյալ Նահանգների նախկին նախագահ Ջ.Բուշի հայտնի ելույթը, որտեղ առանձնահատուկ նշվում էր նաև Մասադան. «Իսրայելի քաղաքացինե՛ր, Մասադան էլ երբե՛ք չի ընկնի, և Ամերիկան մշտապես ձեր կողքին կլինի» [21]: Իսկ մինչև ելույթը, նույն օրը նախագահ Բուշն այցելել էր Մասադայի լեռ:

Եվս մեկ օրինակ. Իսրայել պետության ղեկավարության հետևողական քաղաքականության արդյունքում հրեա զինվորականությունը բարոյահոգևոր բարձր արժեհամակարգ ունի, և այս հարցում կարևոր նշանակություն են ունեցել նաև հրեա ժողովրդի պատմական հաղթանակների ու հերոսապատումների կոլեկտիվ հիշողության վերականգնումն ու դրանց հասարակայնա-

ցումը: Հատկապես բարձր է ՑԱԽԱԼ-ի զինվորների՝ Հայրենիքին նվիրվածության, հանուն Իսրայել պետության ու հրեության անվտանգության ապահովման ինքնազոհաբերման պատրաստակամությունը: Դա են փաստում նաև հրեական «Քաղաքականության ու ռազմավարության ինստիտուտի»՝ 2006թ. հայրենասիրության խնդիրներին նվիրված սոցհարցումների արդյունքները, որոնց համաձայն՝ Իսրայելի բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 85%-ը, անհրաժեշտության դեպքում պատրաստակամություն է հայտնել կռվել իր պետության համար և զոհվել հանուն նրա [22][1]:

Փետրվար, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Constantine P., Danopoulos, Dhirendra Vajpeyi and Amir Bar-or,* “Civil-military relations, Nation-building and national indentity, Comparative perspectives”, 2004.
2. http://dover.idf.il/IDF/English/about/doctrine/ethics.htm, Israel Defense Forces. “Doctrine. Ethics-The IDF Spirit”.
3. *Մարության Հ.,* Հիշողության դերը մշակույթների երկխոսությունում, 21-րդ ԴԱՐ հանդես, # 3, 2007:
4. http://www.eleven.co.il/article/12656, Электронная еврейская энциклопедия. Масада,
5. http://all-kabbalah.narod.ru/masada.htm, Крепость Масада. Борьба и гибель героев крепости.
6. http://www.eleven.co.il/article/13795, Электронная еврейская энциклопедия, Сикарии.
7. Israel Ministry of Foreign Affairs. Masada, Desert fortress overlooking The Dead sea. http://www.mfa.gov.il, Крепость Масада. Борьба и гибель героев крепости - http://all-kabbalah.narod.ru/masada.htm
8. *Иосиф Флавий,* Иудейская война, Книга седьмая, глава восьмая. О Масаде и о занявших ее сикариях.- Каким образом Сильва приступает к осаде этой крепости.- Речь Элеазара-Перевод Я.Л. Чертка, 1900г. С введением и примечанием переводчика.
9. *Иосиф Флавий,* Иудейская война, Книга седьмая, глава девятая.-Каким образом жители крепости, убежденные, словами Элеазара, все убили друг друга, за исключением двух женщин и пятерых детей. Перевод Я.Л. Чертка, 1900г. С введением и примечанием переводчика.
10. *Yael Zerubavel,* “Recovered roots. Collective memory and the Making of Israeli national tradition”, 1995.
11. http://www.hagana.co.il/, “The Hagana”.

[1] Քաղաքականության ու ռազմավարության ինստիտուտի (հիմնադրվել է 2000թ.) իրականացրած սոցհարցմանը Իսրայելից բացի ընդգրկվել են 9 զարգացած երկրներ՝ Ֆինլանդիա, ԱՄՆ, Կանադա, Իտալիա, Ֆրանսիա, Ավստրիա, Իսպանիա, Գերմանիա և Ճապոնիա: Այդ երկրների բնակչության շրջանում անցկացված սոցհարցման արդյունքներում (պետության համար կռվելու պատրաստակամության) բարձրագույն ցուցանիշը (85%) եղել է Իսրայելինը: Վերջինիս հաջորդել են Ֆինլանդիան (83%), ԱՄՆ-ը (63), Կանադան (61), Իտալիան (53) ու Ֆրանսիան (51): Ավելացնենք, որ Իսրայելի պարագայում 85% ցուցանիշում ներառվել է նաև տեղի արաբ բնակչությունը, որի ցուցանիշը համապատասխանաբար ցածր է եղել՝ 27%, իսկ հրեա բնակչության ցուցանիշը 94%:

12. http://www.answers.com/topic/palmah, Labor Zionist elite military organization (1941 - 1948).
13. http://en.wikipedia.org/wiki/Brit_HaBirionim, Wikipedia. The Free Encyclopedia, Brit Habirionim,
14. *Nachman Ben-Yehuda,* "The Masada Myth. Collective memory and mythmaking in Israel", 1995.
15. http://www.jewishvirtuallibrary.org/jsource/History/lehi.html , Jewish virtual library. Lehi (group).
16. http://www.etzel.org.il/, The Irgun site
17. http://www.eleven.co.il/article/11005, Электронная еврейская энциклопедия, Гадна.
18. *Barry Schwartz, Yael Zerubavel, Bernice M. Barnett,* "The Recovery of Masada: A Study in Collective Memory". The Sociological Quarterly, Volume 27, N. 2, 1986.
19. *Yael Zerubavel,* "The Death of Memory and the Memory of Death: Masada and the Holocaust as Historical Metaphors", Representations, N. 45, 1994.
20. *John R. Gillis,* "Commemorations. The politics of National identity". 1994.
21. Remarks by The President to Members of The Knesset. For Immediate Release May 15, 2008. Jerusalem.
22. Lauder School of Government, Diplomacy and Strategy. Institute For Policy and Strategy. "Patriotism and Israel's National Security", Herzliya Patriotism Survey 2006.

ИЗ ИСТОРИИ ФОРМИРОВАНИЯ ЕВРЕЙСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ: ОБОРОНА МАСАДЫ

Карен Веранян

Резюме

В статье на примере обороны замка Масады в годы Великого еврейского восстания (66-73гг.) против Римской империи показано, как каждое героическое повествование в истории еврейского народа становится национальным символом и неотделимым атрибутом еврейской идентичности. В статье также описывается огромная роль и значимость эпопеи Масады в еврейской национально-освободительной борьбе XXв. и в преобразовании еврейской государственности.

ՆՈՐ ԳԻՐՔ ԿՐՈՆԱՓՈԽ ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Ս.Գ. Վարդանյան, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, 428 էջ:

Հայության կրոնափոխ խմբերի խնդիրը հայագիտության ամենակարևոր և, միևնույն ժամանակ, քիչ ուսումնասիրված ոլորտներից է: Այս մասին տարբեր ժամանակներում շատ է խոսվել հայ գիտական, քաղաքական, հասարակական շրջանակներում, սակայն գործնական քայլեր անհամեմատ քիչ են արվել: Բացի այդ, առկա են խնդրի ուսումնասիրությանը խոչընդոտող օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներ ևս:

Կրոնափոխ հայության ուրույն և յուրահատուկ խմբի՝ իսլամացված համշենահայության մերօրյա հետազոտողների շարքում առաջին և կարևոր անուններից է Սերգեյ Վարդանյանը, որը երկար տարիներ նվիրվել է հայագիտության այս խոպան ոլորտի ուսումնասիրմանը: Տարբեր տարիներին հրապարակած նրա արժեքավոր հոդվածները, միևնույն ժամանակ, յուրահատուկ ուղեցույց են եղել կրոնափոխ հայության պատմությամբ զբաղվողների և այդ ոլորտ նոր-նոր ոտք դնողների (այդ թվում և ինձ) համար:

Ինչպես նշում է Ս.Վարդանյանը, 18-րդ դարի սկզբին բռնի իսլամացված համշենահայերի հետ առաջին անգամ հանդիպել է 1984թ., որից հետո նվիրվել է նրանց ուսումնասիրությանը, սակայն 25 տարի է պահանջվել, որպեսզի մեր սեղանին դնի ամփոփ աշխատություն՝ «*Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)*» գիրքը: Այս, եթե կարելի է ասել, ուշացման հարցում «մեղավոր» են նաև այդ ընթացքում Ս.Վարդանյանի հրապարակած մի քանի գրքերն ու մի շարք հոդվածները, որոնք նվիրված են հայ ժողովրդի պատմությանն ու բանահյուսությանը, «խորհրդային սփյուռքի» հայապահպանությանը: Տարիների ընթացքում կուտակած ահռելի նյութը նաև պարտավորեցրել է դրանք միայն համապատասխան մշակումից հետո ներկայացնել գիտական և շահագրգիռ հանրության ուշադրությանը:

Ս.Վարդանյանի առաջին հանդիպումը քրիստոնյա համշենահայերի հետ կայացել է 1969թ. Աբխազիայում և Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասում, սակայն հետագայում, լայնացնելով աշխարհագրությունը, հեղինակը

1984 և 1987թթ. լինում է Միջին Ասիայում, ուր 1944թ. Աջարիայից աքսորվել էր բռնի իսլամացված համշենցիների մի մասը, և կատարում դաշտային-հետազոտական աշխատանք, գրի առնում նրանց բանահյուսության, բարբառի, երգարվեստի բազմաթիվ ուրույն նմուշներ: Հավաքած նյութը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ կրոնափոխ համշենահայերը պահպանել և մինչև մեր օրերն են հասցրել հայոց մշակույթի մի շերտ, որը, յուրահատուկ լինելով հանդերձ, ընդհանուր հայկական մշակույթի անքակտելի մասն է: Բացի գիտական ուսումնասիրություններից, Ս.Վարդանյանը փորձել է նաև գործնական քայլեր կատարել Միջին Ասիայում բնակվող կրոնափոխ համշենահայերի խնդրի բարձրաձայնման, ավելին՝ Հայաստանում բնակվելու նրանց ցանկությանն օժանդակելու ուղղությամբ: Ցավոք, նրա այս ջանքերը չեն ստացել համապատասխան դրական արձագանք:

Գիրքը կառուցվածքային առումով բաժանված է մի քանի մասի և սկսվում է հեղինակի ներածական խոսքով, որի վերնագիրն արդեն խորհրդանշական է՝ «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ»: Դրան հաջորդում է «Պատմական համառոտ ակնարկ» բաժինը, որտեղ ներկայացվում են Համշենի և համշենահայության պատմության առավել ուշագրավ դրվագները: Երրորդ գլուխը՝ «Կրոնափոխ համշենահայերի ուսումնասիրման պատմությունից», կարևորվում է երկու հանգամանքով. նախ, որ հեղինակը լայնախոհ և գիտականորեն հիմնավորված գնահատական է տալիս հայության այն հատվածներին, որոնք այս կամ այն պատճառով ստիպված են եղել փոխել կրոնը, և երկրորդ՝ հանրագիտարանային սեղմությամբ հիշատակում է կրոնափոխ հայերի վերաբերյալ տարբեր ժամանակներում տպագրված գրքերն ու հոդվածները, որոնք կարևոր ուղեցույց կարող են հանդիսանալ թեմայով հետաքրքրվողների համար: Այս մեծածավալ գիտական գրականության համակարգումը տարիների համառ աշխատանքի արդյունք է, որը զգալիորեն կհեշտացնի մյուս հետազոտողների գործը:

Տասնամյակների ընթացքում հավաքած բարբառագիտական հարուստ նյութը Ս.Վարդանյանը գրքում ներկայացրել է գիտական պատշաճ մակարդակով, մասնավորապես՝ Խոփայի խոսվածքը, որի բառ-հոդվածները լրացվել են ըստ «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի»: Հետազոտողի աչքից չի վրիպել նաև այն, որ արտաքին տարբեր ազդակներ ազդել են Խոփայի խոսվածքի վրա, որը ձեռք է բերել մեռնող լեզվի հատկանիշներ: Այդ ազդակներից են ԽՍՀՄ-Թուրքիա սահմանի փակվելը, մուսուլման համշենցիների ինքնամփոփ, մեկուսի կենցաղը: Շատ հայկական բառեր արդեն հիշում են միայն ծերունիները, և ըստ Վարդանյանի, «ամեն մի ծերունու հետ մի վաղնջենիկ հայերեն բառ է մեռնում» (էջ 76): Այստեղ հարկ է ավելացնել, որ ներկայումս Թուրքիայի համշենահայերի որոշակի շրջանակներում

նկատվում է հետաքրքրության աճ իրենց արմատների նկատմամբ, որը դրսևորվում է մայրենի բարբառի, բանահյուսության, մշակույթի պահպանման ձգտմամբ: Ս.Վարդանյանի հաշվումներով՝ այսօր Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի գավառում բնակվում է շուրջ 20.000 հայախոս համշենցի, մոտ 2 հազար էլ՝ Բորչկայի գավառում: Ի դեպ, բարբառն է այն կարևոր առհավատչյան, որը համշենահայերին մշտապես հիշեցնում է իրենց հայկական ծագումը, և Ս.Վարդանյանի ներկայացրած մեկ օրինակը սրա վառ ապացույցներից է: Այսպես, 1987թ. Ղրղզստանում մոլլա Հեմդի Ակբույուկօղլին, ի պատասխան այն հարցի, թե որտեղից գիտե, որ հայ է, ասել է. *«Լիզուս գասա, վօ՞վ ասօղ ա»* (էջ 181):

Գրքում կան նաև Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով գրի առած հեքիաթներ, խաղիկներ, որոնց վերլուծությունը հեղինակին թույլ է տալիս ասելու, որ դրանց այս կամ այն տարբերակները հանդիպում են Հայկական լեռնաշխարհի տարբեր վայրերի բանահյուսական ժառանգության մեջ, և «չնայած կրոնական, տարածքային և ժամանակային տարանջատումներին, դրանք մեկ միասնական մշակույթի արտահայտություններ են» (էջ 203):

Գրքում ներկայացված են նաև Համշենի բարբառի Խոփայի խոսվածքի և գրական հայերենի բառային, բառիմաստային, քերականական զուգաբանություններ՝ բացատրություններով և օրինակներով, ինչպես նաև տրված է Խոփայի խոսվածք-գրական հայերեն երկկողմանի բառարան (2000-ական բառ): Բացի այդ, ընդգրկված են նաև հեղինակի գրառած 19 երգերն ու տարբերակները (զուգահեռ գրական թարգմանությամբ) և 55 խաղիկներ, մեծ մասն՝ իրենց նոտաներով:

Աշխատության հավելվածում ներկայացված է Վենետիկի Մխիթարյան միաբան Հայր Պողոս վարդապետ Մեհերյանի «Պատմություն վարուց»-ից մեկ հատված, որում նա պատմում է 1776թ. Համշենի Խնակ գյուղում, ինչպես նաև Ճորոխի ավազանում իրեն հանդիպած կրոնափոխ հայերի մասին: Այն մուսուլման համշենցիների մասին առ այսօր հայտնի ամենահին վկայությունն է և դրանով իսկ՝ խիստ կարևոր սկզբնաղբյուր:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ մեր սեղանին է դրված արժեքավոր աշխատություն, որի կարիքը վաղուց էր զգացվում: Միևնույն ժամանակ, գրախոսությունը ցանկանում եմ ավարտել մեծարգո Սերգեյ Վարդանյանին ուղղված կոչ-պահանջով՝ շարունակել տասնամյակների ուսումնասիրությունների հրապարակումը և դրանով էլ ավելի մեծ նպաստ բերել հայագիտության քիչ ուսումնասիրված էջերից մեկի՝ կրոնափոխ հայության պատմության լուսաբանման գործին:

Ռուբեն Մելքոնյան

Հուշագիր հեղինակին

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա համառոտագիր (հոդվածի լեզվով) և ամփոփագիր (բնագրից տարբեր լեզուներով):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), с. (ռուսերեն), p. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝

   1. *Մարգարյան Ս.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
   2. *Шарипова Р.,* Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
   3. *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from http://www.internews.ras.ru/books/media, Sept. 28, 1998.

5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 22.10.2009թ.
Թիվ 5 (27), 2009թ.
Տպաքանակը՝ 300։

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 8 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում